Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9120

ՃԱՌԱԳԱՅԹՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Գ Ի Ր Ք

ԻՄԱՍՏԱԼԻՑ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԱՄԵՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ

Թարգմանեալ յԱրեւելեան լեզուաց

ՊԱՏ. Ց. ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏՊԱՐԱՆ Ց. ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ

ՇՈՒՄԼԱ, ՊՈՒԼԿԱՐԻԱ

1904

891.44
Պ-65
20 JUN 2006
19 NOV 2010

ՃԱՌԱԳԱՅԹՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԳԻՐՔ
ՓՄԱՍՏԱԼԻՑ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԱՄԵՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ

Թարգմանեաց յԱրեւելեան լեզուաց
ՊԱՏ. Յ. ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏՊԱՐԱՆ Յ. ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ
ՇՈՒՄԼԱ, ՊՈՒԼԿԱՐԻԱ
1904

22.07.2013

9120

Ամեն իրաւունք Թարգմանչին վերապահեալ է։

Հայ-Арм ... им. А. Мясник ... Չ

62122-67

Verlag Orientalischer Schriften
P. JOH. AWETARANIAN
SCHUMLA (Bulgarien)
1904

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Այս գրքի բուն բնագիրը, որ կոչվում էր „ԲԱՆՋԱԴԱՆԴՐԱ,“ հեղինակուած է Սանսկրիտ լեզուով (200 Ն. Ք.) Հնդկաստանում Պիտփայ իմաստունից։

Հնդկաստանի Թագաւորները իրանց արքունական օրէնսդրութիւնը այս գրքում պարունակուած փորձառական խրատների վերայ հիմնելով նրան իբրեւ անգին գոհար յարգում եւ թաքցնում էին օտարներից։ Սակայն, ըստ առածին թէ „Ձիրքը մուշկի նման է մարդ ինչքան էլ թաքցնէ գարձեալ նրա հոտը դուրս է ելնում,“ երբ Նուշիրէվան արքան (Յ. Տ. 531–579) տեղեկացաւ թէ Հընդկաստանի Թագաւորաց գանձում մի գիրք է գտնուում որ անասունների, թռչունների, սողունների եւ գազանների կեանքից վեր առնուած եւ ամեն օգտակար խրատներին հիմը՝ եւ փորձառութեանց հաւաքումը ճանաչուած է, Բերզուվիէ բժիշկը Հնդկաստան ուղարկեց որ այս գրքից մի օրինակ բերէ։ Սա Հնդկաստանում երկար ժամանակ մնալով հազիւ թէ յաջողեցաւ Բանջատանդրան ձեռք գցել եւ նրանից մի օրինակ այն ժամանակում գործածուող Փէհլէվի լեզուի վերայ թարգմանելով ուղարկեց Նուշիրէվանին։ Նուշիրէվան Թագաւորը եւ նրա յաջորդները այս գիրքը շատ յարգանօք կարդում եւ նրա խօսքերից գործնականապէս օգտուում էին։ Յ. Տ. 754ին Աբբասեան խալիֆէներից Աբու-Ճաֆէր-ի-Մանսուր սրա մասին լսելով շատ ջանքով այդ Փէհլէվի լեզուի վերայ եղած թարգմանութիւնը ձեռք բերեց եւ Իմամ Աբուլ-Հասան-էլ-Մուքաֆֆային Արաբերէնի վերածել տուեց։ Դարձեալ 930–940ին Ղէզնէվցի Սուլթան Մահմուտի հրամանաւ մեծ բանաստեղծ Ռուտէկի այս գիրքը ոտանաւորի վերածեց։ 1150ին Աբուլմուզաֆֆէր Պէհրամ Շահ իւր ժամանակում Աբուլմէալի Նէսրուլլահ գիտնականին հրամայեց որ այս թարգմանութիւնները մէկտեղ բերելով գործածական Պարսկերէնի թարգմանէ։ 1500ին Հիւսէյն Իպնի Ալի, Վաիզ իւլ Քաշիֆի, դարձեալ իւր ժամանակում գործածուած Պարսկերէնի թարգմանելով Էնվար ի Սուհէյլի անուանեց։ Միեւնոյն ժամանակ Խոթէնում (Կեդրոնական Ասիա) թարգմանուեցաւ Կաշկարցւոց լեզուին։ 1490ին Հնդկաստանի կայսրներից Մեծն Աքպար աշխարհակալի խորհրդականը Աբուլֆէզլ նորէն թարգմանեց, Այյար ի Տանիշ, Գիտութեան Կշիռ կոչելով։ 1540ին Ադրիանուպոլսում Ալի Չէլէպի Տաճկերէնի թարգմանեց, Հիւմայուն Նամէ, Արքայական Գիրք կոչելով։ 1644ին Տաւիտ

Զանիս Բարիզում թարգմանեց Արաբերէնից Գաղղիերէնի ։ 1854ին Էսթուիք (Eastwick) թարգմանեց Անգղիերէնի ։ 1855ին Է. Ֆոն Ատէլպուրկ (E. V. Adelburg) Վիէննայում թարգմանեց Գերմաներէնի ։ 1778ին Բարիզում Կոլլանտ (Golland) նորէն թարգմանեց Գաղղիերէնի ։ 1100ին Սիմէոն Սէթոս (Sethcs) Արաբերէնից թարգմանեց Յունարէնի ։ 1583ին Ֆոն Նութի (Von Nuti) Յունարէնից Իտալերէնի թարգմանեց ։ 1616ին Բոսսիսուս (Possisus) Յունարէնից Լատիներէնի թարգմանեց ։ ԺԲ դարում Ռաբբի Եուէլ Յունարէնից Եբրայերէնի թարգմանեց ։ ԺԳ դարում Յովհ. Ֆոն Գաբուա (Joh. V. Capua) Եբրայերէնից Լատիներէնի թարգմանեց, „Directorium Humanae Vitae“, Մարդոյ կենաց Առաջնորդը անուանելով ։ Անթոնիոս Ֆոն Ֆոռ (Autonius V. Pforr) 1483ին Լատիներէնից Գերմաներէնի թարգմանեց ։ Յետոյ Սպաներէնի, Հոլանտերէնի, Տանիմարգերէնի, Շուէտերէնի, Ռուսերէնի եւ ուրիշ Եւրոպական լեզուների թարգմանուել է ։ Ես էլ սկսեցի Հայերէնի թարգմանել բուն Պարսկերէնից որ իմ մօտ գտնուած ուրիշ լեզուների թարգմանութիւններին բնագիրն է ։ Եւ որովհետեւ ինչպէս որ արեւը արեւելքից իւր ճառագայթները տակաւ առ տակաւ ուղարկում է մինչեւ արեւմտեան երկիրներ, այնպէս էլ այս Ասիական հեղինակութիւնը հազարաւոր տարիների ընթացքում մի լեզուից մի այլ լեզուի թարգմանուելով արեւմտեան երկիրների վերջին ծայրերում գտնուող ազգերին հասել է. ուստի ինձ յարմար թուեց այս Հայերէն թարգմանութիւնը ՃԱՌԱԳԱՅԹՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ անուանել ։ Իմ փափաքը սա է որ կարդացողները սրանից օգտուեն ։ Եթէ լեզուի եւ ոճի սխալներ գտնելու լինին, թող թարգմանիչը խիստ չի քննադատեն. քանզի թարգմանիչը պարտական է բնագրի իմաստը հաւատարմաբար արտայայտելու, ո՛չ թէ կոկիկ եւ ընթերցողներին հաճելի անելու համար բնագրից շեղելու ։ Խնդրում եմ յարգելի ընթերցողներից որ իրանց դիտողութիւնը հաճին բարեմտութեամբ ինձ հաղորդել, որպէս զի երկրորդ տպագրութեան ժամանակ նկատողութեան առնուի ։

Աւելորդ չի համարում յիշել թէ այս գիրքը բնագրին մէջ տասն եւ վեց գլուխ է ունեցել, բայց թարգմանիչները երկու գլուխը զանց առնելով միայն տասն եւ չորս գլուխ են թարգմանել ։

Թարգմանիչ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԵԱՆ

Կաշկար (Արեւմտեան Չինաստան)
1895 Յունիս 10 ։

ՃԱՌԱԳԱՅԹՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՍԿԻԶԲՆ

ԱՇԽԱՐՀԱՏԵՍՆԵՐԸ խօսքն այնպէս են շարադրել, որ հին ժամանակներում, Չինաստանի մէջ Հիւմայունֆալ(*) անունով մի թագաւոր է եղել, որը Խէճէսթէռայ(**) անունով մի խորհրդական ունէր, որ առանց նրա խորհրդին ոչ մի բան չէր անում եւ առանց նրա ընկերակցութեան ոչ մի տեղ չէր գնում ։ Մի օր Հիւմայունֆալ արքան իւր Խէճէսթէռայ խորհրդականին հրամայեց, որ որսորդութեան գնալու պատրաստութիւն տեսնի, եւ երբոր որսի դաշտը դուրս եկան, այդ տեղը նրանց մի երկնավայրի պէս էր երեւում ։ Թռչող թռչունները թագաւորի բազէներին կերակուր լինելու համար վայր էին իջնում, շնիկները սեւաչեայ եղջերուներին տեսնելու համար իրանց ամբողջ մարմինը աչք էին դարձրել, բարակները նապաստակ որսալու համար հազարաւոր աղուեսական ճարպիկութիւններ էին ցոյց տալիս, բարձրաթռիչ շահէնք աղեղնաւորների նետած նետերի պէս դէպ ի երկնից կամարն էին սլանում եւ գիշատիչ բազէները իրանց արիւնահեղ ճիրաններով թռչուններին պատառում էին ։ Արդ թագաւորը որսորդութեան զբօսանքը վերջացնելուց յետոյ, զինուորներին արձակեց ։ Եւ ինքը ու խորհրդականը պատրաստուեցին մայրաքաղաք վերադառնալ ։

Բայց այն ժամանակ արեգական ջերմութիւնից պողպատէ զրահները մոմի պէս կակղանում եւ ծառերի տերեւները հրոյ բոցերի պէս էին բորբոքվում ։ Թռչունները ճիւղերի վերայ տերեւների տակ կծկուել, եւ դաշտի անասունները իրանց խոռոչներն էին մտել ։ Հիւմայունֆալ արքան Խէճէսթէռային ասաց. Ո՛վ խորհրդական, այս տօթումը յառաջ գնալ խելացութիւն չէ եւ վրանի տակ մնալ տաքութիւնը չի մեղմացնել, քանի որ ամբողջ դաշտը երկաթագործի հնոցի նման վառում է. ինչ ես

(*) همايونفال — Հումայունֆալ ։ (**) خجسته راى — Խուճեսթէռայ ։

խորհուրդ տալիս, որպէսզի կարողանանք մի զով տեղ հանգստանալ եւ արեւը մայր մտնելուց յետոյ մեր բնակարանը վերադառնանք։ Խէճէմթէայն խոնարհութիւն անելով ասաց. Ո՛վ դու արեգակն արքայութեան եւ ստուեր Աստուծոյ, քանի որ մենք քո հովանաւորութեան ներքեւն ենք աշխարհակալիչ արեւի ճառագայթներից երկիւղ չունենք, սակայն օդի ջերմութիւնից՝ որ տեսակ տեսակ ախտերի հիւլէներ է պարունակում, զգուշանալ Ձեզ պէտք է, քանզի մեր պահպանութիւնը Ձեր պահպանութիւնից է կախուած։ Ես այս մօտերքում մի լեռ եմ տեսնում, եթէ կը բարեհաճէք այն տեղ գնանք։ Հիւմայունփալ արքան խորհրդականի առաջարկութեան համեմատ դէպ ի այն լեռն ուղղուելով քիչ ժամանակում նրա ստորոտը հասան։ Տեսան մի լեռ, որը վեհանձն հսկայի պէս իւր կանաչագոյն սուր գագաթը արեգական ոսկեզօծ վահանին է հասցրել, կամ մի ծերունիի պէս իւր կարծր ոտքերը բազմագոյն բեհեզեայ քղանցքների տակը քաշած՝ իւր լալկոտ աչքերից արտասուքի աղբիւրները մինչեւ ստորոտն էր հոսեցնում։ Թագաւորը իւր քղանցքները մէջքը փաթաթելով լերան վերայ ամպանման ման էր գալիս։ Յանկարծ մի դաշտ եկաւ իւր առջեւը, ուր զովացուցիչ զեփիւռը փչում էր, մանուշակները վարդի չուրջը գլուխ ծռած՝ նորաբոյս նարդոսներ կակաչների հետ միասին բնչկ մշկոյ նման հաճոյք էին ընծայում, փետահաւը վարդագոյն բեհեզ հագած, զուգաբոյս նոճիները իրանց բարկագոյն հովանին նրա վերան էին քաշել, զեփիւռի շշունչը խորհուրդներ էր յայտնում եւ վարդի հոտը ամեն կողմն էր տարածվում, իսկ սոխակի երգեցողութիւնը, վարդի հոտն ու գոյնը ամենաբարձր տեղերն էր հռչակում։ Այս սոխակավայրին մէջ մի եղտիւր կար, որի ջուրը յստակ եւ անուշ էր։ Խորհրդականի հրամանաւ թագաւորի հանգստարանը եղտիւրի եզերքումը պատրաստեցին եւ սպասաւորները առանձին առանձին ծառերի տակ մի մի աղբիւրի մօտ նստեցին։ Արդ թագաւորը եւ խորհրդականը հանգչելուց յետոյ աշխարհային վայելքներից, երեւակայական ձիերից եւ փղերից վայր իջան, եւ մնոտի խորհուրդները մէկ կողմ դնելով սկսեցին մտածել Արարչի անըմբռնելի եւ անհուն զօրութեան եւ իմաստութեան վերայ, թէ ի՛նչպէս այս ապառաժուտ լերան վերայ իւր անտեսանելի գրիչով իւր սէրն ու քաղցրութիւնը գոյնզգոյն պատկերներով նկարել է, եւ թէ այսպիսի կարծր սարից քաղցրահամ բուսեղէններ եւ անուշահոտ ծաղիկներ է բուսցրել։ Ոչ թէ միայն սոխակին է տուել նրա սքանչելեաց վերայ ուրախանալ եւ երգել՝ այլ իւրաքանչիւր խոտին եւ փուշին էլ տուել է մի լեզու նրա Աստուածութիւնը դաւանելու։

Այս միջոցին թագաւորը մի ծառ նկատեց, որը աշնան պէս իւր տերեւներիցը մերկացած եւ հնութենից ալեւորի նման կմախք դարձած էր, անպտուղ եւ անտերեւ, որի անդամները իրարից բաժանելու համար դարուց երկրագործը իւր սղոցը ձեռքումն էր բռնած։ Սակայն նրա ներսը դատարկ լինելուն համար մի խումբ մեղուներ այն տեղ էին ապաստանել։ Արդ թագաւորը խորհրդականին հարցրեց. Այս թեւթեւաթռիչ ճանճերը այս ծառի շուրջը ի՞նչու համար են հաւաքվում կամ այս ժրաջան արուեստաւորներին ո՞վ է հրաման տուել որ այս վարդանոցում երթեւեկութիւն անեն։ Խորհրդականը պատասխանեց. Ո՛վ արքայ, սրանք մի ժողովուրդ են, որոնց օգուտը շատ՝ եւ վնասը քիչ է. մի թագաւոր ունին, որոյ մարմնոյն կազմուածքը նրանցից մեծ է եւ նա մոմեղէն քառակուսի աթոռի վերայ է նստում եւ ունի խորհրդականներ, պաշտօնեաներ, տանտպետներ, զինուորներ եւ դռնապաններ. եւ նրա զինուորները ա՛յն աստիճան ընդունակութիւն ունին որ իւրաքանչիւրը իրան համար մոմից վեցանկիւնի մի տուն է շինում եւ տուները ա՛յնպէս իրարու հաւասար են որ ո՛չ մի արհեստաւոր առանց գործիքի այնպէս հաւասար շինելու կարող չէ։ Տուները շինվելուց յետոյ, թագաւորի հրամանաւ իրանց բնակարաններից դուրս են գալիս եւ իշխանը նրանց հետ ուխտ եւ պայման է կապում որ իրանց ազնուութիւնը ապականութեան հետ չփոխեն եւ իրանց մաքուր մարմինները անմաքուր բանով չապականեն։ Նրանք էլ իրանց խոստման համաձայն, անուշահոտ վարդի եւ անարատ ծաղկի ճիւղերի վերայ են նստում որ նրանց ծաղիկներից ծծեն, եւ քիչ ժամանակից յետոյ նրանց մէջ մի այնպիսի քաղցրահամ բաղադրութիւն է գոյանում որ դեղագիտութեան արուեստը նրանում է հասել իւր կատարելութեան։ Իրանց բնակարանը վերադառնալիս՝ դռնապանները նրանց հոտոտում են, եթէ նրանք ըստ իրանց խոստման անմաքուր բանից զգուշացել են, նրանց թողնում են իրանց վեց անկիւնի բնակարանը մտնելու, իսկ եթէ ոչ երկու կտոր են անում նրանց. բայց եթէ դռնապանները զգուշութիւն չանելով նրանց ներս թողնեն եւ թագաւորը գարշահոտութիւնը զգայ, անմիջապէս քննութիւն անելով այդ տարաբախտ մեղուն տանում է ներկայացնում, եւ ապա նախ դռնապանները սպանել է հրամայում եւ յետոյ այն անպարկեշտ մեղուն, որպէս զի նրանց ազգից մի ուրիշը այդպէս անկարգութիւն անել չի համարձակի։ Նաեւ եթէ մի օտար մեղու ներս մտնել կամենայ, դռնապանները նրան արգելում են եւ եթէ նա յետ դառնալ չուզէ նրան սպանում են։ Հիւմայունփալ արքան այս խօսքերը լսելով նրա հետաքրքրութիւնը շարժեց եւ նրանց

կազմուածքը դիտելու համար ծառի տակ եկաւ եւ բաւական ժամանակ նրանց կարգն ու կանոնը եւ երթեւեկութիւնը նկատելով, ասաց․ Ո՛վ խորհրդական, նրանք, ամէնն էլ, խայթող ունին․ սակայն միմեանց վնաս հասցնելու ետեւէ չեն ։ Ամենը իւր գործով զբաղած է ։ Ունին թոյն բայց քաղցր բան են պատրաստում․ իրանց կազմութիւնից վեհանձնութիւն, պատկառանք եւ արիութիւն է նշմարւում․ սակայն իրարու հետ հեզութեամբ եւ խոնարհութեամբ են վարւում ։ Բայց մենք մարդկանց մէջ սրա հակառակն ենք տեսնում, այն աստիճան որ մարդուն հարկաւոր է եղել մարդից զգուշանալ ։

Խորհրդականը պատասխանեց․ Այս մեղուները, ամէնը, մի եւ նոյն բնաւորութեամբ ստեղծուել են, սակայն մարդիկ տարբեր բնաւորութեամբ՝ որոնք ունին հոգեւոր եւ մարմնաւոր ձգտումներ, ժամանակաւոր բաներին ցանկանալ եւ յաւիտենական երջանկութեան փափաքել, հրաւիրուած են հրեշտակային վիճակ ունենալու եւ պաշարուած են սատանայական խաբէութիւնից․ ընտրողութիւն անելը ձգուած է նրանց ազատ կամքին ։ Եթէ առողջ դատողութեան հետեւեն հոգեւոր բաների մէջ յառաջադիմութիւն պիտի ունենան, իսկ եթէ մարմնաւոր ցանկութեանց հետեւեն ապականութեան մէջ բանտարկուած պիտի մնան ։ Եւ առ հասարակ մարդկանց չարերը չար կրքերին ասպարէզ տալով ագահութեան, նախանձի, բարկութեան, քինու, բռնութեան, ինքնահաւանութեան, կեղծաւորութեան, մարդահաճութեան, բամբասանքի, զրպարտութեան եւ սրանց նման ուրիշ չար մոլութիւնների մէջ յառաջ են գնացել ։

Թագաւորը ասաց․ Այս խօսքերով անձնապաշտների իրական որպիսութիւնը նկարագրեցիր, ուստի երեւում է որ մարդկային ընդհանուր օգուտը միայնակեցութեան մէջ է կայանում․ ուրեմն պէտք է որ ամեն մարդ իւր նմաններից առանձնանալով ապրի եւ ոչ ոքի հետ յարաբերութիւն եւ խօսակցութիւն չանէ, որպէս զի այդ չար կրքերից յառաջ եկող արիւնահեղութիւններից եւ կորստական վիճակից զերծ մնայ ։ Խորհրդականը պատասխանեց․ Ինչ որ թագաւորը հրամայեց ճշմարիտ է․ սակայն աստուածապաշտներից ոմանք ժողովրդական կեանքը առանձնակեցութիւնից վեր դասելով ասել են․ „Բարի ընկերների հետ նստել եւ խօսակցել առանձնանալուց լաւ է ։ Բայց եթէ կարեկից ընկեր չգտնուի առանձնութիւնը լաւ է ։“ Ընկերական կեանքը իմացողական յառաջդիմութեան եւ օգտակար կարգադրութիւնների պատճառն է, իսկ առանձնակեցութիւնը խենդութեան եւ սիրոյ պակասութեան արդիւնքն է ։

Դիցուք թէ միայնակեցութիւնը լաւ լինի, սակայն ի՞նչպէս

կարելի է որ իւրաքանչիւր մարդ առանձին ապրի առանց իւր նմանների հետ գործ ունենալու, քանի որ նոքա միմեանց օժանդակութեան այնպէս կարօտ են, որ առանց այս օժանդակութեան նրանց ապրելն ու տեւողութիւնը կարելի չէ, զորօրինակ ։ Իւրաքանչիւր մարդ կարօտ է հացի, հագուստի եւ բնակարանի ։ Եթէ առանձին ապրի նախ պէտք է սովորի դարբնութիւն եւ հիւսնութիւն, քանզի առանց սրանց երկրագործութիւնը չի յաջողվիլ եւ հետեւապէս ապրուստի միջոց ճարելը դժուար կը լինի ։ Եթէ իր ժամանակը վատնէ այդ արհեստներից մին սովորելու մնացածները կատարելու պիտի չհասնի․ ուստի ընկերական կեանքը անհրաժեշտ կարեւոր է եղել որ մարդիկ միմեանց օգնելով հեշտութեամբ կարողանան հանգիստ ապրել ։

Թագաւորը ասաց․ Ինչ որ խորհրդականը ասաց ճշմարտութեան եւ սրբութեան արդիւնքն է, սակայն ես այնպէս եմ կարծում թէ քանի որ նրանք միմեանց կարօտ են եւ թէ իրենց բնութիւնները եւ կիրքերը միմեանցից տարբեր՝ ուստի բնականաբար անհամաձայնութիւններ կը պատահին, որոնք պատճառ են լինելու տեսակ տեսակ վէճերի, կռիւների եւ ատելութեանց ։ Եւ որովհետեւ ոմանք ուժով կամ փողով միւսներից առաւելութիւն են ունենալու, իսկ ոմանք էլ ագահութեան եւ նախանձի յաղթուած են լինելու, ուստի չարերը իրանց նմաններից յառաջ անցնելու համար բռնութիւն եւ անիրաւութիւն են գործածելու կամ խաբէութիւններ եւ կեղծաւորութիւններ են անելու ։ Բռնաւորին դիտաւորութիւնը սա է լինելու որ ուրիշները իր իշխանութեան տակ մտցնելով իրան ծառայեցնէ, եւ ագահին ցանկութիւնը սա է լինելու որ այլոց ստացուածքն ու իրաւունքն ինքն ունենայ․ Եւ այս բաներից յառաջ պիտի գան տեսակ տեսակ մեղքեր եւ վերջն էլ սոսկալի կորուստ ։

Խորհրդականը ասաց․ Ո՛վ արքայ, այս վէճերի եւ կռիւների առաջն առնելու համար մի օրէնք է սահմանուել, որոյ գործադրութեամբ ամեն մարդ իւր վիճակից գոհ պիտի լինի կամ անիրաւութիւն անելու հնարք պիտի չգտնէ․ այս օրէնքին արդար դատաստան են ասում, որ ամէն անիրաւութիւնը պատժելու է դատապարտում եւ ամեն բարի գործին վարձատրել է յայտնում ։ Եւ որովհետեւ շատ մարդիկ իրանց օգտակար եղող բանից անտեղեակ են, նաեւ չարերն էլ իրանց կրքերին եւ ցանկութեանց գերի են եղել․ ուստի անհրաժեշտ պէտք է եղել որ նրանց վերայ մի անաչառ դատաւոր լինի, որ ամէն անիրաւից վրէժ առնէ եւ ամէն բարեգործին գովէ եւ յառաջացնէ ։

Թագաւորը հարցրեց․ Այդ դատաւորը ի՞նչպէս մարդ պիտի լինի, եւ ի՞նչ յատկութիւններ պիտի ունենայ որ կարող լինի

մարդկային ազգի վերայ իշխել ու նրան կառավարել: Խորհրդականը պատասխանեց. Այն դատաւորը պէտք է, նախ շատ իմաստուն լինի, որպէս զի կարողանայ իմանալ թէ որոնց պէտք է քաջալերել եւ որոնց պէտք է ճնշել. Երկրորդ, պէտք է որ արդարութեան մէջ շատ նրբազննին լինի, քանզի շատերը միայն իրանց անձնական օգտին եւ պատուին համար են ծառայում. քիչեր կան որ ընդհանուրի ներկայ եւ ապագայ օգուտը իրանց նպատակն անելով անկեղծ սիրով ծառայեն: Եւ քանի որ շատերի գլխաւոր նպատակը իրանց անձնական շահն է, բնականաբար բարի պաշտօնէից փառաւոր կացութեան վերայ պիտի նախանձին եւ տեսակ տեսակ խարդախութիւններ անելով՝ չպատահած բանը իրականացնելով պատուական անձանց դէմ զրպարտութիւններ ու յանիրաւի բողոքներ պիտի անեն: Եւ եթէ թագաւորը կամ դատաւորը հեռատես եւ դատաստանի մէջ զգոյշ չլինի ու առանց քննութեան եւ ստուգութեան վճիռներ տայ. նրանցից ընդհանրական վնասակար հետեւութիւններ յառաջ պիտի գան: Բայց եթէ թագաւորը զգաստ եւ խելացի լինի եւ խնդրոյն ամէն մասերը ամենայն զգուշութեամբ, առանձին առանձին քննէ. անշուշտ մութ բաները ի լոյս գալով եւ կնճռոտ բաները լուծուելով իւր թագաւորութիւնը հաստատելու նպաստաւոր օգուտներ յառաջ պիտի գան: Յիրաւի եթէ թագաւորը արթուն լինի եւ իմաստունների փորձառական խրատներին ուշադրութիւն դարձնէ, նրա թագաւորութիւնը հաստատուն եւ ապահով կը լինի. ինչպէս որ Հնդկաստանի թագաւոր, մեծն արքայ Տապիշլիմը, Պիտփայ իմաստունին խրատներին անսալով արդարութեամբ եւ իրաւունքով իշխելով, իրանից յետոյ բարի անուն թողեց աշխարհի վերայ:

Արդ թագաւորը երբոր Տապիշլիմի եւ Պիտփայի անունները լսեց, իսկոյն առաւօտեան հովի շարժումով բացուող վարդի նման սկսեց ժպտալ եւ ասել. Ո՛վ խորհրդական, երկար ժամանակից ի վեր ես նրանց խօսակցութեան վերայով լսելու ցանկացել եմ եւ որչափ որ հարց ու փորձ եմ արել ոչ մէկը մինչեւ հիմա նրանց խօսակցութեան վերայ ինձ լուր չէ տուել. ուստի կարծել եմ թէ կա՛մ այդ խօսակցութիւն տեղի չէ ունեցել կա՛մ ես տեղեակ եղողը չեմ գտել: Ի՛նչքան ուրախ եմ որ խորհրդականը դրա վերայով տեղեկութիւն ունի. արդ իմ խնդիրքս այս է որ որչափ որ հնար է շուտով պատմես ինձ այդ դէպքը:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՐՔԱՅ ՏԱՊԻՇԼԻՄԻ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ՊԻՏԻՓԱՅԻ

Լուսամիտ խորհրդականը սկսեց պատմել թէ Հնդկաստանում Ռայ Տապիշլիմ անունով մի երջանիկ թագաւոր կար: Սա երբոր իւր թագաւորութեան միջից անկարգութիւնը վերջացնելով ամեն տեղ արդարութիւնը գործադրել տուաւ, եւ արտաքուստ իւր սահմանները թշնամեաց յարձակումներից ապահովացրեց, մի մեծ տօնախմբութիւն տուաւ եւ կերուխումից եւ նուագածուների ներդաշնակութեան ու երգիծաբանութեան հաճոյքները վայելելուց յետոյ, իւր շուրջը բազմող պաշտօնեաներին եւ իմաստուններին տեսակ տեսակ նիւթեր էր առաջարկում, որոնք նրանց վերայ քննութիւններ եւ դատողութիւններ էին անում, եւ թագաւորը նրանց իմաստալից խօսակցութեան ունկնդիր էր լինում: Վերջապէս բոլոր բարի յատկութեանց վերայ խօսակցութիւն լինելուց յետոյ, խօսքը այն տեղ հասաւ որ ամենայն բարի յատկութեանց գերագոյնը առատաձեռնութիւն է: Արդ թագաւորը զգացուելով գանձը բանալ տուեց եւ տէրութեան մէջ գտնուող բոլոր կարօտելոց պէտքական ապրուստի միջոց բաշխեց. եւ երբոր արեւը մարմանելով գիշերը սկսեց իւր խորհրդաւոր վարագոյրը հորիզոնի վերայ տարածել, երեւակայութիւնը թագաւորին այնպէս ցոյց տուաւ որ մի լուսադէմ ծերունի նրա առջեւը կայնած՝ ասում էր. Որովհետեւ դու ի սէր Աստուծոյ մի գանձ փող բաշխեցիր աղքատաց, ուստի առաւօտ ելի՛ր մայրաքաղաքի արեւելեան կողմը ճանապարհորդի՛ր, որ այն տեղ քեզ համար պահուած գանձը գտնես: Արդ հետեւեալ օրը երբոր թագաւորը, լուսադէմ ծերունիին ասածին համեմատ, քաղաքից եւ մարդաբնակութիւնից դուրս եկաւ, տեսաւ մի լեռ, որի մի կողմում մի այր կար եւ այրի առջեւը մի ծերունի նստել էր, որ կարծես քարայրի նման հեռու էր աշխարհի մէջ պատահող հոսանքներից բայց միեւնոյն ժամանակ ամենի վերայ խորհող եւ ամենին ցաւակից: Ծերունին էլ թագաւորի գալը նկատելով նրա առաջն եկաւ եւ խոնարհութիւն անելով ասաց. Ո՛վ արքայ, թէեւ վշտակրաց տխուր բնակարանը արքայական ոսկեզարդ պալատին ճոխութիւնը չունի, սակայն թագաւորները իրանց ուշադրութիւնը երբեմն էլ միայնակեաց աղքատների վերայ

են դարձրել եւ ասել. «Աղքատաց նայելը մեծութիւնը ճոխացնում է։» Եւ Թագաւորին իւր բնակարանը հրամցնելուց յետոյ ասաց, Ինձ պէս աղքատի ձեռքից չի գալ ըստ արժանւոյն հիւրասիրել Թագաւորին, բայց իմ հօրիցը ինձ մնացած մի գանձ կայ, քանի որ ես սովորել եմ քիչ բանով ապրել. ուստի այս գանձը անգործածելի է մնում։ Խնդրում եմ որ Թագաւորը իր ծառաներին հրամայէ, որ նրան հանեն ու տանեն Թագաւորի գանձարանը. որպէս զի ինչ բանի որ հարկաւոր գայ գործածուի։ Արդ Դաբշլիմ այս խօսքերը լսելով գիշերուայ երազը իւր միտքը բերեց եւ ծերունիին պատմեց իւր տեսածը։

Վերջապէս ծառաները քիչ ժամանակում գանձը հանեցին եւ ներկայացրին Թագաւորի առջեւ, պատուական ակունքներով զարդարուած ոսկեթագեր, մետաքսների մէջ պահուած գոհարներով եւ ոսկիներով լեցուն արկղներ եւ տեսակ տեսակ արծաթեայ ամաններ։ Թագաւորը սրանց մէջ տեսաւ մի ոսկեզօծ սնտուկ, որի վերայ մի պողպատեայ կղպանք կախված էր։ Սա Թագաւորի ուշադրութիւնը գրաւելով շատ հետաքրքրութեամբ ջանաց այդ կղպանքը բանալու հնարք գտնել։ Երբոր ծառաները բանալին չգտան, Թագաւորը ասաց. Իհարկէ այս բոլոր գոհարներից եւ ոսկիներից աւելի արժէք ունեցող բան կայ սրա մէջ, եթէ ոչ, ինչ հարկ էր այսքան զգուշութեամբ նրան փակել։ Արդ երբոր վարպետները նրան բացին միջից մի արկղ ելաւ եւ արկղի մէջ մի սկաւառակ կար, որի մէջ մի կտոր մետաքսի վերայ մի քանի տողեր էր գրուած։ Ոմանք ասացին թէ սա գանձը պահողին անունն է կամ գանձին պահուելուն թուականն է, այլք ասացին կարելի է ուրիշ բան է գրուած. վերջապէս մի հնագէտ գտան որ այդ գիրը կարդայ։ Երբոր հնագէտը Թագաւորի առջեւը բերեցին, Թագաւորը նրան ասաց. Խնդրում եմ եթէ սրան կարդալ կարողանաս, ամենայն հաւատարմութեամբ եւ անկեղծութեամբ նրա միտքը պարզ կերպով ինձ թարգմանես։ Հնագէտը ուշի ուշով գրուածը դիտելուց յետոյ ասաց. Սա խորհուրդների գանձ է եղել եւ սկսեց բառ առ բառ թարգմանել։

«Ես Յուշէնկ Թագաւորս այս Տասնուչորս Աւանդը թողնում եմ այս գանձը գտնողին. որպէս զի նա գիտենայ որ ունայն գոհարների եւ ոսկւոյ վերայ ուրախանալ չարժէր, այլ արդարութիւն եւ իրաւունք անելու համար պէտք եղած փորձառական խրատները ոսկիից եւ պատուական գոհարներից լաւագոյն են։

Աւանդ Ա. Թագաւորը, որին որ իրեն մտերիմ անելով նրա աստիճանը բարձրացնէ, նրա մասին գանգատը առանց լուրջ կերպով քննելու չընդունէ. քանզի շատերը նախանձից շարժեալ պիտի սկսեն տեսակ տեսակ խորամանկութիւններով Թագաւորը

նրա վերայ զայրացնելով պաշտօնից զրկել եւ այսպէս իրանց նպատակը յառաջ տանել։

Աւանդ Բ. Բանսարկու եւ քսու մարդկանց իւր ատեանում տեղ չտայ. քանզի նրանք կռուարար են եւ նրանց վախճանը շատ սարսափելի է. ընդհակառակն որին վերայ որ այս յատկութիւնը նկատէ, իսկոյն նրա բանսարկութեան հուրը դատապարտութեան ջրով հանգցնէ. որպէս զի նրա ծուխը մարդկութեան հորիզոնին չմթնացնէ։

Աւանդ Գ. Ուշադրութիւն դարձնէ, որ խորհրդականների եւ պաշտօնեաների մէջ միաբանութիւնն ու բարեկամեցողութիւնը հաստատ լինի. քանզի մի սիրտ ունեցող բարեկամների միաբանութեամբ եւ մի գաղափարի տէր եղող ընկերաց օգնականութեամբ ընդհանրային գործերը յառաջ կ՚գնան։ Այո՛, միաբանութեամբ բոլոր աշխարհը կառնուի։

Աւանդ Դ. Թշնամու քաղցրախօսութեանն ու չողոքորթութեանը մտիկ չտայ. որչափ էլ նա աղաչէ եւ պաղատէ, առանց նրա անկեղծութեան վերայ ապացոյց ունենալու, նրա խնդիրքը չընդունի։ Պէտք է բարեկամի պէս խօսող թշնամւից զգուշանալ, ինչպես չոր փայտը սաստիկ կրակից։

Աւանդ Ե. Երբոր նպատակը ձեռք բերէ, նրան պահպանելու մէջ անզգոյշ չլինի եւ անհոգութեամբ իւր ձեռքից չփախցնէ. քանզի յետոյ զղջալը օգուտ չի բերել. ինչպէս որ նետուած նետը յետ չի դառնալ, որչափ էլ մարդ նետը արձակելուն ափսոսէ։

Աւանդ Զ. Գործերի մէջ ծուլութիւն եւ շտապում չանէ, այլ զգուշութիւն եւ համբերութիւն գործածէ. քանզի շտապելուն վնասը շատ է, եւ համբերութեան օգուտը անչափ։ Որ գործի մէջ որ շտապելու լինիս, զգուշութիւնը զանց մի անիր. քանզի չկատարած գործը շուտով կարելի է կատարել, բայց կատարելուց յետոյ զղջալը օգուտ չի բերել։

Աւանդ Է. Որ եւ իցէ մի կերպով խոհականութիւնը եւ խելացութիւնը ձեռքից բաց չթողնէ։ Եթէ տեսնէ որ շատ թշնամիներ իրան կործանելու վրայ են եւ խելացութիւնը ցոյց տայ, որ նրանցից մէկին հետ միաբանելով, կարող է այդ վտանգից ազատուել, դրա մէջ կամակորութիւն չանէ. որպէս զի կարողանայ նրանց լարած որոգայթին տակնուվերայ անել։

Աւանդ Ը. Քինակալների եւ վրէժխնդիրների քաղցրախօսութեանը չխափուի. քանզի երբոր քինու տունկը մէկին սրտում տնկուած լինի, նրա պտուղը բացի վնասից ուրիշ բան չի կարող լինել։ Որի սրտում որ քէնը ծառ անկէ, այն սիրտը վնաս հասցնելու ետեւից կընկնի, քեզ մօտ գալով քաղցր կը խօսի, մօտիցդ կանցնի դարան կ՚լարէ։

Աւանդ Թ. Ներելը եւ երկայնամտութիւնը իրան բնաւորութիւն անէ եւ չնչին յանցանքների համար հաւասարմութեամբ ծառայողներին սաստիկ չյանդիմանէ եւ չպատժէ. քանզի ընդհանրապէս մեծահոգիները գթութեան եւ ներողամտութեան ջրով յանցանքների եւ սխալների տպաւորութիւնը փոքրահոգիների մտաց տախտակից լուացել են, եւ սխալականների ու յանցաւորների համարձակութիւնն ու լրբութիւնը ցաւակցութեան եւ երկայնամտութեան քղանցքով ծածկել են: Ադամական ժամանակից սկսեալ մինչեւ հիմա մեծահոգիներից ներողամտութիւն՝ եւ ցածահոգիներից յանցաւորութիւն է յառաջ եկել: Եւ եթէ մտերիմներից եւ մեծ պաշտօնեաներից մեղք եւ խարդախութիւն էլ յառաջ գայ եւ նրանք ներողութեան կարօտ լինին, դարձեալ պէտք է որ թագաւորը ներողութեան ըմպելին նրանց խմացնէ, որպէս զի նրանք յուսահատութեան անապատում չուարած չի մնան: Նա որ իւր ձեռքերը վեր բարձրացրած սրտանց ներողութիւն խնդրէ, դու նրան միանգամայն մի ձգիր հողի վերայ:

Աւանդ Ժ. Ոչ ոքին նեղացնելու եւ ցաւացնելու խօսք չլինի, այլ քաղցրութեան անձրեւը բոլոր ծանօթների եւ անծանօթների վերայ տեղացնէ. որպէս զի ամեն տեղ սէրոյ եւ համակրութեան ծաղիկները բուսնին: Եթէ բարիք անես, դրա փոխարէն քեզ բարիք կանեն. իսկ եթէ չարիք հասցնես, քեզ աւելի չարիք կանեն: Այս օր անտեղեակ ես քո բարիքից եւ չարիքից, այն օր քո բարիքին եւ չարիքին քեզ տեղեակ կանեն:

Աւանդ ԺԱ. Իրան յարմար չեղող գործին չի ձեռնարկէ, քանզի շատ մարդիկ իրանց գործը թողնելով իրանց վիճակին անյարմար գործեր են սկսում եւ չեն կարողանում ի գլուխ հանել ու իրանց գործից էլ յետ են մնում:

Աւանդ ԺԲ. Հեզութիւնը եւ խոնարհութիւնը իւր սրտում բնակեցնելով իւր դէմքը հեզութեամբ եւ խոնարհութեամբ զարդարէ. քանզի հեզութեան սուրը պողպատէ սուրից սուր է եւ հարիւր զինուորական բանակից աւելի յաղթող:

Աւանդ ԺԳ. Հաւատարիմ ծառաներ ձեռք բերելով բանաւոր եւ խարդախներից հեռի մնայ. որովհետեւ եթէ պաշտօնեաները հաւատարիմ լինին, թէ տէրութեան գաղտնիքները դուրս չեն տարածուիլ եւ թէ հպատակները բռնութիւնից ազատ եւ խաղաղ կապրին:

Աւանդ ԺԴ. Ժամանակաշրջանի փոփոխութիւնից եւ հանգամանքներից յառաջ եկած նեղութեան համար չի վշտանայ. քանզի խելացին միշտ փորձանքների եւ արկածների է հանդիպում, իսկ տգէտը միշտ հանգստութիւն եւ բարիքներ է վայելում: Առիւծի վզին շղթաներ են կապուած, բայց կատուն գիշեր ցերեկ ազատ ման է գալիս: Խելացին հոգսերի տակից չի կարողանում դուրս գալ, իսկ տգէտը ուրախութեանց մարգագետիններում պար է գալիս:

Այս վերոյիշեալ Տասնուչորս Աւանդը որ արի, նրանց իւրաքանչիւրի վերայ մի առակ եւ մի հետաքրքրելի պատմութիւն կայ, ո՛վ որ կամենայ իմանալ, պէտք է Սարանտափ կոչուած լեռը գնայ եւ այն տեղից կարող է նրանից բացատրութիւնը իմանալ:»

Արդ երբոր հնագէտը գրուածին միտքը թարգմանեց, իսկոյն արքայ Տաբիշլիմ ոտք ելաւ եւ գրուածը յարգանօք համբուրելով ասաց. Ինձ տրուածը ո՛չ թէ ոսկին եւ արծաթն այլ խորհրդոց գանձ է եղել: Միտքը զարգացնող եւ զարդարող անգին խօսքերի գանձ՝ եւ ո՛չ թէ մարմինը զարդարող թանկագին քարերի կամ չքեղ զգեստների գանձ: Քանզի, փառք Աստուծոյ, ես այնքան գանձեր ունիմ որ այդ գտնուած ոսկւին եւ արծաթին կարօտ չեմ, այլ պէտք է որ ի շնորհակալութիւն այս թանկագին խօսքերի այդ ամենը բաշխել աղքատների կամ գործածել բարի գործերի որ Յուշենկ թագաւորի հոգին էլ ուրախանայ:

Եւ երբոր մայրաքաղաք վերադարձան, գիշերը մինչեւ առաւօտ թագաւորը Սարանտափ լեռան ճանապարհորդութեան վերայով խորհեց: Առաւօտ լուսանալիս հրամայեց որ երկու անձինք, որոնք խելացի եւ անկեղծ էին, գան իւր մօտ. եւ սկսեց գիշերուայ խորհածը նրանց պատմել թէ. Սարանտափ լեռան ճանապարհորդութիւնը մտքումս տեղ է բռնել եւ այն տեղ գնալու փափաքը բոլորովին ինձ յաղթել է: Դուք ի՞նչ էք խորհում այդ մասին: Ասացէք ձեր գաղափարը, որպէս զի խնդրի ամեն մասերը առանձին առանձին քննեմ եւ իրարու հետ բաղդատելով, ինչպէս որ օգտակարագոյն գտնուի, այնպէս անեմ:

Նրանք պատասխանեցին. Այդ խնդրի մասին անմիջապէս պատասխան չենք կարող տալ: Մեզ արտօնութիւն տուր այս օր եւ այս գիշեր դրա վերայով մտածենք, որպէս զի կարող լինինք օգտակարագոյն պատասխանը թագաւորին տալ: Միւս օրը երբոր թագաւորի առջեւ խօսելու արտօնութիւն առացան, մեծ խորհրդականը ասաց. Ո՛վ արքայ, նուաստս այնպէս խորհեցայ որ այդ ճանապարհորդութեան մէջ քիչ օգուտ կայ, բայց շատ դժուարութիւններ եւ նեղութիւններ. եւ հանգստութիւնն ու հեշտութիւնը մէկդի թողնելով դժուարութիւնները յանձն առնել եւ ներկայ հաճոյքները թողնելով ապագայ օգտի համար ճանապարհորդութեան դժուարութիւնները կրել խելացութիւն չհամարենք, որպէս զի մարդուն չպատահի ինչ որ պատահեց այն աղաւնիին: Թագաւորը հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը: Մեծ խորհրդականը սկսեց պատմել թէ. Լսած եմ որ, — ԵՐԿՈՒ ԱՂԱՒՆԻ մի բունի մէջ ընկերակցութեամբ ապրում էին. ոչ մէկի հետ առնչութիւն եւ յարաբերութիւն ունէին, ոչ էլ աշխարհի վէճերի վերայ տեղեկութիւն: Մէկին անունը Նուազող

էր, իսկ միւսին անունը Խաղացող ։ Այս երկու ընկերները ամէն առաւօտ եւ երեկոյ իրարու հետ ներդաշնակ երգում էին տեսակ տեսակ եղանակներ եւ այսպէս էին անցկացնում իրանց օրերը ։ Եւ եղաւ որ մի օր Խաղացողի մտքում ճանապարհորդութիւն անելու բաղձանքը յառաջ եկաւ, եւ իւր ընկերոջ ասաց. Մինչեւ ե՞րբ մենք մի եւ նոյն բունի մէջ ապրենք ։ Ես ցանկանում եմ մի քանի օրեր աշխարհի բոլորտիքը շրջել. քանզի ճանապարհորդութեան առթիւ շատ զարմանալի բաներ կը տեսնուեն եւ շատ փորձառութիւններ կ'ստացուեն ։ Որովհետեւ հիները ասել են թէ. «Սուրը, եթէ իւր պատեանից դուրս չգայ, պատերազմի դաշտում գործ չի կարող տեսնել եւ եթէ գրիչը իւր գլուխը ոտքի տեղ գործածելով թուղթի վերայ ման չի գայ, խօսքերի միտքը թուղթի վերայ չի գրուիլ ։» Ճանապարհորդութիւնը մարդուն դաստիարակն է, հարստութեան դուռը՝ եւ գիտութեան աղբիւրն է ։ Եթէ ծառը կարողանար ինքնիրան տեղափոխել, կացնի եւ սղոցի չարչարանքը չէր կրել ։

Նուագողն ասաց. Ո՛վ սրտակիցդ իմ, դու ճանապարհորդութեան ցաւերը չես տեսել եւ օտարութեան նեղութիւնները չես կրել. ճանապարհորդութիւնը մի ծառ է որ բաժանումից ի զատ ուրիշ պտուղ չի տար եւ օտարութիւնը մի ամպ է որ բաց ի անարգանքից ուրիշ բան չի տեղար ։

Խաղացողն ասաց. Թէեւ ճանապարհորդութիւնը դժուար եւ օտարութիւնը վշտագին բան է, սակայն քաղաքներ տեսնել եւ նորանոր բաները նկատել խիստ հաճելի եւ մխիթարական է ։ Եւ եթէ մարդ պանդխտութեան վարժուի, դրանից յետոյ այնքան վիշտ չի զգար նրանից. նաեւ աքանչելի երկիրների տեսութիւնը չի թողնիլ որ մարդս օտարութիւնից այնքան նեղգործուի ։ Իրաւ օտարութեան փուշերը շատ են, սակայն ինձ ի՛նչ պէտք է փուշեր, քանի որ աչքիս առջեւ վարդ կունենամ ։

Նուագողն ասաց. Ո՛վ սրտիս հատորը, աշխարհ շրջիլը եւ երկիրներ տեսնելը մտերիմ ընկերների հետ միասին լաւ է, բայց մէկը, որ իւր մտերիմների ընկերակցութիւնից հեռանայ եւ սիրելիների տեսութիւնից զրկուի, նրան այդ բաների տեսութիւնը այնքան չազդեր ։ Ես գիտեմ որ բարեկամներից եւ մտերիմներից հեռի մնալը ցաւոց դժուարագոյնն է ։ Այո՛, բաժանումը դժոխքից մի նշան է, ճիշդը ասած, դժոխքը բաժանմունքից մի նշան է ։ Ուրեմն քանի որ ապրուստ ունինք, պէտք է որ առողջութիւնը եւ ապահովութիւնը թանկագին համարելով՝ դատարկ փափաքներին չհետեւինք ։

Խաղացողն ասաց. Ո՛վ ժամանակի ընկեր, այսուհետեւ էլ բաժանմունքի ու կարօտութիւն քաշելու վերայ մի խօսիլ որ

աշխարհումս ընկերներ պակաս չեն լինելու, եթէ մի ընկերից բաժանուիմ մի ուրիշ ընկերի կը հանդիպիմ, ինչպէս որ ծերերն ասել են. «Ոչ մի ընկերի եւ ոչ մի երկրի սիրտ մի կապիլ, քանզի աշխարհը ընդարձակ եւ մարդիկ բազում են ։» Էլ սրանից յետոյ ճանապարհորդութեան դժուարութիւնների ցուցակը ինձ մի կարդալ, որովհետեւ այդ դժուարութիւնները մարդս փորձառու կը շինեն ։

Նուագողն ասաց. Ո՛վ պատուական ընկեր, հիմա որ դու սիրտդ ընկերներից կտրում ես եւ հին կապակցութիւնը լուծելով նորերի հետ կապակցութիւն անել ես սկսում, իմաստունի խօսքից, որ ասել է. «Հին բարեկամը ամենեւին մի թողնիլ,» դուրս ես գալիս ։ Քո նպատակի վերայ խօսիլդ ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ, քանի որ թշնամու կամացը կը մատնուի նա, որ չի լսեր բարեկամեցող ընկերի խրատը ։

Խօսքը այս տեղ հասնելիս, խաղացողը իւր սիրտը ընկերոջ խօսակցութիւնից կտրելով վանդակից ազատուողի պէս թռաւ, ամենայն եռանդով եւ ուժգին կերպով դէպ ի վեր թռչելով օդի մէջ շատ բարձր լեռների եւ դաշտերի ու այգիների վերայից անցնելով, հասաւ մի բարձր սարի վերայ, որի գագաթը երկնքի կամարն էր հասնում, եւ այնքան մեծ էր որ երկրագունդը նրա ստորոտում գտնուող մի կոյտ հողի չափ էր համարվում ։ Այս տեղ տեսաւ մի լեռնադաշտ, ուր զեփիւռը փչում էր, գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած ականց շուրջը մարգագետնի վերայ ։ Այս տեղ Խաղացողին շատ հաճելի եկաւ եւ քանի որ օրուան վախճանը մօտ էր, որոշեց այդ գիշերը այն տեղ իջեւան անել. բայց նա դեռ չհանգստացած յանկարծ մի սաստիկ փոթորիկ բարձրացաւ, օդը լեցուեցաւ փոշիով եւ աւազով, ամպերը շրջապատեցին լեռը, որոտումներ գոռացին, կայծակներ զարկին եւ սկսեց անձրեւ տեղալ ։ Կայծակների հարուածից եւ որոտումների գոչիւնից երկիրը դողում էր ։ Այս միջոցին Խաղացողին համար մի տեղ չէր գտնվում որ անձրեւից պատսպարուէր ։ Երբեմն մտնում էր ճիւղի տակ, երբեմն ապաստանում էր տերեւների ներքեւ, սակայն անձրեւը հետզհետէ սաստկանում էր, որոտումները գոչում ու կայծակները հարում էին ։ Վերջապէս հազար վիշտերով գիշերը անցկացրեց մերթ ընդ մերթ ինքնիրան ասելով. Եթէ մտերիմ ընկերի խրատը լսէի այս փոթորիկին չէի հանդիպիլ ։ Եւ իւր բոյնը յիշելով, ասում էր. Եթէ գիտենայի որ հայրենիքից ու հաւատարիմ ընկերից բաժանուիլը այսքան դժուար է եղել, ամենեւին չէի բաժանուիլ ։ Արդ երբոր առաւօտ եղաւ եւ արեւը սկսեց իւր ոսկեճաճանչ ճառագայթները երկրի վերայ արձակել, աղաւնին չէր կարողանում որոշել թէ իւր բոյնը վերադառնայ, կամ երեք օր եւս շրջակայքը

ալցնել։ Ցանկարծ այս միջոցին մի բաղէ իւր պտտտող ճիրաննե-
րը բացած, արեւի ճառագայթից էլ արագ, իջաւ աղաւնու վերայ։
Խեղճ Յաղացողը երբ տեսաւ որ բաղէն իւր վերայ է յարձակւում,
խելոյն նրա սիրտը սկսեց բաբախել եւ բոլորովին ուժասպառ
լինել։ Այս անելի վտանգի մէջ իւր հաւատարիմ ընկերի խրա-
տը միտքը բերելով՝ կատարելապէս համոզուեց իւր ազնուու-
թեան ու անփորձ եւ սխալ քայլ առնելուն վերայով։ Ուխտեր
արաւ եւ երդումներ կերաւ որ եթէ այս վտանգից ազատուի, այլ
եւս հայրենիքից եւ մտերիմներից չհեռանայ։ Այդ երբոր աղաւ-
նին այս բարի որոշումն արաւ, այս միջոցին յանկարծ մի անօթի
արծիւ, որ իրան կերակուր գտնելու էր դուրս եկել, երբ տեսաւ
բաղէն եւ աղաւնին, իւր մտքումը ասաց. Թէեւ այդ աղաւ-
նիով փորս չի կշտանայ, սակայն իբրեւ նախաճաշիկ կարելի է
գործածել։ Ուստի վերայ յարձակուեց, բայց որովհետեւ բաղէի
ճիրաններում գտնուող ձգողական զօրութիւնը արծուի ճանկե-
րում չկար, ուստի հաւասարակշռութիւնը չթողեց որ աղաւնին
բաղէի առջեւից որսայ։ Այդ այս երկու գիշատիչ թռչունները
սկսեցին իրարու հետ կռուել, իսկ աղաւնին պատեհութիւն գտա-
նելով, ինքն իրան առ ու դողով մի վէմի տակ հասցրեց եւ
այն տեղ մի փոքր ծակից, որ ճնճղուկը դժուարութեամբ կա-
րող էր մտնել, մտնելով գիշերը սրտի նեղութեամբ լուսացրեց։
Առաւօտեան թէեւ քաղցածութիւնից թռչելու ոյժ չունէր, սա-
կայն ճարահատեալ թեւերը իրար խփելով՝ հազար անով այս
կողմ այն կողմ նայելով, ամենայն զգուշութեամբ իւր առջեւն
ու ետեւը դիտելով գնում էր։ Յանկարծ տեսաւ մի աղաւնի, ո-
րի առջեւը բաւականաչափ ցորենի հատիկներ կային։ Եւ որով-
հետեւ Յաղացողին քաղցածութիւնը յաղթել էր, երբոր տե-
սաւ իւր ցեղից մէկի առջեւ ցորենի հատիկներ, առանց երկբա-
յութեան յառաջ գալով սկսեց ուտել. եւ դեռ մի հատ չկերած
ոտքը կապուեցաւ որոգայթի մէջ։ Յաղացողը այդ աղաւ-
նիին սկսեց նախատել թէ. Ո՛վ եղբայր, քանի որ մենք մի ցե-
ղից ենք, ինչու համար դու տգիտութեան եւ հիւրասիրու-
թեան պայմանը չկատարեցիր։ Ինչու համար ինձ որոգայթից
չզգուշացրիր։ Աղաւնին պատասխանեց. Թո՛ղ տուր, նախասահ-
մանութիւնից փախուստ չկայ։ Յաղացողն ասաց. Այդ եթէ ինձ
այս որոգայթից ազատել կարողացող փրկչին չե՞ս կարող ա-
ռաջնորդել ու ինձ վերայ մի յաւիտենական երախտիք դնել։ Ա-
ղաւնին ասաց. Եթէ ես մի փրկութեան ճանապարհ գիտենայի,
ինքզինքս որոգայթի մէջ չէի թողնել։ Քո վիճակը նման է այն
ուղտի ձագի վիճակին, որ երկար ճանապարհ գնալուց յետոյ յոգնե-
ցաւ եւ իւր մօրը խնդրեց. Մա՛յր, մի քիչ հանգստացիր, որպէս զի

չունչ առնեմ։ Մայրը պատասխանեց. Ո՛վ կոյր, չե՞ս տես-
նում որ Նօխթան (քթակապ) ուրիշի ձեռքն է։ Եթէ իմ կամքովս
լինէր իմ կռնակս բեռից եւ քո ոտները քայլելուց կազատէի։
Յաղացողը երբ իւր յոյսը կտրեց, սկսեց թեւերը իրար խփել եւ
ինքնիրան այս կողմ այն կողմ զարնել եւ երբոր իւր յուսոյ չըղ-
թան հատատուեցաւ, այն ժամանակ որոգայթին կապը, որ եր-
կար ժամանակից ի վեր պինդ կեցել էր, յանկարծ կտրուեցաւ
եւ երբոր իւր ոտքը որոգայթից պրծաւ, խելոյն սկսեց թռչել
դէպ ի հայրենիք եւ այս բանից այսպիսի հեշտութեամբ ազատ-
ուելու ուրախութիւնից քաղցածութիւնը մոռացաւ։ Վերջա-
պէս թռչելով հասաւ մի աւերակ գիւղ եւ այն տեղ մի ար-
տի մօտ մի պատի վերայ վայր իջաւ։ Այս միջոցին արտը պահ-
պանելու համար մի պատանի այն դաշտում ման էր գալիս, եր-
բոր աչքը աղաւնուն ընկաւ խորովածի հոտը իւր ռնգացը մէջ
նորոգուեցաւ եւ մի գլոր քար պարսի մէջ դնելով նետեց ու
զարկաւ աղաւնու թեւին։ Աղաւնին այս հարուածից գլուխը վար
ծռելով ընկաւ այդ պատի առջեւ գտնուող մի խորունկ հորի
մէջ։ Գիւղացու տղան տեսաւ որ էլ իւր որսը ձեռք չգալ, ուստի
նրան թողնելով այդ գնդանի մէջ, գնաց իւր տունը։ Յաղացողը
այս հորի մէջ իւր տկարութիւնը ու անօգնականութիւնը տա
Նուագիչն ուղղելով ասում էր. Յիշում եմ այն օրերը երբ քո
մօտն էի բնակւում, աչքս լուսաւոր ու անձս ապահով էր։ Այնպէս
էի կարծում որ երբեք առանց ընկերի չեմ մնալ. սակայն այս իմ
կարծիքս փուճ է եղել։ Այդ միւս օրը հազար ու մէկ ջանքով
ինքնիրան հորի բերանը հասցրեց։ Լալով եւ ողբալով մինչեւ կէս
օր հասաւ իւր բոյնը։ Նուազողը իւր ընկերոջ թեւերի ձայնը լսե-
լով, նրան դիմաւորեց եւ իւր մօտը նստեցնելուց յետոյ, հարց-
րեց. Ո՛վ սիրելիս, ո՞ւր էիր։ Եւ քու վիճակդ ինչպէս անցկա-
ցաւ։ Յաղացողը պատասխանեց. Յօսքին բովանդակութիւնը այս
է։ Լսել էի որ ճանապարհորդութիւնը շատ փորձառութիւններ է
սովորեցնում եւ իմ սովորած փորձառութիւնը սա եղաւ, որ սրա-
նից յետոյ որչափ որ ապրելու լինիմ, օտար երկրում չեմ գնալու
եւ ընկերների ու մտերիմների մօտից չեմ հեռանալու։ Այս առակը
դրա համար բերեցի, որ թագաւորը ներկայ հանգիստը ու մտե-
րիմների առնչութիւնը օտարութեան եւ ճանապարհորդութեանց
վիշտերի հետ չփոխէ։

Թագաւոր Տայխշլիմը ասաց. Ո՛վ խորհրդական, թէեւ ճա-
նապարհորդութեան մէջ դժուարութիւններ շատ կան, սակայն օ-
գուտներն էլ անհամար են։ Երբոր մէկը օտարութեան մէջ դժուա-
րութիւնների ու նեղութիւնների ենթարկուի, նրանցից այնպի-
սի փորձառութիւններ կը սովորի որ իւր բոլոր կեանքում կարող է

նրանից օգուտը վայելել, եւ անտարակոյս մեծ յառաջդիմութիւն կարող է շահել ճանապարհորդութեանց միջոցով։ Եթէ մէկը իւր ծնած ու մեծացած տեղում մնալով իւր գլուխը դուրս չի հանէ իւր վշտապատ հայրենիքից, նա կը զրկուի քաղաքները եւ երկիրները, մեծամեծները ու սարերները տեսնելուց։ Բազէի թագաւորաց բազուկների վերայ նստիլը նրա համար է որ նա գլուխ չի ծռել բոյնի մէջ նստելու։ Իսկ բուն աւերակի մէջ անարգանքը նրա համար է քաշում որ իւր սիրտը աւերակից չէ կտրում։ (Ճանապարհորդողը գովելի կ՚լինի, խոհուն մտաց հայելի կ՚լինի։ Ջուրը որ նրանից մաքուր բան չկայ, երբ մի տեղում շատ մնայ գարշելի կ՚լինի։) Եւ այն որսորդ բազէն, որ անգղի ձագերի հետ մեծցել էր, եթէ նրանց բունում մնալով օդում թռչելու ճանապարհորդութիւնը չանէր՝ թագաւորի կրթութեան չէր արժանանայ։ Մեծ խորհրդականը խնդրեց. Այդ դէպքի որպիսութիւնը ի՞նչպէս է եղել։ Ռայ Դաբշլիմ ասաց. Պատմութեանց մէջ լսած եմ որ.—

ՄԻ ԶՈՅԳ ԱՐԱԳԱԹՌԻՉ ԲԱԶԷՆԵՐ միասին մի բարձր լերան ծայրի վերայ գտնուող ժայռի խոռոչում բոյն էին դրել։ Նա այնպէս լեռ չէր որ երկրի վերայ նրա չափ բարձր լեռ գտնուէր. թերեւս մի երկինք էր երկնից վերայ։ Մի ժամանակից յետոյ Արարիչը նրանց մի զաւակ բաշխեց եւ ծնողական գութից ստիպուած մի օր երկուսը միասին, ձագը բոյնի մէջ մենակ թողնելով գնացին կերակուր հարելու, եւ բաւական երկար ժամանակ ուշացան։ Ձագին ախորժակը ձգտում տալով սկսեց կերակուր որոնել եւ այս կողմ այն կողմ պտըտիլ։ Մէկ էլ յանկարծ բունին ծայրը հասնելով վայր ընկաւ դէպ ի լերան ստորոտը։ Բայց սա վայր ընկնելիս մի անգղ, որ դուրս էր եկել կերակուր որոնելու, աչքերը վեր տնկած սպասում էր մի կողմից որս տեսնելու. յանկարծ աչքը հանդիպեցաւ բազէի ձագին, որ վայր էր ընկնում։ Անգղը կարծելով թէ ուրիշ անգղի ճանկերից ազատուած մուկ է, անմիջապէս ժրութեամբ թռաւ եւ դեռ նա գետին չի հասած օդի մէջ բռնեց նրան եւ տարաւ իւր բոյնը։ Երբոր վար դրաւ, նրա կտուցից եւ ճիրաններից իմացաւ որ որսի թռչունների սերունդից է, ուստի ազգասիրութիւնը իւր մէջ արթնացաւ եւ ինքնիրան խորհեց. Տես Արարչի գութը որ սրա կեանքը պահպանելու ինձ միջոց արաւ, եթէ սրա ընկած ժամանակ ես այն տեղ պատրաստ չլինէի, պիտի ընկնէր քարերի վերայ եւ իւր բոլոր ոսկորները ջարդուփշուր պիտի լինէին, եւ քանի որ նախախնամութիւնը ինձ սրա կենդանութեան միջոց արաւ. ուստի լաւագոյնն այն է որ սրան իբրեւ որդի սնուցանեմ եւ մեծացնեմ։ Արդ սկսեց նրան էլ իւր զաւակների մէկին պէս սնուցանել մինչեւ որ այս բազէի ձագը մեծացաւ։ Երբոր մեծացաւ սկսեց նրա

62/22-68

բնական յատկութիւնները եւ ձգտումներն էլ երեւան գալ։ Թէեւ նա ինքնիրան անգղի ձագ էր կարծում, սակայն իրան ձգտումներն ու կազմուածքը նրանցից տարբեր էր տեսնում, սրա համար ափշութեան մէջ մնացած, ասում էր. Եթէ ես այս բունից չեմ, ապա ի՞նչու այս տեղ եմ, իսկ եթէ ես էլ այս բունից եմ, ապա ի՞նչու բնութեամբ եւ կերպարանքով նրանցից տարբեր եմ։ Ո՛չ կարող եմ ինձ այս շրջանում կարծել եւ ո՛չ էլ այս խումբից ինձ դուրս համարել։

Մի օր անգղը սրան տխուր տեսնելով հարցրեց. Որդեակ իմ, քեզ շատ տխուր եմ տեսնում. պատճառը ինձ անյայտ է։ Եթէ սրտումդ մի բանի փափաք ունիս, ինձ ասա, որ իսկոյն պատրաստեմ։ Բազէն պատասխանեց. Այո՛, ես էլ ինձ տխուր եմ գտնում եւ տխրութեանս պատճառը չեմ գիտեր եւ եթէ գիտենամ էլ չեմ կարող յայտնել։ Հիմա այնպէս եմ խորհել որ ինձ արտօնութիւն տաք երկու երեք օր աշխարհի բոլորտիքը շրջիմ, գուցէ այս տաղտուկ տխրութիւնս փարատուի եւ սքանչելի բաների տեսութիւնը սիրտս ուրախացնէ։ Անգղը երբոր բաժանման խօսքը լսեց, ասաց. Ո՛հ, ինչ որ ասես ասա՛, սակայն այդ դառն բաժանման վերայով խօսք մի՛ անիր։ Որդեակ իմ, այս ի՞նչ խորհուրդ է որ արել ես, այս ի՞նչ է որ ասում ես։ Ճանապարհորդութիւնը մի ծով է մարդակեր եւ մի իժ է թունաբեր։ Սա հասարակ մարդիկ ճանապարհորդութիւն են անում իրանց ապրուստը հայթայթելու համար կամ իրանց հայրենիքում հալածվում են, եւ հարահատեալ ուրիշ կողմ են ճանապարհորդում եւ քեզ սրանցից ոչ մէկը չէ պատահել։ Փառք տո՛ւր Աստուծոյն եւ գոհ եղիր ինչ որ վայելում ենք այս տեղ ապահովութեան անկիւնում։ Քանի որ դու իմ բոլոր զաւակներիս վերայ գերազանցութիւն ունիս, ուստի խելացութիւն չէ հանգիստը եւ պատիւը ձեռքից փախցնել։ Բազէն ասաց. Ձեր ասածը սիրոյ եւ գութի խօսքեր են, սակայն ես որչափ որ խորհում եմ, տեսնում եմ որ այս բնակարանը եւ այս ապրուստը ինձ յարմար չէ։ Մտքիցս այնպիսի խորհուրդներ են անցնում, որ ասելու կարող չեմ։ Անգղը իմացաւ որ նրա բնական կարողութիւնները արթնացել են, ուստի դրա վերայից անցնելով ասաց. Իմ ասածս գոհունակութեան կողմանից է, բայց քո ասածը ագահութեան կողմանից։ Եւ ագահը միշտ զրկուած է ամեն բանից։ Վախենում եմ որ քեզ էլ նոյնը պատահի, ինչ որ պատահել է այն ագահ կատուին։

Բազէն հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ եղելութիւնը։

Անգղը ասաց. ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ մի պառաւ կար, վերջին աստիճան նիհար։ Բնակում էր մի խրճիթում, որ աւելի նեղ էր

ՀՍՍՌ-Арм.ССР

քան թէ տգէտների սիրտը եւ միտքն՝ քան ժլատների կոյրը։ Եւ ունէր մի կատու, որ ամենեւին հացի երես չէր տեսել եւ կերակուրի համ չէր առել, այլ գոհ էր լինում երբ յաջողւում էր մի մուկ որսալ եւ ուրախութիւնից գանձ գտնող աղքատի նման գոչում էր. Ո՛հ, այս իմ տեսածը իրողութիւն է թէ երազ։ Եւ որովհետեւ պառաւի տան մէջ միշտ սով էր տիրում, ուստի կատուն շաբաթներով գոհ էր լինում մէկ մուկով, բայց միշտ նիհար եւ անզօր էր։ Մի օր շատ դժուարութեամբ կտուրի վերայ ելաւ եւ տեսաւ մի ուրիշ կատու, որ դրացու տան պատին վերայ առիւծի վեհանձնութեամբ ման է գալիս։ Պառաւի կատուն երբ տեսաւ որ իւր ցեղակիցը այսպէս գէր եւ առոյգ է, զարմացաւ եւ կանչեց. Ո՛վ ընկեր, ո՞ւստի ես գալիս, այս փառքը եւ զօրութիւնը քեզ ո՞ր տեղից է։ Դրացու կատուն պատասխանեց. Ես իշխանի սեղանին հացի փշրանքները ուտողն եմ։ Որ ժամանակ որ սեղանը բացւում է, մի քիչ համարձակութիւն գործածելով մսի գէր կտորներից յափշտակում՝ եւ այսպէս ամեն օր փորս կշտացնում եմ։ Պառաւի կատուն հարցրեց. Գէր մսի կտորը ի՞նչ տեսակ բան է, եւ հացի փշրանքներ ի՞նչ ասել է։ Ես իմ կեանքում բաց ի մուկից եւ պառաւի ապուրից ուրիշ բան չեմ կերել։ Դրացու կատուն ծիծաղեց եւ ասաց. Հէնց դրա համար քեզ մամուկից զանազանել չի լինում։ Այս նիհար ու տկար մարմինը, որ դու ունիս, բոլորովին անարգանք է մեր ազգին։ Քեզ կատուից բաց ի ականջից եւ պոչից էլ ի՞նչ է մնացել, գրեթէ բոլորովին մամուկ ես դառել։ Եթէ դու տեսնես իշխանի տունը եւ նրա խոհանոցը եւ զգաս այն անուշ կերակուրների հոտը նոր կեանք կ'ստանաս։ Պառաւի կատուն ասաց. Աղաչում եմ որ դրացութեան եւ ազգասիրութեան պարտքը կատարելով ինձ մի անգամ քո հետ տանես իշխանի տունը։ Արդ դրացու կատուի ազգային գութը շարժուելով խոստացաւ որ սրանից յետոյ, առանց նրան բան չուտէ իշխանի տնում։ Պառաւի կատուն այս խոստման վերայ ուրախանալով ոյժ ստացաւ եւ կտուրից վայր իջնելով եղելութիւնը պառաւին պատմեց։ Պառաւը սկսեց նրան խրատ տալ. Ո՛վ սիրելի ընկեր, աշխարհասէր անձանց խօսքերին մի՛ խաբուիր, Աստուծոյ տուածով գոհ եղիր. քանզի ագահութիւնը մարդուն դէպ ի կորուստ կ'տանի։ Բայց իշխանի կերակուրների սէրը այնպէս տեղ էր բռնել նրա սրտում որ պառաւի խրատը նրան ազդեցութիւն չէր անում։ Հետեւեալ օրը դրացու կատուի առաջնորդութեամբ գնաց իշխանի տունը։ Բայց մի օր առաջ իշխանի տան կատուները շատ անկարգութիւն անելով սեղանին ձեռք էին երկնցրել եւ իշխանը սաստիկ պատուիրել էր. մի աղեղնաւոր այն տեղ նստի, որ կատուն որ մի պատառ սեղանից փախցնելու լինի, իսկոյն նրան նետահար

անէ։ Պառաւի կատուն այս բանից անտեղեակ, երբոր անուշ կերակուրների հոտը զգաց, իսկոյն առանց համբերելու վազեց սեղանից մի պատառ առաւ, եւ դեռ չծամած իսկոյն նետը անցաւ իւր լեարդին եւ սկսեց արիւնը վազել։ Նրա վերջին խօսքը այս էր. Եթէ ես այս նետի հարուածից ազատուեմ այն ժամանակ բաց ի ինձանից, պառաւից, նրա խրճիթից եւ մուկից, ուրիշ բան պիտի չգիտենամ։ Ո՛վ իմ սրտիս սիրելին, այս առակը նրա համար բերեցի, որ դու իմ բոյնս եւ քո վայելած կերակուրները քեզ բաւական սեպելով քո վիճակից գոհ լինես։ Մի՛ գուցէ աւելին խնդրելով քո ունեցածն էլ կորցնես։

Բաղէն ասաց. Ձեր ասածը զուտ հայրական անկեղծ խրատներ են, սակայն մասնաւոր բաներով գոհ լինելով մնալ անզօրների գործ է, եւ միայն ուտել խմելը բաւականութիւն սեպել անասնոց կը վայելէ։ Ով որ ուզէ յաղթութեան մրցանակը ստանալ պէտք է ջանք անէ։ Վեհ բնաւորութիւնը երկչոտին գործերին չի հաւնիր։ Եւ առողջ խելքի ծարաւը այս հողեղէն բաներով չանցնիր։

Անգղը ասաց. Այդ գաղափարը որ մտել է քո գլխի մէջ, բաց ի երեւակայելուց ուրիշ կերպով չի կարող գոյութիւն ունենալ։ Ոչ մէկը մի գործի ձեռք չի զարնիր, եթէ նրա վերաբերեալ բոլոր հարկաւոր գործիքները չունենայ։ Իսկ եթէ մէկը, առանց նախապատրաստութեան մի գործ սկսի, չի կարող յառաջ տանիլ։ Դու չես կարող խօսքով բարձր աստիճանի հասնիլ, եթէ նրա վերաբերեալ կարեւոր նախապատրաստութիւնը չունենաս։

Բաղէն ասաց. Իմ ճանկերի ոյժը ինձ մեծութիւն ձեռք բերելու գործիքն է, եւ իմ կտուցը ինձ բարձր աստիճանի հասցնելու միջոց։ Միթէ դու չե՞ս լսել այն սրամիտ քաջի պատմութիւնը, որ բազուկի զօրութեամբ աշխարհակալ եղաւ։

Անգղը հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Բաղէն ասաց. ՎԱՂԵՄԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ մի աղքատ մարդ կար, որ իւր ապրուստը հայթայթելու համար շատ դառն աշխատանքների անձնատուր էր եղել, եւ անյաջողութիւնների ու դժբաղդութիւնների պատճառաւ իւր կենաց մէջ գրեթէ իւր երեսին երկու անգամ ժպիտ չէր եկել։ Երբեմն կուշտ երբեմն սոված անցկացնում էր իւր օրերը։ Մի ժամանակից յետոյ Արարչի ողորմութիւնը նրան մի որդի պարգեւեց։ Թէեւ հայրը տեսաւ որ տան ծախքը աւելացաւ, սակայն նրա ծննդեամբը թերեւս Աստուած ողորմելով օրական հացի կարժանանանք ասելով, իւր ձեռքից եկածին չափ հոգս էր տանում նրան սնուցանելու եւ դաստիարակելու։ Տղան դեռ փոքր ժամանակից միշտ խօսում էր նետի եւ աղեղի վերայ։ Որչափ որ նրան դպրոց էին ուղարկում, նա

հրապարակում մամ էր գալիս։ Երբ դաս էին տալիս, տառերը ուրիշ անուններով էր սովորում։ Այբին(*) անունը փամփշտանոց էր դրել, եւ Բէնին դրօշակ էր կոչում, այսպէս իւրաքանչիւր տառը մի զէնքի էր նմանեցնում։ Որչափ որ ջանացին գիր գրել սովորեցնել, չյաջողուեցաւ. քանզի նա միշտ սրի պատկեր էր գծագրում, եւ վահանի շրջանակ էր քաշում թղթի վերայ։ Վերջապէս երբոր պատանեկութիւնից երիտասարդութեան անցաւ, հայրը ասաց. Որդիս, ես բոլոր ժամանակ քո վերայ ուշադրութիւն եմ դարձրել։ Իմացի՛ր որ երիտասարդութիւնը պատանեկութեան վերաբերութիւն չունի։ Քո կազմուածքից եւ աշխուժութիւնից երեւում է որ ոչ մի բնական յատկութիւնից զրկուած չես։ Եւ դեռ չարակամ ցանկութիւնը քեզ կորստական վիճակի մէջ չգցած կամենում եմ քեզ ամուսնութեան բերդումը ապահովացնել. ուստի մտածել եմ մեր ազգից, մեր վիճակի յարմար, մի օրիորդի հետ քեզ ամուսնացնել։ Դու ի՞նչ ես ասում այդ մասին։ Որդին ասաց. Ո՛վ պաշտելի հայր, որի հետ որ ես ուզում էի ամուսնանալ, արդէն նրա հետ ուխտել եւ նշանուել եմ։ Այս բանի համար ձեզ ծանրութիւն չեմ տալ, եւ ոչ էլ ձեզանից օգնութիւն կը խնդրեմ։ Հայրը ասաց. Ո՞ւր է, եւ ո՞վ է այն, որ դու նրա հետ ուխտ եւ պայման ես կապել։ Որդին ներս մտնելով մի սուր հանեց եւ ասաց. Ո՛վ հայր, գիտացի՛ր որ երկիրը իմ իշխանութեան տակ բերելը ինձ հետ նշանուած հարսն եմ համարում, իսկ ուխտի մուրհակը այս սուրն է։ Արդ այս երիտասարդը իւր արիութեամբ շատ երկիրների վերայ տիրապետեց։ Այս առակը նրա համար բերեցի որ գիտենաս թէ հարստութիւն եւ իշխանութիւն ձեռք բերելու համար ինչ բան որ հարկաւոր է, ես ունիմ։ Յուսալից եմ որ կարճ ժամանակամիջոցում, ես էլ կը հասնիմ իմ նպատակին. ուրեմն հիմա ինձ դատարկ խօսքերով չէք կարող այս գաղափարից հեռացնել։

Անգղը իմացաւ որ նա բարձր գաղափարների տէր թռչուն է եւ մնոտի խօսքերով կամ խարդախութիւններով նրան չի կարելի խաբել. ուստի ճարահատեալ նրան հրաման տուաւ ճանապարհորդութիւն անելու։

Արդ բազէն, անգղին եւ նրա ձագերին մնաք բարեաւ ասելով, թռաւ օդի մէջ։ Եւ մի ժամանակից յետոյ եկաւ մի լեռան վերայ իջաւ եւ տեսաւ մի կաքաւ, որի քրքանքի ձայնը ձորում արձագանք էր տալիս։ Բազէն կաքաւին տեսնելիս իւր բնութեան

(*) Գրքի հեղինակը այս տեղ Տէէօնակիրի (Սանսկրիտ) տառերն է գործածել նրանց իւր ժամանակի զէնքերին նմանեցնելով. բայց Թարգմանիչը հայերէն տառերի վերածելով այժմեան զէնքերին նմանեցրեց, որ ընթերցողին անհասկանալի չ'լինի։

մէջ ձգտում զգաց դէպ ի նրան եւ մի յարձակումով նրան որսաց եւ իւր ճիրաններով պատառեց ու կերաւ։ Եւ ուտելիս ասում էր. Գլխից մինչեւ ոտքը յարմար է իմ ախորժակին, կարծես թէ հէնց ինձ համար է ստեղծուել, ճանապարհորդութեան առաջին օգուտը սա եղաւ որ իսկոյն ազատուեցայ այդ անհամ կերակուրներից։ Արդ արագաթռիչ բազէն մի քանի օրեր ազատ օդի մէջ թռչելով կաքաւ եւ արտոյտ էր որսում։ Մի օր, երբ մի լերան գլուխ նստած էր, տեսաւ մի խումբ հեծեալ զօրքեր, որոնք շրջում էին լերան ստորոտը։ Սրանք այն երկրի թագաւորին ծառաներն էին որ որսորդութեան համար դուրս էին եկել, իրանց հետ բերելով որսի՛չ թռչունները։ Այս միջոցին թագաւորի բազէն թռչելով մի թռչուն էր ուզում որսալ, իսկ այս վեհանձն բազէն այս տեսնելով վերան յարձակուեց եւ որսը թագաւորի բազէի աչքերից յափշտակեց։ Թագաւորը նրա քաջութիւնը եւ ճարպիկութեամբ որսը խլելը տեսնելով, իսկոյն հրամայեց որ նրան համար միջոցներ եւ որոգայթներ լարեն, որ այդ քաջ բազէն առանց վնասուելու ձեռք բերուի։ Եւ այս կերպով այս բազէն թագաւորի ծառայութեան հասաւ, եւ վերջը թագաւորը նրա բնական ձիրքերին ու քաջութեանը հաւանելով, հրամայեց որ նրան համար որոշ տեղ, յարմար կերակուր, պատիւ, յարգանք ու ազատութիւն տրուի։ Եթէ առաջին տեղում, անգղների հետ մնար, նրա վիճակը այսպէս լաւ չէր լինիլ։ Այս առակը նրա համար ասացի, որ գիտենաք թէ ճանապարհորդութեան մէջ կատարեալ յաջողութիւն կայ։ Մարդս ճանապարհորդութեամբ ցած եւ անարգ վիճակից բարձր դիրքի է հասնում։

Երբոր արքայ Տապիշլիմի խօսքը վերջացաւ, միւս խորհրդականը պատասխանեց. Ինչ որ թագաւորը պատմեց ճանապարհորդութիւնից յառաջ եկած օգտի մասին, այնպէս խօսքեր չեն որ մարդ կարողանայ տարակուսիլ նրանց ճշմարտութեան վերայ։ Սակայն ծառայիդ մտքից սա է անցնում. քանի որ բոլոր հպատակների հանգստութիւնն ու ապահովութիւնը թագաւորի ապահովութիւնից եւ հանգստութիւնից է կախուած, ուստի հանգիստը թողնելով դժուարութիւնները յանձն առնել իմաստութիւնից հեռու է երեւում։

Թագաւորը ասաց. Դժուարութիւնները յանձն առնել քաջերի գործն է, եւ անտարակոյս մինչեւ որ թագաւորաց կերուխումը վիշտերի եւ ցաւերի հետ խառնուած չլինի, հպատակներին հանգիստ եւ խաղաղութիւն չի լինիլ։ Միայն իւր հանգիստն ու զուարճութիւնը որոնող թագաւորի իշխանութեան տակ մարդ չի կարող հանգիստ գտնել։ Պէտք է գիտենալ որ մարդիկ երկու դասակարգ են։ Մէկը իշխողներ կամ կառավարողներ են, որոնց

յատուկ է ընդհանուրի հանգստեան եւ ապահովութեան համար հոգ տանիլ. իսկ միւսը հպատակներ են որոնց տրուած է հանգիստ եւ խաղաղութիւն վայելել: Այս երկու դասակարգի վայելումը մէկին չի տրուիլ, կամ պէտք է հանգստութիւնը ընտրել եւ իշխելուց ու կառավարելուց ձեռք քաշել, կամ պէտք է իշխելն ու կառավարելը ընտրել եւ անդորրութիւն ու զուարճութիւն չորոնել: Պարտիզում Թագաւորել վարդին է վայելում. քանզի նա իւր անկողինը փուշերից է շինել, եւ իմաստունները ասել են. «Մարդ ջանասիրութեամբ կը հասնի իւր նպատակին: Եւ անձնուրացութեամբ նեղութիւնների տոկալով կարող է վեհ վիճակ ունենալ:» Ով որ մարմնի հեշտութիւնները եւ հանգիստը չսիրելով ջանացողութեան դրօշը բարձրացնէ, նա շուտով կը հասնի նպատակին: Ինչպէս այն վագրի կորիւնը որ զուարճաւէտ անտառի վերայ իշխանութիւն ունէր: Նրան կորսնցնելուց յետոյ, ընդդէմ այնքան թշնամիների խորամանկութիւններին իւր ճիգն ու ջանքը թափելով կրկին ձեռք բերեց:

Խորհրդականը խնդրեց. Այդ դէպքը ի՞նչպէս է եղել:

Թագաւորը ասաց. ՈՉ ԱՅՆՔԱՆ ՀԵՌԻ Պասրայից մի կղզի կար, ուր մի շատ գեղեցիկ անտառ կար, որի օդը մաքուր՝ եւ աղբիւրները ջինջ էին եւ ամեն կողմ ծաղիկներով զարդարուած էր: Շատ զուարճալի տեղ լինելուն համար Զուարճաւէտ անուն էր ստացել: Այս անտառի վերայ մի վագր տիրում էր, որ նրա ցասման սաստկութեան երկիւղից առիւծները չէին կարողանում այն տեղերին մօտենալ, եւ դաշտի բոլոր գազանները նրա բարկութեան ահից խաղաղ չէին կարող քնանալ: Որ մէկ ճանապարհի վերայ մի անգամ նստած լինէր, տարիներով ոչ ոք չէր կարող այդ ճանապարհից անցնելու համարձակիլ: Երկար ժամանակ այս անտառի վերայ տիրապետելով ապրեց: Բաց ի մի կորիւնից ուրիշ բան չունէր, որ իրան ուրախութեան առարկայ լինէր, եւ մտածել էր որ երբոր իւր որդին կորիւնը ատամներ եւ ճիրաններ ունենայ, այն ժամանակ անտառի կառավարութիւնը նրան յանձնելով ինքը մնացած կեանքը հանգստութեամբ անցկացնէ: Եւ դեռ իւր փափաքին չհասած մահը վերայ հասնելով նրա կենաց պարտիզի պտուղները աւար տարաւ: Արդ երբոր մի քանի գազաններ, որ առաջուց ուզում էին այս դաշտի եւ անտառի վերայ տիրապետել, նրա մահը լսելով անտառի վերայ յարձակուեցան, վագրի կորիւնը տեսաւ որ ոյժ չունի նրանց դիմադրելու, թէեւ շատ փորձեր արաւ եւ շատ պատերազմներ ու արիւնահեղութիւններ տեղի ունեցան, սակայն վերջը թշնամիից յաղթուելով փախաւ, եւ բաւական ժամանակ թափառական շրջելուց յետոյ մի ուրիշ անտառ հասաւ: Սա այն

անտառում գտնուող գազաններին յայտնից իւր գլխին եկածը եւ նրանցից օգնութիւն խնդրեց իւր հայրենիքը թշնամու ձեռքից ազատելու: Նրանք ասացին. Խղճալի՛, քո երկրի վերայ հիմա առիւծն է տիրապետել, ու նրա ահից ո՛չ փիղն է համարձակւում այդ անտառի մօտից անցնել, եւ ո՛չ էլ արծիւը նրա վերայից թռչել: Մենք նրա ատամների եւ ճանկերի դէմ չենք դիմանալ, դու էլ նրան դէմ կենալու զօրութիւն չունիս: Լաւն այն է որ գնաս նրա առջեւը խոնարհելով, ամենայն հաւատարմութեամբ իրան ծառայես: (Որ մարմինը որ իւր տեղից շարժել կարելի չէ, նրա համար ջիղերը յոգնեցնել ի զուր է:) Վագրի կորիւնը այս խորհրդին հաւանեց, եւ գնաց առիւծի մտերիմներից մէկին դիմելով իւր խնդիրքը առիւծի առջեւ հասցրեց: Առիւծը նրա խնդիրքը ընդունելով, ինչ գործի որ նա ցանկանում էր նոյն գործի վերայ դրաւ նրան: Նա էլ իւր գործին մէջ ջանք ու հաւատարմութիւն ցոյց տալով Թագաւորին ամենամտերիմներից մին եղաւ, այնպէս որ շատերը սկսեցին նրա կացութեան վերայ նախանձել: (Որուն որ ջանքը շատ լինի, նրա գործը ամենի գործից շատ կլինի:) Եւ եղաւ որ մի օր, առիւծը մի շատ կարեւոր գործ ունեցաւ: Այն ժամանակ այնքան տօթ էր, որ օդի մէջ ապրող կենդանիների ուղեղները եռում էին, եւ ծովի մէջ ապրողները իբրեւ ձուկ կաթսայի մէջ եփվում էին: Եթէ մի ամպ անձրեւ տեղալու լինէր, նրա կաթիլները օդի ջերմութիւնից կայծերի պիտի փոխուէին եւ եթէ մի թռչուն օդի մէջ թռչելու լինէր, նրա թեւերը արեգական ճառագայթներից թիթեռնիկի թեւերը ճրագի առջեւ այրուելուն պէս պիտի խանձուէին: Ձկնմորթը ծովի մէջ եփվում էր, եւ սաղամանդրը արեւի տաքութեան ահից չէր համարձակում կրակի միջից դուրս գալ: Թագաւորը խորհեց. Ո՞ւմ ասեմ որ այս սաստիկ տաք ժամանակում այս կարեւոր գործը յանձն առնէ կատարել, առանց երկիւղ կրելու ջերմութեան սաստկութիւնից: Այս միջոցին վագրի կորիւնը ուրիշ ծառաների շարքում եկաւ առիւծի առջեւ եւ նրան տխուր տեսնելով, որովհետեւ արտօնութիւն ունէր խօսելու, ամենայն խոնարհութեամբ հարցրեց Թագաւորի տխրութեան պատճառը: Եւ երբոր պատճառը իմանալով յանձնառու եղաւ Թագաւորի գործը կատարելու. իսկոյն ճանապարհի պատրաստութիւնը տեսնելով, եւ կէս օրուայ ճանապարհ գնալով, յաջողեցաւ Թագաւորի գործը կատարել: Գործը կատարելուց յետոյ սպասաւորները յառաջ գալով ասացին. Քանի որ գործը կատարուեցաւ, էլ ինչ հարկ կայ այսքան շտապով այս տօթում վերադառնալու: Մի ժամանակ հանգչենք այս զով ու հաճելի տեղը եւ ապա վերադառնանք: (Հանգիստ ու խաղաղ լինել պէտք է, քանի որ աշխարհի գործերին

եւ հոգսերին սահման չկայ։) Վագրը մի քիչ խորհելով ասաց. Թագաւորի առջեւ ընդունելութիւն գտնելս իմ ջանասիրութեամբ եւ ժրութեամբ է։ Եթէ սկսիմ ծուլութիւն անել, գուցէ այդ պատճառով այս իմ կատարած գործն իւր արժէքը կորցնէ Թագաւորի առջեւը։ Եւ շինութիւնը որ բարձրացել է ջանասիրութեամբ, լաւ չէ նրան կործանել անձնասիրութեամբ կամ անձնական հեշտութիւնը փնտռելով։ Վերջապէս Երբոր առիւծի առջեւը վերադարձան, ծառաները եղելութիւնը Թագաւորի ականջին հասցրին։ Թագաւորը լսելով, վագրը կանչեց եւ շատ յարգանք ու պատիւ տալով ասաց. Ինչպէս եւ Թագաւորել նրան է վայելում, որ իւր հանգիստը չորոնելով ընդհանուրի օգտին համար իւր անձը այս աստիճանի վտանգների է ենթարկում։ Եւ վագրին կոչումը իրան Թագաժառանգ անելով, դարձեալ անտառի կառավարութիւնը նրան յանձնեց, եւ այսպէս նրան խիստ մեծացրեց։ Այս առակի օգուտը սա է որ առանց ջանասիրութեան եւ հաւատարմութեան մարդ չի կարող իւր նպատակին հասնել։ (Առանց աշխատանքի գործ չի կատարուիլ, եղբա՛յր, վարձքը գործունեան կ'առնայ։)

Արդ խորհրդականները իմացան որ Թագաւորը հաստատ որոշել է Սարանտափ լեռը ճանապարհորդել եւ նրան խօսքով արգիլել կարելի չէ, ուստի իրանք էլ համաձայնեցան Թագաւորի խորհրդին։ Եւ Թագաւորը մին իրան տեղապահ անելով, նրան երկրի կառավարութեան վերաբերեալ հրահանգներ տալով ճանապարհ ելաւ։ Ամեն օր իւր իջեւան արած տեղերը հետազօտութիւններ անելով լեռներ ու գետեր, ծովեր ու դաշտեր անցնելով՝ նրանց վերայով քննութիւններ անելուց եւ փորձառութիւններ առնելուց յետոյ, հասաւ Սարանտափ քաղաքը։ Մի քանի օր այն տեղ հանգստացաւ, եւ աւելորդ բաները այն տեղ թողնելով, միայն մի քանի մտերիմների հետ ուղղուեցաւ դէպ ի Սարանտափ լեռը։ Տեսաւ մի խիստ շատ բարձր լեռ։ Որի ստորոտի ստուերը ընկել էր արեգակի վերայ, եւ նրա գագաթի շողշողումը մինչեւ Հրատը լոյս էր սփռում։ Ամեն կողմ մարգագետիններ տարածուած՝ եւ վարդեր ու ռեհաններ բուրում էին։ Գրեթէ Եդեմի պատկերն էր ներկայացնում։

Թագաւորը ամեն կողմ այցելեց։ Եւ այն տեղ գտնուած ընտրեալ տեղը տեսնելով, սպասաւորներից տեղեկացաւ որ այն տեղ մի իմաստունի բնակարանն է եղել։ Եւ այն իմաստունի անունը «ՊԻՏԻ-ՓԱՅ» էր, այսինքն, „Բժիշկ Գիրք"։ Հնդկաստանի գիտուններից ոմանք ասել են թէ. Նրա անունը «Փիլի-Փայ» էր, որ Հնդիկները արտասանում էին, «Ցրթի-Փաթ»։ Սա մի մարդ էր որ գիտութեան մէջ խիստ առաջացած եւ իւր բանականութիւնը

առաքինութեամբ զարդարած, ժուժկալութեամբ ապրելու կերպը սովորած, յոռի բնաւորութիւնը եւ չար ցանկութեան փուշերը ճգնութեան եւ աստուածպաշտութեան բոցերով այրած եւ աշխարհային մարդկանցից առանձնացած ապրում էր այն տեղ։

Թագաւորը նրա առջեւը մտնելիս, տեսաւ որ առանձնակեցութիւնը չափից անդին անցրած՝ ճշմարտութիւնը քննելում ամենայն զգուշութեամբ զբաղուած էր։ Գրեթէ մի հրեշտակ ապրում էր այն տեղ մարդու կերպարանքով։ Թագաւորն իմացաւ որ իւր բաղձանքը նրա միջոցով կատարուելու է. ուստի ամենայն ակնածութեամբ Պրահմանին առաջ գալով նրան խոնարհութեամբ բարեւեց։ Պրահմանը բարեւը առնալուց եւ Թագաւորին նստել հրաւիրելուց յետոյ, սկսեց հարցուփորձ անել նրա անցած ճանապարհի վերայով։ Տապիշլիմ Թագաւորը սկսեց պատմել իւր երազը, գանձ գտնելը, աւանդները եւ այն բոլոր եղելութիւնը մի ըստ միոջէ, սկիզբից մինչեւ վերջը, ինչ որ նա տեսել էր։

Երբոր Պիտփայ լսեց այս բաները, ասաց. Կեցցէ՛ Թագաւորը, որ գիտութիւն եւ խրատ որոնելով այսքան դժուարութիւններ յանձն առել՝ եւ զրկեալները ու բռնադատեալները պաշտպանելու պէտք եղած փորձառութիւնը առնալու համար այսքան երկար ճանապարհորդութիւն անելով եկել է այս տեղ։ Ուստի իմաստունը իւր պաշտամունքն ու հետազօտութիւնը մէկդի թողնելով՝ զբաղեցաւ Թագաւորին զարգացման պէտք եղած բաները սովորեցնել, եւ խօսակցութեան ժամանակ Յուշենկ Թագաւորի աւանդներն էլ յիշուեցան։ Թագաւորը մի առ մի պատմեց իմաստունին այն աւանդները, որ Յուշենկ Թագաւորը արել էր։ Եւ իմաստունը նրանց վերայով բացատրութիւններ տուեց, որոնք շատ օգտակար եղան Թագաւորին։

ՃԱՌԱԳԱՅԹՔ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆՍԱՐԿՈՒՆԵՐԻ ԵՒ ԲՍՈՒՆԵՐԻ ԽՕՍՔԵՐԸ ԼՍԵԼՈՒՑ ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ ՎԵՐԱՅ

Մեծահոգի Տավիշլիմ թագաւորը Պիտլիփայ իմաստունին ասաց․ Առաջին աւանդը սա էր ։ «Երբ մէկը թագաւորի աջեւ առաջին պատիւը գտնէ, անտարակոյս նախանձոտները նրա վերայ պիտի նախանձին եւ պիտի աշխատեն նրան իւր պատւից վայր գցել եւ տեսակ տեսակ խորամանկութիւններով պիտի ջանան թագաւորը նրա վերայ զայրացնել, ուստի թագաւորը պէտք է որ շատ զգուշութեամբ խնդիրը քննէ եւ առանց հաստատ ապացոյց ունենալու գանգատը չընդունէ, այն անձին դէմ, որին որ ինքը այնքան առանձնաշնորհութիւններ տալով իրան մտերիմ է սեպել ։» Արդ ես Պրահմանից(*) խնդրում եմ որ ինձ պատմէ մի անձի պատմութիւնը, որ թագաւորի աջեւ առաջին պատուին արժանացաւ, բայց խորամանկ նախանձոտների նենգութեամբ իւր աստիճանը կորսնցուց եւ բարեկամութիւնը թշնամութեան փոխուեցաւ ։

Պրահմանն ասաց․ Թագաւորութեան հաստատութիւնը այս աւանդի վերայ է ։ Եթէ թագաւորը նախանձոտ եւ նենգաւոր դաւաճանների խօսքին տեղի տայ, տարակոյս չկայ որ, երբ չարը երկու բարեկամաց մէջ տեղ մտնէ, այնպիսի չարիքներ յառաջ կը գան որ նրանցից ընդհանուրին սոսկալի վնասներ կարող է հասնել ։ Եւ շատ սարսափ ու զղջումներ յառաջ կը գան, ինչպէս որ առիւծին եւ եզին պատահեցաւ ։

(*) Պրահման, Սանսկրիտ լեզուով նշանակում է, իմաստուն ։

Մեծախոհ Տավիշլիմ թագաւորը հարցրեց․ Ի՞նչպէս է այդ պատմութիւնը ։

Պրահմանը պատասխանեց․ Պատմել են թէ․ Մի ՎԱՃԱՌԱԿԱՆ կար, որ շատ ցամաքներ ու ծովեր տեսած, արեւելք ու արեւմուտք շրջած, շատ տաքութեան ու ցուրտի ենթարկուած եւ շատ դառն ու անուշ ճաշակած խիստ փորձառու մի մարդ էր ։ Երբոր մահուան բանակը, տկարութիւնը, նրա կենաց քաղաքին վերայ յարձակում բերելով, մահուան զինուորները, մազերի սպիտակումը, իւր գոյութեան բերդը շրջապատեցին, ծերունին իմացաւ որ օր ըստ օրէ դէպ ի մահուան դուռն է մօտենում եւ այն կենաց դումարը, որ իրան յանձնուել էր, պիտի պահանջեն իրանից․ ուստի իւր որդիները կանչեց մօտը, որոնք երեք քաջ երիտասարդներ էին․ սակայն հարստութեան հպարտութիւնով ու երիտասարդութեան փափաքներով չափից դուրս շռայլ եւ մսխող էին, եւ գործ անելուց ձանձրութիւն էին զգում․ աւելի սիրում էին ժամանակը պարապ անցկացնել, քան թէ որ եւ իցէ մի գործով զբաղել ։ Հայրը, որ նրանց վերայ անչափ գութ ու խնամք ունէր, նրանց իւր հայրական խրատները տալով, ասաց․ Ո՛վ երիտասարդներ, դուք, որ այն ստացուածքի արժէքը չէք ճանաչում, որի համար ո՛չ աշխատել եւ ո՛չ էլ նեղութիւն քաշել էք, թէեւ խելքի օրէնքով այնքան մեղադրելի չէք, բայց պէտք է գիտենաք որ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր բաների յառաջացման համար փողը հարկաւոր միջոց է ։ Աշխարհի վերայ ապրող մարդիկ երեք դասակարգի են ։ Առաջինը նրանք են, որոնց նպատակն է ճոխ ապրել եւ ապրուստի միջոցները հեշտացնել ու կարելի եղածին չափ աշխարհքը վայելել ։ Երկրորդը նրանք են, որոնք ցանկանում են բարձր աստիճանի հասնել, յարգանք ու պատիւ ստանալ եւ իշխել ու կառավարել ։ Երրորդը նրանք են, որոնք կամենում են ըստ իւրեանց խղճի Աստուծոյ հաճելի եղածին պէս ապրել ու բարերարութիւններ անել եւ կարօտելոց օգնել ։ Արդ յայտնի է որ սրանցից ոչ մէկը առանց փողի իւր նպատակին պիտի չհասնի ։ Ուրեմն յայտնի է որ շատ գործեր փողի միջոցով ձեռք կը գան, եւ առանց աշխատելու փողը ձեռք չգար ։ Եւ եթէ բացառութեամբ մէկը առանց աշխատանքի ստացուածք գտնէ, նրա մէջ աշխատանք չքաշելուն համար նրա արժէքը պիտի չճանաչէ եւ քիչ ժամանակում իւր ձեռքից պիտի հանէ․ ուստի ծուլութիւնը մէկդի անելով գնացէք գործելու եւ նոյն գործը գործեցէք որ այսքան ժամանակ տեսել էք իմ վերայ ։ Մեծ որդին ասաց․ Հա՛յր, դու մեզ գործ գործել ես հրամայում, սակայն դա հաւատքին հակառակ է․ որովհետեւ ես հաստատ գիտեմ որ, ինչ որ առաջուց ինձ համար սահմանուել է, նոյն բանին

կը համնիմ առանց իմ գործի եւ իմ ջանքի, եւ ինչ որ ինձ համար չէ սահմանուած կամ ինչ որ իմ բաժինս չէ, ես որչափ էլ ջանամ եւ գործեմ դարձեալ նրան չեմ համնիլ։ Նաեւ լսել եմ որ մի երեւելի անձ ասել է. «Ինչ որ իմ բաժինս էր որչափ որ ես նրանից փախայ, նա ինձ գտաւ. եւ ինչ որ իմ բաժինս չէր որչափ որ ես նրա ետեւիցն ընկայ, նա ինձանից փախաւ։» Ուստի թէ աշխատիմ թէ չաշխատիմ տարբերութիւն չունի։ Ինչ որ որոշուել է նոյնը պիտի գտնեմ։ Ինչպէս որ Թագաւորի երկու որդւոց պատմութիւնը վկայ է այս բանին, որոնց մէն առանց աշխատանքի ու նեղութեան գանձ գտաւ ու միւսը այնքան ջանքով եւ գործելով չկարողացաւ իւր ձեռքում եղածը պահել։

Հայրը հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Որդին ասաց. ԲԵՐԻԱՅՈՒՄ ՄԻ ԹԱԳԱՒՈՐ կար, որ շատ եղանակաց փոփոխութիւնները տեսած եւ տեսակ տեսակ պարագաների ու վիճակների մտած ու ելած էր։ Երկու որդի ունէր, որոնք երիտասարդութեան ցանկութիւններից յաղթուած՝ իրանց անձերը մատնել էին զրօսանքի եւ հեշտասիրութեան, եւ դրեթէ միշտ նուագածուների այս երգը իրանց ականջին հնչում էր. «Զուարճացիր ու վայելէ, քանզի մի ակնթարթի մէջ գարունը կ'անցնի եւ աշունը կը գայ։» Թագաւորը խիստ խելացի եւ փորձառու մարդ էր եւ անհամար գոհարներ ու անչափ հարստութիւն ունէր։ Իւր որդւոց ընթացքը տեսնելով վախեցաւ որ իւր մահուանից յետոյ նրանք այդ հարստութիւնը ցրուելով կարեւոր տեղը չգործածեն եւ այսպէս կարօտութեան մէջ ընկնեն։ Այն կողմերը մի ճգնաւոր կար, որը աշխարհից երես դարձրած, հանդերձեալ բաներին դիմած, նրա հոգին հոգեւոր հրով բորբոքուած եւ նրա սիրտը աստուածային սիրով լցուած մի անձնաւորութիւն էր։ Նա ապրում էր այդ քաղաքի մօտ մի այրի մէջ եւ Թագաւորը նրա հետ սերտ յարաբերութիւն ունէր եւ նրան շատ կը պատուէր. ուստի իւր ստացուածքը առանց մէկի գիտնալուն հաւաքելով ծածկաբար ճգնաւորի ճգնատունը հորելով թաղցրեց, եւ ճգնաւորին էլ աւանդեց. Երբոր իմ մեռնելուց յետոյ որդիներս անփորձաբար իրանց ձեռքում եղած ստացուածքը հատցնելով կարօտութեան հասնեն, այն ժամանակ այս գանձը նրանց ցոյց տաս. թերեւս այն ժամանակ խրատուած՝ եւ գործածելու կերպը հասկացած լինեն։ Ճգնաւորը Թագաւորի ասածն ընդունեց։ Այս միջոցում Թագաւորը իւր տան մէջ մի հոր փորել տալով, այնպէս ցոյց տուեց որ այն տեղ գանձ է պահում, եւ իւր որդիներին էլ այդ տեղը ցոյց տալով, ասաց. Եթէ կարօտութեան մէջ ընկնիք, այս տեղ շատ մեծ գանձ եմ պահել, այն ժամանակ կարող էք հանել եւ գործածել։

Սրանից քիչ ժամանակ յետոյ, թէ Թագաւորը եւ թէ ճգնաւորը, երկուքն էլ մեռան։ Եւ ճգնաւորի սենեակում պահուած գանձի վերայ ոչ ոք տեղեկութիւն չունեցաւ։ Թագաւորը մեռնելուց յետոյ նրա որդիները իրար ընկնելով, մեծ որդին բռնութիւն անելով ամէն բան իւր իշխանութեան տակ բերեց, եւ իւր փոքր եղբայրը տխուր եւ զրկեալ թողուց։ Խղճալին երբ տեսաւ որ թէ՛ աթոռից եւ թէ՛ ստացուածքից կամ ժառանգութիւնից իրան բաժին չ'ընկաւ, ինքնիրան խորհեց. Քանի որ բարեաց եւ ճոխութեանց արեգակը մարը մտնելով վշտատու ժամանակաշրջանը անհաւատարմութիւն եւ տխրութիւն յայտնեց, դարձեալ աշխարհքը խնդրել եւ փորձուածը փորձել ի՞նչ հետեւութիւն պիտի ունենայ։ Բոլոր աշխարհքը հնից մինչեւ նոր, մի գարի չ'արժէր, քանի որ անցաւոր է։ Արդ սրանից լաւը չ'կայ, քանի որ մարմնաւոր հարստութիւնը ձեռքիցս գնաց, պէտք է ջանամ հոգեւոր հարստութիւնը ձեռք բերելու։ Այս մտադրութեամբ երբոր քաղաքից դուրս եկաւ, քիչ յետոյ ճգնաւորի բնակարանը երեւեցաւ, սա ինքնիրան ասաց. Նա իմ հօրս բարեկամն էր, գնամ նրա ոտից առջեւ ծառայութիւն անելով մնացած կեանքս աստուածպաշտութեամբ անցկացնեմ։ Երբ նրա բնակարանը հասաւ, տեսաւ որ նրա պատուական հոգին մարմնոյ վանդակից դուրս թռել գնացել է, եւ ճգնատունը դատարկացել է այդ սրբազան ծերունւոյ ներկայութիւնից։ Մի ժամի չափ այն տեղ սրտում եւ տխուր կանգնեց, բայց յետոյ նոյն տեղը իրան բնակարան ընտրեց։ Այն բնակարանի սրահումը մի ջրհոր կար, որոյ ջուրը միշտ մի կողմում եղած ջրմուղից գալով լցվում էր։ Եւ եղաւ որ մի օր երբոր սա ջրհանը կախեց տեսաւ որ ջրի ձայն չէ գալիս, եւ ուշադրութեամբ ներս նայելով տեսաւ որ ջուր չկայ. ուստի ինքնիրան խորհեց. Արդեօք պատճառը ի՞նչ է որ ջուրը հատել է, եւ եթէ ջուր չլինի, այս բնակարանում բնակել ինձ համար դժուար պիտի լինի։ Արդ ջրհորը մտնելով տեսաւ որ ջրմուղից դէպ ի ջրհոր հոսող ջրի ճանապարհի մի կողմը փլել՝ ջրի ճանապարհը գոցուել եւ հետեւապէս ջրի հոսանքը արգիլուել է։ Բայց այդ փլած տեղը մի ծակ էր բացուել։ Սա հետաքրքրուեցաւ. Արդեօք այս ծակը ո՞ւր է տանում, կամ այս ծակի միւս ծայրը ո՞ր տեղ է հասնում, ասելով, մի քիչ փորեց եւ իսկոյն հասաւ իւր հօր պահած գանձին վերայ։ Թագաւորի որդին երբոր անգին գոհարներն ու անհամար գանձը տեսաւ, Աստուծոյն երկրպագութիւն արաւ եւ ասաց. Թէեւ այս տեղ անհաշիւ ստացուածք ու անթիւ գոհարներ կան, սակայն պէտք չէ կարեւոր եղածից աւելի ծախսել, մինչեւ որ տեսնենք ապագան ինչ կը յայտնէ։ Միւս կողմանից նրա մեծ եղբայրը ներսից

դուրս չգալով եւ իւր մարմնոյ զուարճութեանց անձնատուր լինելով իւր հպատակաց եւ զօրաց հսկողութիւն չէր կարող անել։ Եւ իւր յոյսը հօրը թողած գանձերին վերայ դնելով նրան մսխում էր, եւ իւր չափազանց փափկասիրութեան ու մեծափառութեան կողմանից իւր փոքր եղբօր այցելութիւն չէր անում եւ նրա հետ յարաբերութիւն անելը ամօթ էր համարում։ Ցանկարծ նրա վերայ թշնամի եկաւ, եւ անհաշիւ զօրքով նրա դէմ քաղաքի առջեւ բանակ դրաւ եւ ուզեց պատերազմով նրա տէրութիւնն ու իշխանութիւնը ձեռքից առնել։ Թէեւ թագաւորի որդին ինքնիրան թշնամեաց դէմ անպատրաստ գտաւ, սակայն իւր բոլոր ճիգն ու ջանքը ի գործ դնելով զօրք պատրաստեց եւ ելաւ քաղաքից դուրս թշնամեաց հետ պատերազմելու։ Երկու կողմից սաստիկ պատերազմ սկսուեց։ Եւ եղաւ որ թշնամիի կողմանից մի նետ եկաւ թագաւորի որդւոյն սրտում անցաւ եւ նա տեղն ի տեղը սատաւ։ Այս կողմանից էլ մի նետ գցեցին այդ օտար թագաւորին դպաւ եւ նա էլ մեռաւ. ուստի քիչ մնաց որ այս երկու բանակները իրարու վերայ յարձակելով միմեանց հատցնեն, վերջապէս երկու կողմի զօրապետները մի տեղ գալով խորհուրդ արին որ արքայական ընտանիքից վարքով եւ բարքով լաւ մէկը գտնելով երկու կողմի վերայ թագաւոր անեն. ուստի եկան ճգնատան առջեւը եւ փառքով ու պատուով արքայազունը ճգնատունից վեր առնելով արքայական գահի վերայ նստեցրին եւ ինքղինքը Աստուծոյն յանձնելուն օգնականութեամբ իւր հօրը պահած գանձը իրան հասաւ, եւ իւր հօր աթոռին վերայ նստեց։ Այս իրողութիւնը դրա համար բերեցի որ յայտնի լինի թէ սահմանեալ բաժինը գտնել ջանքի եւ աշխատանքի հետ կապակցութիւն չունի։ Լաւ է հաւատալ եւ Աստուծոյն յանձնուիլ, քան թէ աշխատանքի վերայ յոյս կապել։

Երբոր որդին այս պատմութիւնը վերջացրեց, հայրը ասաց. Քո ասածը ուղիղ եւ ճշմարիտ է. սակայն այս աշխարհը միջոցի եւ գործի աշխարհք է. Արարչի հրամանաւ այնպէս է եղել որ այս աշխարհքի շատ գործերը միջոցների են կապուած։ Աշխատելով եւ մի եւ նոյն ժամանակ ինքնիրան Աստուծոյն յանձնելուն օգուտը, առանց աշխատելու ինքնիրան Աստուծոյն յանձնելուն օգուտից շատ է։ Որովհետեւ ինքնիրան Աստուծոյն յանձնողին օգուտը միայն իրան կը հասնի, բայց աշխատանքի օգուտը աշխատողից ուրիշին էլ կը հասնի։ Մէկը որ կարող լինի ուրիշին օգուտ հասցնել, ափսոս է որ նա ծուլութիւն անելով ուրիշից օգուտ վայելէ։ Միթէ դու այն մարդու պատմութիւնը չե՞ս լսել որ բազէին եւ ագռաւին վիճակը տեսնելով միջոցը մէկդի թողուց եւ այդ պատճառաւ Աստուածանից յանդիմանուեց։

Որդին հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Հայրը ասաց. Պատմել են թէ Մի կրօնաւոր մուրացկան մի անտառից անցնում էր։ Ցանկարծ տեսաւ մի արագաթռիչ բազէ, որը մի կտոր միս իւր կտուցում բռնած՝ մի ծառի վերայ գտնուող բոյնի բոլորտիքում պտտում էր, սա հետաքրքրուելով մօտ եկաւ եւ տեսաւ մի ագռաւի ձագ, որ դեռ ոչ թեւ ունէր եւ ոչ էլ թռչելու կարողութիւն։ Բազէն միսը կտորելով ագռաւի ձագին բերանից մտնելու չափ նրան կերցնում էր։ Մարդը այս բանը տեսնելով, ասաց. Տե՛ս, արարչական անսահման խնամքն ու գութը, որ այս անզօր եւ անթեւ ագռաւի ձագը այս բոյնի մէջ առանց կերակուրի չի թողնում, բայց ես կերակուր ճարելու համար մինչեւ ոտքի վերայ գիւղից գիւղ եւ քաղաքից քաղաք եմ շրջում եւ իսկի հանգիստ չեմ առնում. անշուշտ յայտնի տկարութիւն եւ թերահաւատութիւն է այս իմ ընթացքը։ Մի՞թէ ագռաւի ձագին խնամք տանողը ինձ խնամք չի տանիր. ուստի լաւագոյնը սա է որ գործն ու ջանքը մէկդի թողնելով խաղաղ եւ հանգիստ նստիմ։ Այն ժամանակ աշխարհային ապրուստի միջոցներից ձեռք քաշելով, իւր յոյսը պատճառաց պատճառները եւ միջոցների միջոցները Ստեղծողին կապելով նստեց, բայց ժամից ի ժամ տկարանում եւ նիհարանում էր։ Երեք օր եւ երեք գիշեր անցնելուց յետոյ բոլորովին անկարող եղաւ մինչեւ անգամ ծնկան վերայ գալու եւ աղօթք անելու։ Այս միջոցին մի Աստուծոյ մարդը եկաւ նրա մօտ եւ նրան սաստիկ յանդիմանելով, ասաց. Ի՞նչու համար Աստուծոյ դրած միջոցները մէկդի ես դնում, թէեւ Աստուած կարող է առանց միջոցի էլ պահել եւ խնամել, սակայն երկրային կենաց շատ պարագաները նրա իմաստութիւնը միջոցների է կապել, որ այսպիսեաւ օգուտ տալու եւ օգուտ ընդունելու օրէնքը ի գործ դրուի։ Եթէ դու կարող ես ուրիշին օգուտ վայելելուն պատճառ լինել, ուրեմն լաւագոյնն այն է որ դու ուրիշին օգուտ հասցնես, քան թէ ուրիշից օգուտ ընդունիս։ Բազէի պէս եղիր որ գործես ու աշխատիս եւ ագռաւի ձագը խնամես։ Ի՞նչու համար ագռաւի անթեւ եւ անզօր ձագի պէս պառկում ես որ այլոց աշխատանքը ուտես։ Այս առակը դրա համար բերեցի որ գիտենաս թէ միջոցը մէկդի անել ընդունելի չէ եւ վստահութիւնն ու հաւատքը գործի հետ միասին պէտք է լինին։ Ինչպէս որ մի երեւելի անձ ասել է. „Գործ գործիր որ ծոյլ չի լինիս, եւ բաժինդ Աստուծուց գիտցիր որ անհաւատ չի լինիս։“

Մեծ որդին խօսելու սկսեց եւ ասաց. Հա՛յր, եթէ գործ գործենք եւ Աստուծոյ յաջողութիւնը լինելով շատ ստացուածք ձեռք բերենք այդ ստացուածքը ի՞նչ պէտք է անել։

Հայրը ասաց. Ստացուածք հաւաքել հեշտ է, բայց նրան

պահել եւ նրանից օգուտ վայելել դժուար է։ Առաջինը սա է որ պէտք է ստացուածքի պահպանութեան համար շատ հոգ տանել, որ թշնամու ձեռքը նրան չի հասնի եւ գողերի ու աւազակների վտանգից ազատ մնայ։ Երկրորդը սա է որ ստացուածքը գործածելով արդիւնքը պէտք է ուտել, եւ բուն գումարը պէտք է չի հատնի. քանզի հասարակաց ճշմարտութիւն է որ եթէ մի ծովին ոչ մի կողմից ջուր չի գայ՝ քիչ ժամանակից յետոյ այդ ծովը պիտի ցամքի եւ եթէ մի լեռնից միշտ առնելով նրա տեղը չի դնես՝ այդ լեռը պիտի ոչնչանայ. ուստի պէտք է ծախքը մուտքի չափով լինի։ Ով որ ծախս անէ եւ եկամուտ չունենայ վերջապէս նա կարօտութեան պիտի հասնի, եւ հնար է որ նրա գործը վերջապէս կորուստ լինի։ Ինչպէս որ այն շռայլ եւ գործը զանց առնող մուկը տրտմութիւնից սատակեցաւ։

Որդին հարցրեց. ի՞նչպէս է պատահել այդ բանը։

Հայրը ասաց. Լսել եմ թէ Մի ԵՐԿՐԱԳՈՐԾ բաւականի չափ ցորեն մի ամբարի մէջ պահել եւ վրան կնքել էր, որպէս զի կարօտութեան ժամանակում նրանից օգուտ վայելէ։ Դիպուածով այդ ամբարի մօտերը, երկրի տակ, մի մկան բոյն կար, եւ այն տեղ բնակող մուկը այն աստիճանի չարաճճի եւ ագահ էր, որ ցանկանում էր, եթէ կարելի լինի, լուսնի մէջ եղած կալերից էլ ցորեն յափշտակէ ու բերէ իւր բոյնը։ Միշտ բարկացած էր որ ձեռքը չի հասնում, որպէս զի երկնից աստղերն էլ երկու կտոր անելով ցորենի հատերի նման իւր ամբարը դնէ։ Իւր բոյնի ամէն կողմը ծակեր եւ երկար ճանապարհներ շինել էր, որպէս զի ամեն կողմ պէտք եղած փորձերը անէ, եւ միշտ գետնի տակից նոր նոր ծակեր էր շինում։ Այնպէս պատահեցաւ որ մի անգամ նրա ծակած ծակը երկրագործի ամբարի տակը ելաւ, եւ ցորենը սկսեց իբրեւ անձրեւ վերեւից տեղալ եւ լեցուել մկան ծակած ծակերի մէջ։ Մուկը տեսաւ որ ի վերուստ իրան տրուեցաւ, շնորհակալութիւն մատուցանելով ամենը իւր առաջուց պատրաստած ծակերու մէջ տեղաւորեց։ Քիչ ժամանակից յետոյ դրացի մկները այս բանի վերայ տեղեկացան եւ նրա առջեւ գալով սկսեցին նրան ծառայել ու մեծարել։ (Այսպիսի պարագաներում եթէ քեզ պատուողներ տեսնես, գիտցիր որ նրանք բարեկամ չեն, այլ քաղցրեղէնի բոլորտիքը հաւաքուող ճանճեր են։) Արդ նրանք իրանց սովորութեան պէս միշտ նրան շողոքորթելով եւ նրան հաճելի եղած բանից ի զատ ուրիշ բան չի խօսելով նրան գովում եւ մեծարում էին։ Նա էլ նրանց գովասանքից արբած խենդի պէս, ինչքան որ նրանք ցանկանում էին, նրանց տալիս էր ցորենից։ Միշտ կարծում էր թէ՝ եթէ այս տեղաւորածը հատնի, կրկին այն ծակից ցորեն թափուելու է. ուստի էգուցուան վերայ չէր

խորհում միշտ լսում էր սա առածին թէ, «Այսօր ուտենք խմենք, ո՞վ է իմանում էգուց կանք թէ չկանք։» Այս միջոցում որ մկները այն տեղ կերուխումով զբաղել էին, մի սաստիկ սովի տարի եկաւ։ Մարդիկ ամեն կողմ մի կտոր հացի համար շրջում՝ եւ իրանց անձը զոհում էին, բայց չէին գտնում։ Արդ տարուան նեղութիւնը երկրագործին խեղդեց։ Նա ստիպուեցաւ ցորենի ամբարը բանալ, եւ երբոր բացաւ տեսաւ որ զգալի վնաս է հասել ցորենին, ուստի ինքնիրան ասաց. Քանի որ այս տեղ ցորենն այսքան պակսել է, լաւ չէ կրկին այս տեղ թողնել, այլ պէտք է որ այս տեղից մի ուրիշ տեղ փոխադրել։ Ուստի այն տեղից ցորենը հանելով, իրան պէտք եղածին չափ գործածեց ու մնացածը ուրիշ տեղ ամբարեց։ Այս միջոցում այն մուկը, որ ինքնիրան այս բոյնի տէր էր սեպում, քնոյ մէջ էր. եւ միւս մկներն էլ երբոր երկրագործի ոտքերի ձայնը լսեցին, մի խորագէտ մուկ կամաց կամաց ծակից դուրս եկաւ եւ երկրագործի արածը տեսաւ. դարձաւ միւս մկներին պատմեց, որոնք իսկոյն ծակից դուրս գալով ամեն մէկը իւր ծակը գնաց եւ իրանց բարերարը մենակ թողեցին։ Միւս օրը մուկը քնից արթնանալով որչափ որ աջ ու ձախ նայեց, ընկերներից ոչ մին չտեսաւ. ուստի աղաղակելով կանչեց. Ո՛վ ընկերներ, դուք ո՞վ էիք, ո՞ւր էք, ես չեմ գիտեր ի՞նչ եղաւ, ի՞նչու ինձանից հեռացաք։ Մի ժամ որոնելով նրանց չգտաւ եւ որովհետեւ երկար ժամանակ էր որ իւր յոյսը ամբարած ցորենի վերայ դրած բոյնից դուրս չէր ելեր, հիմա դուրս գալով ցորեն թափող ծակի առջեւ եկաւ տեսաւ որ ամենեւին ցորեն չկայ, իւր ամբարած տեղը վազեց, այն տեղ էլ ոչինչ չէր մնացել. դարձաւ տունը՝ ուր մի գիշեր իսկ ապրելու չափ ուտելու բան չէր մնացել։ Երբոր տեսաւ որ բոլոր տունը քանդուել եւ իւր ունեցածը իւր ձեռքից գնացել է, խիստ շատ յուսահատեցաւ եւ իւր սաստիկ կսկիծից գլուխը այնքան գետին զարկաւ որ հոգին դուրս ելաւ։ Այս առակին օգուտը սա է որ, ծախսը պէտք է եկամուտին համեմատ անել, եթէ մուտքը քիչ լինի, ծախսն էլ քիչ անել։

Երբոր հայրը իւր խրատը վերջացրեց, փոքր որդին վեր ելաւ եւ շնորհակալութիւն մատուցանելով ասաց. Հա՛յր, երբոր մէկը իւր ունեցածը կանոնաւոր կերպով պահպանելով գործածէ եւ նրանից օգուտ եւ շահ ձեռք բերէ, այդ իւր շահածը ի՞նչպէս պէտք է գործածել։

Հայրը ասաց. Ամեն բանի մէջ պէտք է միջնական ընթացքը բռնել, գլխաւորապէս ապրուստի մէջ։ Ստացուածքի տէրը պէտք է որ ստացուածքը շահելուց յետոյ ուրիշ կանոնի հնազանդի. Առաջին, շռայլութիւնից եւ անպէտ ծախսերից զգուշանայ,

որպէս զի յետոյ չզղջայ, եւ տեղի չտայ որ իրան վերայ իբրեւ շռայլ նախատանաց անուն դնեն։ Վեհանձն բնաւորութեան առջեւ ագահութիւնը շռայլութիւնից աւելի հաւանելի է։ Երկրորդ, պէտք է շատ զգոյշ լինի որ իւր վերայ ոչ ագահութեան եւ ոչ կծծութեան անուն չդնեն։ Կծծի եւ ագահ մարդը թէ՛ այս աշխարհում եւ թէ՛ հանդերձեալում սեւերես է։ Ագահին ստացուածքը վերջապէս աւարի եւ կործանման նետերին նպատակ կը դառնայ։ Զոր օրինակ, մի մեծ աւազանի մէջ եթէ չորս կողմից ջուր գայ, եւ ոչ մի կողմից ջուրը գնալու ճանապարհ չ'լինի, այն ժամանակ ջուրը ամեն կողմից դուրս ելլելու ճանապարհ որոնելով պիտի մղէ ու աւազանը շրջապատող պատը պիտի սկսի ամեն կողմից ծակոտել եւ փլչել։ Ագահին հաւաքած ստացուածքը որից ինքը օգուտ չվայլէ եւ չվայլեցնէ վերջապէս կա՛մ աւար կը գնայ, կա՛մ ժառանգին կը հասնի եւ կամ իրան ատողին ձեռքը կընկնի, որ նրան երբեք չյիշեր։

Երբոր որդիները իրանց հօրը խրատը լսեցին եւ նրա խօսքերի օգտակարութիւնը իմացան, նրանցից իւրաքանչիւրը մի գործի սկսեց։ Մեծ որդին ձեռք զարկաւ առեւտուրի։ Նա ունէր երկու հսկայ եզներ, որոնք նրա ապրանքը եւ բեռները կրում էին։ Ուժի կողմանից գերազանցում էին համաստեղութեան ցուլը։ Առիւծները նրանց ահարկու երեւոյթից ահ ու դողով կատուի պէս ծակից ի ծակ պահվում էին։ Փղի չափ մեծ, առիւծի պէս հզօր, տեսքով գեղեցիկ եւ քալուածքով վայելուչ էին։ Մէկին անունը Շիւնդիւպէ՝ միւսին անունը Մէնտուպէ էր։ Վաճառականը սրանց վերայ իւր ապրանքը բեռնալով եւ շատ երկար ճանապարհորդութիւններ անելով, եզները մի քիչ տկարացան։ Ճանապարհի վերայ նրանց առջեւ մի վիհ եկաւ։ Շիւնդիւպէ յանկարծ վիհի մէջ ընկաւ։ Տէրոջը հրամանին վերայ ծառաները շատ ջանքով ու մեծ դժուարութեամբ նրան վիհից հանեցին։ Որովհետեւ քալելու կարողութիւն չունէր, նրա տէրը վարձքով մի մարդ բռնեց որ նրան հոգ տանի։ Եւ պատուիրեց որ երբ մի քիչ առողջանայ, այն ժամանակ կառավանին հասցնէ։ Այս մարդը մի երկու օր նրա մօտ մնալով անապատում առանձին ձանձրացաւ եւ Շիւնդիւպէի մահուան լուրը նրա տիրոջ հասցրեց։ Շիւնդիւպէ մնաց անապատում։ Մէնտուպէն էլ Շիւնդիւպէից բաժանուելուց յետոյ, վերջին աստիճան յօգնածութիւնից մեռաւ։ Սակայն Շիւնդիւպէ անապատումը մի քիչ ժամանակից յետոյ ոյժ առնալով ոտքի ելաւ, արածելու համար ամեն կողմ պտտում էր, մինչեւ որ հասաւ շատ խոտաւէտ, ծաղկաւէտ, օդը մաքուր, ջուրը յստակ մի դաշտ, երկրագունտի վերայ ամենահաճելի մի տեղ։ Բաւական ժամանակ այս տեղ արածելով ստացաւ

առողջութիւն, զուարթութիւն եւ գիրացաւ շատ. վերջին աստիճան հանգստութեան ու զուարճութեան ազդեցութիւնից ուժգին ձայնով բառաչում էր։ Մարգագետնի մօտերը, մի մեծ անտառում, մի առիւծ բնակում էր, որի քաջութեան եւ ուժի առջեւ անթիւ անասուններ նրան ծառայել եւ վիզ էին ծռել։ Առիւծը երիտասարդական հպարտութեամբ իւր իշխանութեան, եւ զօրքերի ու հպատակաց շատութեամբ իրանից մեծ ոչ ոքին չէր ճանաչում։ Արագ յարձակող վագրը եւ մեծամարմին փիղը աչքին չէր առնում. սակայն ո՛չ եզն տեսել՝ եւ ո՛չ էլ եզան բառաչելը լսել էր։ Երբոր Շիւնդիւպէի աղաղակը նրա ականջին հասնում էր՝ խիստ սարսափում էր եւ իւր երկիւղը իւր հպատակաց յայտնի չլինելու համար երբեք իւր տեղից չէր շարժում, միայն մի տեղ նստել էր։ Եւ նրա աչաց առջեւ երկու ճագարներ կային, որոնք նրան իբրեւ ծառաներ սպասաւորելու միշտ պատրաստ էին, մէկին անունը Քէլիլէ, իսկ միւսին անունը Տէմինէ էր։ Այս երկուքն էլ, բարեպաշտութեան եւ խելացութեան կողմանէ հռչակ ունէին. սակայն Տէմինէ, որ մեծն էր, աւելի փառասէր էր։ Սա երբ տեսաւ որ առիւծի սրտին մի երկիւղ ընկել եւ միշտ մտածում է, Քէլիլէին ասաց. Թագաւորի մասին ի՞նչ ես ասում, ի՞նչու համար զբօսնուլն ու զուարճանալը թողնելով միշտ մի տեղ է նստում։ Քէլիլէ ասաց. Քեզ ի՞նչ, այս խօսքն ասել քեզ ի՞նչ վերաբերութիւն ունի։ Դու ո՞ւր, թագաւորի խորհուրդը իմանալն ուր։ Մեզ բաւական է, որ այս դրան առջեւ մի կտոր հաց ենք գտնում, եւ նրա հովանաւորութեան տակ հանգիստ եւ ապահով ապրում ենք։ Սրանով գոհ եղի՛ր եւ թագաւորի խորհուրդն իմանալը թող տո՛ւր. քանզի մենք այն դասակարգից չենք որ մեր խօսքերը թագաւորաց առջեւ հաւանելի լինին, կամ նրանք մեր խօսքերին ուշադրութիւն դարձնեն։ Մենք յարմարութիւն եւ ընդունակութիւն չունենք նրանց վերայով խօսելու, եւ ով որ իւր չգիտցած ու յարմարութիւն չունեցած գործը գործէ նրա վերայ կըհասնի ինչ որ կապիկին պատահեցաւ։

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Քէլիլէ ասաց. ԿԱՊԻԿԸ տեսաւ որ մի հիւսն մի փայտի վերայ նստած նրան սղոցով կտրում էր։ Եւ երկու ցից ունէր, մին փայտի ճեղքուածքի մէջ տեղը զարնում էր, որպէս զի սղոցի երթեւեկութիւնը հեշտ լինի, եւ երբոր ճեղքուածքը չափից անցնում էր միւս ցիցը զարնելով առաջինը դուրս էր հանում, այս կերպով շարունակում էր։ Կապիկը սրան նկատում էր։ Յանկարծ հիւսնը մի հարկաւոր գործի գնաց։ Կապիկը նրա տեղը պարապ գտնելով անմիջապէս փայտին վերայ նստեց եւ կապիկի ամորձիքը

փայտի ճեղքուածքին մէջ անցան եւ կապիկը առանց միւս ցիցը զարնելու ճեղքուածքի մէջ պնդացած ցիցը քաշեց հանեց. իսկոյն ճեղքուածքը երկու կողմից միանալով կապիկի ամորձիքը փայտի ճեղքուածքի մէջ սեղմուեցաւ։ Խեղճ կապիկը ցաւի կսկծանքից աղաղակում եւ ասում էր. Լաւն այն է որ ամեն մէկը իւր գործը անէ, եւ ով որ իւր գործը չ՚անէ լաւ գործը վատ կ՚անէ։ Իմ գործս պտուղ քաղել է, ո՛չ թէ սղոց քաշել. իմ գործս անտառում ման գալ է, ո՛չ թէ կացին եւ ուրագ զարնել։ Այս միջոցին հիւսնը եկաւ ու կապիկը վտանգի մէջ տեսաւ եւ այս կերպով կապիկը կորսուեցաւ։ Այս պատճառաւ ասել են թէ, „Հիւսնութիւնը կապիկին գործը չէ։“

Այս առակը նրա համար բերեցի որ գիտենաս թէ ամեն մարդ պէտք է իւր գործը անէ, եւ չափից դուրս քայլեր չանէ։ Այս գործը քո գործը չէ, թող տո՛ւր այդ։ Այս փոքր կերակուրը եւ ապրուստի միջոցը բաւական համարելով վիճակիցդ գոհ եղիր։

Տէմնէ ասաց. Թագաւորին մտերմութիւնը ձեռք բերել ուզողին նպատակը ապրուստ եւ կերակուր լինելու չէ. քանզի փորը ամեն տեղ եւ ամեն բանով կը կշտանայ։ Թագաւորաց ծառայելու օգուտը սա է որ, մարդ կարող է բարձր պաշտօնի հասնիլ եւ նրանով բարեկամներին քաղցրութիւն եւ բարիք ցոյց տալ եւ թշնամիներին պատիժ հասցնել։ Ով որ կերակուրի համար գլուխ ծռէ նա անասնոց կարգից է դասւում։ Ինչպէս շունը մի ոսկորով եւ ագահ կատուն մի պատառ հացի վերայ ուրախ կը լինին։ Ես տեսել եմ որ նապաստակը որսալուց յետոյ երբոր կորիւն տեսնէ, նապաստակը բաց թողնելով կորիւնին ետեւից կ՚ընկնի։ Եւ ով որ բարձր աստիճանի հասնի, նրա կեանքը վարդի տեւողութեան պէս կարճ էլ լինի, դարձեալ, իմաստունները նրա գեղեցկութեան յիշատակութիւնը երկարակեցութիւն են համարել։ Բարի անուն թողնողը չի մեռնիր, մեռնողն այն է որ նրա անունը բարութեամբ չեն յիշում։

Քէլիլէ ասաց. Բարձր աստիճանների հասնելու փափաքիլ նրանց է վայելում որ ազգով եւ գերդաստանով ազնիւ են եւ կրթութեամբ ու դաստիարակութեամբ արժանիք ունին։ Մենք այն դասակարգից չենք, որ բարձր աստիճանի հասնելու արժանիք ունենանք։

Տէմնէ ասաց. Գլխաւոր գումարը խելք եւ պարկեշտութիւն է, ո՛չ թէ ազգ եւ կրթութիւն։ Ով որ յստակ եւ կատարեալ խելք ունի, նա ինքնիրան կծծին եւ ագահին ստոր վիճակից վեհ եւ բարձր վիճակի կը հասցնէ, իսկ ով որ տկար կամեցողութիւն եւ ախտացեալ խելք ունի, ինքնիրան բարձր եւ ազնիւ վիճակից ստորին վիճակի մէջ կը գցէ։ Մեծերը ասել են թէ,

„Բարձր աստիճանի հասնիլ շատ դժուարութեամբ կը լինի, իսկ բարձր աստիճանից ընկնելը շատ քիչ բանով կը յաջողուի։“ Զոր օրինակ, մի մեծ քարը շատ դժուարութեամբ գետնից կը վերցուի, բայց մի փոքր շարժումով կարող է գետին ձգուիլ։ Դրա պատճառաւ է որ բաց ի վեհանձն անձանց ուրիշ ոչ ոք բարձր աստիճան ձեռք բերելու չի ցանկար։ Ով որ հանգստութիւնը սիրէ, պէտք է ամօթի եւ անարգանքի անկիւնում նստի։ Եւ ով որ փուշերից հոգ չանէ, շուտով պատուոյ եւ փառաց պարտեզում վարդերը կը քաղէ։ Միթէ դու չե՞ս լսել այն երկու ընկերաց պատմութիւնը, որոնցից մին դժուարութեանց տոկալով թագաւորական աստիճանի հասաւ, իսկ միւսը ծուլութեան պատճառաւ հանգիստը ուզելով կարօտութեան եւ դժբաղդութեան մէջ մնաց։

Քէլիլէ հարցրեց. Այդ դէպքը ի՞նչպէս է։

Տէմնէ ասաց. ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ, մէկին անունը Ողջախոհ եւ միւսին անունը Քաջասիրտ, միասին ճանապարհ էին գնում։ Յանկարծ մի բարձր լերան ստորոտը հասան։ Այնտեղ մի աղբիւր կար եւ աղբիւրի առջեւ մի ընդարձակ աւազան շինել եւ շուրջը նոճի, սօճի, կաղամախի, բեւեկնի եւ այլ տեսակ ծառեր տնկել էին։ Օդը մաքուր, ջուրը յստակ եւ գոյնզգոյն ծաղիկներով ու վարդերով զարդարուած մի զուարճալի տեղ էր։ Արդ երբոր այս երկու ընկերները երկիւղալի վիհերից անցնելով այս զուարթարար տեղը հասան, այն տեղ բաւական ժամանակ հանգստացան եւ յետոյ այն աւազանի շուրջը ման եկան, եւ տեսան որ աւազանի այն կողմը, որ տեղից ջուրը գալիս էր, մի սպիտակ մարմարիոնի վերայ կանաչ տառերով գրուած էր. «Ո՛վ այս տեղ իջեւանող, բարի եկար եւ շնորհք բերեցիր։ Բայց գիտցիր որ հիւրանոցը ամենալաւ կերպով զարդարուել եւ ամեն տեսակ կերակուրները կանոնաւոր կերպով եփուել եւ պատրաստուել են։ Պայմանը սա է որ գլխից անցնելով քեզ այս աղբիւրը նետես եւ ընկղմելուց չի վախենալով ինքզինքդ միւս կողմը հասցնես, ուր լերան ստորոտումը դրուած քարեղէն առիւծը գրկելով առանց հանգիստ առնելու մի անգամ վազես եւ դէմդ ելլող վայրենի կենդանիներից չի զարհուրելով եւ ոտքերդ ճեղքող փուշերից եւ տատասկներից չ՚արգիլուելով լերան գագաթը ելլես եւ այն ժամանակ այն տեղ կը հասնիս։»

Այս գրուածը կարդալուց յետոյ, Քաջասիրտը՝ Ողջախոհին ասաց. Ո՛վ ընկեր, ե՛կ այս գրուածը փորձենք։ Ողջախոհն ասաց. Ո՛վ պատուական ընկեր, մի գրուածը, որ ոչ ստորագրութիւն ունի եւ ոչ էլ գրողը յայտնի է, նրանով անձը վտանգի մէջ գցել տխմարութեան ապացոյց է։ Ոչ մէկը, թոյնը վնաս չանէր, ասելով չի խմեր. եւ ոչ մէկը ապագայ հանգստեան համար ներկայումս

ինքնիրան չարչարանքի չ'ենթարկեր: Բաշամիրան ասաց. Ո՛վ բարի ընկեր, հանգիստ սիրելը ծուլութեան եւ կծծութեան հետեւանքն է, իսկ չարչարանաց յանձնառու լինելը փառքի եւ մեծութեան նշան է: Վեհանձն գլուխը հանգստով եւ ապրուստով չծռուիլ, մինչեւ վեհ դրութեան համբիլը ջանքը իւր ձեռքից չի թողնիլ, ուրախութեան վարդը առանց աշխատանաց փուշերին չի քաղուիլ եւ նպատակին դուռը առանց անձնուրացութեան բանալիին չի բացուիլ: Ես յուսոյ խարիսխը պինդ բռնել եմ եւ գիտեմ որ նա ինձ լերան գլուխը պիտի հանէ, ոչ մի դժուարութիւնից եւ նեղութիւնից չեմ վախենալ: Ողջախոհն ասաց. Կեցցե՛ս, որ գարնանային անուշ բուրմունքով աշնանային տերեւաց թափթփումի հետ բաղդատութիւն ես անում, բայց ոտք կոխել մի անսահման եւ անյատակ ծովը, որի նաւահանգիստը յայտնի չէ, խելացութիւնից հեռի է երեւում: Ով որ մի գործի սկսի, ինչպէս որ մտնելը՝ նոյնպէս էլ նորա տակից ելնելը պէտք է մտածէ, եւ սկսած ժամանակը նորա վախճանն էլ պէտք է ի նկատի առնէ, եւ օգուտն ու վնասը լուրջ կերպով խելքի կշիռքով կշռէ. որպէս զի ի զուր տեղը աշխատած, վաստակած եւ իւր թանկագին կեանքը ունայն անցկացրած չլինի: Գուցէ այս գրութիւնը ծաղրի եւ կատակի համար գրուած է, գուցէ այս աղբիւրը մի վտանգաւոր տեղ է, եւ միւս եզերքը անցնիլ անկարելի է, եւ եթէ անցնուի էլ այն քարից կոփուած առիւծը այնքան ծանր լինի որ նորան գրկելով վերցնել անկարելի լինի, եւ եթէ սա էլ յաջողուի, կարելի է որ մի վազելով լերան գլուխ ելնել կարելի չլինի, եթէ սա էլ կարելի լինի, դարձեալ յայտնի չէ որ արդիւնքը ի՞նչ կը լինի: Ես այս բանի մէջ քեզ ընկերութիւն չեմ անել, եւ քեզ էլ կ'արգելեմ որ այս գործը չ'սկսիս: Բաշամիրան ասաց. Այդ խօսքից անցկաց: Ես ոչ ոքի խօսքով իմ որոշումից ետ չեմ կենար: Գիտեմ որ դու ինձ հետ չես կարող ընկերանալ, գոնէ հեռուանց նկատելով ինձ համար աղօթք արա: Ողջախոհն ասաց. Ո՛վ եղբայր, տեսնում եմ որ դու իմ խօսքով այդ բանից չես արգիլուելու, ուստի այս տխուր տեսարանը տեսնելու՝ եւ ինձ անհաճելի եղած բանը նկատելու չեմ դիմանար: Արդ, Մնաս բարեաւ ասելով իւր ճանապարհը գնաց: Բայց Բաշամիրը իւր կեանքը դնելով աղբիւրը մտաւ ասելով. Կամ կ'ընկղմիմ կամ գոհար կը գանեմ: Երբոր մտաւ, տեսաւ որ այդ ո՛չ թէ աղբիւր, այլ մի անեզր ծով է եղել: Բաշամիրը ինքնիրան վտանգի մէջ տեսաւ, բայց իւր յուսոյ խարիսխը պինդ լինելուն համար լողալով փրկութեան եզերքը անցաւ: Երբոր ջրի ափը դուրս ելաւ իւր շունչը պինդ առնելով այն քարեղէն առիւծը ամենայն զգուշութեամբ եւ բոլոր ուժով գրկեց եւ հազար ու մէկ դժուարութիւններին

տոկալով եւ մի վազելով լերան գլուխը ելաւ: Առիւծը վար դնելիս առիւծից այնպէս մի բարձր աղաղակ ելաւ, որ լեռը սկսեց դողալ: Քաղաքի բնակիչները այս ձայնը լսելով սկսեցին ամեն կողմից դուրս գալ եւ ուղղուիլ դէպ ի լեռը: Բաշամիրը տեսնում եւ ժողովրդի հաւաքուելուն ու դէպ ի լեռ գալուն զարմանում էր: Երբոր քաղաքի ազնուականները եւ պատուաւորները յառաջ եկան, Բաշամիրին խոնարհութիւն անելով, մեծ յարգանօք նորան կառքի մէջ նստեցնելով քաղաք տարին, ուր մարմինը վարդի ջրով ու դեղերով լուացին եւ թագաւորական զգեստ հագցնելով գահի վերայ նստեցրին: Երբոր Բաշամիրը այս բանի վերայով տեղեկութիւն խնդրեց, պատասխանեցին. Մեր քաղաքի իմաստունները շատ մտածելով եւ խորհելով այնպէս փորձել եւ ստուգել են որ, երբոր մի արժանաւոր անձ մտադիր լինի այդ աղբիւրից անցնիլ, դա այն ժամանակին պիտի պատահի որ այս քաղաքի թագաւորը վախճանած կը լինի, եւ այն խորհրդաւոր առիւծը վար դնելիս նորա ձայնը քաղաքի կեդրոնում արձագանք կը տայ, եւ այս կերպով քաղաքացիք հաւաքուելով դուրս կը գան նորան դիմաւորելու եւ այսպէս նորան բերելով իրանց թագաւոր կ'անեն: Արդ, հիմա թագաւորը դու ես: Ինչ որ ուզում ես արա՛: Բաշամիրը իմացաւ որ քաշած նեղութիւնները իրան մեծութեան հասցրին: Այս առակը դրա համար բերեցի որ գիտենաս թէ քաղցրութիւնը առանց խայթոցի եւ հանգստութիւնը առանց աշխատանքի ձեռք չգար: Ով որ բարձր գաղափարների տէր է փոքրահոգիներից ոտնակոխ չի լինիր, եւ ստոր վիճակից գոհ չի մնար: Ես մինչեւ որ առիւծի մտերմութիւնը ձեռք չի բերեմ, հանգիստ առնելու չեմ:

Քէլիլէ ասաց. Այս դուռը ի՞նչպէս գտար, եւ այս տեսակ երկիւղալի գործը սկսելու համար ի՞նչ միջոց ես պատրաստել:

Տէմնէ ասաց. Այս միջոցներում որ առիւծը տխուր է, ուզում եմ նորա առջեւ ներկայանալ: Կարելի է իմ խրատական խօսքերից նորա սիրտը ուրախանայ, եւ ես նորա մտերմութեան արժանանալով բարձր դիրք ստանամ:

Քէլիլէ ասաց. Առիւծին հետ մտերմութիւն անել քեզ ի՞նչպէս կարելի է, եթէ կարելի էլ լինի, քանի որ քեզպէսները թագաւորներին ծառայութիւն չեն արել եւ նրանց կարգն ու կանոնը չեն գիտեր, քիչ ժամանակից յետոյ գտած պաշտօնիցդ ու ծառայութիւնիցդ զրկուելով կրկին ձեռք բերելու չկարողանաս:

Տէմնէ ասաց. Եթէ մարդ գործունեայ եւ խելացի լինի, մեծ գործերին ձեռք զարնելուց վնաս չի կայ: Ով որ իւր ձիրքի վերայ վստահութիւն ունի, ինչ գործի որ սկսեց պէտք է նրան

ի գլուխ հանէ, եւ երբոր յաջողութիւն ձեռք բերէ, այն ժամանակ դարձեալ պէտք է ըստ պատշաճին ճանապարհ գնայ։ Ինչպէս որ պատմութեան մէջ գրուած է։ ՇՈՒԿԱՅԻ մէջի մարդկանցից մէկին բաղդը բանելով թագաւորական աթոռի վերայ նստեց, եւ նրա գործերն ու հռչակը բոլոր աշխարհք տարածուեցաւ։ Հին թագաւորներից մին նրան նամակ գրելով, ասաց. Քո արհեստը հիւսնութիւն է եղել եւ դու հիւսնութիւնը լաւ ես իմանում. արդ թագաւորութիւն անելը եւ օրէնք ու կարգ սահմանելը ո՞ր տեղից սովորեցար։ Նրա նամակին պատասխանելով, ասաց թէ, Նա որ ինձ արքայական աթոռի վերայ նստելու արժանացուց, ո՛չ մի րոպէ իմ ձեռքերս գործ գործելուց չ'արգիլեց եւ ո՛չ մի վայրկեան ինձ առանց դաստիարակութեան չի թողուց։

Քէլիլէ ասաց. Թագաւորներ ամեն մի ձիրքով եղած անձը իրանց չեն մտերմացներ, եթէ նոքա ազգաւ կամ ժառանգութեամբ ազնուական չի լինին եւ կամ մի մեծ գործ եւ ծառայութիւն չի կատարեն։ Դու ազգաւ ո՛չ առիւծի հետ յարաբերութիւն ունիս, ո՛չ էլ մի գործ կամ ծառայութիւն կատարելու ընդունակութիւն։ Արդ փոխանակ մտերմութիւն գտնելու՝ հնար է որ թշնամութեան եւ ատելութեան արժանանաս։

Տէմնէ ասաց. Ով որ թագաւորի առջեւ բարձր աստիճանի հասել է, կամաց կամաց է հասել։ Առանց նրա ջանքին եւ թագաւորի կրթութեան ոչ ոքին բարձր աստիճան չի տրուիլ. ուստի ես էլ, հէնց դրա համար եմ աշխատում։ Նեղութիւններ քաշելու եւ դառնութիւններ ըմպելու ինձ վարժեցրի։ Գիտեմ որ, ով որ ուզէ թագաւորաց ծառայութեան մտնել, նրան պէտք է հինգ բան անէ։

Առաջին. Բարկութեան բոցերը հեզութեան ջուրով մարել։

Երկրորդ. Հպարտութեան եւ գոռոզութեան խորհուրդներից զգուշանալ։

Երրորդ. Ագահութեան եւ կծծութեան իւր մտքում տեղի չի տալ։

Չորրորդ. Ճշմարիտ եւ ուղիղ գործերի սկսել։

Հինգերորդ. Եղելութիւնը եւ պատահած դէպքը կողմնապահութեամբ չի ներկայացնել։

Ով որ այս յատկութիւնները ունենայ անշուշտ իւր նպատակին կը հասնի։

Քէլիլէ ասաց. Դիցուք թէ թագաւորին ծանօթ եղար, ի՞նչ միջոցով նրա մտերմութեանը պիտի արժանանաս, կամ ո՞ր մի ձիրքով աստիճանի պիտի հասնիս։

Տէմնէ ասաց. Եթէ նորին վեհափառութեան հետ ծանօթանամ այս հինգ յատկութիւնները ի գործ կը դնեմ։

Առաջին. Բոլոր սրտով ծառայութիւն կ'անեմ։

Երկրորդ. Իմ ջանքն ու ոյժը նրա կամաց կը հպատակեցնեմ։

Երրորդ. Նրա գործերը եւ խօսքերը ամենայն յարգանօք ճիշդ կը յայտնեմ։

Չորրորդ. Եթէ այնպէս մի գործի սկսի, որ բարի եւ ընդհանուրին օգտակար է, նրա օգուտները եւ հետեւանքը նրան պատմելով նրան կը քաջալերեմ. որպէս զի իւր ուրախութիւնը բարի գործի մէջ աւելանայ։

Հինգերորդ. Եթէ այնպիսի մի գործ անելու լինի, որ նրա հետեւանքներից թագաւորութեան կամ ընդհանրութեան վնաս կարելի է հանդիպիլ, շատ քաղցրութեամբ եւ հեզութեամբ այն հետեւանքների վերայով զգուշութիւններ կը տամ։

Արդ երբոր թագաւորը իմ ձիրքերս տեսնէ անշուշտ ինձ պիտի սիրէ եւ միշտ իւր խօսակցութեան հաղորդակից կ'անէ. Քանզի չկայ ձիրք որ դաղտուկ մնայ, եւ ոչ էլ մի ձիրք ունեցող դաստիարակութիւնից եւ կրթութիւնից կը զրկուի։ Ձիրքը մուշկի նման է. որչափ էլ մարդ նրան թաքցնում է, դարձեալ նրա անուշ հոտը դուրս է ելնում։

Քէլիլէ ասաց. Այնպէս երեւում է որ այս բանի համար հաստատ վճռել ես. սակայն զգոյշ կա՛ց, թագաւորաց ծառայելը խիստ վտանգաւոր բան է։ Իմաստունները ասել են. „Խելքի հոտը չզգացող տգէտից ի զատ ուրիշ մէկը այս երեք բանին յանձնառու չի լինիր։ (ա) Իշխանաց ծառայութիւն անել, (բ) Թոյնը վնաս չ'աներ ասելով խմել, (գ) Գաղտնիքը կանանց յայտնել։“ Եւ դարձեալ իմաստունները թագաւորներին բարձր լեռների են նմանեցրել. թէպէտեւ նրանց միջում գոհարների հանքեր են գտնվում, սակայն վագրերի եւ օձերի տեղեր էլ կան։ Եւ դարձեալ նրանց վերայ ելլելը դժուար է, բայց վար ընկնելը շատ հեշտ է։ Նաեւ ասել են. „Թագաւորաց ծառայելը ծովի ճանապարհորդութեան նման է, մարդ կամ յաջողութիւն գտնելով մեծ ստացուածք է ձեռք բերում կամ նաւաբեկ լինելով կորսւում է։“ Ծովում օգուտ շատ կայ, բայց ապահովութիւնը եղերքումն է։

Տէմնէ ասաց. Քո ասածը բարեկամեցողութիւնից է. եւ ես գիտեմ որ թագաւորներ լափող կրակի են նմանում, աւելի մօտեցողը աւելի վտանգի մէջ է ընկնում. բայց եւ այնպէս վտանգից վախեցողը բարձր աստիճանի չի հասնիր։ Երեք բան կայ որ մարդ յանձնառու չլինիր. եթէ նա արի եւ վեհ բնաւորութեան տէր չի լինի։ (ա) Թագաւորաց ծառայել, (բ) Ծովի ճանապարհորդութիւն անել, (գ) Թշնամւոյն ահաւորութիւնից չվախենալով դէմ դնել։ Եւ ես ստոր բնաւորութեան տէր չեմ, ինչու պիտի վախենամ թագաւորաց ծառայելուց։

Քէլլէ ասաց· Թէպէտեւ ես քո այդ մտադրութեանդ հակառակն ու քո որոշմանդ ընդդիմացողն եմ, սակայն քանի որ քո կամեցողութիւնը դրանումն է, քեզ շնորհաւոր լինի։ Գնա՛, ճանապարհը քո առաջդ է։

Տէմինէ գնաց առիւծին ողջոյն ասաց։

Առիւծը հարցրեց· Ո՞վ է։

Ասացին· Ալինչի որդին, որ այս պալատի չեմբերին ծառայողներից մին էր։

Առիւծը ասաց· Այո՛, ճանաչում եմ։ Եւ նրան առաջ կանչելով, հարցրեց· Ո՞ւր ես։

Տէմինէ պատասխանեց· Հօր հրամանաւ այժմ ձեր արքայական օդային ծառայելու կը դիմեմ· որպէս զի մինչեւ ինձ մի հրաման ելլելը սպասեմ։ Եթէ ինձ մի գործ կատարելու հրաման ելլէ, այդ իմ բոլոր իմացականութեանս միակ նպատակը անելով ջանամ բոլոր ուժովս կատարել· քանզի հնար է, արքայական գործերում այնպէս գործ էլ լինի, որ ինձ պէս նուաստներին ձեռքով կատարուի։ Այն կարեւոր գործը որ փոքր ասեղով կը կատարուի, դրօշ բարձրացնող նիզակը չէ կարող կատարել, եւ հարկաւոր գործը որ փոքր գմելով կը տեսնուի, սուրը, թուրը չեն կարող տեսնել։ Եւ ոչ մի ծառայ, որ թէեւ ամենայետին եւ առանց համարմունքի էլ լինի, դարձեալ վնասը վանելում եւ օգուտը քաշելում անօգտակար չէ։ Այն չոր փայտի կտորը, որ անարգութեամբ ընկած է ոտաց տակ, հնար է որ մի օր պէտք գայ, եթէ ոչ մի բանի էլ պէտք չի լինի, կարելի է որ նրանից մի ականջ մաքրելու բան շինեն։ Եթէ ձեր քմացը վարդի հոտ չի կարողանամ բուրել, գոնեայ ձեր խոհանոցում կաթսան եռացնելու համար կարող եմ փայտերի հետ գործածուիլ։

Առիւծը երբոր Տէմինէի խօսքը լսեց, նրա ճարտարութեան վերայ զարմանալով, իւր մօտը նստողներին ասաց· Խելացի մարդը որչափ էլ աննշան մէկը լինի, դարձեալ նրա ձիրքը առանց նրա կամեցողութեան նրա ընդունակութիւնը ժողովուրդին կը յայտնէ· ինչպէս վառվող կրակը, եթէ մէկը նրան փչէ որ բոցը ցած մնայ, աւելի կը բարձրանայ։

Տէմինէ այս խօսքից ուրախացաւ եւ գիտցաւ որ իւր խօսքերը թագաւորի վերայ ազդեցութիւն արել են։ Ուստի սկսեց խրատ տալ եւ ասել· Բոլոր ծառաների հարազատ պարտականութիւնն է որ թագաւորը ինչ գործ որ անենայ իւրաքանչիւրը ըստ իւր խելքի չափին լաւ մտածելով եւ խորհելով իւր գաղափարը թագաւորի առեանումը յայտնէ· որպէս զի թագաւորը իւր հպատակաց գաղափարներին վերայ ծանօթութիւն եւ

տեղեկութիւն ստանայ, նրանց կրթութեան պէտքին համար կարեւոր սկզբունքներ ձեռք առնէ եւ բանականութեան մշակութեան եւ յառաջադիմութեան համար իմաստուն ընթացքի հետեւի· քանզի սերմը որչափ որ հողին տակը ծածկուած մնայ, նրան խնամք չեն տանիր, բայց երբոր հողի ծոցից կանաչ զգեստ հագած դուրս գայ՝ այն ժամանակ յայտնուում է որ մի պտղատու ծառ կամ մի օգտակար տունկ է· անտարակոյս սկսում են նրան խնամք տանիլ որ նրա պտուղից վայելեն։ Բուն կրթութիւնը թագաւորներին են տալիս, երբ տեսնեն ձիրք ունեցող անձինք նրանց խնամք են տանում որ նրանց բանականութեան պտուղից վայելեն։ Թէեւ փուշի եւ հողի պէս եմ, ու թագաւորը արեւի ու ամպի պէս է, եթէ ինձ մշակէ ինձանից կարող է կոկոններ եւ վարդեր քաղել։

Առիւծը հարցրեց· Խելացի եւ ձիրք ունեցող անձանց ի՞նչպէս պէտք է կրթութիւն տալ, կամ նրանց ի՞նչպէս պէտք է խնամք տանիլ որ նրանցից օգուտ վայելենք։

Տէմինէ ասաց· Այս բանի մէջ բուն խնդիրը այս է որ թագաւորը ազգի եւ ցեղի խտրութիւն չ՚անէ։ Երբ ձիրք ու ընդունակութիւն չունեցողները իրանց հայրերը միջոց անելով սկսին իրանց անձերը վեր դասել՝ թագաւորը նրանց ուշադրութիւն չի դարձնէ· քանզի աւելի մարդուն պէտք է նայել քան թէ նրա հօրը։ Մարդ պէտք է իր գործունէութեամբ փայլեցնէ իւր ճակատը, ոչ թէ իւր նախնեաց գործերով պարծենայ։ Թերի մարդը կամենում է իւր մեռեալներով ինքնիրան կենդանի ցոյց տալ· իսկ կատարեալ մարդը իւր բարի անունով կենդանացնում է իւր մեռեալներին։ Մուկը որ մարդկանց դրացութեամբ ապրում է, նրա հասցրած վնասի պատճառաւ միշտ նրան կորսնցնելու են աշխատում, իսկ բազէն որ վայրենի եւ օտար է, նրանից օգուտ գալուն համար ձեռքի վերայ են պտըտցնում։ Ուստի պէտք է որ թագաւորը ծանօթին եւ անծանօթին, ազգին եւ այլազգին չի նայի։ Խելացի եւ ընդունակ մարդիկ գտնելու է։ Նրանք որ գործի մէջ անհոգ եւ ծոյլ են եւ ձիրք ու ընդունակութիւն չունին, նրանց խելացի եւ ընդունակ անձինքներից աւելի պատուի արժանի չի սեպէ· քանզի խելացիների գործը յիմարներին յանձնելը եւ գործունեաններուն տրուելու պատիւը կեղծաւորներին տալը՝ նման է սրան որ, մարդ թագը ոտքին հագնի ու գուլպան գլխին։ Ուր որ խելացի անձինք անտես մնան ու իշխողութիւնը յիմարաց ձեռքում լինի, այն թագաւորութեան այնպիսի ընդհանուր վնաս կը հասնի որ դրանից ոչ ժողովուրդը եւ ոչ էլ թագաւորը զերծ չեն կարող մնալ։

Երբոր Տէմինէ իւր խօսքը վերջացրեց, առիւծը նրան իւր

մօտը հրաւիրեց եւ իւր մտերիմներից մին անելով սկսեց իւր գործերը նրա փորձառական խրատներին վերայ հիմնել ։ Տէմնէ էլ խելացութեամբ եւ ճարտարութեամբ վարվելով քիչ ժամանակում թագաւորական բոլոր գործոց նախարարը ու թագաւորի խորհրդականը եղաւ ։ Մի օր յարմար պատեհութիւն գտնելով, առանձնութեան մէջ, առիւծին ասաց․ Բաւական ժամանակ է որ թագաւորը մի եւ նոյն տեղը նստել, որսի գնալու եւ զբօսնելու փափաքն ու ախորժակը թողել է ։ Խնդրում եմ պատճառը իմանալ որ ըստ իմ կարողութեան այն մասին իմ գաղափարը յայտնեմ ։ Առիւծը կամենում էր իւր երկիւղի պատճառը Տէմնէից թագցնել ։

Այս միջոցին Շինզիւպէ գոռալ սկսեց եւ նրա ձայնը առիւծին այնքան սոսկում տուաւ որ իւր տեղից վեր կացաւ ։ Ճարահատեալ սկսեց իւր գաղտնիքը Տէմնէին յայտնելով ասել․ Իմ այլայլուելուս պատճառը այս քո լսած ձայնն է, եւ չեմ գիտեր թէ այդ ձայնը ո՞րինն է, բայց կարծում եմ որ նրա կազմուածքը եւ ոյժն էլ իւր ձայնին համեմատ է լինելու ։ Եթէ այնպէս լինի մեզ այս տեղ բնակել լաւ չէ ։

Տէմնէ ասաց․ Թագաւորը սրանից ի զատ ուրիշ մի հոգս ունենալու է ։

Առիւծն ասաց․ Ոչ ։

Տէմնէ ասաց․ Ուրեմն այսքան բանի համար իւր հայրական ժառանգութիւնը թողնել եւ հայրենիքից հեռանալ պէտք չէ ։ Ձայնից ի՞նչ կը լինի, եւ աղաղակից ի՞նչ կարող է յառաջ գալ, որ նրանով մարդ իւր տեղից շարժուի ։ Թագաւորը պէտք է հաստատուն լեռան պէս լինի, որ ոչ մի քամիով իւր տեղից չի շարժուի, եւ ոչ մի որոտումով իւր տեղից չի փոխուի ։ Մեծերը ասել են․ „Ամեն մի մեծ ձայնին եւ մեծ մարմնին ուշադրութիւն պէտք չէ դարձնել․ քանզի դուրսի երեւոյթը ներսի յատկութեան ապացոյցը չի կարող լինել ։“ Եղէգը որչափ էլ հաստ լինի, մի բարակ ճիւղով կոտրվում է․ կիւլէնկը (մի թռչուն) որչափ էլ մեծամարմին լինի, դարձեալ նիհարակազմ բազէին ճանկերին է ընկնում ։ Ով որ արտաքին երեւոյթին համեմատ չափէ նրան պատահում է՝ ինչ որ աղուէսին պատահեցաւ ։

Առիւծը հարցրեց․ Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը․

Տէմնէ ասաց․ Լսել եմ թէ, Մի ԱՂՈՒԷՍ մի անտառում ուտելու բան որոնելով ման էր գալիս ։ Յանկարծ մի ծառի տակ հասաւ որի վերայից մի թմփուկ էին կախել ։ Երբոր քամին փչում էր, ծառին մի ճիւղը շարժուելով թմփուկին էր խփում․ եւ այսպէս նրանից ձայն էր դուրս գալիս ։ Ծառի տակը մի ընտանի հաւ իւր կտուցը գետին զարնելով ուտելու բան էր որոնում ։

Աղուէսը հաւը որսալու համար դարանում նստեցաւ ։ Յանկարծ թմփուկի ձայնը իւր ականջին հասաւ եւ վեր նայեց տեսաւ որ խիստ գէր է երեւում եւ ահագին ձայն ունի․ իսկոյն աղուէսի ագահութիւնը շարժուելով ինքնիրան խորհեց․ Անշուշտ նրա մորթն ու միսն էլ իւր ձայնին համեմատ կը լինին ։ Ուստի հաւի դարանից ելլելով ծառի վերայ ելաւ ։ Այս միջոցին հաւը զգաստանալով մի կողմ փախաւ եւ աղուէսը շատ դժուարութիւնով թմփուկի մօտ ելաւ ու այն թմփուկը պատառելով տեսաւ որ փայտից ու չոր կաշիից ի զատ բան չի կայ ։ Հազար ափսոս ուտելով եւ արտասուք թափելով ասում էր․ Ափսո՜ս, որ այս մեծ երեւոյթ ունեցող բանի միջոցով, որի մէջ բաց ի քամից ուրիշ բան չի կար, իմ արժանաւոր որսս ձեռքից փախցրի եւ այս նշանակութիւն չունեցող կերպարանքը ինձ ոչ մի օգուտ չի հասցրեց ։

Այս առակը դրա համար բերեցի, որ թագաւորը դուրսի երեւոյթին նայելով եւ ահարկու ձայնից խափուելով որսը իւր ձեռքից չի փախցնէ ։ Եթէ լաւ նկատէք այդ ահագին մարմնից եւ մեծ գոռումից ոչ մի բան չի գար ։ Եթէ հրամայէք նրա մօտ գնալով նրա վիճակը իմանամ եւ տեղեկութիւն բերեմ ։

Տէմնէի խօսքը առիւծին հաճոյ երեւցաւ եւ առիւծի արտօնութեամբ դէպ ի այն կողմ գնաց ։ Բայց երբոր առիւծի աչքից հեռացաւ, առիւծը Տէմնէին ուղարկելուն համար զղջաց եւ ինքնիրան ասում էր․ Մեծ սխալ գործեցի, անխորհուրդ բան արի․ քանզի մեծերը ասել են․ „Թագաւորը պէտք է իւր խորհուրդը եւ գաղտնիքը տասը տեսակ մարդկանց չի յայտնէ ։ Ա․ Նրանց՝ որոնք անմեղ տեղը շատ չարչարուած են եւ նրանց չարչարանքը երկար է տեւել ։ Բ․ Նրանց՝ որոնց ստացուածքն ու պատիւը թագաւորի ծառայութիւնում կորսուած կամ ծախուած է, ու իրանք վերջին աստիճան կարօտութեան մէջ են գտնվում ։ Գ․ Նրանց՝ որոնք իրանց պաշտօնից ընկած են եւ երկրորդ անգամ ձեռք բերելու մտադիր չեն կամ անյոյս են ։ Դ․ Նրանց՝ որոնք ամբարիշտ եւ խառնակիչ են ։ Ե․ Մտերիմին՝ որին ընկերները ներողութիւն ընդունած են եւ ինքը պատիժ կրած է ։ Զ․ Եղեռնագործին՝ որուն վատ համբաւը չափից դուրս հռչակուած է ։ Է․ Այնպիսւոյն՝ որ գովելի ծառայութիւն արած է բայց իւր գործը չի գնահատուելով յետադէմներին իրանից յառաջ անցնելը տեսած է ։ Ը․ Նրանց՝ որոնց դիրքն ու պաշտօնը թշնամիները թագաւորի օգնականութեամբ իրանց ձեռքը ձգելու յաջողացած են ։ Թ․ Նրանց՝ որոնք թագաւորին վնաս հասնելուց իրանց օգուտ լինելը ենթադրուած է ։ Ժ․ Նրանց՝ որոնք թագաւորի առջեւ ծառայելով մի պաշտօն չեն ստացել եւ ուզում են

որ թշնամույն մօտ ընդունելութիւն գտնեն: Այս տասը տեսակ մարդկանց պէտք չէ որ թագաւորը իւր տկար կողմերը յայտնէ: Ուստի այս սկզբունքներին համեմատ՝ ես աւանց փորձելու Տէմինէին թշնամույն մօտ ուղարկելու անխելքութիւն արի: Տէմինէ շատ ճարտար եւ խելացի մէկն է երեւում եւ երկար ժամանակ երեւէ ձգուած ու պատժուած մնացած էր, մի գուցէ նրա սրտում մի ցաւ մնացած լինի եւ հիմա սկսի թշնամութիւն անել, կամ թշնամին աւելի ուժեղ եւ յաղթող տեսնելով սկսէ նրա հետ միանալ ու իմ գործերս նրան յայտնել եւ յետոյ թշնամույն դէմ գնելը ինձ անկարելի լինի: Սխալեցայ, եթէ այս գործից մի չարիք յառաջ գայ ես հարիւր պատիժի արժանի եմ: Այս ասելով իւր սրտի նեղութենից երբեմն ոտք էր ելլում ու երբեմն վար էր նստում եւ Տէմինէի ճանապարհը դիտելով հանգիստ չէր առնում: Մինչեւ որ Տէմինէն երեւցաւ եւ առիւծը մի քիչ հանգիստ առնելով իւր տեղը նստեց:

Երբոր Տէմինէ եկաւ խոնարհութիւն մատուցանելով ասաց. Ո՛վ արքայ, նա որ իր ձայնը ձեր մեծութեան ականջին հասցրել է, մի եզ է, որ անտառի մէջ բաց ի ուտել խմելուց եւ պառկելուց ուրիշ գործ չունի եւ նրա քաջութիւնը իւր բոկից ու փորից չ՚աւելնար:

Առիւծը ասաց. Նրա ուժի չափը ի՞նչ է:

Տէմինէ պատասխանեց. Ես նրանում բաց ի դանդաղութիւնից ոչ մի աշխոյժ չի տեսայ որ նրանից նրա ուժի չափը հետեւցնեմ եւ նրանում ոչ մի շնորհք չի նկատեցի որ նրան աւելի պատուի արժանի համարիմ:

Առիւծը ասաց. Դրանից նրա տկարութիւնը հետեւցնել կարելի չէ: Քանզի սաստիկ քամին թէեւ փոքրիկ խոտին վնաս չէ կարող տալ, բայց ահագին ծառը իւր տեղից կը հանէ: Վեհանձինք եւ մեծահոգիներ մինչեւ որ իրենց ախոյեանը չի գտնեն իրանց ուժը եւ զօրութիւնը չեն յայտներ:

Տէմինէ ասաց. Թագաւորը պէտք է որ նրա գործը այնպէս չի նկատէ եւ այնպէս չի չափէ. քանզի ես հասկացողութեամբ իմացայ որ ի՛նչ է նրա գործը. եթէ ինձ հրամայէք ես նրան ձեր առջեւը բերեմ որ ձեզ հլու ծառայ եւ հպատակ լինելու խոստանայ:

Առիւծը այս խօսքին ուրախ եղաւ եւ նրան բերելու մասին Տէմինէին արտօնութիւն տուաւ: Տէմինէ ուղղակի Շէնդիլպէին մօտ գնալով անմիջապէս սկսեց հարցուփորձ անել թէ՝ Ո՞ւստի ես, այս տեղ ի՞նչպէս եկար եւ այստեղ գալուդ պատճառը ի՞նչ էր եւ ի՞նչու համար այս տեղ բնակել որոշեցիր: Շէնդիլպէ իւր գլխից անցածը պատմեց: Երբոր Տէմինէ նրա վիճակը իմա-

ցաւ, ասաց. Այս անտառի եւ գազանների թագաւորը, առիւծը, ինձ հրամայեց որ քո մօտ գամ եւ եթէ հրամանը ընդունելով անմիջապէս թագաւորի առջեւը գաս՝ կարելի է որ քո հասցրած վնասներից եւ մեղքերից անցնի, իսկ եթէ ուշանաս ես անմիջապէս թագաւորին ետ կը դառնամ եւ եղելութիւնը կը պատմեմ: Շէնդիլպէ երբոր առիւծի եւ գազանաց անունը լսեց, վախեցաւ եւ ասաց. Եթէ ինձ միամիտցնես եւ նրա պատիժից ապահովացնես՝ քեզ հետ միասին կը գամ նրա մեծութեանը առջեւ ներկայանալու: Տէմինէ նրան երդում կերաւ եւ նրա սիրտը ապահովացնելու համար ինչ ուխտ եւ խոստմունք որ պէտք էր արաւ եւ սկսեց իւր հետը բերել առիւծի մօտ: Բայց ինքը յառաջ վազելով եկաւ առիւծին իմաց տուաւ եւ քիչ յետոյ եզը հասաւ առիւծի առջեւ խոնարհութիւն մատուց եւ առիւծը նրա հետ ջերմ խօսեց եւ հարցրեց թէ, Այս կողմերը ե՞րբ եկաք եւ ձեր գալուն պատճառը ի՞նչ էր, եզը իր գլխից անցածը, բոլորը պատմեց: Առիւծը հրամայեց. Ուրեմն այս տեղ բնակի՛ր եւ լիապէս վայելի՛ր մեր բարիքներից: Մեր սահմաններում չես գտնել մէկը որ մեզ դէմ մի տրտունջ ունենայ. քանզի մենք ինչ գործի որ սկսենք, նախ հպատակաց օգուտն ու երջանկութիւնն ենք նկատում: Եզը շնորհակալութիւն մատուց եւ սկսեց ամենայն եռանդով ծառայութիւն անել: Առիւծը եւս նրան յարգելով օր ըստ օրէ նրա աստիճանը բարձրացնում էր, եւ նրա վիճակը, գործը, կամեցողութիւնը եւ փորձառութիւնը չափելու համար ուշադրութիւն դարձնելով տեսաւ որ մի կատարեալ, պարկեշտ, խորհող եւ փորձառու անձ է եւ որչափ որ նրան փորձում էր, նրա խելացութեան մասին իւր վստահութիւնը աւելի հաստատվում էր. ուստի առիւծը երկար բարակ խորհելուց ու մտածելուց յետոյ եզը իրան մտերիմ արաւ, եւ հետզհետէ նրա աստիճանը բարձրանալով նա տէրութեան ընդհանուր գործակատարը եւ թագաւորի առաջին խորհրդականը եղաւ, եւ բոլոր գործը գրեթէ նրա ձեռքն էր անցել:

Տէմինէ տեսաւ, որ առիւծը եզը պատուելու մէջ չափից անցաւ ու իրան ոչ մի խորհուրդի են խառնում ու ոչ էլ մի խօսք են հարցնում. ուստի նախանձը շարժեցաւ եւ գնաց Քէլիլէին մօտ գանգատի եւ ասաց. Ո՛վ եղբայր, իմ տկար կամքս ու անկատար խորհուրդս տես թէ իմ գլխիս ինչ բերեց: Իմ բոլոր ջանքս ի գործ դրի առիւծի սրտի հանգստութեանն ու խաղաղութեանը համար ու եզը բերեցի եւ նա պատիւ ու աստիճան ստացաւ, բայց ես պատւից ու աստիճանից ընկայ:

Քէլիլէ ասաց. Ո՛վ սիրելիս, դու ես արել. քո արածին ի՞նչ պէտք է անել. կացին դու ինքդ քո ոտքիդ ես զարկել: Ուրիշին ի՞նչ ես ասելու: Քեզ կրօնաւորին պատահածն է պատահել:

Տէմինէ հարցրեց թէ, Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Բէլիւէ ասաց. Ասել են թէ, ՄԻ ԹԱԳԱՒՈՐ մի կրօնաւորի մի թանկագին եւ գեղեցիկ զգեստ շնորհեց։ Մի գող այս բանը իմանալով եկաւ կրօնաւորին ծառայութիւն անել սկսեց եւ շատ սէր ու փափաք յայտնեց ճշմարտութեան ու պարկեշտութեան ճանապարհը սովրելու եւ կրօնաւորին աշակերտը եղաւ, մինչեւ որ կրօնաւորը նրան լաւ վստահեց. այս առիթից օգտուելով մի օր զգեստը գողացաւ ու փախաւ։ Կրօնաւորը տեսաւ որ ոչ պատմուճանը կայ ոչ էլ նոր աշակերտը։ Նրան որոնելու համար ուղղուեցաւ դէպի քաղաք. ճանապարհում տեսաւ որ երկու վայրի գոմէշներ միմեանց հետ կռւում ու միմեանց գլուխը սաստիկ վիրաւորում են եւ արիւն հոսում էր։ Այս միջոցին մի աղուէս եկած նրանց վէրքերից հոսող արիւնը լափում էր։ Այս երկու գոմէշները իրանց գլուխները միմեանց խփելիս՝ աղուէսը մէջտեղ մնաց եւ իւր կենդանութիւնից զրկուեցաւ։ Կրօնաւորը սրանից մի դաս ստանալով անցաւ։ Գիշերը երբոր քաղաքում հասաւ արդէն քաղաքի պարիսպի դռները փակել էին եւ նա պարսպի չուրջ շրջում էր որ մի իջեւան անելու տեղ գտնէ։ Պատահմամբ մի կին մի կտուրի վերայից նայում էր. տեսնելով սրան շրջելը՝ իմացաւ որ օտարական է եւ իջեւան է որոնում։ Նրան իւր տունը հրաւիրեց։ Կրօնաւորը ներս մտաւ եւ տան մի անկիւնում հանգչեց։ Բայց այս անգամ կինը մի քանի աղախիններ իւր մօտը պահում եւ ուրիշ մարդկանց ներկայացնում էր փող շահելու համար։ Սրանց մէկն, որ ամենից աւելի գեղեցիկն էր, մի վայելուչ երիտասարդի հետ սէր էր կապել ու այս երիտասարդը իւր սիրականի մասին շատ նախանձոտ լինելով չէր թողնում որ ուրիշները նրան մօտենան։ Այս պատճառաւ պառաւը չէր կարողանում այս աղախնոյ միջոցով փող շահել եւ ապրուստի նեղութեան ու կարօտութեան մէջ էր ընկել։ Կրօնաւորի եկած գիշերը պառաւը խորհել էր որ այդ երիտասարդին թոյն տալով սպաննէ. որպէս զի յետոյ աղախինը իրան ուզած մարդկանց ներկայացնելով փող շահէ։ Այդ գիշեր շատ հիւրասիրեց այդ երիտասարդին. նրան եւ նրա սիրականին լաւ կերակուրներ կերցնելով ու գինի խմցնելով քնացրեց։ Նրանք քնանալուց յետոյ պառաւը վեր առաւ մի եղէգ որի ծայրում էր դրած սպաննիչ թոյն. բերեց երիտասարդի քթի առջեւ, որպէս զի երիտասարդը շունչը ներս քաշած ժամանակ եղէգի միւս ծայրից փչէ եւ թոյնը երիտասարդին շունչին հետ շնչերակները լցուի։ Հէնց որ եղէգի մի ծայրը երիտասարդի քթին եւ միւսը իւր բերանում դրել էր, յանկարծ երիտասարդը փռնկտաց եւ թոյնը եղէգի միջից պառաւի կոկորդից ներս գնալով տեղն ի տեղը սատաւ։

Կրօնաւորը իւր պառկած տեղից այս բանը տեսնելով գիշերը իրան ձանձրալի եւ երկար եկաւ։ Երբոր առաւօտ լուսացաւ, խակոյն խաւարից ի լոյս ելլելով փառք տուաւ Աստուծոյն։ Մտաւ քաղաքը եւ մի ուրիշ բնակարան էր որոնում։ Մի կօշկակար որ ինքնիրան կրօնաւորին աշակերտներից էր համարում, ճանապարհում նրան պատահեցաւ եւ առաջնորդեց իւր տունը։ Իւր կնոջ պատուիրեց լաւ սպասաւորութիւն անել եւ ինքը կրօնաւորից ներողութիւն խնդրելով գնաց մի հեռու տեղ։ Կօշկակարի կինը մի սիրական ունէր։ Նրա սիրականի եւ իւր մէջտեղ միջնորդողը մի սափրիչի կին էր։ Երբոր իրիկուն եղաւ կօշկակարի կինը սափրիչի կնոջ լուր ուղարկեց որ. Ո՞ւր է իմ սիրականս, թո՛ղ գայ. այս գիշերը մարդս տունում չէ, եւ լաւ ժամանակ է։ Մինչդեռ կնոջ սիրականը եկել էր դրան առջեւ, նոյն միջոցին կօշկակարը վերայ հասաւ։ Առաջուց փոքր ինչ լսել էր իւր կնոջ սիրականի մասին, հիմա, որ երիտասարդը իւր դրան առջեւ տեսաւ, իր կասկածը հաստատուեցաւ։ Սաստիկ տաքանալով ներս մտաւ եւ սկսեց իւր կինը շատ ծեծել։ Ծեծելուց յետոյ մի սիւնին կապեց ու ինքը անկողնին վերայ պառկեց հանգստանալու։ Կրօնաւորը այս էր խորհում որ առանց մի տեսանելի պատճառի կինը այսչափ ծեծել իրաւունքից հեռու բան էր։ Պէտք էր միջնորդել ու հաւանութիւն չի տալ նրան իւր կինը ծեծելու։ Յանկարծ սափրիչի կինը ներս մտաւ եւ կօշկակարի կնոջ մօտենալով նրան ասաց. Ո՛վ քոյրիկ, այդ երիտասարդը մինչեւ ե՞րբ սպասեցնես, ելիր գնա՛ նրա մօտ. քեզ սպասում է։ Կօշկակարի կինը նրան աւելի մօտ կանչելով ասաց. Սիրելի՛ս, իմ վերայ խղճացիր, այս իմ անգութ էրիկս այս բանի վերայով իմացել է եղել։ Գժուածի պէս ներս մտնելով ինձ սաստիկ ծեծեց եւ այս սիւնին կապեց. եթէ ինձ ու իմ սիրականի վերայ գութ ունիս՝ ինձ այս սիւնից բաց արա՛ ու ինձ էլ հրաման տուր որ քեզ իմ տեղս սիւնի վերայ կապեմ մինչեւ որ ես իմ սիրականին մօտ գնամ ու գամ։ Սափրիչի կինը, որ նրանց երկուսին շատ էր սիրում, յանձնառու եղաւ։ Սափրիչի կինը նրա տեղ կապուելով նրան ուղարկեց իւր սիրականին մօտ։ Կրօնաւորը տան մի անկիւնում պառկած այս բաները լսում էր եւ խորհում էր մարդի եւ կնոջ մէջ եղած պատերազմի վերայ։ Յանկարծ կօշկակարը քունից արթնացաւ եւ կնոջ ձայն տուաւ։ Սափրիչի կինը վախենում էր, որ եթէ պատասխան տայ, իւր ձայնը կը ճանաչուի. ուստի որչափ որ կօշկակարը կանչեց՝ կինը պատասխան չը տուաւ. մինչեւ որ կօշկակարը սաստիկ բարկութիւնից վեր ելաւ սափրիչի կնոջ քիթը կտրեց ու դրաւ նորա բերանը ասելով. Սիրականիդ ուղարկած ընծան է։ Սափրիչի

կինը որչափ էլ կսկիծ զգաց կրկին ձայն չի հանեց։ Ինքնիրան ասում էր․ Զուարճութիւնը ուրիշներ վայելեն չարչարանքը ես քաշեմ։ Կոշկակարի կինը ետ եկաւ․ արձակեց սափրիչի կինը շատ ներողութիւն խնդրելով։ Սափրիչի կինը քիթը ձեռքում տուն գնաց։ Արդ կօշկակարի կինը մի ժամի չափ համբերելով սկսեց խաբէութիւն մտածել։ Կրօնաւորը այս բոլորը տեսնելով ու լսելով իւր զարմանքը աւելանում էր։ Յանկարծ կօշկակարի կինը սիւնի վերայ աղօթել սկսեց ասելով․ Ո՛վ արդար Տէ՛ր, եւ Թագաւոր Թագաւորաց, դու ինքդ իմանում ես որ իմ անպտուղթ էրիկս ինձ զրպարտութիւն անելով սատակ ծեծեց եւ իմ քիթս, որ գեղեցկութեան ու վայելչութեան զարդն էր, կտրեց։ Արդ խնդրում եմ որ դու իմ քիթս առողջացնես։ Քո ամենակարող զօրութիւնդ ցոյց տուր ինձ։ Այս միջոցին կօշկակարը արթնանալով նորա ողբաձայն աղաղակը եւ աղօթքը լսեց եւ կոչեց․ Ո՛վ անզգամ եւ անպիտան կին, այդ ինչ աղօթք ես անում, Աստուած քեզ նման լիրբի ու անհաւատարիմի աղօթքը չի լսեր։ Այս միջոցին կինը աղաղակեց․ Ո՛վ անիրաւ, ելի՛ր ու Աստուծոյ զօրութիւնը տե՛ս․ որովհետեւ նրան յայտնի էր իմ պարկեշտութիւնը ու մաքրութիւնը, նա իմ քիթս կրկին շնորհեց ինձ եւ ինձ մարդկանց առջեւ արատաւոր ու պակասանդամ չ՛արաւ։ Պարզամիտ մարդը վեր ելլելով ճրագ վառեց եւ տեսաւ որ իւր կնոջ քիթը բոլորովին ողջ է ու կտրուածքի նշոյլ անգամ չի կայ, իսկոյն իւր կնոջ կապերը արձակելով, նրանից ներողութիւն խնդրեց եւ խոստացաւ այնուհետեւ այլոց խօսքով իւր կնոջ սրբութեան ու անարատութեան վերայ չի կասկածել եւ ամեն բանի մէջ իւր կնոջը հնազանդիլ․ քանզի ասում էր․ Երբոր իմ կնոջ աղօթքը այսքան ընդունելի լինի, ուրեմն ինձ պէտք է որ նրա բարի աղօթքներին արժանանամ։ Այս միջոցին սափրիչի կինը քիթը իւր ձեռքում մտաւ իւր տունը եւ խորհում էր որ իւր մարդուն ի՞նչ ասէ, եւ դրացիներից ինչպէս ծածկէ կամ ինչպէս նրանց հաւատացնէ։ Եւ ահա սափրիչը քնից արթնացաւ կնոջը կանչեց։ Կինը ձայն չի տուաւ։ Նա որչափ որ բարկանում եւ կանչում էր, կինը․ Կելլեմ, կելլեմ, ասում էր ու չէր ելլում։ Սափրիչը սաստիկ բարկութիւնից իւր ածելին մօտերը ձեռքով խարխափում էր։ Յանկարծ ձեռքը ածելի եկաւ որը դէպ ի կնոջ գցելով սկսեց ուշունց տալ։ Կինը․ Վա՛յ քիթս, վա՛յ քիթս ասելով տարածուեց ածելիի ընկած տեղի վերայ։ Խեղճ սափրիչը զարմացած մնաց։ Դրացիք աղաղակը լսելով հաւաքուեցան։ Կինը արեան մէջ թաթախուած եւ քիթը կտրուած տեսնելով սափրիչին շատ յանդիմանեցին։ Խեղճ սափրիչը ո՛չ կարողանում էր ուրանալ եւ ո՛չ էլ խոստովանել։ Առաւօտ, երբոր արեգակը իւր ոսկեճաճանչ

ճառագայթները արձակեց խաւարը իւր գործերով անհետացաւ, սափրիչին տարան բերին դատաւորի առջեւ։ Այս ժամումը կրօնաւորը դատարան գնաց իւր բարեկամ դատաւորին այցելելու։ Նոյն միջոցին սափրիչի վերայով գանգատը ներկայացրին։ Դատաւորը սափրիչին ասաց․ Ո՛վ վարպետ, առանց մի յայտնի մեղքի եւ առանց օրինաւոր պատճառի, ի՞նչու այս կինը այսպէս քթազուրկ արիր։ Սափրիչը այս հարցին չի կարողացաւ պատասխանել։ Դատաւորը, „Քիթ ընդ քթոյ,“ վճիռը կարդալով նրան պատժելու հրաման տուաւ։ Կրօնաւորը վեր կացաւ եւ ասաց․ Ո՛վ դատաւոր, այս գործի մէջ մի քիչ համբերութիւն պէտք է անել․ վասնզի գողը իմ պատմուճանը չէ տարել, աղուէսին գոմէշները չեն սպաննել, թոյնը անզգամ պառաւին չէ թունաւորել եւ կօշկակարը սափրիչի կնոջ քիթը չէ կտրել, այլ այս բոլոր պատիժները մենք ենք ընդունել։ Դատաւորը սափրիչից ձեռք քաշելով կրօնաւորին դարձաւ եւ խնդրեց որ այս խրթնաբանութիւնը պարզէ։ Կրօնաւորը ինչ որ տեսել եւ լսել էր պատմեց եւ ասաց․ Եթէ ես աշակերտ գտնելու չի փափաքէի՝ գողից չէի խաբուէր եւ այն անպիտանը պատեհութիւն գտնելով՝ իմ պատմուճանս չէր գողանալ։ Եթէ աղուէսը արիւն խմելու մէջ այնքան ագահ չի լինէր գոմէշների մէջտեղը գալով չէր սպաննուել։ Եթէ անզգամ պառաւը անգէտ երիտասարդին թունաւորել չի կամենար՝ ինք չէր թունաւորվում։ Եւ եթէ սափրիչի կինը այդ շնութեան գործին օգնական չի լինէր՝ ինքը պատիժ ընդունելով այլոց օրինակ չէր դառնալ։ Ո՛վ որ չարութիւն անէ թող բարութեան չի սպասէ, եւ մանանեխ ցանողը շաքարի եղէգ քաղելու յոյս չ՛ունենայ։ Այս առակը դրա համար բերեցի, ըսաւ Քէլիլէ, որ գիտենաս թէ այս վշտերի ճանապարհը դու ինքդ ես քայլել եւ այս ցաւերը դու ինքդ ես քո վերայ բերել։ Արդ ես ի՞նչ անեմ։

Տէմնէ ասաց․ Ճշմարիտ ես ասում որ ես արի․ բայց դու ի՞նչ միջոց ցոյց ես տալիս։ Այդ խնդիրը լուծելու համար ի՞նչ խորագիտութիւն պէտք է գործածել։

Քէլիլէ ասաց․ Արդէն ես առաջուց այս բանին համաձայն չեղայ եւ հիմա էլ այս գործում ես ինձ չէզոք եմ համարում, Միայն դու քո գործիդ վերայով խորհի՛ր։ Ինչպէս որ ասել են․ „Ամեն մարդ իւր գործը լաւ է իմանում։“

Տէմնէ ասաց․ Ես մտածել եմ որ մի կերպով դարան լարեմ եզի դէմ․ մինչեւ որ այս պաշտօնից վեր գցեմ նրան եւ եթէ հնար լինի այս երկրից փախցնեմ։ Եթէ այս բանին մէջ զանցառութիւն անեմ, էլ խելացիների դասից չեմ համարուիլ։ Կրկին քո վճակդ ես չեմ ընտրելու․ այլ ինչ որ պէտք է կ՛անեմ․

քանզի խելացիները ասել են. Եթէ մարդ հինգ բանի մէջ զանցառութիւն անէ մեղադրելի է։ Նախ, առաջի վիճակը, եթէ եաքինից լաւագոյն է, նրան կրկին ձեռք բերելու ջանալ եւ ջանալ յառաջադիմութեան։ Երկրորդ, զգուշանալ այն բաներից որ անձամբ փորձելով նրանց վնասակարութիւնը իմացել է։ Երրորդ, վաստակած օգուտը կամ ձեռք բերած պաշտօնը լաւ պահպանել։ Չորրորդ, իւր անձը վտանգից ազատելու մէջ անփոյթ չի լինել։ Հինգերորդ, ինչ որ օգտակար ապագայ խոստանայ՝ նրան ձեռք բերել եւ ինչ որ ապագայում վնասակար կարող է լինել՝ նրանից զգուշանալ։ Արդ իմ ջանքս սա է որ կրկին իմ առաջի պաշտօնին հասնիմ եւ դիրքիս ու վիճակիս գեղեցկութիւնը կրկին փայլի։ Ջանալու եմ խորամանկութեամբ եզը իւր դիրքից վար գցել եւ այս կողմերից հեռացնել։ Մի՞թէ ես այն ճնճղուկից տկար եմ, որ իւր վրէժը բազէից լուծեց։

Քէլիլէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Տէմնէ ասաց. ԵՐԿՈՒ ՃՆՃՂՈՒԿ մի ծառի վերայ բոյն էին դրել եւ մի քանի հատիկներով եւ պարզ ջրով գոհ էին իրանց վիճակից։ Բայց ծառը մի լերան ստորոտումն էր։ Այդ լերան վերայ մի բազէ բոյն էր դրել. Երբոր որսի համար իւր բոյնից կայծակի արագութեամբ վար սլանում էր՝ թռչնոց յուսոյ հաստատութեան հիմը ելեկտրական հրով այրում էր։ Երբոր այս ճնճղուկների ձագերը հաւկիթից դուրս էին գալիս ու նոր թռիչ առնելով սկսում էին թռչել, բազէն նրանց եռուից ընկնելով որսում եւ տանում էր իւր ձագերին կերակուր անելու։ Ճնճղուկները հայրենիքը սիրելը եւ դէպ ի իրանց հարց բնակարանը հաւատարիմ լինելը նուիրական համարելով, չէին կարողանում այդ տեղից հեռանալ։ Ոչ հայրենիքից հեռանալու կամեցողութիւն ունէին եւ ոչ էլ բազէին բռնութեան կարող էին համբերել։ Երբ նրանց ձագերը մեծանում էին եւ սկսում էին թռչել՝ ծնողները մի կողմից նրանց թռչելուց զգուշացնում էին, իսկ միւս կողմից էլ ուրախանում էին որ նրանք թռչիլը սովորում են։ Ամեն անգամ որ բազէն նրանց միտքն էր ընկնում, միանգամայն նրանց սիրտը կոտրվում էր եւ սկսում էին տխրել։ Իրանց ծիծաղը լացի եւ ուրախութիւնը սուգի էր փոխվում։ Ձագերից մին որ կատարելութեան եւ քաջութեան նշան ունէր ճակատումը, նրանց ուրախութիւնը տխրութեան փոխուելուն պատճառը հարցրեց։ Ասացին. Ո՛րդի, մեզանից մի հարցնէր թէ մեր սրտի կրակը որ աստիճանի է, այլ մեր աչաց արցունքներից հարցրու որ քեզ թարգմանեն այդ։ Պատմեցին բազէի արածները։ Որդին ասաց. Թէպէտեւ ճակատագրից փախուստ չի կայ՝ սակայն պատճառաց պատճառը ամեն բանին մի միջոց ու մի ճար,

եւ ամեն ախտին մի դեղ ու մի սպեղանի ստեղծել է։ Հնար է որ, եթէ ջանք ի գործ դրուի, թէ մենք այս պատուհասից կ՚ազատուինք եւ թէ ձեր սրտից այդ սուգը կը վերանայ։ Այս առաջարկութիւնը նրանց ուղիղ երեւցաւ։ Խորհուրդ անելով որոշեցին որ մին ձագերը պահպանելու զբաղի, եւ միւսը մի ճար որոնելու գնայ։ Երբոր մի քիչ թռաւ՝ սկսեց խորհել. Ես ո՞ւր գնամ, եւ սրտիս ցաւը ո՞ւմ պատմեմ։ Ո՞ւմից կարող է իմ ցաւիս ճար հասնիլ։ Որոշեց որ, ո՛ր մէկ կենդանին ամենից առաջ իւր դէմն ելլէ, նրան պատմէ իւր վիճակը։ Դիպուածով մի սաղամանդր կրակի հանքից դուրս եկած դաշտումը զբօսնում էր։ Ճնճղուկի աչքը սրան հանդիպեցաւ։ Տեսնելով նրա զարմանալի կազմուածքը եւ պատկառելի կերպարանքը, իւր մտքում ասաց. Եկ, սրան պատմեմ իմ սրտին ցաւը։ Գուցէ այս զարմանալի թռչունը ինձ մի ճար գտնէ կամ մի ազատութեան միջոց սորվեցնէ։ Սաղամանդրի առջեւ խոնարհութիւն մատուցանելով բարեւ տուաւ։ Նա եւս յարգանօք նրա բարեւը ընդունելով՝ նրան հիւրասիրեց եւ ասաց. Ձեր դէմքի վերայ տխրութեան նշան եմ տեսնում. եթէ ճանապարհի յոգնածութիւնից է՝ մի քանի օրեր այս տեղ հանգստացէք. իսկ եթէ ուրիշ բան է, կրկին յայտնեցէք որ, ինչ որ կարելի է այդ մասին ի գործ դնենք։ Ճնճղուկը բերանը բանալով իւր խոր ցաւերը եւ ողբալի վիճակը այնպէս պատմեց որ եթէ լեռը ապառաժ էլ լինէր կը փշրուէր։ Սաղամանդրը այս լսելով իւր ցասման կրակը բորբոքեցաւ եւ ասաց. Հոգ մի՛ անէր, այս պատուհասը ես քո գլխից կը վերցնեմ։ Այնպէս կ՚անեմ որ նրան բոյնը, եւ ինչ որ նրանում կայ, կրակով այրուին։ Դու քո բոյնը ինձ ցոյց տուր ու գնա՛ քո զաւակների մօտ մինչեւ որ ես գամ։ Արդ ճնճղուկը իւր բոյնը նրան ցոյց տուաւ։ Սաղամանդրը գիշերում իր ազգից մի քանի հոգի իւր հետը վեր առնելով եւ իրանց հետ ծծումբ ու նաւթ բերելով՝ ճնճղուկի առաջնորդութեամբ եկան բազէի բոյնին բոլորտիքը ձգեցին ու գնացին։ Այս բանից բազէն անտեղեակ՝ իւր ձագերի հետ քնում էր։ Յանկարծ Աստուծոյ արդար դատաստանը այդ անիրաւ բռնաւորին վերայ հասաւ։ Երբ նա իւր քունից արթնացաւ տեսաւ որ արդէն կրակը բոյնի ամեն կողմը բռնել է եւ փախուստի ճանապարհ չի կայ. ուստի իւր ձագերով միասին հրոյ ճարակ եղաւ։ Այս առակը դրա համար բերեցի, որ գիտենաս թէ, եթէ մարդ կամենայ իւր անձը թշնամու բռնադատութիւնից ազատել, եթէ ջանք անէ հնարք կայ, թէ եւ ինքը տկար ու թշնամին զօրաւոր լինի։

Քէլիլէ ասաց. Հիմա առիւծը եզը ընտրելով մեծացրել եւ իրեն մտերիմ է արել։ Կարծում եմ որ շատ դժուար է առիւծի

սիրտը նրանից ետ դարձնելով նրա վրայ սրտողեցնել. քանզի Թագաւորները երբոր մէկին բարձրացնում եւ խնամում են հեշտութեամբ նրան երեսից չեն գցել առանց մի երեւելի պատճառի։ Ինչպէս որ ջուրը իւր սնուցած փայտին չ'ընկղմեր։

Տէմնէ ասաց. Սրանից մեծ պատճառ ի՞նչ կարող է լինել որ, նա Թագաւորի կրթութեան արգելք է դնել։ Այնքան խրատատուներ թեթեւամիտ սխալուելով Թագաւորի ծառայութիւնից հրաժարեցան եւ նրանց խրատների օգուտը չի քաղուեցաւ։ Սրանից առաջին արկածներ եւ ընդհանուր վնասներ կարող են յառաջ գալ։ Քանզի իմաստուններ ասել են. Թագաւորի վտանգը կամ անկումը այս վեց բաների մէկից կարող է յառաջ գալ։ Ա. Բարի կամեցողները մերժել եւ փորձառու անձանց խրատներից օգուտ չի քաղել, Բ. Անտեղի պատերազմ սկսել, Գ. Անժուժկալութեան եւ զուարճասիրութեան անձնատուր լինել, Դ. Արկած, դիպուած, սով, երկրաշարժ, հրդեհ եւ նաւակոծութիւն պատահել, Ե. Բարկութիւն, պատժելու եւ սիրապետելու մէջ չափից անցնել, Զ. Տգիտութիւն, այսինքն պատերազմելու ժամանակ խաղաղութիւն որոնել եւ խաղաղութեան ժամանակ պատերազմ անել։ Անտեղի պատերազմը եւ անտեղի խաղաղութիւնը մի բանի պէտք չի գար։ Տեղ տեղ պէտք է վարդ վարդ լինել եւ տեղ տեղ էլ պէտք է փուշ փուշ լինել։

Քէլիլէ ասաց. Գիտցայ որ վրէժխնդրութեան պատրաստուել ես։ Նպատակդ սա է որ նրան մի վնաս հասցնես, եւ ես գիտեմ որ վնաս հասցնելը լաւ հետեւանք չունենար։ Ամեն մարդ իւր արածը կը գտնէ եւ վատութիւն անողը վատութիւնից ի զատ բան չէ տեսնելու։ Ո՛վ որ ուշադրութեամբ բարիքի եւ չարիքի հատուցման վերայով մտածէ, տարակոյս չի կայ որ բարութեան եւ ողորմածութեան կողմը յարելով, իւր ձեռքն ու լեզուն վնաս տալուց ետ կը պահէ։ Ինչպէս որ Մեծն Իրաւադատ Թագաւորը արեց։

Տէմնէ հարցրեց. Ի՞նչպէս է այդ պատմութիւնը։

Քէլիլէ ասաց. Լսել եմ որ, վաղեմի ժամանակներում մի ԲՌՆԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐ կար, որ արդարութեան եւ իրաւունքի ճանապարհից շեղուած, չարչարում էր իւր հպատակներին։ Մարդիկ գիշեր ցերեկ նրա բռնութիւնից հառաչանքներ էին բարձրացնում առ Բարձրեալն։ Մի օր այս Թագաւորը որսի գնաց եւ երբոր ետ դարձաւ հրապարակութիւն անելով իւր հպատակները մի տեղ հաւաքեց եւ նրանց ասաց. Ես հիմա եկայ այն որոշման որ սրանից յետոյ պարտիմ արդարութեամբ եւ իրաւունքով կառավարել իմ հպատակներս։ Յոյս ունիմ որ սրանից յետոյ ոչ մի բռնութիւն եւ անիրաւութիւն չի լինի իմ տէրութեան մէջ։ Եւ ոչ

մի աղքատի կամ զրկեալի սիրտը չի բողոքէ ինձ դէմ։ Սրա արդարադատութիւնը եւ բարի կառավարութիւնը այն աստիճանի հասաւ որ, գառը առիւծի ծիծից կաթ էր ծծում։ Մի օր իւր խորհրդականներից մէն նրան հարցրեց, նրա դառն բնաւորութեան յանկարծ այսպէս քաղցրութեան փոխուելուն պատճառը։ Թագաւորը ասաց. Այն օրը, որ ես որսի գնացել ամեն կողմ նայում էի, տեսայ որ մի շուն մի աղուէսը հալածեց եւ նրան հասնելով նրա ոտքի ոսկորը կոտրեց։ Խեղճ աղուէսը կաղալով մտաւ մի խորշում եւ շունը ետ դարձաւ։ Նոյն ատեն մի մարդ մի քար նետեց եւ շան ոտքը կոտրեց։ Այդ մարդը հազիւ մի քայլ առել էր, մի ձի նրան կից խփեց եւ նրա ոտքը կոտրեց։ Այն ձին դեռ մի քանի քայլ յառաջ չի գնացած՝ ոտքը մի ծակի մէջ գնալով կոտրուեց։ Այս բոլորը տեսնելուց յետոյ իմ սրտում ասացի. Տեսա՞ր, ի՛նչ արին եւ ի՛նչ եղաւ։ Իւրաքանչիւրը իւր արածը գտաւ։ Այս առակը դրա համար ասացի որ, չարիքի հատուցման վերայով մտածես։ Ո՛վ որ փոս փորէ, ինքը մէջը կ'ընկնի։

Տէմնէ ասաց. Այս բանին մէջ ես զրկանք կրողն եմ, ո՛չ թէ զրկողը։ Եթէ զրկանք կրողը զրկողից վրէժ լուծելու ջանայ, դրան ի՞նչ հատուցում պէտք է լինի։

Քէլիլէ ասաց. Սեպենք թէ այս բանի մէջ գործիդ վնաս չի հասնի։ Բայց ի՞նչպէս պիտի յաջողիս եզը կորցնել. քանի որ նրա ոյժն ու զօրութիւնը, եւ օգնականներն ու բարեկամները քո ունեցածից շատ են։

Տէմնէ ասաց. Գործին հիմը պէտք չէ կարողութեան եւ օգնականների շատութեան վերայ դնել։ Խելքով եւ խորագէտութեամբ մարդ կարող է առաւել յաջողակ լինել։ Ինչպէս որ ագռաւը խորամանկութեամբ օձը կորցրեց։

Քէլիլէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Տէմնէ ասաց. Մի ԱԳՌԱՒ մի լեռան կողքում բոյն ունէր եւ նրանից ոչ այնքան հեռու մի թունալից օձի ծակ կար. ամեն անգամ որ ագռաւը ձագ էր հանում, օձը գալիս էր եւ ագռաւի ձագերը գողանում եւ ուտում էր։ Ագռաւի սիրտը որդիական ցաւով ու սգով լցվում էր։ Օձի չարութիւնը չափից անցաւ։ Ագռաւը իւր այս վիճակը պատմեց մի ճագար բարեկամին եւ ասաց. Ես պէտք է ազատուիմ այս բռնադատութիւնից։ Ճագարը հարցրեց. Ի՞նչ խորհուրդ ես արել. ի՞նչ միջոցով կարող ես այդ գործը կատարել։ Ագռաւը ասաց. Մտածել եմ որ օձը քնելիս նրա աչքերը փորեմ. որպէսզի այնուհետեւ իմ աչքիս լոյսը եղող ձագերս չ'ուտէ։ Ճագարը ասաց. Այդ խորհուրդը խելքից հեռու է։ Մարդ պէտք է թշնամին այնպէս հալածէ որ, նրանից

իւր անձին մի վտանգ պատահելու տեղի չի տայ։ Այս խորհուրդդից յետ կա՛ց, որպէս զի քո անձը վտանգի մէջ գցելով չի կորուսես։ Ինչպէս որ ձկնահան արագիլը խեցգետինը կորցնել ջանաց, բայց իւր անձը կորստեան ենթարկեց։ Ագռաւը հարցրեց թէ. Այդ ի՞նչպէս է պատահել։ Ճագարը ասաց. Մի ջրի եզերքը ՄԻ ԱՐԱԳԻԼ բնակւում էր, որը օրական մի քանի ձուկ որսալով ապրում էր։ Ծերութիւնը վերայ գալով իւր մարմնոյ ոյժը նուազեցաւ եւ ձուկ որսալու անկարող եղաւ. ուստի սկսեց հոգսի մէջ ընկնել։ Ինքնիրան տրտնջում էր ասելով. Թէ ի՞նչու համար պատուական կեանքը անցաւ ծուլութեամբ եւ երախտայական խաղերով։ Ի՞նչ որ հարկ էր, ծերութեան ժամանակում ինձ ձեռնտու լինելու համար, ժամանակին չի դիզեցի. հիմա, որ ուժից ընկել եմ, էլ ուրիշ ճար չի կայ, պէտք է խորագիտութիւն բանեցնեմ. գուցէ այս կերպով կարելի լինի իմ օրական ապրուստը ձեռք գցել։ Այսպէս ողբալով եւ հառաչելով ջրի եզերքը նստեց։ Մի խեցգետին նրան հեռուանց տեսնելով մօտ եկաւ եւ ասաց. Յարգելի տէ՛ր, քեզ տխուր եմ տեսնում. պատճառը ի՞նչ է։ Արագիլը պատասխանեց. Ի՞նչպէս ես տխուր չի լինիմ։ Դու ինքդ իմանում ես որ իմ կենդանութիւնը եւ իմ ապրուստի միջոցը գտնում էի օրական երկու ձուկն որսալով։ Դրանով ձկներին այնքան մեծ կորուստ չէր լինում եւ օրերս էլ գոհունակութեամբ եւ ուրախութեամբ անցնում էի։ Այսօր երկու ձկնորսներ այստեղից անցան եւ ասում էին. Այս լճակում ձուկ շատ է եւ շատ հեշտութեամբ կարող ենք ամենն էլ որսալ։ Նոյն ատեն ասացին թէ. Այն ինչ լճակում սրանից աւելի կան, առաջ նրանց հոգսը պէտք է քաշել ու եօքը գալ սրան։ Եթէ այդպէս լինի ինձ պէտք է կենդանութիւնից յոյս կտրել։ Խեցգետինը երբոր այս լուրը լսեց, անմիջապէս վազեց ձկների մօտ եւ այս երկիւղալի լուրը իւր լսածին պէս պատմեց։ Նրանց մէջ մեծ խռովութիւն ընկաւ եւ խեցգետինի հետ միասին եկան արագիլի մօտ եւ ասացին. Այսպիսի մի լուր ձեր կողմանից մեզ հասաւ եւ մեր սիրտը վիրաւորուեցաւ։ Մենք չենք իմանում, ի՞նչ հնարք կարող ենք գործածել այդ բանին դէմ։ Քեզանից խորհուրդ ենք հարցնում։ Խելացին եթէ թշնամի էլ լինի, պէտք է որ նրանից խորհուրդ հարցրած ժամանակը, նա բարի եւ օգտակար խորհուրդ տայ. մանաւանդ երբոր նրա օգուտն էլ այդ բանի մէջ է գտնւում։ Դու ինքդ ասում ես, որ քո կեանքը մեզանից կախուած է։ Այս բանին մէջ ի՞նչ միջոց ես ցոյց տալիս մեզ։ Արագիլն ասաց. Ես ինքս անձամբ լսեցի այս խօսքը ձկնորսների բերանից։ Նրանց դէմ դնել կարելի չէ, իմ մտքիս բաց ի սրանից ուրիշ խորհուրդ չէ գալիս։ Այս մօտերումս մի լճակ կայ,

որի ջուրը յստակ եւ մաքուր է։ Մինչեւ հիմա ոչ մի ձկնորս նրան տեղը չէ իմացել եւ այդ լճակի ձկները երբեք որս չեն տարուել։ Եթէ դուք այս լճակից այնտեղ կարողանաք գաղթել մնացած օրերնիդ կարող էք խաղաղութեամբ անցկացնել։ Նրանք ասացին. Շատ բարի խորհուրդ է. բայց մենք առանց քո օգնութեան ի՞նչպէս կարող ենք այդ բանը անել։ Արագիլն ասաց. Ես ի՛նչ ոյժ ու զօրութիւն որ ունիմ ձեզանից չեմ խնայել. սակայն հիմա ժամանակը կարճ է, գուցէ ձկնորսները գան։ Ձուկները շատ պաղատեցին։ Վերջապէս որոշուեցաւ որ, արագիլը օրական մի քանի ձուկ այս լճակից այն լճակը տեղափոխէ։ Ամեն առաւօտ արագիլը մի քանի ձուկ տանում էր, երբոր լճակից հեռացնելով բերում էր բլուրի մօտ, այնտեղ ուտում էր նրանց։ Նա դառնալիս տեսնում էր թէ ի՛նչպէս ձկները շտապում էին մէկը միւսից առաջ գաղթելու։ Արագիլը, նրանց միամտութեան եւ խաբուելուն վերայ զարմացած, նրանց վերայ խղճում էր. սակայն ասում էր. Ո՛վ որ թշնամւոյն վստահութիւն անէ եւ նրա չողոքորդութեանը խաբուէ արժանի է որ այսպէս կորսուի։ Մի քանի օրից յետոյ խեցգետինը եւս ցանկացաւ այդ լճակը գաղթել։ Արագիլը խորհեց. Ես սրանից աւելի մեծ թշնամի չ'ունիմ. պէտք է սրա կեանքն էլ վերջացնեմ։ Այդ արագիլը խեցգետինն էլ գաղթեցնելու համար կոկորդիցը բռնեց եւ տանում էր դէպ ի ձկանց գերեզմաննոցը։ Խեցգետինը երբոր հեռուից ձկների ոսկորները տեսաւ, գիտցաւ իրան գլխին էլ ի՞նչ է գալու։ Ուստի խորհեց. Խելացին երբ տեսնէ որ թշնամին մտադիր է իրան սպանել, եթէ ազատուելու ջանք չ'անէ, իւր արեանը թափուելուն ինքը մասնակից կը լինի։ Բայց եթէ ջանք անէ, կամ կը յաջողուի, կամ չի յաջողուիր. եթէ յաջողուի քաջութեան անունը կ'ստանայ. եթէ չի յաջողուի, գոնեայ թշնամւոյն դէմ իւր անձը պաշտպանելում անփոյթ գտնուած չի համարուիր։ Խեցգետինը պլլուեցաւ արագիլի վիզը եւ սկսեց նրա կոկորդը պինդ սեղմել։ Արագիլը ծերութեան պատճառաւ շուտով ուժաթափ եղաւ եւ անկենդան գետինը փռուեցաւ։ Խեցգետինը այս փորձանքից ազատուելուց յետոյ ետ դարձաւ եւ իւր բոլոր տեսածները պատմեց ձկներին։ Նրանք թէեւ առաջուց գաղթող ձկների կորստեան համար սուգ արին, բայց արագիլի մահուան համար այնքան ուրախացան որ գրեթէ նոր կեանք ստացան, եւ ասում էին. Այսպիսի թշնամւոյն մահուանից յետոյ մի վայրկեան ապրելը մեզ համար հարիւր տարի ապրելուց գերազանց է։ Թշնամւոյն մեռնելուն վերայ չէ մեր ուրախութիւնը՝ այլ այսպիսի թշնամիից յետոյ ապրելը, ինչ որ էլ ասես, մեզ համար նրանից լաւ է։ Այս առակը դրա համար բերեցի, որ

գիտենաս թէ, չարերը խորամանկութիւն, խարդախութիւն եւ խաբէութիւն արած ժամանակնին իրանք նոյն թակարդին մէջ կ'ընկնին եւ իրանց գործին հատուցումը կ'ստանան։ Բայց ես քեզ մի կերպ սովրեցնեմ, որ եթէ այնպէս անես, քո կեանքը ապահով կը մնայ եւ թշնամին էլ կը կորսուի։ Ագռաւն ասաց. Անշուշտ չէ կարելի բարեկամաց յորդորը զանց առնել եւ գիտնոց խրատին հակառակ վարուիլ։ Ճագարն ասաց. Լաւն այն է որ գնաս եւ դուրսը փռուած մարդու շալիկ մը գտնես, եւ եթէ հնար է, մարդկանց առջեւից նրան յափշտակես եւ դէպ ի օձի բոյնը բերես. անտարակոյս մարդիկ այդ բանը տեսնելով քո ետեւից կը գան, եւ դու շալիկը օձին վերայ ձգես։ Մարդիկ օձին տեսնելով նրան կ'սպաննեն։ Ագռաւը ճագարի տուած խորհուրդին վերայ գնաց տեսաւ մի կին որ շալիկը կտուրի վերայ փռած՝ ինքը նրա մօտ նստած լուացք էր անում։ Վեր առաւ շալիկը եւ տարաւ օձի վերայ գցեց։ Շալիկի ետեւից եկող մարդիկ օձին տեսնելով սպանեցին։ Տէմնէ ասաց. Այս առակը դրա համար բերեցի, որ գիտենաս թէ այն գործը, որ խելքով եւ խորագիտութեամբ կատարւում է, ոյժով եւ զօրութեամբ չի կատարուիլ։

Քէլիլէ ասաց. Եզը բաւական ոյժ, զօրութիւն, խելք եւ փորձառութիւն ունի։ Այսպիսի անձի դէմ խորամանկութիւն չէ կարելի բանեցնել. քանզի հնար է որ ինչ կողմից որ դու խորագիտութիւն բանեցնես՝ նա նոյն կողմից քեզ որոգայթ գցէ եւ կարելի է որ դեռ դու նրա վերայ ընթրիք չ'արած նա քո վերայ ճաշ անէ։ Միթէ դու այն նապաստակի պատմութիւնը չե՞ս լսել, որ ագուէսը մատնել ուզեց ու ինքը մատնուեց։

Տէմնէ հարցրեց. Ի՞նչպէս է այդ պատմութիւնը։

Քէլիլէ ասաց. Լսել եմ որ, ՄԻ ՍՈՎԱԾ ԳԱՅԼ կերակուրի հոտ առնելու ամէն կողմ ման էր գալիս։ Մէն էլ տեսաւ որ մի նապաստակ փուշերի տակ քնել է, նրա մօտ գալիս՝ նապաստակը սթափուելով ուզեց փախչիլ. բայց գայլը նրա ճանապարհը կտրելով ասաց. Եկո՛ւր, քո փախչելուն չեմ դիմանար։ Նապաստակը նրա սոսկումից տեղն ի տեղ չորցաւ եւ սկսեց երեսը գետին զարնել, աղաչել եւ ասել. Գիտեմ որ գազանաց թագաւորը խիստ քաղցած է եւ ես այս տկար եւ նիհար փոքրիկ մարմնովս մի պատառից աւելի չեմ, ինձանից ի՞նչ կը լինի։ Այս մօտումը մի ագուէս կայ որ գիրութիւնից չէ կարող ժաժ գալ։ Այնպէս կարծում եմ որ նրա միսը առողջութեան կողմանից կենսատու ջրի պէս՝ եւ նրա արիւնը անուշութեան կողմանից մեղրի պէս է։ Եթէ թագաւորը բարեհաճի մի երկու քայլ յառաջ քալել, ես խորամանկութեամբ նրան բռնել կը տամ. եթէ

յաջողուի բարի, ապա թէ ոչ, ես ձեր գերին եւ բանտարկեալն եմ։ Գայլը նրա խօսքերից խափուելով դէպ ի ագուէսի որջը ուղղուեց։ Բայց նա այնպէս մի ագուէս էր, որ խաբէութեան մէջ սատանային դաս էր տալիս։ Նապաստակը նրանից այս միջոցով մի հին վրէժ ուզում էր լուծել. ուստի գայլը որջի դրան առջեւ թողելով՝ ինքը ներս մտաւ ագուէսի մօտ. ըստ կարգին բարեւ տուաւ, նա էլ բարեւը ընդունելով ասաց. Բարի եկար, ուստի՞ ես գալիս. եկ եւ նստի՛ր, քեզ իմ երկու աչքերի մէջտեղ նստելու տեղ կը տամ։ Նապաստակն ասաց. Երկար ժամանակից ի վեր ցանկանում էի ձեր տեսութեանը, սակայն պարագաները եւ ապրուստի հոգսերը ինձ արգելում էին։ Բայց հիմա մի սուրբ անձնաւորութիւն, որ Եգիպտոսում կրօնական պաշտօն վարելով չարերը ուղիղ ճանապարհին առաջնորդել եւ սուրբ տեղերը այցելելով այս կողմերը եկել է, լսելով ձեր առանձնակեցութիւնը ինձ միջնորդ արաւ ձեր տեսութեան։ Եթէ հրաման տաք ձեր տեսութիւնն ու խօսակցութիւնը վայելելու, ներս կը գայ։ Հիմա նրա ժամանակը չի ներեր դրան առջեւ սպասելու. ի՞նչ էք հրամայում։ Ագուէսը նրանց խորամանկութիւնը իմանալով ինքնիրան ասաց. Թող ես նրանց հետ այնպէս վարուիմ, ինչպէս որ նրանք կամեցել են ինձ հետ վարուիլ, իրանց լարած որոգայթին մէջ նրանց գցեմ։ Ագուէսն էլ չողոքորդութիւն անելով պատասխանեց. Ընդունում եմ շատ ուրախութեամբ. քանզի արդէն ես միշտ պատրաստ եմ ամէնայն սիրով հիւր ընդունելու, մանաւանդ այդպիսի մի երեւելի անձ, որի մասին ասում ես թէ կրօնաւոր է եւ սուրբ տեղից է եկել, ես ի՞նչպէս կարող եմ մերժել։ Սակայն խնդրում եմ, որ մի քիչ սպասէ. մինչեւ որ տունը աւլեմ եւ նրան արժանի եղած փռոցը փռեմ։ Նապաստակն ասաց. Նա Աստուծոյ ծառայի պէս խոնարհ եւ աշխարհատեաց մարդ է, նրա համար ոչ մի բան փռել պէտք չէ, բայց եթէ ուզում էք, դուք էք իմանում. փռեցէ՛ք ասելով դուրս ելաւ։ Այս բոլոր խօսակցութիւնը գայլին պատմելով, ագուէսի խաբուելուն աւետիսը տալիս եւ ագուէսի գիրութիւնն ու մսի լաւութիւնը պատմելով գայլի ախորժակը սրում էր։ Նապաստակը այսպիսի մի ծառայութիւն անելով ինքնիրան ազատելու յոյս ունէր։ Բայց ագուէսը հեռատեսութեամբ առաջուց իւր որջի մէջ մի հոր փորել եւ կամաց կամաց նրա հողը դուրս հանելով նրան խիստ խորունկցրել եւ բերանի վերայ խոտ եւ փուշեր դնելով ծածկել էր։ Մի ծածուկ ճանապարհ էլ ունէր, որ պէտք եղած ժամանակ այնտեղից դուրս փախչի։ Երբոր նապաստակը դուրս ելաւ, ինքը հորի ծակին վերայ գալով փուշերն ու խոտերը այնպէս շարեց, որ մի փոքր շարժումով

վար ընկնեն։ Եւ ինքը իւր ծածուկ ճանապարհին վերայ կենալով կանչեց. Ո՛վ յարգելի հիւրեր, խնդրեմ ներս հրամայեցէք։ Արդ նրանք ներս մտնելիս ինքը միւս ծակից դուրս գնաց։ Երբոր Նապաստակը բոլոր ճարպիկութեամբ եւ գայլը ամենայն ագահութեամբ ներս մտան եւ երբ խոտերի եւ փուշերի վերայ ոտք կոխեցին ընկան հորի յատակը։ Գայլը այնպէս կարծեց թէ այս խարդախութիւնը Նապաստակի կողմանից եղաւ, իսկոյն նրան փարատեց կերաւ։ Այս առակը դրա համար բերեցի, որ գիտենաս թէ խելացի մարդկանց դէմ խորամանկութիւն բանեցնել կարելի չէ։ Ո՛վ որ խելացի է եւ փորձառութիւն ու հեռատեսութիւն ունի, նա ոչ ոքի շողոքորթութեան չի խափուիր։

Տէմնէ ասաց. Այնպէս է. սակայն եզը իւր վերայ մեծ գաղափար ունի։ Իմ խորամանկութեան վերայ եւ իրան առելութիւն ունենալուս վերայ անտեղեակ է. Նրան հեշտութեամբ կարելի է վար գցել։ Ի՛նչ նետ որ բարեկամութեան դիմակի տակ նետվում է, աւելի ճիշդ է հասնում նպատակին։ Միթէ դու չե՞ս լսել որ Նապաստակի պատճառ բերելը ի՛նչ ազդեցութիւն արաւ եւ նրա խորագիտութեամբ առիւծը կորսուեցաւ։

Քէլիլէ հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Տէմնէ ասաց. Բերել են թէ. ԲԱԲԻԼՈՆԻ ԿՈՂՄԵՐԸ օդը ընտիր եւ ջուրը մաքուր մի դաշտ կար։ Այս գեղեցիկ դաշտումը գազաններ շատ կային։ Նրանք այդ դաշտի առողջարար օդից, յստակ ջրերից եւ ամեն տեսակ բարիքներից վայելելով ապրում էին։ Այն տեղերին մօտ մի առիւծ բնակւում էր։ Նրա բարկացոտ ու խոժոռ դէմքը եւ կռուասէր բնաւորութիւնը ամեն օր այս գազանաց ուրախութիւնը տխրութեան փոխում՝ եւ նրանց սիրտերը սոսկումով լցնում էր։ Մի օր ամենքը համաձայնելով առիւծի առջեւը եկան եւ խոնարհութիւն մատուցանելով ասացին. Ո՛վ Թագաւոր, մենք ամենքս քո հպատակներն ենք եւ դու շատ նեղութիւն քաշելով օրական մեզանից մեն կամ որսում ես եւ կամ ոչ։ Մենք միշտ քո ահից վրդովման եւ խռովութեան մէջ ենք, դու էլ շարունակ մեզ հալածելու եւ դարան գցելու ետեւից ես ընկել։ Հիմա խորհել ենք որ, առանց ուխտադրուժ դառնալու, օրական ճաշի ժամանակ քեզ մի որս ուղարկենք. որպէս զի թէ՛ քեզ հանգստութիւն լինի եւ թէ՛ մեզ ապահովութիւն։ Առիւծը այս խորհուրդին հաւանեց։ Ուստի նրանք վիճակ գցելով, վիճակը ում անուան որ ելլում էր, նրան առիւծին ճաշիկ էին ուղարկում։ Մի ժամանակից յետոյ վիճակը Նապաստակին ընկաւ։ Նա երբ տեսաւ որ բարեկամները իրան են արել արկածի նպատակ, խնդրեց նրանցից, որ եթէ ինձ ուղարկելում ինձ թոյլտուութիւն տաք, ես ձեզ այդ բռնաւորի ձեռքից

կ՚ազատեմ։ Ասացին. Բարի, ինչպէս որ իմանում ես, այնպէս արա՛։ Նապաստակը մի ժամու չափ սպասեց, ճաշի ժամանակը անցաւ եւ քաղցածութիւնը առիւծին յաղթեց, իւր բաժինը ուշ մնալուն համար սաստիկ բարկութիւնից իւր ատամները իրար զարնում էր։ Նապաստակը կամաց կամաց առիւծին մօտենալով տեսաւ որ նրա քաղցածութեան կրակը բորբոքել եւ նա վերջին աստիճան սրտնեղութեան մէջ է ընկել, քաղցածութեան պատճառաւ բերանը փրփրացել եւ վրէժխնդրութիւնը ուզում է գետնից լուծել եւ ամենայն յօժարութեամբ պատրաստ է ուխտը դրժելու. ուստի յառաջ գալով նրան խոնարհութիւն մատուց։ Առիւծը հարցրեց. Ուստի՞ ես գալիս. գազանների վիճակը ի՞նչպէս է։ Նապաստակը ասաց. Նրանք մի Նապաստակ ինձ յանձնելով ձեզ էին ուղարկել։ Ճանապարհի վերայ մի առիւծ նրան իմ ձեռքից խլեց. որչափ որ խնդրեցի որ դա գազանաց Թագաւորի որսն է, նրա ճաշիկն է, իմ խօսքին ուշադրութիւն չի դարձրեց, ասաց. Այս տեղ իմ որսի դաշտն է, նրա որսը ինձ է հասնում։ Միթէ դու չե՞ս լսել, առիւծ եւ անտառ . . . եւայլն։ Ո՛վ Թագաւոր, նա այնքան մեծ մեծ խօսքերով պարծենցաւ, որ ես ուշաթափ եղայ եւ ապշելով փախայ եկայ ձեզ տեղեկութիւն տալու։ Այս խօսքերից առիւծի եռականութեան յիմարութիւնը արթննալով ասաց. Ես այն եմ որ առիւծներին սովեցնում եմ կռիւ ու պատերազմ անել։ Ո՞վ կարող է յանդգնել իմ որսը յափշտակելու։ Ո՛վ Նապաստակ, դու կարո՞ղ ես ինձ նրա տեղը ցոյց տալ, որ ես նրանից վրէժ լուծեմ եւ քո դատը տեսնեմ։ Նապաստակն ասաց. Ինչո՞ւ չեմ կարող։ Նա ձեր վեհափառութեան դէմ այնպիսի անարգանաց խօսքեր ասաց, որ եթէ իմ ոյժս նրան յաղթէր, ես նրա գանկի ոսկորը ջրի գաւաթ կը շինէի։ Այս ասելով յառաջ գնաց եւ առիւծը նրա խորամանկութիւնից խափուելով նրա ետեւից գնում էր։ Նապաստակը առիւծին մի մեծ ջրհորի մօտ բերեց, որի ջուրը հայելիի պէս ջինջ էր, եւ ասաց. Ո՛վ Թագաւոր, անպիտան թշնամին այս ջրհորումն է եւ ես նրա պատկառանքից վախենում եմ. եթէ ինձ գրկէք ես թշնամին ձեզ ցոյց կը տամ։ Առիւծը նրան իւր գիրկն առնելով ջրհորի մէջ նայեց եւ իրան ու Նապաստակին պատկերը տեսնելով կարծեց, նա այն առիւծն է, որ իւր որսը յափշտակել է. իսկոյն Նապաստակը իւր գրկից վար դնելով յարձակեց ջրհորում իւր տեսած առիւծի վերայ եւ մի քանի շարժումից յետոյ իւր բռնաւոր շունչը դժոխքին յանձնեց։ Նապաստակը վերադառնալով եղելութիւնը գազաններին պատմեց եւ նրանք Աստուծոյն փառք էին տալիս որ իրանց կեանքը ապահովուեցաւ։ Ուստի միշտ կրկնում էին այս երգը. Մի բաժակ պարզ ջուր, այսպիսի չարակամ

թշնամիից յետոյ, խմելը մեզ համար աւելի արժէք ունի՝ քան թէ եօթանասուն տարի կեանք վարելը։ Այս առակից հասկացւում է, որ թշնամին որչափ էլ զօրաւոր լինի դարձեալ նրա անտեղեակ եղած ժամանակ կարելի է նրա վերայ ձեռք գցել։

Բէլիլէ ասաց. Եթէ դու եզը այնպէս կորսցնես որ առիւծին ոչ մի վնաս եւ տխրութիւն չի հասնի, դարձեալ մի բան է. իսկ եթէ ո՛չ, արածդ ոչ ինչ է։ Քանզի ոչ մի խելացի մարդ իւր հանգստութեան համար իրան տէրը չի տխրեցնիր։

Խօսքը այս տեղ վերջացաւ։ Տէմնէ ծառայութիւնից հրաժարելով առանձնացաւ, որ մի լաւ պատեհութիւն գտնելով ինքնիրան առիւծին ներկայացնէ։ Արդ երբոր Տէմնէ տրտում, տխուր, սիրտը կոտրուած եւ գլուխը կախուած եկաւ առիւծին առջեւը կայնեցաւ, առիւծն հարցրեց. Շատ օրեր է որ քեզ չեմ տեսել։ Արդեօք ի՞նչ կայ, բարի՞ է։

Տէմնէ պատասխանեց. Եթէ Աստուած կամենայ վերջը բարի կը լինի։

Առիւծը իւր տեղից վեր կացաւ եւ հարցրեց. Արդեօք մի բա՞ն պատահել է։

Տէմնէ պատասխանեց. Այո՛։

Առիւծն հրամայեց. Ուրեմն պատմի՛ր։

Տէմնէ ասաց. Այդ պատմելու համար առանձին տեղ եւ ժամանակ պէտք է։

Առիւծն ասաց. Հիմա ժամանակն է, պատմի՛ր այս ժամում. որպէս զի ընդհանրական գործերի պատճառաւ այդ բանը չի յետացգուի։ Քանզի եթէ այսօրուան բանը էգուցուան ձգուի հազար դէպքեր յառաջ կը գան։

Տէմնէ ասաց. Ինչ խօսք որ լսողին հաճելի չի թուի, առանց լուրջ կերպով մտածելու, մարդ չի համարձակիր ասել. միայն թէ եթէ լսողի խելքն ու դատողութիւնը առողջ լինի եւ ասողի վերայ վստահութիւն ունենայ։ Լսողը այս էլ նկատելու է թէ, արդեօք խօսողը իբրեւ խրատ բարեկամեցողութիւնից շարժեալ է խօսում՝ թէ ոչ. եւ երբոր իմանայ թէ, ասողը բաց ի իւր պարտականութիւնը կատարելուց, ուրիշ նպատակ չունի, այն ժամանակ պէտք է ընդունիլ. մանաւանդ երբոր խօսողի ասածին օգուտը լսողին վերաբերի։

Առիւծն ասաց. Դու իմանում ես որ ես ձիրքով եւ տաղանդով բոլոր թագաւորներին գերազանցում եմ, եւ իւրաքանչիւր մարդի խօսքերը լսելիս, արքունական քննադատութիւնը մտացս առջեւ ունենալով դատողութիւն եմ անում։ Դու առանց կասկածելու քու ուզածդ ասի՛ր եւ առանց յապաղելու ինչ որ մտքումդ կայ խօսի՛ր։

Տէմնէ ասաց. Թագաւորի խելքին եւ դատողութեան վերայ կատարեալ վստահութիւն ունենալուս համար համարձակեցայ։ Սա էլ պէտք չէ ծածուկ մնայ որ ես խօսքը, զուտ կարեկցութիւնից եմ ասում եւ կասկածելու տեղի չեմ տալիս։ Փառք Աստուծոյ, որ թագաւորին միտքը կեղծը եւ անկեղծը ճանաչելու մասին մի փորձաքար է։

Առիւծն ասաց. Քո հաւատարմութիւնը արդէն յայտնի եւ ապացուցուած է։ Դու ինչ որ ասես, լոկ կարեկցութիւնից շարժեալ, խրատի համար ես ասում. դրա վերայով կասկածիլ կարելի չէ։

Տէմնէ ասաց. Բոլոր կենդանեաց եւ գազանաց ապրելը թագաւորի կեանքից է կախուած. ուստի հպատակներից իւրաքանչիւրը, որ ճշմարտութիւն եւ սրբութիւն սիրող եւ արդարութեան, հարազատութեան ու անկեղծութեան հետեւող է, պէտք է որ ճշմարտութիւնը եւ խրատի վերաբերեալ իրողութիւնը թագաւորից չի թագցնէ։ Ինչպէս որ իմաստուններ ասել են. „Ո՛վ որ ճշմարտութիւնը թագաւորից թագցնէ կամ հիւանդութիւնը բժշկից ծածկէ կամ իւր կարօտութիւնը եւ աղքատութիւնը բարեկամներին յայտնելը արժան չի համարէ, նա իւր անձին դէմ ապերախտութիւն է անում։“

Առիւծն ասաց. Քո անկողմնապահութիւնը եւ անկեղծութիւնը առաջուց ինձ յայտնի է եւ քո հաւատարմութիւնը գիտցած եմ։ Այժմ ասա՛, թէ ի՞նչ դէպք է պատահել. որպէս զի դրա վերայ տեղեկութիւն առանանք եւ նրա ճարը մտածենք։

Տէմնէ չողոքորդութիւնով եւ վարպետութիւնով առիւծը խաբելով բերանը բացաւ եւ ասաց. Ո՛վ արքայ, խելքը քո առաջնորդը լինի, յաղթութիւնը քո օգնականը եւ թշնամին քո ոտաց պատուանդանը։ Շինզիւպէ զօրապետների եւ կառավարիչների հետ առանձին ժողովք է արել, եւ խօսքեր մէջտեղ բերելով, ասել է. «Առիւծը փորձեցի, նրա ոյժի չափը եւ զօրութիւնը, կամքն ու հասկացողութիւնը իմացայ եւ իւրաքանչիւրի մէջ մեծ թերութիւն եւ շատ տկարութիւն տեսայ։» Ո՛հ, նա այն չէ եղել, ինչ որ մենք կարծել էինք։ Ես զարմանում եմ, որ թագաւորը այն երախտամոռաց անիրաւին կառավարչութեան եւ իշխողութեան մէջ այնքան պատիւ տալով իրան երկրորդն արաւ, այդ բարեաց փոխարէն նա այս կերպ ընթացք բռնեց եւ ձեր երախտիքի տեղ այս տեսակ թշնամութիւն հատոյց։ Ո՛վ որ հրամայելու մէջ ինքնիրան ազատ տեսնէ եւ ընդհանուրի գործերը կապելն ու լուծելը իւր ձեռքում գտնէ, բանսարկու դեւը նրա ներսումը ձու է ածում եւ ապստամբութեան գաղափարները նրա սրտի կեդրոնից յառաջ են գալիս։ Եթէ

բախտը մէկին անարգանքի հորից դուրս հանելով ամենին յարգելի անէ, զարմանք չէ որ թագաւորութիւն անելու մտադիր լինի։

Առիւծն ասաց․ Ո՛վ Տէմնէ, ասածիդ վերայ լաւ մտածի՛ր։ Այս ի՞նչ խօսք է որ ասում ես․ այս բանի ճշդութիւնը ո՞ր տեղից ես ստուգել․ և եթէ այնպէս լինի, ինչպէս որ քո պատմածից հասկացվում է, սրա ճարը ի՞նչ է։

Տէմնէ ասաց․ Նրա աստիճանի բարձրութիւնը և մեծ պատիւ ունենալը թագաւորին յայտնի է։ Երբոր թագաւորը ծառաներից մէկին պատուի և մեծութեան ու հարստութեան մէջ իրան հաւասար անէ, պէտք է շուտով նրան մէջտեղից վերցնէ․ եթէ ոչ գործը ձեռքից կը գնայ և թագաւորը ոտքի տակ կ'ընկնի։ Սակայն այս գործին ճարը, ինչպէս որ թագաւորի լուսաւոր միտքը կարող է իմանալ, իմ կարճ տեսութիւնը և տկար խելքը ո՞ր տեղից կարող են հանել այդ բանին։ Ես այնչափ գիտեմ որ եզին խնդրի մասին փութալ պէտք է։ Եթէ յետաձգուի գործը այնպէս վախճան կ'ունենայ, որ էլ կարելի չի լինիր դրա առաջն առնել։ Քո հակառակորդը մի մրջիւն էր, հիմա օձ դառաւ և եթէ գործը էլ աւելի յետաձգուի, այն ժամանակ օձը վիշապ կը դառնայ։ Նաև ասել են թէ․ Մարդիկ երկու դասակարգի են․ մէկը զգաստ իսկ միւսը տկար։ Տկարն այն է որ արկածը և փորձանքը պատահելիս թշուառ է լինում, շուարում և ճարահատեալ մնում է յուսահատ։ Զգաստը նա է որ հեռատեսութիւն ունենալով միշտ գործի վախճանին վերայ է մտածում։ Զգաստներն էլ երկու տեսակ են։ Մին այն է, որ վտանգը պատահելուց առաջ նրա ինչպէս պատահիլը նախատեսում է, և իմանում է այն բանը, որ ուրիշները պատահելուց յետոյ կ'իմանան․ ուստի գործի սկզբումը նրա հետևանքները խելքի աչքով նկատելով դրան առաջն առնելու պատրաստվում է։ Այսպիսի անձը դեռ վտանգի մէջ չ'ընկած՝ ինքնիրան ապահովութեան եզերքն է հասցնում։ Սրան զգաստագոյն են ասում։ Իսկ միւսը այն է, որ վտանգը հանդիպելիս իւր տեղում հաստատ է մնում և իւր սրտում երկիւղի և շփոթութեան տեղի չէ տալիս։ Ճշմարիտ է որ այսպիսի անձը անճար չի մնար։ Սրան էլ զգաստ են ասում։ Արդ այս երեք տեսակ անձանց մէկը խելացի է, մէկը կէս խելացի և միւսը տգէտ է։ Սրանք նման են այն երեք ձկներին, որ միասին մի լճակում ապրում էին։

Առիւծը հարցրեց․ Ի՞նչպէս է այդ պատմութիւնը։

Տէմնէ ասաց․ Բերել են թէ․ Ճանապարհներից հեռու, ճանապարհորդների աչքերից ծածկուած, ջուրը միամիտների հաւատքին պէս մաքուր և տեսքը կենդանի ջուր որոնողներին

բաւականութիւն տուող մի լճակ կար, որ երկու կողմից հաղորդակցութիւն ունէր մի առուակի հետ։ Սրանում ԵՐԵՔ ԱՐՔԱՅԱՇԱՐԺ ՁԿՆԵՐ բնակութիւն էին հաստատել։ Համաստեղութեան ձուկն նրանց վերայ նախանձելուց Աստեղատան խոյին պէս արեգական տապից խորովվում էր։ Նրանցից մին զգաստագոյն էր, միւսը զգաստ և մէկն էլ տգէտ։ Գարնանային այն օրերում, երբոր բնութիւնը դաշտերը զարդարել էր, ծաղիկները մարգագետինների վերայ բաց ի չահասպրամներից երկնից վերայ փայլող աստղերի պէս էին երևում, առաւօտեան զեփիւռը գետնի վերայ գոյնզգոյն փռոցները փռելու էր ծառայում, արարչագործութեան պարտիզպանը անթիւ և անհամար տեսակ տեսակ վարդերով երկիրն էր զարդարել և մարգագետինը առաւօտեան զեփիւռի փչելով մուշկ էր բուրում, յասմիկը իւր վայելչութեամբ սիրեցեալի դէմքն էր ներկայացնում և վարդը զեփիւռի միջոցով բերան բացած հրապուրիչ ժպիտներով իւր սիրահարին նազանք էր անում, յանկարծ երկու երեք ձկնորսներ այդ լճի մօտ եկան և այս երեք ձկները տեսան։ Գնացին ուռկան բերելու որ սրանց որսան։ Ձկները այս բանը իմանալով ջրի մէջ սկսեցին երկիւղի կրակով այրուիլ։ Երբոր գիշեր եղաւ այն ձուկը, որ կատարեալ խելք և փորձառութիւն ունէր և շատ անգամ այս ապերախտ ժամանակաշրջանի փոփոխութիւնը տեսել և ստէպ այս խաբեբայ աշխարհի անհաւատարմութիւնը հասկացել էր, մտածեց թէ, ի՞նչ կերպով կարող է այս որսորդների թակարդից ազատուիլ։ „Խելացի և գիտուն համարվում է այն անձը՝ որ իւր գործին վերայով լուրջ կերպով է մտածում։ Իսկ ո՛վ որ փորձառութիւն չ'ունի, նրա գործի սկզբունքը անկատար և հիմը անհաստատ է։“ Ուստի սա շտապեց իւր անձը վտանգից ազատել առանց իւր ընկերների հետ խորհուրդ անելու։ Գնաց այն առուակի բերանը, որից ջուր էր գալիս, և դրա միջով լճից դուրս ելաւ։ Առաւօտեան, երբոր որսորդները պատրաստուեցին և լճի երկու կողմից առուակի բերանները գոցեցին որ ո՛չ մի ձուկն չի կարենայ այն տեղերից փախչիլ, այն կէս խելացի ձուկը, որ թէպէտև խելք ունէր՝ բայց փորձառութիւն չ'ունէր, այս բանը տեսնելով շատ զղջաց և ասում էր․ Անզգուշութիւն արի․ անզգուշների գործին վերջը այսպէս է լինում։ Ինձ պէտք էր միւս ձկան պէս վտանգը գալուց առաջ իմ անձը ազատելու վերայ մտածել, փորձանքը պատահելուց առաջ մի ճար որոնել, գործը ձեռքից ելլելուց յետոյ իմ զղջալը ի՞նչ օգուտ կը բերէ․ արդ հիմա որ փախչելու պատեհութիւնը կորցրել եմ, պէտք է խորագիտութիւն և խորամանկութիւն բանեցնեմ։ Թէպէտ ասել են թէ․ Վտանգը հասած ժամանակ

խորագիտութիւնը այնքան օգուտ չի բերեր, եւ արկածը պատահելիս խելացութիւնից այնքան շահ չի լիներ, սակայն պէտք է որ խելացին ոչ մի կերպով գիտութեան օգուտներից չի յուսահատի եւ թշնամւոյ թակարդից ինքնիրան ազատելու մէջ չի յապաղի․ ուստի սա իրան մեռած ձեւացնելով ջրի երեսի վերայ լողալ սկսեց։ Ձկնորսներից մէն սրան մեռած կարծելով բռնեց դէն գցեց ցամաքի վերայ եւ նա այնտեղից մի կերպով իւր անձը առուակի մէջ հասցնելով կեանքը ազատուեցաւ։ „Մեռի՛ր ո՛վ մարդ, թէ ուզում ես ազատուիլ, առանց մեռնիլ կարող չես կենաց հասնիլ։“ Միւս ձուկը, որ անհոգութեամբ պաշարուել եւ տկարութիւնը իրան ընաւորութիւն արել էր, ապշած ու շուարած թեւ զարնելով աջ ու ձախ փախչում եւ վեր ու վար խոյս էր տալիս․ բայց վերջապէս բռնուեցաւ։ Այս առակից թագաւորին յայտնի եղաւ որ, Շինգիլպէի խնդիրին մասին պէտք է շտապել պատեհութիւնը չի կորսնցրած ջրալից սուրով այդ խստապարանոցին հոգւոյն մէջ կրակ գցել, եւ նրա կենաց կալը մահկանացութեան քամիին տալով նրա գոյութեան ծուխը երկնքի կամարը հասցնել։

Առիւծն ասաց․ Քո ասածը հասկացուեցաւ։ Սակայն ես չեմ կարծում որ Շինգիլպէ ապերախտութիւն մտածած լինի եւ իւր վայելած բարիքները ուրացողութեամբ վարձատրէ․ քանզի ես նրան բաց ի լաւութիւնից եւ բարերարութիւնից ուրիշ բան չեմ ցոյց տուել։

Տէմնէ ասաց․ Այնպէս է, սակայն թագաւորի լաւութիւնները նրան այս աստիճանի հասցրին։ Ո՛ր տեղ որ տաղ զարնել պէտք է եթէ դեղ դնես օգուտ չ՚անէր։ Ամբարիշտ եւ ի բնէ չարը հլու եւ հնազանդ կը լինի, քանի որ իւր յուսացած աստիճանին չէ հասել․ բայց երբոր իւր ցանկացածը ձեռք բերէ, այն ժամանակ այնպիսի աստիճանի հասնել է խորհում, որ ինքը երբեք նրան արժանաւորութիւն չ՚ունի։ Ինչպէս որ մեծերը ասել են․ Ցածազգիների եւ ապիրատների ծառայութիւնը երկիւղի եւ յուսոյ մէջտեղ հաստատուած է։ Երբ նրանք վախից ապահովւում են, իսկոյն տիրասիրութիւնը զրժում են, եւ երբոր իրանց ակնկալած բաները առատապէս ստանում են, սկսում է իրանց մէջ երախտամոռացութեան հուրը բորբոքիլ եւ հետեւապէս բանսարկութեան ծուխը վեր է բարձրանում։

Առիւծն ասաց․ Ուրիմն ցածազգի եւ ստոր ընաւորութեան տէր եղող ծառաների հետ ի՞նչպէս պէտք է վարուիլ որ նրանց վերայ ապերախտութեան նշաններ չ՚երեւան։

Տէմնէ ասաց․ Նրանց շնորհքից այնպէս զրկել պէտք չէ, որ նրանք միանգամայն յուսահատուին եւ ծառայութիւնը թողնելով թշնամւոյն յարին․ եւ ո՛չ էլ պէտք է այնքան բարիք եւ

հարստութիւն պարգեւել, որ փառաց կատարին հասնելով սկսին ամբարտաւան բաներ երեւակայել․ այլ պէտք է որ նրանք յուսոյ եւ վախի մէջտեղ ապրին եւ իրանց ստիպողական պէտքերը խոստմունքի եւ սպառնալիքի միջով ձեռք բերեն․ որովհետեւ հարստութիւնն ու ապահովութիւնը նրանց գրգռում է եւ պատճառ են լինում յանդգնութեան եւ ապստամբութեան, իսկ յուսահատութիւնն ու չքաւորութիւնն էլ ծառաներին սրտոտ են անում եւ դա էլ թագաւորներին յարգանքը կոտրվելու առիթ է տալիս։

Առիւծն ասաց․ Ո՛վ Տէմնէ, ես այնպէս եմ խորհում, որ Շինգիլպէի մտքի հայելին այս կեղծաւորութեան ժանգից մաքուր է, եւ նրա սրտի տախտակի վերայ այս տեսակ գաղափարներ գրուած չեն։ Ես միշտ իմ շնորհքը նրան ցոյց տուել, եւ շարունակ իմ բարիքները նրա հանդէպ ապրելուն միջոց արել եմ։ Քանի որ նա միշտ ինձանից օգուտ եւ բարիք է վայելել, ի՞նչպէս նրանց փոխարէն նա ինձ չարիք եւ վնաս հասցնել պիտի մտածէ։ Երբ իմ սիրտը նրա համար բարեկամութեան դրօշակ է բարձրացնում, նա ինչո՞ւ համար ինձ դէմ թշնամութեան դրօշ բարձրացնէ։

Տէմնէ ասաց․ Թագաւորը պէտք է իմանայ որ յամառ ընաւորութիւնից երբեք ուղղութիւն յառաջ չի գար։ Նա որ չարարմատ եւ տգիտաբարոյ է, պատուելով եւ մեծարելով խոհեմ եւ ազնուաբարոյ չի դառնար․ Միթէ կարիճի եւ կրիայի պատմութիւնը թագաւորի ականջին չէ՞ հասել։

Առիւծն ասաց․ Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Տէմնէ ասաց․ ՄԻ ԿՐԻԱՅ ՄԻ ԿԱՐԻՃԻ հետ բարեկամութիւն ունէր։ Նրանք միշտ իրարու հետ մտերմութեան փողն էին հնչեցնում եւ ամեն ժամանակ միաբանութեան հիմն էին դնում։ Մի օր, այնպէս պատահեց որ ստիպուեցան իրանց հայրենիքը ձգել։ Երկուսը ընկերութեամբ դէպ ի մի ուրիշ երկիր ուղղուեցան։ Երբ սրանք գնում էին իրանց առջեւ մի մեծ գետ ելաւ։ Կարիճը որ ջրից անցնել չէր կարողանում, ապշած մնաց։ Կրիան ասաց․ Ո՛վ թանկագին ընկեր, քեզ ի՞նչ եղաւ որ հոգւոյդ պատմուճանին օձիքը տրտմութեան ձեռքին յանձնել եւ քո սիրտը ուրախութիւնից յետ ես քաշել։ Կարիճն ասաց․ Այս ջրից անցնելու մտածմունքը ինձ ապշանքի մէջ գցեց։ Ո՛չ ջրից անցնիլ կը յաջողուի, ո՞չ էլ սիրելիից բաժանուիլ կարելի է։ Կրիան ասաց․ Հոգ մի՛ անիր, ես քեզ առանց նեղութեան ջրից անցկացնելով միւս եզերքը կը հասցնեմ։ Կռնակս նաւ կը լինեմ եւ կուրծքս վահան քո վերայ եկող հոսանքների դէմ։ Ափսո՞ս չէ, դժուարութեամբ մի բարեկամ ձեռք բերել եւ հեշտութեամբ կորսնցնել։

Արդ կրիան կարիճը իւր կռնակին վերայ առած եւ իւր կուրծքը ջրի վերայ դրած լողում եւ գնում էր: Յանկարծ մի ձայն լսեց եւ կարիճի շարժումից այնպէս զգաց որ մի հետազօտութիւն է կատարւում: Հարցրեց. Այդ ի՞նչ ձայն է որ լսում եմ, ի՞նչ գործով ես զբաղել: Կարիճը պատասխանեց. Խայթոցիս գեղարդը քո գոյութեան զրահին վերայ փորձում եմ: Կրիան զարմացաւ ասաց. Ո՛վ անխիղճ, ես իմ անձը քեզ համար վտանգի խորխորատում ձգել եմ, եւ դու իմ կռնակի նաւակին վերայ այս ջրից ես անցնում, եթէ շնորհակալ չես լինում եւ մեր վաղեմի արընչութիւնն էլ չես գնահատում, ուրեմն խայթոց զարնելուդ պատճառը ի՞նչ է. մինչդեռ ստոյգ է որ այս շարժումից ինձ մի վնաս պիտի չի հասնի եւ քո անարգ խայթոցը իմ քարանման կռնակին պիտի չի ներգործէ: Կարիճն ասաց. Քա՛ւ լիցի, որ այս տեսակ խորհուրդներ իմ բոլոր կենաց օրերում իմ մտքից անցնեին կամ անցած լինեին: Այս ուրիշ բան չէ, այլ միայն իմ բնութեան պահանջն է խայթել. թէ վէրքը բարեկամին կռնակին պատահի, թէ թշնամիին կուրծքին: Կրիան միտք բերեց որ իմաստունները ուղիղ են ասել թէ. „Ոչտերը սնուցանելը իւր պատիւը կորցնել եւ իւր գործը անյաջողութեան ենթարկել է: Ոսկին եւ զարդը հողի վերայ թափել այնքան ափսոս չէ, ինչքան կարկամներին շնորհք եւ մարդկութիւն ցոյց տալը:“ Մեծերը ասել են. Ո՛վ որ ի բնէ անյոյս է, նա ոչ մի բանի չի հասնիր. եւ անարգին համար անարգանք է, որ իրան բարիք անողներին առանց չարիք հասցնելու աշխարհից մեկնի: Ի բնէ չարը ի՞նչպէս կարելի է կրթել: Ո՞վ կրնայ իւր ծոցում օձին սնուցանել: Մանանեխը ինչքան էլ մշակուի շաքարեղեգի համը չի տար: Փուշ մշակողը վարդ չի քաղեր: Այս խօսքերը յառաջ բերելով թագաւորի լուսաւոր մտքից անցած կը լինի, որ Շիւնզիւպէի անձի անհարազատութեան եւ կարկամութեան վերայ խորհիլ եւ այս գթացող նուաստ հպատակի խրատը մտաւորութեամբ լսել պէտք է: Քանզի ո՛վ որ խրատատուների խօսքին, թէեւ դառն էլ լինի, ուշադրութիւն չի դարձնէ նրա գործերուն վախճանը առանց զղջման չի լիներ: Երբ հիւանդը բժշկի հրամայածին կարեւորութիւն չի տալով իւր ուզածը ուտէ, անտարակոյս ամեն բոպէ տկարութիւն եւ անկարողութիւն նրան աւելի պիտի ճնշեն: Խրատատուն եթէ խօսքը խստութեամբ էլ ասէ, հոգ չէ. քանզի համբերութիւնն էլ թէպէտեւ դառն է, սակայն քաղցր պտուղ է տալիս: Պէտք է գիտենալ որ թագաւորների տկարագոյնը նա է, որ գործի հետեւանքներից անտեղեակ լինի, թագաւորութեան անհրաժեշտ խնդիրները թեթեւ նկատէ, մի մեծ դէպք պատահելիս զգուշութիւնը մէկդի թողէ եւ պատեհութիւնը ձեռքից փախցնելուց յետոյ, երբ թշնամին

տիրէ՝ այն ժամանակ իւր մտաւորներին կշտամբէ եւ յանցանքը նրանց իւրաքանչիւրին վերայ դնէ: Սրա համար իմաստունները ասել են. Քո գործի վերաբերեալ խորհուրդը, որ պէտք է դու անես, ինչո՞ւ համար ուրիշներին ձգես. եւ երբոր դու այս տեսակ մի սխալ գործած լինիս, ուրիշներին վերայ ինչո՞ւ համար դնես:

Առիւծն ասաց. Լաւ խօսքը տեղի խօսեցիր, համեստութեան սահմանից դուրս ելար: Խրատատուի խօսքը խստութեամբ չ'ազդեր: Գիտցուք թէ, Շիւնզիւպէ թշնամի է, նրա ձեռքից ի՞նչ կը գայ: Իրողութեան նայելով նա իմ կերակուրս է. քանզի նրա շարժման նիւթը բոյսերից է գոյացել, իսկ իմ զօրութեան հիւթը մսից է յառաջ եկել, եւ բուսեղէնները միշտ անասականին ենթակայ են: Ես նրանից չեմ սպասեր որ ինձ դէմ դնելը նրա մտքից անցած կամ ինձ հետ մարտնչելու գաղափարը նրա սրտում տեղ բռնած լինի: Նա ի՞նչպէս կը համարձակի իմ առջեւ հակառակութեան խօսք բանալ: Միթէ կարելի՞ է, որ մժղուկը ահաւոր փղի հետ զօտեմարտ լինի: Եթէ Շիւնզիւպէ իմ թագաւորութեան արեգակին դէմ, որ խնամողական շնորհաց հորիզոնից ծագել է, լուսնի նման հակառակութիւն անէ, ինքը կը նուաղի եւ կը պակասի: Եւ եթէ իմ թագաւորական լուսնաձեւ հովանոցին դէմ, որ երկնքի վրանի ներկայացուցիչն է, արեգակի պէս սուր քաշէ, դարձեալ ինքը մարը կը մտնէ եւ կ'անհետանայ: Ես եմ այն որսը ազատ անողը, ես նորէն նրա պարանոցին պարան կը գցեմ:

Տէմնէ ասաց. Թագաւորը պէտք չէ խաբուի ասելով. Նա իմ կերակուրս է, կամ թէ ես նրան կարող եմ յաղթել: Քանզի թէեւ նա անձամբ չէ կարող հակառակիլ, բայց իւր ընկերների օգնականութեամբ կարող է իւր գործը յառաջ տանիլ, եւ կամ խորամանկութեամբ եւ խարդախութեամբ քեզ վնասել: Վախենում եմ թէ, քանի որ նա գազանները թագաւորին դէմ դրդել է, նրանք անոր հետ միանան: Մի անձ ինչքան ալ ուժեղ եւ կարող լինի, դարձեալ կարող չէ բազմութեան դէմ դնել: Երբ մժղուկները շատանան ահեղ եւ զօրեղ փիղը կը զարնեն: Եւ երբ մրջիւնները միանան ահազին առիւծը իւր մորթէն դուրս կը հանեն:

Առիւծն ասաց. Քո խօսքերը իմ սրտին ներգործեցին եւ քու խրատների անկեղծութիւնը իմացայ, բայց խնդիրը այս է որ նա իմ ոտքն ընկնելով շնորհք խնդրել է, եւ ես էլ նրան վեր վերցնելով բարձրացրել եմ եւ ժողովքներում ու նիստերում նրան գովել եւ նրա խելքի, օրինապահութեան, անկեղծութեան եւ հաւատարմութեան վերայ ամեն տեղ լաւ խօսել եմ. եւ եթէ հիմա ընդհակառակը խօսիմ, այն ժամանակ խօսքս անհաստատ, անձս թեթեւ եւ կամքս տկար կը սեպուի, այլեւս իմ խօսքերը

սրտերում տեղ չեն բռներ եւ ուխտերս մտքերում անարժէք կը լինին ։ Ո՛ր մէկ անձը որ մարդ ինքը բարձրացնէ չի կարող նրան ոտքի տակ գցել ։

Տէմինէ ասաց. Ճշմարիտ խորհուրդը եւ ուղիղ կարգադրութիւնը այն է, որ երբ մի բարեկամից թշնամութեան նշան եւ մի ծառայողից դաւողութեան նշոյլ յայտնուի, անմիջապէս պէտք է նրանից յարաբերութիւնը կտրել ։ Քանզի ատամը, որ մարդուն վաղեմի խօսակիցն է եւ տեսակ տեսակ օգուտներ է տալիս, երբոր ցաւի, բաց ի հանելուց ուրիշ կերպով նրա տուած նեղութիւնից չի կարելի ազատուել ։ Կերակուրը, որ կենաց նպաստագոյն պիտոյքն է, երբ ստամոքսի մէջ աւրուի, առանց նրան հեռացնելու հանգստութիւն ձեռք չի գար ։ Այն անձը որ քո սիրտը չ՛ուրախացներ, եթէ իսկապէս քո հոգւոյդ նման էլ լինի նրանից հեռացի՛ր ։

Տէմինէի նենգութիւնը առիւծին ազդեց եւ ասաց. Ես Շիւնզիւպէի խօսակցութիւնից ձանձրացայ. այլեւս նրա ինձ հետ տեսութիւն անելը անկարելի է ։ Սրանից լաւը չի կայ, որ նրա մօտ մէկը ուղարկեմ եւ նա խնդիրը նրան պարզէ եւ իրան հրաման տամ, ուր որ ուզում է թող գնայ ։

Տէմինէ վախեցաւ որ, եթէ այս խօսքը Շիւնզիւպէին հասնի եւ նա իւր անձը առիւծի առջեւ արդարացնէ, այն ժամանակ իւր խարդախութիւնը պիտի յայտնուի ։ Ուստի ասաց. Ո՛վ թագաւոր, այդպէս անելը խելացութիւն չէ, քանի որ խօսքը դեռ ըսուած չէ, խորհելու միջոց կայ. բայց ասելուց յետոյ փոխելը դժուար կը լինի ։ Չ՛ասած խօսքը կարելի է ասել. բայց ասած խօսքը կարելի չէ թագցնել ։ Ո՛չ բերանից ելած խօսքը յետ առնուում, ո՛չ էլ աղեղից նետուած նետը յետ է ստացվում ։ Ասած է թէ. „Ինչ որ լեզուից ելաւ վնաս բերեց ։“ Եւ մի մեծ անձ ասել է. Լեզուն սրտի թարգմանիչն է, սիրտը մարմնոյ նահանգին կուսակալը եւ խօսքը անձի գանձին գոհարները արտայայտողը ։ Երբ խօսքը բերանի տուփին մէջ լինի, տուփը լռութեան բեւեռներով գամուած եւ ատացման կաղամարին վերայ ծանրաբարոյութեան կնիքը դրուած, այն ժամանակ կեանքի մարգագետնումը բոլոր ռահանները խաղաղութեամբ կ՛աճեն, եւ կենաց ծառը միշտ ապահովութեան եւ անդորրութեան պտուղներ կը տայ ։ Բայց երբոր ճարտարախօսութեան կոկոնը ծիծաղի եւ պերճախօսութեան սոխակը երգէ, չի կարելի վստահիլ թէ, խօսքի վարդանոցի բուրմունքը սրտի զուարթութիւն եւ ճաշակի հաճոյք կը պատճառէ, թէ հարբուխի հիւթերը արտադրելու եւ գլխի ցաւ յառաջ բերելու պատճառ կը դառնայ ։ Քանզի կապուած լեզուներ կան, որ մի սրտադրաւ նշանով շատ կնճռոտ խնդիրները լուծել եւ մէկ ակնար-

կութեամբ չարախօսների ամբաստանութիւնները նրանց վզին դրել եւ ծանր կապանքներով կապել են ։ Եթէ խօսքին խելքի աչքով նայիս՝ նա մի դրամագլուխ է, որ թէ վնաս է անում թէ շահ ։ Ո՛վ կարող է չ՛ասուած խօսքի նշանը ցոյց տալ. թէ նա սրտնեղութիւն է տուել կամ ուրախութիւն է բաշխել ։ Բայց շատ անգամ մի չնչին խօսք բերնից ելլելիս ասողին կործանում է ։ Ո՛վ թագաւոր, եթէ այս խօսքը Շիւնզիւպէին հասնի, եւ նա իւր կացութիւնը իմանայ, կարելի է որ, «Իմ գաղտնիքս յայտնուել է,» ասելով, անմիջապէս հակառակութեան եւ պատերազմի սկսի կամ աղմուկ յարուցանէ ։ Ուշիմները յայտնի մեղքը գաղտնի պատժելը արժան չեն սեպել, եւ գաղտնի յանցանքը յայտնապէս պատժելը յարմար չեն դատել ։ Ուրեմն քանի որ նրա ծածուկ մեղքերը շատ են. պէտք է գաղտնի պատժելու կարգադրութիւն լինի ։

Առիւծն ասաց. Լոկ կարծիքով մտերիմները վռնտել եւ հեռացնելը եւ առանց յայտնի ապացոյցի նրանց իրաւունքը ոտնակոխ անելու ջանալը, իւր ձեռքով կացին իւր ոտքին զարնել եւ մարդասիրութեան ու օրինապահութեան ուղիից շեղուել կը լինի ։ Օրէնքը եւ խելքը հաւանութիւն չեն տար որ մի թագաւոր առանց հաստատ ապացոյց ունենալու վճիռ տայ ։ Որովհետեւ նրա վճիռը անդառնալի է. թէ՛ կեանք տանէ թէ՛ կեանք տայ ։

Տէմինէ ասաց. Վճռատուների համար իրանց հասկացողութիւնից աւելի լաւ ապացոյց չի կարող լինել ։ Երբոր այս անիրաւ խարդախը ձեր վեհափառութեան առջեւ ներկայանայ, պէտք է նրան լաւ ուշադրութիւն դարձնել, անշուշտ անհաւատարմութեան կեղտոտութիւնը նրա տգեղ դէմքի՝ եւ չարամտութիւնը նրա անվայելուչ կերպարանքի վերայ պիտի յայտնուին, եւ նրա ներսի ապականութեան նշանը այս է, որ գունաթափ եւ այլայլուած յառաջ կը գայ եւ ձախ ու աջ, առաջ եւ յետ կը նայէ. իբր թէ կռիւը պատրաստուել եւ պատերազմը սկսելու վերայ է ։

Առիւծն ասաց. Լաւ ես ասում ։ Եթէ այս նշաններից մին երեւնայ, անմիջապէս տարակուսանքի մշուշը ճշմարտութեան ճանապարհից մէկդի եղած եւ կասկածանքը ստուգութեան առջեւ փարատուած կը լինի ։

Տէմինէ հասկցաւ որ իւր բանսարկութիւնը նրանում ատելութեան կրակը բռնկցրել է ։ Կամեցաւ եզը տեսնել, որպէս զի նրա մէջն էլ չարութեան հուրը բորբոքել տայ ։ „Երկու հոգիի մէջտեղ եղած կռիւը կրակի է նմանում. իսկ նրա վերայ փայտեր դիզողը չարակամ քսուն է ։“ Տէմինէ մտածեց որ, առիւծի արտօնութեամբ ու խորհրդով Շիւնզիւպէի հետ տեսութիւն անէ. որպէս զի նրան կասկածելու տեղի չի տայ ։ Ուստի ասաց. Ո՛վ

թագաւոր, եթէ ձեր վեհափառութեան կողմանից հրաման ելլէ, ես կը գնամ Շիւնզիւպէն կը տեսնեմ եւ նրա ներքին գաղտնիքներից եւ սրտի խորհուրդներից մի բան հասկնալով ձեր ներկայութեանը կը հասցնեմ ։

Առիւծը հրաման տուաւ ։ Տէմնէ իբր աղէտի հանդիպած եւ հոգսի մէջ ընկղմած հասաւ Շիւնզիւպէի մօտ բարեւ տուաւ ։ Շիւնզիւպէ էլ նրան պատուելով ողջունը հարցրեց եւ ասաց ․ Ո՛վ Տէմնէ, ի՞նչպէս ես ․ ի՞նչու մեզ մոռացար ։ Շատ օրեր է որ քո դէմքի լուսովը բարեկամաց աչքերը չես լուսաւորում եւ նրանց տնակը քո խօսակցութեան եւ քաղցրութեան վարդերով չես զարդարում ։ Տարիներ են անցնում, մի վայրկեան չես յիշում այն բարեկամը, որ առանց քեզ յիշելու ոչ մի վայրկեան չ՚անցկացնում ։

Տէմնէ ասաց ․ Թէեւ մարմնով ձեր չնորհալի տեսութիւնից զրկուել եմ, բայց սրտով եւ հոգւով չարունակ ձեր սիրտ զուարթացնող դէմքի երեւակայութեան հետ խօսակցութիւն ունեցել եւ միշտ բարեկամեցողութեան ու հաւատարմութեան սերմը սրտի ագարակումը ցանել եմ ։ Սրտի միջով հոգւոյն կողմը պատուհաններ եմ շինել եւ քեզնից թագուն քո հետ սիրոյ առընչութիւններ եմ ունեցել ։ Ըստ իմ պարտականութեան առանձնութեան անկիւնում աղօթքով եւ օրհնութիւնով, որոնք ձեր երջանկութեան համար են, զբաղեալ էի եւ պիտի զբաղիմ ։

Եզն ասաց ․ Առանձնանալուդ պատճառը ի՞նչ է ։

Տէմնէ ասաց ․ Երբ մէկը իւր անձին տէրը չի լինի, այլ ուրիշի հրամանին տակ գտնուի, չի կարողանայ առանց երկիւղի եւ ահի մի վայրկեան անցկացնել, միշտ հոգւով եւ մարմնով խռովի եւ դողայ, եւ առանց վախի եւ սարսափի մի խօսք ասել չի կարողանայ, հապա առանձնութեան անկիւնը չ՚ընտրէ, ի՞նչ անէ ։ Ինչպէս որ ասել են ․ „Ելի՛ր, այս չար ժամանակի տղմուկներից փախի՛ր, ուր որ կարող ես փախչել ․ եթէ չի կարողանաս փախչել, առանձնութեան անկիւնը քաշուի՛ր ։“

Եզն ասաց ․ Ո՛վ Տէմնէ, սրանից աւելի պարզ խօսի՛ր եւ այս խնդիրը բացատրի՛ր ․ որպէս զի քո խրատը աւելի ընդհանրական եւ քո խօսքերին օգուտը աւելի կատարեալ լինին ։

Տէմնէ ասաց ․ Այս աշխարհքում կարելի չէ որ վեց բանը առանց վեց բանի լինի ։ Ա․ Հարստութիւնը առանց ինքնահաւանութեան, Բ․ Զուարճութիւնը առանց թշուառութեան, Գ․ Կանանց հետ առընչութիւնը առանց փորձութեան, Դ․ Կծծից ակնկալութիւն ունենալը առանց անարգութեան, Ե․ Չարերի հետ ընկերակցութիւնը առանց զղջման, Զ․ Թագաւորին ծառայելը առանց աղէտի ։ Աշխարհքը ոչ ոքին մի բաժակ չի մատուցանել,

որ նրան զինով եւ յանդուգն չ՚անէ եւ հպարտութեան ու գոռոզութեան ծովից ապստամբութիւն եւ ամբարտաւանութիւն դուրս չի հանէ, ոչ մէկը չի կայ որ ցանկութեան անձնատուր լինի եւ կորստեան չ՚ենթարկուի, չի կայ մէկը որ կանանց հետ առընչութիւն անէ եւ փորձանքներից ու նենգութիւններից զերծ մնայ, չի կայ մէկը որ կծծի եւ չար մարդկանցից ակնկալութիւն ունենայ եւ ինքը անարգ ու անպատիւ չի լինի, չի կայ մէկը որ չարերի ու նենգաւորների հետ ընկերակցութիւն անէ եւ վերջը չի զղջայ, նաեւ չկայ մէկը որ թագաւորաց խօսակցութիւնը ընտրէ եւ առանց իւր կեանքին մի վնաս լինելու ապահով այնտեղից դուրս գայ ։ Թագաւորի խօսակցութիւնը անյատակ ծովի է նմանում եւ այսպիսի երկիւղալի վտանգաւոր ծովին աւելի մօտեցողը աւելի փորձանքի է հանդիպում ։ Սրա վերայով ասել են ․ Թէեւ ծովումը օգուտներ շատ են, բայց ապահովութիւնը եզերքումն է ։

Շիւնզիւպէ ասաց ․ Քո խօսքից երեւում է որ, առիւծից քեզ զզուանք է հասել եւ նրա երկիւղից քո վերայ ահ ու սարսափ տիրել են ։

Տէմնէ ասաց ․ Ես այս խօսքը իմ մասին չեմ ասում եւ իմ անձի համար չեմ վախենում, այլ այս պարագայում բարեկամներին իմ անձից վեր եմ դասում ։ Այս հոգսը եւ տրտմութիւնը, որ ինձ ճնշում են, քո մասին է ։ Յիշո՞ւմ ես, թէ անցեալ միաբանութիւնը եւ սիրոյ յառաջաբանութիւնները քո եւ իմ մէջ, ի՛նչ կերպով եղան ։ Այն խոստումներից եւ ուխտերից շատերը, որ մենք առաջուց հաստատեցինք, այս միջոցում հաւատարմաբար գործադրուեցան ։ Արդ հիմա ճար չ՚ունիմ ․ պէտք է ինչ որ պատահել է, թէ՛ լաւ, թէ՛ գէշ, թէ՛ օգուտ, թէ՛ վնաս, քեզ յայտնեմ ։

Շիւնզիւպէ սարսափեց եւ ասաց ․ Ո՛վ գթած ընկեր եւ հաւատարիմ բարեկամ, շուտով ինձ եղելութիւնը հասկացուր ։

Տէմնէ ասաց ․ Մի վստահելի անձնաւորութիւնից լսեցի թէ, առիւծը իւր բերանով ասել է ․ «Շիւնզիւպէ չափազանց գիրացաւ, այս պալատում նրան այլեւս պէտք չի կայ, նրա անհետանալը անհրաժեշտ է, նրա մսով գազաններին մի կոչունք պիտի անեմ ։» Երբոր այս լսեցի եւ նրա այլայլուիլն ու դէմքի փոխուիլը տեսայ, եկայ որ քեզ իմացնեմ եւ քեզ հետ արած ուխտս կատարեմ ։ Նաեւ ինչ որ մարդասիրութեան օրէնքը եւ ընկերակցութեան կանոնը ինձ պարտաւորացրել է ի գործ դնեմ ։ Ես ճշմարիտ եղելութիւնը քեզ ասում եմ ․ ուզում ես լսի՛ր, ուզում ես մի՛ լսիր ։ Այժմ այս խորհուրդը կարող եմ տալ, թէ ինչքան որ կարելի է շուտով պէտք է մի կարգադրութիւն անել եւ այս կարեւոր խնդիրի լուծման համար մի ճար գտնել ։ Թերեւս մի

վարպետութիւն կամ մի խորամանկութիւն քեզ այս վտանգից կ՚ազատէ ։

Երբոր Ցիւնգլիւպէ Տէմինէի խօսքը լսեց, մի քիչ լուռ կացաւ եւ առիւծի ըրած ուխտերն ու խոստումները միտք բերելով ասաց. Ո՛վ Տէմինէ, անկարելի է որ առիւծը ինձ զրկանք անէ. քանի որ նա ինձանից մի անհաւատարմութիւն չէ տեսել եւ իմ քայլերը բարի ծառայութեան ճանապարհից չեն շեղել ։ Քո խօսքի ստուգութեան վերայ կասկածում եմ ։ Հաւանական է որ, խորամանկութեամբ մի քանի ստեր իմ վերայով շինել եւ նրա առջեւ ներկայացրել են ։ Նրա ծառայութիւնումը գտնւում են շատ անպիտաններ, որոնք բանսարկութեան մէջ վարպետ եւ խաբէութիւնում խորամանկ, լիրբ եւ համարձակ են ։ Նա նրանց կրկին եւ կրկին փորձել է եւ տեսակ տեսակ ամբարտաւանութիւններ եւ վնասներ նրանցից տեսել է. ուստի ինչ որ այս բաներից ուրիշների վերայով սաեն, յիշում եւ դրա համեմատ է դատում ։ Անշուշտ չարերի խօսակցութեան ազդեցութիւնը բարիների մասին կասկած է յառաջ բերում եւ այս կասկածով իրաւունքը ծածկւում է ։ Այս կէտը լուսաբանում է բաղի սխալ փորձառութիւնը ։

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը ։

Ցիւնգլիւպէ ասաց. Մի ԲԱԴ ջրումը լուսնեակի պատկերը տեսաւ եւ ձուկ կարծելով աշխատեց բռնել. բայց մի բան չի գտաւ, որքան էլ փորձեց մի արդիւնք չ՚եղաւ ։ Երբ տեսաւ որ իւր այս որսորդութիւնը, ծարաւին երազում ջուր տեսնելուն եւ թիւրամիտ մանկերն աւերակներում գանձ գտնել երեւակայելուն է նմանում, ձուկն որսալը բոլորովին թողեց, իւր անհրաժեշտ պիտոյքը որոնելուց ձեռք քաշեց ։ Երբ մի ուրիշ գիշեր ձուկ էր տեսնում լուսնեակի պատկեր կարծելով նրան որսալ չէր փորձում եւ երբէք նրա վերայ ուշադրութիւն չէր դարձնում սաւլով. Ո՛վ որ փորձուածը փորձէ բաց ի զղջալուց ուրիշ արդիւնք չ՚ունենար ։ Նրան այս փորձառութեան օգուտը սա եղաւ որ, միշտ սոված մահ էր գալիս ։ Եթէ առիւծին իմ մասին մի բան իմացրել են, նա էլ լսածին համեմատ դատելով նրանում մի տհաճութիւն է յառաջ եկել եւ դրան հաւատալուն պատճառը նրա ուրիշներից տեսածներն է. մինչդեռ իմ եւ այլոց մէջ մեծ տարբերութիւն կայ, ինչպէս պայծառ ցերեկուան եւ մութ գիշերուան տարբերութիւնը ։

Տէմինէ ասաց. Թերեւս առիւծի տհաճութիւնը դրա համար չէ, այլ ինչպէս որ թագաւորները սովորութիւն ունին առանց արժանաւորութեան նայելու մէկին բարձր աստիճան են տալիս, նոյնպէս էլ մի ուրիշը առանց պատշաճի եւ պատճառի պատժի

եւ սպանման են դատապարտում ։ Մի բանաստեղծ ասել է. «Արքայ Հիւմիւզը ինձ չի տեսաւ եւ առանց մի խօսքի հարիւր շնորհք արաւ. իսկ Թագաւոր Եզո ինձ տեսաւ եւ իրան գովեցի, ոչ մի բան չի տուեց ։

Ցիւնգլիւպէ ասաց. Այս տհաճութիւնը որ դէպ ի ինձ առիւծի սրտում գոյացել է, եթէ առանց պատճառի է դրա առաջն առնելու մի ճար չի կայ. քանզի եթէ աչքի երեւնալու մի պատճառ լինի, դրան հեռացնելով կամ բացատրելով կարելի է խնդիրը պարզել. Իսկ եթէ, Աստուած մի՛ արասցէ, խաբէութեամբ նրա սիրտը փոխել են, եւ նա առանց պատճառի իմ վերայ զայրացել է, դրա առաջն առնել անկարելի է. քանզի սուտը եւ զրպարտութիւնը չափ չունին. խաբէութիւնն ու խարդախութիւնն էլ սահման չ՚ունին ։ Գալով իմ ու առիւծի մէջտեղ, ես չեմ իմանում թէ ի՛նչ յանցանք ունիմ, բաց ի նրանից որ նրա գործերի եւ կարգադրութեանց մէջ մի երկու գործ նրա օգտի համար իրան խորհրդին հակառակն եմ արել եւ սահմանադրութեան եւ հրամանատարութեան կարեւոր գործերումը ժամանակին եւ պարագային նայած առանց նրա հաճութիւնը նկատելու երբեմն երբեմն մի քանի խօսք ասել եմ. գուցէ այս բանը իմ համարձակութեանը վերածել եւ իւր մեծութիւնը անարգել համարել է. մինչդեռ սրանցից ո՛չ մին ընդհանուրի համար անօգտակար չէ եղել եւ ճիշդ դրանցով նրա մեծութիւնը եւ իշխանութիւնը այս կողմերը աւելի հռչակուել է ։ Ես ամեն ժողովքներում եւ ամեն գործերում նրա անունը պատշաճագոյն կերպով յարգել եւ պաշտել եմ ։ Ի՞նչպէս կարելի է ենթադրել թէ, այս անձնանուէրի բարեկամեցողական խօսքերը զայրացման պատճառ լինին կամ այս անձնուրաց հաւատարիմի ծառայութիւնը ատելութեան առիթ տայ ։ Շատ հաւանական է որ նրա տիրապետութեան հպարտութիւնը եւ թագաւորութեան ընդարձակութիւնը պատճառ են տուել նրան իմ վերայ զայրանալուն. քանզի հպարտութեան եւ մեծութեան պահանջը սա է որ, նա անկեղծ խրատատուներին մերժում, ապերախտներին եւ շողոքորթողներին իրան մտերմութեան է յատկացնում ։ Այդ պատճառաւ իմաստուններ ասել են. Ովկիանոսի յատակում կէտ ձկան հետ լողալը եւ պոչը կտրուած օձի շրթունքներից թոյն ծծելը ապահովութեան աւելի մօտ է, քան թէ թագաւորաց ծառայելը ։ Ես գիտէի որ թագաւորաց ծառայութիւնը շատ վտանգներ ունի եւ նրանց գործակատարութիւնից անհամար վնասներ յառաջ կը գան ։ Դարձեալ իմաստունները թագաւորին կրակի են նմանցրել. թէեւ նրանց շնորհաց բոցերը յուսահատների խաւարը փարատում է, բայց նրանց քաղաքականութեան կայծերը վաղեմի ծառաների իրաւանց կալը

այրում է։ Կատարեալ խելքը այս դատողութեան համաձայնութիւն է տալիս թէ․ Ո՛վ որ կրակին աւելի մօտ է, նրա վնասն էլ աւելի է․ որոնք որ հեռուից միայն կրակի լոյսն են դիտում այրուելուց անտեղեակ են, եւ կարծում են որ թագաւորների մտերմութիւնից հաճոյք եւ օգուտ են յառաջ գալիս, սակայն իրողութիւնը այնպէս չէ․ քանզի եթէ նրանք թագաւորական խոշտանգման վերայ տեղեկութիւն ունենային եւ արքունական պատկառանքին արհաւիրքը ճանաչէին, պիտի հաւանային թէ հազարամեայ շնորհքը մի ժամուայ պատժին հաւասար չէ։ Այս իրողութեան ապացոյցը բազէի տեսութիւնն է ընտանի հաւի հետ։

Տէմնէ հարցրեց․ Ի՞նչպէս է եղել այդ տեսութիւնը։

Շինզիւպէ ասաց․ Ժամանակին մի ՈՐՍԻՉ ԲԱԶԷ մի ընտանի հաւի հետ վիճաբանութիւն էր անում, ասում էր․ Դու շատ ուխտազանց եւ ապերախտ մի թռչուն ես․ մինչդեռ բարի բնաւորութեանց ցուցակի վերնագիրը երախտագիտութիւն է, նաեւ արիութիւնը եւ մեծութիւնը պահանջում են որ անձին վերայ ապերախտութեան նշանը չի գտնուի։ Շունը, որին հաւատարմութիւնը զէն չ'ունի, լաւ է այն մարդից որ չան չափ հաւատարմութիւն չ'ունի։ Հաւը պատասխանեց․ Ինձանից ի՞նչ ապերախտութիւն ես տեսել եւ ո՞ր ուխտազանցութիւն ես նկատել։ Բազէն ասաց․ Քո ապերախտութեան նշանը սա է որ, մարդիկ քեզ այսքան շնորհք են ցոյց տալիս, քո կենսական պէտքերը, կուտը եւ ջուրը, առանց քո նեղութիւն քաշելուն քեզ տալիս են։ Գիշեր ցերեկ քո վերայ հսկում եւ քեզ պահպանում են, եւ դու նրանց հովանաւորութեան տակ ապրում եւ բնակարան ունիս․ բայց երբ կամենում են քեզ բռնել, աղէն անդէն ես փախչում եւ կտուրից կտուր ես թռչում․ բարիքը չես ճանաչում եւ քո բարերարից ես խրտչում։ Բայց ես որ վայրենի եմ, երբոր երկու երեք օր նրանց ընտելանում եւ նրանց ձեռքից ուտում եմ, նրանց բարիքը գնահատելով որսում եւ նրանց եմ տալիս եւ որչափ էլ հեռի գնացած լինիմ, երբ մի ձայն եմ լսում, իսկոյն թռչելով գալիս եմ։ Մարի ասաց․ Ճշմարիտ ես ասում։ Քո յետ գալուն եւ իմ փախչելուն պատճառը սա է որ դու երբեք մի բազէ շամփուրի վերայ խորոված չես տեսել, բայց ես շատ հաւերը տապակի վերայ եփած տեսել եմ․ եթէ դու էլ այս տեսնէիր, այլեւս նրանց մօտ չէիր շրջում․ եթէ ես մի կտուրից միւս կտուր եմ փախչում, դու մի սարից միւս սար կը փախչէիր։ Այս առակը դրա համար բերեցի, որ իմանաս թէ նրանք որ թագաւորների խօսակցութիւնը որոնում են, նրանց խոշտանգանքից անտեղեակ են․ նրանց պատիժը տեսնողին՝ էլ ոչ համբերութիւն է մնում, ոչ էլ հանգստութիւն։

Տէմնէ ասաց․ Առիւծը իւր աշխարհակալութեան մեծութեանը եւ միահեծան թագաւորութեանը մի վնաս լինելուց վախենալով այս բանը քո վերայով չի մտածել, քանզի դու մեծ տաղանդ եւ շատ ձիրքեր ունիս եւ թագաւորները միշտ կարօտ են տաղանդաւոր եւ ձիրքով անձերին, նրանք ինչքան էլ շատ լինեին։

Շինզիւպէ ասաց․ Գուցէ իմ տաղանդը նրա զայրանալուն պատճառ է եղել․ ինչպէս որ լաւ ձիուն արագաշարժութիւնը իւր չարչարման պատճառ է լինում, պտղատու ծառին ճիւղերը եւ գլուխը պտուղների համար են կոտրվում, սոխակը իւր ձիրքին համար վանդակի մէջ է բանտարկվում, սիրամարգը իւր գեղեցկութեան համար փետրազուրկ եւ խայտառակ է լինում։ Իմ հանճարը ինձ արկած եղաւ․ ինչպէս որ աղուէսին մորթ, սիրամարգին փետուր։ Ճշմարիտ է, քանի որ անշնորհքները տաղանդաւորներից շատ են, եւ նրանց մէջտեղ անձնական հակառակութիւն եւ վաղեմի թշնամութիւն կան, չարաւորութեան պատճառաւ տաղանդաւորների դիրքը տապալելու համար այնքան առաջ են գնում որ նրանց շարժիլը եւ կանգնիլը մեղքի դիմակին տակ են դնում, հաւատարմութիւնը ապիրատութեան կերպարանքով եւ պարկեշտութիւնը պղծութեան երեւոյթով են ցոյց տալիս, եւ այն հանճարը, որ բարեկեցութեան միջոց եւ երջանկութեան պատճառ է, իբրեւ ապստամբութեան նիւթ եւ թշուառութեան հիւթ են ներկայացնում։ Երբ մի տաղանդաւորը գլուխ է բարձրացնում, անշնորհքները ձեռք են վերցնում եւ մինչեւ որ նրա գործը չեն փճացնում հանգիստ չեն առնում։

Տէմնէ ասաց․ Եթէ չարերը այդ բանը արած լինեին, դրա վերջը ի՞նչ է լինելու։

Շինզիւպէ ասաց․ Եթէ այդ բանը նախասահմանութեան հետ չի համաձայնի ո՛չ մի վնաս յառաջ չի գայ, իսկ եթէ նախասահմանութիւնը նրանց անիրաւութեան հետ համաձայնի, ո՛չ մի խորամանկութեամբ չի կարելի նրա առաջն առնել։

Տէմնէ ասաց․ Խելացին պէտք է ամեն պարագայում հեռատես լինի եւ գալիքները ի միտ ածէ․ քանզի ո՛վ որ իւր գործերի սկզբունքը խելքի վերայ չի հաստատէ՝ նպատակին չի հասնիր։

Շինզիւպէ պատասխանեց․ Խելքը այն ժամանակ գործի է գալիս, երբ ճակատագիրը դրա հակառակ չի լինի։ Խորագիտութիւնը այն ժամանակ օգուտ է տալիս, երբ նախասահմանութիւնը նրա հակառակ վճռած չի լինի։ Ճակատագրի դէմ ո՛չ մի խորամանկութիւն օգուտ չի բերում։ Ո՛չ մի վարպետութիւն եւ ո՛չ մի հանճար մարդը նախասահմանութեան կապերից չեն ազատում։ Իւրաքանչիւր կրակը, որ նախասահմանութիւնը բոնկցրել է,

Նա բոլոր խորհուրդները եւ կարգադրութիւնները ճարակում է։ Երբ Արարիչը մէկ բանի կատարուիլը վճռում կամ թոյլ է տալիս, այն ժամանակ մինչեւ գործի կատարուիլը տեսնողների աչքը անզգուշութեամբ մթնանում է։ Միթէ դու պարտիզպանի եւ սոխակի խօսակցութիւնը չե՞ս լսել։

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ։

Շինդիւպէ ասաց. Բերել են թէ. Մի ՊԱՐՏԻԶՊԱՆ մի գեղեցիկ եւ զուարճալի պարտէզ ունէր, որ Եդեմական դրախտին էր նմանում։ Ուր անուշահոտ ռահանները բուրում եւ հոգւոյն ճաշակը զուարթացնում էին։ Նրա վարդանոցը երիտասարդութեան վարդերի եւ նրա ջրերը կենսական աղբիւրին էր նմանում, սոխակների երգեցողութիւնը խելք էր յափշտակում եւ մշկահոտ զեփիւռը ցնծութիւն էր բաշխում։ Նրա կանաչազարդ գետնի իւրաքանչիւր անկիւնումը երջանկութեան տունկի պէս թարմ եւ ուրախութեան ծառի նման հասակաւոր, մի վարդենի էր գտնուում, որի վերայ ամեն առաւօտ սրտահաճոյ դէմքով, եւ ընտիր գունով մի քնքուշ վարդ էր բացվում։ Պարտիզպանը այդ փափկասուն վարդի հետ սիրոյ առընչութիւն էր հաստատում։ Ասում էր. Չեմ իմանում՝ թէ սա այս քնքուշ շրթունքների տակից ի՞նչ է ասում, որով թշուառ սոխակները այսպէս պաղատանքի է ենթարկում։ Մի օր երբ պարտիզպանը իւր սովորութեամբ համեմատ վարդերը տեսնելու եկաւ, տեսաւ մի երգող սոխակ որ իւր երեսը վարդի թերթի վերայ է քսում եւ նրա ոսկեթել կազմը իւր սուր կտուցով կտրում եւ միմեանցից բաժանում է։ Արդ երբոր պարտիզպանը վարդի թերթերին ցրուիլը տեսաւ սրտաճմլիկ եղաւ։ Երկրորդ օրը միեւնոյն բանը դիտելով նորէն ցաւեց։ Երրորդ օրը դարձեալ սոխակի կտուցի շարժումովը վարդը աւար գնաց փուշը մնաց։ Պարտիզպանի սիրտը սոխակից վիրաւորուելով որոգայթ լարեց, նրան բռնեց եւ մի վանդակի մէջ բանտարկեց։ Տխուր սոխակը թութակի պէս լեզուի գալով ասաց. Ո՛վ յարգելի, ինչո՞ւ համար ինձ բանտարկեցիր. եթէ իմ երգեցողութիւնը լսելու համար է, իմ բոյնս արդէն քո պարտիզումն էր գտնուում եւ ամեն առաւօտ իմ երգեցողութեան ձայնը քո պարտէզի ամէն կողմը լսվում էր. բայց եթէ ուրիշ մտադրութիւն ես ունեցել, խնդրեմ ինձ յայտնես։ Ծերունի պարտիզպանը ասաց. Դու իմանո՞ւմ ես, թէ ինձ ի՛նչ արիր։ Դու ինձ իմ փափկասուն բարեկամից բաժանելով սիրտս վշտով լցրեցիր եւ քո արածին փոխարէնութիւն այս է որ քո բունից եւ սիրելից զրկուած բանտի անկիւնում լաս. ինչպէս որ ես բաժանման տառապանքին ենթարկուած տրտմութեան տնակում ողբում եմ։ Ողբացի՛ր, ո՛վ սոխակ, եթէ դու էլ ինձ պէս սիրոյ

տենչ ունիս. մենք երկուքս սիրելից անջատուածներ ենք բաց ի ողբալուց էլ ի՞նչ ունինք։ Սոխակն ասաց. Այս բանից անցկա՛ց եւ խորհի՛ր որ ես այս յանցանքով, թէ մի վարդ վիրաւորել եմ, բանտարկուեցայ. հապա դու, որ մի սիրտ ես խոցոտում, քո վիճակը ի՞նչպէս պիտի լինի։ Այս խօսքը պարտիզպանին ազդեց եւ սոխակը ազատ արաւ։ Սոխակը սկսեց շնորհակալութիւն յայտնել եւ ասել. Դու ինձ լաւութիւն արիր եւ պէտք է որ նրան փոխարէնութիւնը ստանաս։ Արդ իմացի՛ր որ այս ծառի տակ, որի մօտ կանգնել ես, մի սափոր ոսկի թաղուած է. դրան հանի՛ր տա՛ր քո պէտքերին գործածի՛ր։ Պարտիզպանը փորեց եւ սոխակի ասածը ստոյգ ելաւ։ Ասաց. Ո՛վ սոխակ, զարմանք է որ սափորը գետնի տակ տեսնում ես, բայց որոգայթը ծառի տակ չի տեսար։ Սոխակն ասաց. Դու չես գիտում որ ճակատագրի առաջը չ'առնուիր. եւ երբ նախասահմանութիւնը կատարուելու լինի, այն ժամանակ ո՛չ տեսանող աչքին լոյս է մնում, ո՛չ էլ խելքի խորհուրդը օգուտ է հասցնում։ Այս առակը դրա համար պատմեցի, որ յայտնի լինի թէ ես նախասահմանութեան դէմ ո՛չ մի կարողութիւն չ'ունիմ եւ իմ անձը աստուածային վճռին յանձնելուց ի զատ ուրիշ ճար չ'ունիմ։

Տէմինէ ասաց. Ո՛վ Շինդիւպէ, ինչ որ ես հաստատ իմացել եմ սա է. Առիւծի քո մասին ունեցած կարծիքը թշնամիների չարախօսութեան պատճառաւ չէ, ո՛չ էլ քո մեծ տաղանդի պատճառաւ, այլ անոր վերջին աստիճան անհաւատարմութեան եւ բռնակալութեան արդիւքն է։ Նա մի կամակոր բռնաւոր է եւ մի կրքոտ խաբեբայ զրկող։ Նրա սիրոյ սկիզբը քաղցրութիւն է ընծայում, սակայն նրան ծառայելու վախճանը մահուան դառնութիւնը ունի։ Պէտք է այսպէս երեւակայել, թէ նա մի նախշուն թունալից օձ է, որի դուրսը գոյնզգոյն նախշերով զարդարուել է, բայց ներսը սպանիչ թունով լցուն. այնպէս որ ո՛չ մի դեղթափ ազդեցութիւն չի աներ։

Շինդիւպէ ասաց. Մի ժամանակ շնորհաց քաղցրութիւնները վայելեցի, հիմա էլ սպառնալիքի խայթոցից վէրքեր ստանալու ժամանակն է։ Բաւական ժամանակ հանգստութեան եւ ուրախութեան օրերը անցկացրի, այժմ էլ վշտի եւ հոգսի յարձակման ժամանակն է։ Ճշմարիտ, մահը իմ օձիքից բռնած ինձ այս անտառը բերել է. եթէ ոչ, ես ի՞նչ արժանաւորութիւն ունէի առիւծին մտերմանալու։ Նա որ իւր աչքերը իմ անձի վերայ անկել էր եւ ես միայն նրան կերակուր լինելու յարմար էի, ի՞նչպէս կարելի էր որ ես իմ ոտքով նրա մօտ գայի. մինչդեռ պէտք էր հազարաւոր որոգայթներով եւ խաբէութիւններով ինձ նրա մօտ բերել։ Սակայն աստուածային նախասահմանութիւնը

եւ քո հնչիւնը, ո՛վ Տէմինէ, ինձ այս խորխորատը գցեցին: Հիմա ո՛չ մի կարգադրութեան իմ ձեռքը չի հասնում եւ ո՛չ մի պատրաստութիւն ինձ օգնելու կարող չէ: Ես խակ փափաքով եւ փուճ ակնկալութեամբ ինձ համար այս տեսակ կրակ եմ պատրաստել որ նրա ծուխը դեռ իմ առջեւը չի հասած հոգսի տագնապից այրւում եմ. ի՛նչպէս անեմ, ինքս եմ արել. իմ արածին ի՛նչ ճար կայ: Մեծերը ասել են. Ո՛վ որ այս աշխարհում քիչով չի բաւականանայ եւ շատը որոնէ, նմանում է այն մարդին, որ հասնում է ադամանդի սարը եւ ամեն ժամ իւր աչքը աւելի մեծ կտորին է ընկնում եւ չարունակ աւելի գին արժողից հրապուրվելով յառաջ է գնում մինչեւ որ մի գոհացուցիչ տեղ է հասնում: Բայց յետ դառնալիս թշուառ է լինում. քանզի ադամանդի կտորուանքը նրա ոտքերը քերում եւ վիրաւորում են եւ ինքը ագահութեան պատճառաւ ինքնիրան մոռացած այդ բանը չի զգում. վերջապէս կատարեալ կարօտութեամբ այն լեռան վերայ մեռնում եւ թռչունների ստամոքում տեղ է բռնում: Ասած է թէ. „Շատը խնդրելը քո գործին վնաս է. եթէ օգուտ ես որոնում, աւելին մի՛ խնդրիր:“

Տէմինէ ասաց. Շատ հաւանելի խօսք ասացիր: Ինչ վտանգ որ մարդին հասնում է, ագահութիւնից է հասնում. ո՛ր վիզը որ ագահութեան շղթայով կապուած է լինում, վերջը զղջման սրով կտրվում է եւ ո՛ր գլխում որ ագահութիւնը տեղ է բռնում, վերջապէս նա անարգանաց գետնում թաւալում է: Շատերը ագահութեան պատճառաւ հարստութիւն յուսալով թշուառութեան խորխորատը ընկան: Ինչպէս որ որսորդը ագահութիւնից աղուէսը բռնել ցանկացաւ եւ ինքը վագրի ճանկը ընկաւ:

Շիւնզիւպէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը:

Տէմինէ ասաց. Մի օր Մի ՈՐՍՈՐԴ դաշտումը շրջելիս մի գեղեցիկ եւ ճարպիկ աղուէս տեսաւ, որ դաշտի վերայ ոստնում եւ խաղում էր: Որսորդը սրա մորթին հաւանելով լեցուն գնով ծախել մտածեց: Ագահութիւնը նրան թելադրելով աղուէսի ետեւից գնաց, նրա որջը իմացաւ եւ այն տեղին մօտ մի հոր փորելով նրանում մի կտոր հոտած միս դրաւ եւ հորի բերանը տատասկներով ու խոտերով ծածկեց. իսկ ինքը դարան նստելով աղուէսին գալուն սպասում էր: Աղուէսը որջից դուրս գալով եւ մսի հոտը առնելով եկաւ մինչեւ հորի բերանը: Ինքնիրան ասում էր. Թէեւ այստեղում գտնուող սատկածի հոտը իմ ցանկութեան քմացը հաճոյք է պատճառում, բայց վտանգի հոտը եւս իմ խելքի քիմքին է հասնում: Խելացիներ, ինչ բանը որ վտանգաւոր ենթադրել կարելի է, նրան չեն ձեռնարկել. Թէեւ կարելի է որ մի կենդանի այստեղ սատկած լինի, բայց այս էլ կարելի է որ նրա տակը մի

որոգայթ լարուած լինի. ուրեմն ամեն կերպով զգուշութիւնը լաւագոյն է: Ինչպէս որ ասել են. Երբ քո առջեւ երկու գործ լինի եւ չի գիտենաս թէ ո՞րը անել պէտք է, այն ժամանակ որը որ վտանգաւոր է թւում նրանից զգուշանալ պէտք է եւ որը որ կասկած չէ վերցնում եւ վտանգ չ՚ունի, նրան կատարելու ես: Աղուէսը այս մտածելով սատկածից անցաւ, ապահով գնաց: Այս միջոցում մի սոված վագր սարից վար էր իջնում, մսի հոտը առնելով եկաւ հորի մօտ եւ ինքնիրան գցեց հորը: Երբ որսորդը որոգայթի ձայնը եւ կենդանիի հորը ընկնելը լսեց, կարծելով որ աղուէսն ընկաւ, ագահաբար առանց յապաղելու ինքնիրան նրա ետեւից հորը գցեց: Վագրը կարծելով որ սատկածը ուտելուց իրան պիտի արգիլէ, յարձակեց նրա վերայ եւ նրա փորը պատառեց: Որսորդը իւր ագահութեան պատճառաւ կորուեցաւ: Այս առակի օգուտը սա է որ, ագահութիւնը եւ աւելին խնդրելը ազատը գերի եւ գերին էլ նկուն է անում:

Շիւնզիւպէ ասաց. Ես սխալեցայ որ առաջ առիւծին ծառայութիւն անելու յօժարեցայ եւ չի գիտցայ որ նա ծառայութեան արժէքը չ՚իմանում: Ասել են թէ. Բարեկամութիւն անել մէկին հետ որ բարեկամութեան արժէքը չի գիտում եւ ծառայել մէկին որ ծառայութիւնը չի գնահատում, նման է սրան որ մի մարդ արդիւնք առնելու յուսով իւր սերմը աղտաղտ հողի վերայ է ցանում, կամ մօրից խուլ ծնածի ականջին տաղեր է ասում, կամ վազուն ջրի երեսին վերայ նոր բանաստեղծութիւններ է գրում եւ կամ սաստիկ մրրիկից անձրեւի կաթիլներ է սպասում:

Տէմինէ ասաց. Այս խնդիրը թո՛ղ տուր, քո գործի ճարը մտածի՛ր:

Շիւնզիւպէ ասաց. Ի՞նչ խորհեմ եւ ի՞նչ ճար գտնեմ: Ես առիւծի բնութիւնը ճանաչում եմ. այսպէս եմ հասկանում որ նա իմ վերայով բարի եւ լաւ չի կամենում լսել: Նրա մօտաւորները ինձ կորցնելու են ջանք անում: Իմ կենդանութեան կշիռը դէպ ի մահուան կողմն է քաշել եւ ո՛չ թէ ապրելու կողմը: Քանզի երբ բռնաւոր խարդախ չարակամները իրարի կռնակ տան եւ ձեռք ձեռքի տուած մէկը կործանելու մտադիր լինին՝ անպատճառ կը յաջողին. ինչպէս որ գայլը, արջնագռաւը եւ ճագարը ուղտին կորցնելու համար միաբանեցան, իրանց կամքը կատարելու յաջողեցան:

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը:

Շիւնզիւպէ ասաց. Բերել են թէ. Մի ՍԵԽԱՋԵՍԱՅ ԱՐՋՆԱԳՌԱՒ, մի շատ բարկացոտ գայլ եւ մի խորամանկ ճագար մի որսորդ առիւծի ծառայութիւնում էին գտնւում: Նրանց գտնուած անտառը ճանապարհին մօտ լինելով մի վաճառականի ուղտը այն կողմերում դադրած մնացել էր: Այս ուղտը մի ժամանակից յետոյ ույժ առնալով

իւրաքանչիւր կողմ արօտ գտնելու համար մտն էր գալիս։ Մի օր էլ սրա ճանապարհը այդ անտառից անցնելով՝ երբոր առիւծին մօտեցաւ, բաց ի խոնարհելուց եւ հպատակելուց ուրիշ ճար չէր գտաւ։ Առիւծն էլ սրա վերայ գթալով՝ որպիսութիւնը, ընտակութիւնը եւ զբաղումը հարցրեց։ Ուղտը պատասխանեց․ Սրանից առաջ ես ազատ եւ ինքնակամ գործում էի, բայց երբոր ձեզ տեսայ էլ ինքնակամութիւն ինձանում չի մնաց։ Ինչ որ թագաւորը հրամայէ, հպատակների համար բարին այն է։ Առիւծն ասաց․ Եթէ իմ մտերմութիւնը սիրես ազատ եւ ապահով եղի՛ր։ Ուղտը ուրախ եղաւ եւ այդ անտառում ապրելով մի ժամանակից յետոյ խիստ գիրացաւ։ Եղաւ որ մի օր առիւծը որսի գնաց եւ մի արբած փիղ նրան հանդիպելով, այս երկուսի մէջտեղ սաստիկ ճակատամարտ տեղի ունեցաւ եւ առիւծը մի քանի վէրքեր ընդունած յետ դարձաւ։ Երբ անտառում մի տեղ ընկած հեծում էր, գայլը, արջնագռաւը եւ ճագարը, որոնք նրա բարերարութեան սեղանի շնորհիւ ապրում էին, մնացին անսուաղ․ բայց որովհետեւ առիւծը, իբր թագաւոր բնական գութ եւ զուտ խընամք ունէր իւր հպատակներին եւ ծառաներին վերայ, նրանց այս վիճակում տեսնելով ներգործուեց եւ ասաց․ Ձեր հոգսը աւելի ազդում է ինձ քան թէ իմ անձնական կսկիծը, եթէ այս մօտերում մի որս գտնուի, ես կ՚ելլեմ եւ ձեզի համար կ՚որսամ։ Նրանք առիւծի առջեւից դուրս գալով նստեցին մի անկիւնում, սկսեցին միմեանց հետ խորհուրդ անել թէ․ «Այս անտառում ուղտ գտնուիլը մեզ ի՞նչ օգուտ ունի․ նրանից ո՛չ առիւծին մի օգուտ է հասնում եւ ո՛չ էլ մենք նրա հետ մի առընչութիւն ունինք։ Հիմա պէտք է առիւծին առաջարկել որ նրան յօշոտէ․ թէ՛ թագաւորը մի քանի օր կերակուրի մասին անհոգ կը լինի եւ թէ՛ մեզանից իւրաքանչիւրին մի բաժին կը հասնի։» Ճագարն ասաց․ Այս խորհուրդից հեռի կացէ՛ք։ Առիւծը նրան ազատ արել եւ իրան մտերմացրել է։ Ո՛վ որ թագաւորը բռնաբարութեան թելադրէ ուխտազրուժ եւ ապերախտ կը լինի, եւ ապերախտը ամեն տեղ նզովուած է, թէ՛ Աստուծոյ առջեւ թէ՛ մարդկանց։ Հաւատարմութիւն է մարդին հարազատութիւնը, իսկ ապերախտութիւն՝ նրա կեղծիքը։ Արջնագռաւն ասաց․ Այս բանի համար կարելի է մի վարպետութիւն խորհել եւ առիւծին այս գործը կատարել տալ։ Դուք ձեր տեղը նստեցէք, մինչեւ որ ես գնամ ու գամ․ ուստի եկաւ առիւծի առջեւը։ Առիւծը հարցրեց․ Արդեօք որսի տեղ նշան արի՞ք։ Արջնագռաւն ասաց․ Ո՛վ թագաւոր, քաղցածութիւնից մեզանից ոչ մէկի աչքը չէ գործում եւ շարժելու էլ մեզանում կարողութիւն չի մնացել։ Միայն մի բան ենք խորհել, որ եթէ թագաւորը բարեհաճի, մեր ամենին էլ բաւականութիւն կը լինի։ Առիւծն

ասաց․ Խնդիրը պարզի՛ր, տեսնենք ի՞նչ է։ Արջնագռաւն ասաց․ Այս ուղտը մեր մէջ խորթ եւ օտար է․ նրա ընկերակցութիւնից ո՛չ մի օգուտ կարելի չէ սպասել, նեղ ժամանակի համար ձեռք եկած մի որս է։ Առիւծը բարկացաւ, ասաց․ Հող քո եւ այս ժամանակուայ ընկերների գլխին որ բաց ի մատնութիւնից եւ անիրաւութիւնից ուրիշ բան չեն իմանում եւ ընկերակցութեան, համերաշխութեան եւ արդարութեան ճանապարհից միանգամայն մոլորուել են։ Ուխտ դրժել եւ խոստում չի պահել ո՞ր կրօնքում թոյլ տրուած՝ եւ իւր ազատածին բռնաբարել ո՞ր ազգի մէջ ներելի է։ Արջնագռաւն ասաց․ Ես այս առաջարանութիւնը գիտեմ։ Սակայն իմաստուններ ասել են թէ․ Մի անձը մի ընտանիքի համար կարելի է զոհել, մի ընտանիքը մի ցեղի համար, մի ցեղը մի քաղաքի համար եւ մի քաղաքն էլ թագաւորի անձին համար, երբ նա վտանգի մէջ լինի․ քանզի նրա ողջութիւնը բոլոր երկրի բնակիչներին օգուտ է հասցնում։ Ուրեմն այս պարագայում ուխտ դրժելը բացակայ է համարվում․ այնպէս որ ուխտ անողը բռնաբարութիւն արած չէ լինում։ Առիւծը իւր գլուխը վար կախեց եւ արջնագռաւը յետ դարձաւ ընկերների մօտ, ասաց․ Խնդիրը առիւծին պարզեցի, նա թէեւ առաջ յամառեցաւ բայց վերջապէս ընտելացաւ։ Հիմա իմ խորհուրդը սա է որ բոլորս ուղտի մօտ գնանք եւ առիւծի քաղցածութիւնը եւ նրան պատահած վիշտը կրկին յիշելով ասենք, «Թէ մենք այս միահեծան թագաւորի իշխանութեան տակ ապաստանարան ենք գտել եւ լաւ օրեր ենք անցկացնում։ Այսօր որ նրան այս դժբաղդութիւնը պատահել է, սէրը պահանջում է որ մեր անձը նրան զոհենք․ եթէ ո՛չ ապերախտ կը կոչուինք եւ մարդասիրութիւնից եւ արիութիւնից զրկուած կը համարուինք։ Արդարութիւն է որ ամենքս առիւծի առջեւը գնանք եւ նրա բարիքների փոխարէն մեր շնորհակալութիւնը յայտնենք ասելով․ ‘Մեր ձեռքից մի բան չէ գալիս, բաց ի սրանից որ մեր անձերը զոհենք։’ Երբոր ուղտի հետ միասին թագաւորի առջեւ ներկայանանք, մեզանից իւրաքանչիւրը թող ինքնիրան առիւծին ճաշ լինելու նուիրէ։ Իսկ միւսը նրան քամահրելով ինքնիրան առաջարկէ։ Գուցէ այս կերպով զոհման որոշումը ուղտի վերայ կայանայ։» Ուստի եկան ուղտի առջեւը եւ այս խորհուրդը նրան յայտնեցին։ Միամիտ ուղտը նրանց խորամանկութեանը խաբուելով յիշեալ որոշման համեմատ նրանց հետ գնաց առիւծի առջեւ եւ սկսեցին միաբերան շնորհակալութիւն եւ գոհաբանութիւն մատուցանել։ Արջնագռաւն ասաց․ Ո՛վ թագաւոր, մեր հանգստութիւնը ձեր վեհափառութեան առողջութիւնից կախում ունի։ Բանի որ այժմ այս դժբաղդութիւնը յառաջ եկել է եւ իմ մսից թագաւորին կարող է սնունդ

հասնիլ, խնդրում եմ որ բարեհաճի ինձ սպաննելու եւ ճաշելու։ Ուրիշները ասացին. Քեզ ուտելուց ի՞նչ օգուտ յառաջ կը գայ, քո մսից ո՞վ կը կշտանայ, դու ի՞նչ ես որ մի բանի տեղ համարուես։ Արջնագռաւը այս խօսքը լսելիս գլուխը՝ վար կախեց։ Ճագարը խօսքի սկսեց, ասաց. Երկար ժամանակից ի վեր ձեր արեգակնափայլ թագաւորութեան հովանաւորութեանը տակ բազմատեսակ արկածներից ապահովուած՝ լաւ օրեր եմ անցկացրել։ Այսօր որ ձեր վեհափառութեան լուսնի վերայ այս դժբաղդութեան խաւարումը եկել է, ցանկանում եմ որ բաղդաւորութեան աստղը իմ գոյութեան հորիզոնից ծագի, թագաւորը ինձ կերակուր անէ եւ ճաշի հոգսից ազատի։ Միւսները պատասխանեցին. Ինչ որ ասացիր անկեղծութեան եւ երախտագիտութեան արդիւնք է, բայց քո միսը նիհար, գարշահոտ եւ վնասակար է. մի՛ գուցէ նրանով թագաւորի ցաւը աւելանայ։ Ճագարը լռեց։ Գայլը յառաջ եկաւ, ասաց. Ես էլ ցանկանում եմ իմ անձը թագաւորին զոհել։ Թող թագաւորը ուրախ ուրախ ինձ իւր ատամների մէջ տանէ եւ ուտէ։ Ընկերները ասացին. Այս խօսքը իսկապէս հաւատարմութիւն եւ անձնուրացութիւն է յայտնում. սակայն քո միսը կոկորդի ցաւ է յառաջ բերում եւ սպանիչ թոյնի յատկութիւն ունի։ Գայլը յետ քաշուեցաւ։ Ուղտը իւր երկար վիզը ցլմարի նման վեր բարձրացնելով ասաց. Ես ձեր վեհափառութեան խնամածը եւ այս տէրութեան սնուցածն եմ, եթէ արժէք ունիմ ձեր արքայական խոհանոցում գործածուելու, իմ անձը չեմ խնայում։ Միւսները ասացին. Այս խօսքը ճշմարիտ հաւատարմութիւն եւ անձնանուիրում է յայտնում. իրաւ, քո միսը համեղ, դիւրամարս եւ թագաւորին օգտակար է։ Կեցցէ՛ քո քաջութիւնը, որ բարերարից քո անձը չի խնայեցիր եւ աշխարհքի վերայ մշտնջենական բարի անուն թողեցիր։ „Աշխարհքի վերայ քաջեր շատ կան, բայց երբոր խնդիրը անձին է գալիս՝ այն ժամանակ թուլանում են։“ Արդ բոլորը միաժամայն յարձակեցան ուղտի վերայ։ Խեղճալին ձայն չի հանեց, մինչեւ որ իրան բոլոր անդամները յօշոտեցին։ Այս առակը դրա համար բերեցի, որ իմանաս թէ երբ հակառակորդները միաբան լինին՝ նրանց խորամանկութիւնը ապարդիւն չի մնար։

Տէմինէ ասաց. Սրանից ազատուելու համար ի՞նչ ես մտածում։

Շինզիւպէ պատասխանեց. Իմ մտածմունքը օգտակարութեան սահմանից դուրս է, բաց ի կռւից եւ պատերազմից ուրիշ միջոց չեմ տեսնում։ Ո՛վ որ իւր անձը եւ ստացուածքը պաշտպանելու համար սպաննուի մարտիրոսների դասակարգին է պատկանում։ Դարձեալ եթէ իմ մահը առիւծի ձեռքով կատարուիլ որոշուած է, գոնէ պատուաւոր կերպով սպաննուած կը լինիմ։

ինձ պէտք է անուն թողել, մնայունը անուն է, մարմինը արդէն մահուան համար որոշուած է։

Տէմինէ ասաց. Խելացին պատերազմի ժամանակ ինքնիրան յառաջ չի քշում եւ հակառակորդը չի յարձակած նրա վերայ յարձակելը արժան չէ համարում։ Խոհեմները խոնարհութեամբ եւ մեղմութեամբ թշնամւոյն յաղթելը աւելի յարգել են։ Մեղմ խաբէութիւնը յոռի բարկութիւնից լաւ է, ինչպէս որ ջուր սրսկելը կրակ թափելուց լաւ է։ Այն բանը որ մեղմով կատարել կարելի է, ի՞նչ պէտք է բարկութեան ձին քշել։ Նաեւ տկար թշնամին պէտք չէ փոքր եւ անարգ սեպել, եթէ նա ուժից ընկած էլ լինի, դարձեալ խորամանկութիւնում տկար չէ լինում եւ վարպետութեամբ այնպիսի բանսարկութեան բոցեր է բռնկցնում որ ո՛չ մի կարգադրութեան ջրով չեն մարիլ։ Դու առիւծի քաջութիւնը գիտես եւ նրա բռնակալութեան ոյժը քեզ պատմել հարկ չէ. ուստի նրա թշնամութեան մասին պէտք է կատարեալ հաշիւ անես եւ նրա հետ պատերազմելու համար լուրջ կերպով խորհես։ Ո՛վ որ թշնամին թեթեւ եւ տկար է համարում եւ պատերազմի վերայով անհոգ է գտնւում, նա վերջը զղջում է, ինչպէս որ ծովապետը դէյդուլն անարգ սեպելուն համար զղջաց։

Շինզիւպէ հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Տէմինէ ասաց. Բերել են թէ Հնդկաստանի ծովեզերքումը մի տեսակ թռչուն կայ որին ԴԻՅԴՈՒՅ են ասում։ Նրանցից մի զոյգ ծովի ափում բնակութիւն էին հաստատել։ Երբոր ձու ածելու ժամանակը հասաւ, էգն ասաց. Ձու դնելու համար մի ապահով տեղ պէտք է որոնել։ Արուն պատասխանեց. Այստեղ զով եւ հաճելի տեղ է, այժմ տեղափոխութիւն անելը դժուար է, պէտք է այստեղ դնել ձուերը։ Էգն ասաց. Մենք պէտք է սրա վերայով լուրջ կերպով մտածենք. քանզի եթէ ծովը իւր ալիքներով զարնէ, մեր ձագիկները կը խլէ եւ մեր ժամանակն ու աշխատութիւնը կը կորչի։ Դրա առջեւը ի՞նչպէս կարելի է առնել։ Արուն ասաց. Չեմ կարծում որ ծովապետը կարողանայ այդքան յանդգնութիւն անել եւ իմ սահմանը ջրով կոխել. եւ եթէ այդպիսի անվայել ընթացք բռնէ եւ մեր ձագերը ընկղմէ՝ նրանից պատիւ եւ իրաւունք կը պահանջեմ։ Տիեզերքն իրար կը խառնեմ եթէ իմ կամքին հակառակ մի բան լինի։ Էգն ասաց. Քո չափից անդին անցնել չէ վայելում եւ քո կարողութիւնից դուրս պարծենալ խելքի բան չէ։ Դու ի՞նչ ուժով ծովապետից վրէժ պիտի լուծես եւ նրա դէմ դնելու ի՞նչ կարողութիւն ունիս։ Դու այդպէս անելով քեզ աւար պիտի տաս։ Դու մի ճնճղուկ ես, բազէի դէր խաղա՞լ ես ուզում։ Այս բանից անցկա՛ց, ձուերի համար մի ապահով տեղ ընտրի՛ր եւ քո ականջը իմ խրատին մի՛

գոցեր· քանզի ո՛վ որ խրատին մտիկ չի տայ եւ գթացող բարեկամին յորդորը չ՛ընդունէ, նրան պատահում է ինչ որ կրիային պատահեց։ Դէյլումն հարցրեց· Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։ Էգն ասաց· Բերել են թէ· Մի լճակ կար որի ջուրը, մաքուր խղճի նման յստակ՝ անբիծ հայելիի նման ջինջ՝ եւ անուշութեամբ կենաց ջրի նման քաղցր եւ համեղ էր։ Նրանում ԵՐԿՈՒ ԲԱԴ ԵՒ ՄԻ ԿՐԻԱՅ բնակում էին։ Սրանք դրացութիւնում հաւատարիմ եւ ընկերակցութեան մէջ սիրով էին եւ միմեանց տեսութիւնը թանկ համարելով մտերմական ուրախ կեանք էին վարում։ Լաւ է այն կեանքը որ բարեկամների տեսութեամբ է անցնում· բարի է այն վայրկեանը որում սիրելիներ միմեաց են հանդիպում։ Յանկարծ սկսեց անգութ ժամանակաշրջանը նրանց անդորրութեան դէմքը արկածի ճանկերով ճանկռտել եւ պարզ երկնակամարը նրանց կենաց հայելիի վերայ բաժանման պատկերը նկարել։ Լաւ է միութեան սիրոյ բաժակին ըմպելը, սակայն ափսո՛ս որ բաժանման գլխացաւը նրան յաջորդում է։ Ո՛չ ոք չի կայ որ այս աշխարհի սեղանից մի պատառ հաց ծամէ եւ մի խիճ նրա ատամների մէջտեղ չի մնայ։ Այն ջուրը որ նրանց կեանքի եւ ապրուստի աղբիւրն էր, սկսեց զգալի նուազում կրել։ Բադերը երբ այս տեսան հայրենիքից սիրտ կտրելով գաղթել որոշեցին։ Պանդխտութիւնը հայրենիքից լաւ է, նրա համար որ հայրենիքում սիրտը միշտ այս ինչ եւ այն ինչ հոգսերով խոցոտվում է· թէեւ պանդխտութիւնը ունի իւր ցաւերը, սակայն դարձեալ հայրենիքի չարչարանքից լաւ է։ Արդ տխուր սրտով եւ արտասուալից աչքերով կրիային մօտ եկան մնաս բարեւ ասելու։ Ասացին· Ո՛հ, աշխարհքի չար աչքը մեզ քեզանից բաժանեց· այս չար աշխարհքի աչքը էլ ի՞նչեր չէ արել։ Կրիան բաժանման կսկիծից ճչեց եւ յուզուելով աղաղակեց· Ո՛հ, այս ի՞նչ էք ասում, առանց ձեզ իմ ապրելը ի՞նչպէս կարելի է խորհել, առանց մտերիմ ընկերի ի՞նչպէս կը յաջողուի ինձ կեանք վարել։ Առանց ձեզ կենդանութիւն կարելի չէ ինձ, առանց ձեզ ի՞նչ է կենդանութիւնը։ Ո՛ր կենդանութիւն որ առանց ձեզ լինի, նա մի մահ է որ կենդանութեան անունը ունի։ Քանի որ ես մնաս բարեաւ չեմ կարող դիմանալ, ապա բաժանման բեռը ի՞նչպէս պիտի կրեմ։ Դեռ իմ սիրելիները աչքից չի հեռացած իմ սիրտը անջատման մտածմունքով ուռենիի նման դողում է։ Բադերը պատասխանեցին· Մեր լեարդը բաժանման փուշերից ծակծկուել՝ եւ մեր սիրտը գալիք բացակայութեան բոցերով բռնկել է, բայց ինչ պէտք է անել որ երաշտութեան ճնշումը մեր գոյութեան հիւլէները չքացման քամիին է տալիս։ Այս պատճառաւ ստիպուել ենք բարեկամ եւ հայրենիք թողնելով պանդխտութեան դառնութիւնը ճաշակել։ Սրտաբեկ

սիրահարը կամաւ իւր սիրելիից չի հեռանում· եւ ո՛չ մէկը իւր ուզելովը եղեմական պարտիզից դուրս չի ելնում։ Կրիան ասաց· Ո՛վ ընկերներ, գիտէք որ ջրի նուազման վնասը իմ մասին աւելի է քան թէ ձեր, առանց ջրի իմ ապրելը կարելի չէ, մեր վաղեմի բարեկամութիւնը այդ է պահանջում որ ինձ ձեր հետ տանիք եւ այս վշտալի բաժանման մէջ ինձ մենակ չի թողէք· դուք իմ հոգիս էք եւ գնալ էք կամենում, երբ հոգին գնա, անհոգի մարմինը ի՞նչ անէ։ Ասացին· Ո՛վ մի հատիկ բարեկամ եւ անգին ընկեր, քեզանից բաժանուելու ցաւը՝ մեզ համար հայրենիքը ձգելու ցաւից աւելի է եւ քեզանից անջատուելու հոգսը մեր սրտին մշտատեւ դառն վիշտ է։ Մենք ուր որ գնանք, թէեւ կատարեալ բարեկեցութեան մէջ գտնուենք եւ ուրախ օրեր էլ անցկացնենք, դարձեալ քո բացակայութեան պատճառաւ մեր ուրախութիւնը անկատար՝ եւ մեր բաղդը կոյր կը լինի։ Մենք բաց ի քո ընկերակցութիւնից եւ խօսակցութիւնից ուրիշ փափաք չունինք· սակայն մեզ դժուար է երկրի վերայ քալելով ընդարձակ տարածութիւնները կտրել, օդի մէջ թռչելով մեզ ընկերանալն էլ քեզ անկարելի է· ուրեմն ընկերակցութիւն ի՞նչպէս կարելի է։ Կրիան ասաց· Այդ գործի ճարն էլ նորէն ձեր խելքը կարող է գտնել։ Ես բաժանման խորհրդածութիւններից հիւանդացած մի հոգիով եւ անջատման բեռան տակ կոտրուած մի սրտով ի՞նչ խորհուրդ կարող եմ անել։ Ամեն գործում նախ եւ առաջ սիրտ պէտք է, կոտրուած սրտից ուղիղ կարգադրութիւն յառաջ չի գալիս։ Ասացին· Ո՛վ պատուական ընկեր, մենք այս միջոցում քո վերայ փոքր ինչ թեթեւամտութիւն նշմարեցինք· վախենում ենք թէ դու մեր ասածը չի կատարես եւ մեր հետ արած ուխտդ չի պահես։ Կրիան ասաց· Մի՞թէ հնա՞ր է որ դուք իմ օգտի համար խօսք ասէք եւ ես դրա հակառակն անեմ կամ այն ուխտը որ իմ լաւութեան համար է չի կատարեմ, ես ուխտ եմ արել որ ամենեւին ուխտադրուժ չի լինեմ։ Բադերն ասացին· Պայմանը սա է որ, երբ քեզ վերցնենք եւ օդումը թռչելու լինենք, ամենեւին մի խօսք չ՛ասես· քանզի ամենի աչքը մեր վերայ պիտի ընկնի։ Պիտի սկսեն խօսել, մատնացոյց անել, ծաղրել, քամահրել եւ զարմանալ։ Ինչքան էլ նրանք խօսքով, շարժումով եւ ակնարկութեամբ մի բան իմանալ կամենան, դու բերանդ գոց պահես, ո՛չ լաւ ո՛չ գէշ մի բան չ՛ասես։ Կրիան ասաց· Հնազանդում եմ, անշուշտ լռութեան կնիքը իմ շրթունքների վերայ կը դնեմ եւ ո՛չ մի արարածի հակաճառութեանը պիտի չի պատասխանեմ։ Արդ նրանք մէկ ճիւղ բերեցին եւ կրիան իւր ատամներով ճիւղի մէջտեղից բռնեց կախուեց եւ բադերը ճիւղի երկու ծայրերից բռնած վերցնելով, նրան տարին օդին մէջ։ Եղաւ որ թռչելիս մի գիւղի

վերայից անցան։ Գիւղացիք նրանց տեսնելով զարմացած գիւղից դուրս եկան, աջ ու ձախ վազելով իրար կանչում եւ ասում էին. Տեսէ՛ք, բադերը կրիան ի՛նչպէս են տանում։ Եւ որովհետեւ ժողովուրդը այն օրերումը այդպիսի մի բան չէր տեսել. ուստի ամեն բերնից սկսեց մի ձայն գալ։ Կրիան մի ժամու չափ համբերեց, վերջապէս իր համբերութիւնը հատնելով ասաց. Կուրանա՛ այն աչքը, որ չէ տեսնում։ Հէնց որ բերանը բացաւ վերեւից վար ընկաւ։ Բադերն աղաղակելով ասացին. Բարեկամների պարտականութիւնն է խրատ տալ, եւ բարեբախտների պարտականութիւնը խրատը լսել. բարեկամեցողը խրատ է տալիս, բարեբախտն էլ խրատը ընդունում է. մեր բարեկամական խրատից քեզ ի՞նչ օգուտ, քանի որ դու դժբաղդ ես։ Այս առակի օգուտը սա է որ, ո՛վ որ բարեկամաց յորդորը չ'ընդունէ ինքը իւր կործանմանը գործակից կը լինի եւ ո՛վ որ պատուականների խօսքին մտիկ չէ տալիս նա շատ անգամ զղջման մատ կը խածնէ։ Արու դէյդուլն ասաց. Լսեցի քո բերած առակը եւ հասկացայ նրա նշանակութիւնը. սակայն դու մի՛ վախենար, քո տեղը պահի՛ր։ Երկչոտները երբեք իրանց նպատակին չեն հասնում։ Ծովապետը դէպ ի մեզ յարգանօք եւ զգուշութեամբ կը վարուի։ Էգը ձուերը ածեց, ձագիկները հաւկիթի սպիտակ շապիկը պատառելով դուրս եկան եւ ծովը իւր ալիքները զարնելով նրանց իւր կորուսիչ քղանցքի տակ ծածկեց։ Էգը այս դէպքը տեսնելով իւր սիրտը խռովեցաւ, ասաց. Հող քո գլխին, ես իմանում էի որ ջրի հետ խաղալ կարելի չէ. հիմա դու ձագիկները կորստեան ենթարկելով իմ հոգւոյն մէջ կրակ բորբոքեցիր, գոնէ այնպիսի մի կարգադրութիւն արա՛, որ իմ վիրաւորեալ սրտին մի դեղ լինի։ Արուն ասաց. Խօսքդ ճանաչի՛ր, ես նոյն ուխտի վերայ հաստատ եմ որ դու գիտես, ես իմ խօսքից դուրս չեմ գար, ծովապետից վրէժ պիտի լուծեմ։ Իսկոյն գնաց ուրիշ թռչունների մօտը եւ գտաւ ամեն դասակարգի թռչնոց պետերը, նրանց մէկտեղ ժողովելով իւր վիճակը պատմեց եւ նրանցից օգնութիւն խնդրեց, աղաչեց եւ ասաց. Վշտացեալի ցաւը չափից անցել է, օգնութեան եւ ողորմութեան ժամանակն է։ Ո՛վ յարգելիներ, եթէ հիմա ամէնքդ չի միաբանիք եւ իմ դատը ծովապետի հետ չի վարէք եւ նրանից հատուցում չ'առնէք, նրա յանդգնութիւնը գնալով պիտի աւելանայ եւ յետոյ պիտի սկսի ուրիշ թռչունների ձագերն ալ այդպէս անել. եթէ դրա առաջը չ'առնուի այդպէս անելը նրան սովորութիւն կը դառնայ։ Այն ժամանակ պէտք է զաւակներից ձեռք քաշել, բնակութիւններին եւ հայրենիքին մնաս բարեւ ասել։ Կա՛մ պէտք է հազարաւոր զոհերին համբերել եւ դիմանալ եւ կա՛մ պէտք է այս վշտապատ սահմաններում կորսուիլ։

Թռչունները այս բանից սաստիկ վշտացան եւ տաքացած թռան հասան թռչնոց թագաւոր «Սէյմուրղ»ի առջեւ։ Եղելութիւնը նրա առջեւը պարզելով ասացին. Եթէ քո հպատակները պաշտպանես կարող ես նրանց վերայ իշխել, իսկ եթէ զրկեալների աղաղակին կարեւորութիւն չես տալիս, այն ժամանակ թռչնոց թագաւորութիւնը քեզանից պիտի առնուի եւ նրանց պաշտպանութիւնը ուրիշի պիտի յանձնուի։ Քո հպատակներին հոգ տա՛ր, ժամանակաշրջանի ընկճումից վախեցի՛ր։ Սէյմուրղը նրանց համակրելով իւր փառաւորութեամբ եւ բանակովը մայրաքաղաքից դուրս ելաւ այդ խնդիրը վերջացնելու։ Թռչունները նրա ներկայութիւնով քաջասիրտ եղան եւ եկան հասան Հնդկական ովկիանոսի եզերքը։ Սէյմուրղը եւ նրա զինուորները, որ նրանց հաշիւը երբեք թուանշաններով նշանակել կարելի չէ եւ նրանց խումբերի թիւը խելքից եւ մտքից դուրս է, բոլորը քաջարի, համարձակ եւ արիւնարբու, ամենը պատկառելի, փորձառու, ոխակալ, սպառազինուած, փետուրից զրահներ հագած եւ իրանց կտուցն ու ճանկը իբրեւ նիզակ եւ դաշոյն պատրաստած ծովի եզերքը դիզուեցան։ Առաւօտեան ալեծածան զեփիւռը այդ լուրը ծովապետին հասցրեց։ Ծովապետը, որովհետեւ Սէյմուրղին եւ նրա բանակին դիմադրելու ոյժ չ'ունէր, ճարահատեալ ներողութիւն խնդրելով դէյդուլի ձագիկները ետ տուաւ։ Այս առակը առաջ բերելը դրա համար է որ ո՛չ մի թշնամին անարգ սեպել պէտք չէ, թէեւ նա տկար էլ լինի։ Փոքր ասեղով կարելի է այնպէս գործ կատարել որ երկարահասակ նիզակը տկար է մնում։ Մի կրակ, ինչքան էլ աչքին փոքր երեւնայ, դարձեալ իրան մոխրացողը այրում է։ Իմաստունները ասել են. Հազար անձի բարեկամութիւնը մէկ անձի թշնամութեան չափ չէ։

Շինզիւպէ ասաց. Պատերազմը ես պիտի չ'սկսեմ, որպէս զի ապերախտ չի կոչուիմ. բայց երբ առիւծը իմ վերայ յարձակէ, իմ անձը պաշտպանելը անհրաժեշտ է։

Տէմինէ ասաց. Երբոր առիւծի մօտը գնաս եւ տեսնես որ նա վեր ելած դէպ ի գետին փչում՝ եւ իւր բարկութեան հուրը իւր կրակոտ աչքերի նման բռնկում է, իմացի՛ր որ կամենում է քո վերայ յարձակիլ։

Շինզիւպէ ասաց. Եթէ այդ տեսակ մի բան տեսնուի, անշուշտ կասկածի քողը ստուգութեան երեսից վար կ'առնուի եւ առիւծի բռնադատութիւնը եւ անիրաւութիւնը կը յայտնուի։

Տէմինէ ուրախանալով, նոր եռանդով գնաց Քէլիլէի քով։ "Այն անխելքը՝ որի ուրախութիւնը ուրիշների վնասին վերայ է, նա իրաւունքի եւ հաւատարմութեան սահմաններից դուրս է։„

Քէլիլէ հարցրեց. Գործը ո՞ւր հասաւ եւ խնդիրը ի՞նչպէս վերջացաւ։

Տէմնէ պատասխանեց. Բախտից գոհ եմ եւ աշխարհքից էլ: Փառք Աստուծոյ, կատարեալ յաջողութիւն ունեցայ եւ այս գործը շատ հեշտութեամբ կատարուեցաւ: Տէմնէ այս էր ասում եւ ժամանակաշրջանը հասուցման լեզուով՝ իմաստունների ականջին այս տաղն էր կարդում. “Բանիբունները մատուակի վարսից լաւ բռնեցին. միայն թէ Երկինք թողնէր նրանց հաստատ կենալ:„ Այդ երկուքը միասին գնացին առիւծի մօտ: Պատահմամբ եզը նրանց հեռուից եկաւ եւ առիւծի աչքը եզին ընկնելով Տէմնէի նենգութիւնը գործադրուեցաւ: Առիւծը մանչելով կամենում էր վրէժ լուծել եւ իր սաստիկ բարկութիւնից ատամները կճրտացնում էր: Շենզիբեպէ հասկացաւ թէ առիւծը իր վերայ յարձակել է ուզում, ինքնիրան ասաց. Թագաւորաց ծառայութիւնը ահով եւ երկիւղով է եւ իշխանաց ծառայութիւնը վախով եւ սարսափով, օձի հետ բնակելու եւ առիւծի հետ դրացութիւն անելու է նմանում. Թէեւ օձը քնացած եւ առիւծը մրափած էլ լինի, մէկը գլուխ կը բարձրացնէ եւ միւսը բերան կը բանայ: Ինչպէս որ ասել են. Թագաւորաց ծառայութիւն մի՛ աներ. քանզի վախենում եմ որ քարի եւ կուժի խօսակցութեանը նմանի: Այս խորհելով պատրաստւում էր պատերազմ անելու:

Երկու կողմից այն նշանները, որ Տէմնէ նրանց ցոյց տուել էր, տեսնուեցան եւ ապա սկսեցին պատերազմել: Յարձակումների եւ աղաղակների ձայնը երկիրը տարածուեցաւ եւ երկինքը ելաւ, նրանց կռուի սարսափից այն դաշտի եւ անտառի բոլոր գազանները եւ անասունները ցրուեցան եղան. ոմանք ապաստանում էին լեռների խոռոչներում եւ ոմանք էլ փուշերի տակ էին պահվում: Քէլիլէ այս տեսարանը տեսնելով Տէմնէին դարձաւ, ասաց. Հազար նենգութիւնը եւ խաբէութիւնը իրար խառնելով քո անձը մէջտեղից դուրս հանեցիր: Ո՛վ ագէտ, տեսնո՞ւմ ես քո գործի աղէտալի վախճանը, եւ քո արածի չար արդիւնքը ճանաչու՞մ ես, թէ ո՛չ:

Տէմնէ հարցրեց. Ո՞րն է աղէտալի վախճանը:

Քէլիլէ ասաց. Այս գործը, որ դու արիր, նրանում եօթը վնաս յայտնուում է: Ա. Անկարեւոր տեղը քո բարերարը նեղութեան ենթարկեցիր եւ առիւծի անձին զօրաւոր ցաւ հասցրիր, Բ. Քո տէրը այն աստիճանին հասցրիր որ նա ուխտադրուժ եւ դաժանաբարոյ կոչուեցաւ եւ դու այս անունը նրան արժան համարեցիր, Գ. Պատճառ եղար եզին անմեղ արեանը թափուելուն եւ նրան կորստեան փոսը գցեցիր, Դ. Այն անմեղի արիւնը, որ քո աշխատութեամբը պիտի թափուի, քո վիզը առիր, Ե. Ժողովուրդը թագաւորի դէմ կասկածի ենթարկեցիր, կարելի է նրանք ահուց հայրենիքը թողնելով ուրիշ երկիր գնան եւ իրանց

տացուածքից եւ բնակարաններից զրկուելով գաղթականութեան դժուարութիւնը կրեն եւ պանդխտութիւնում նեղութիւն քաշելով թշուառանան, Զ. Գազանների զօրաբանակի ընդհանուր հրամանատարը կորստեան մատնեցիր: Անշուշտ, սրանից յետոյ նրանց կազմակերպութեան կապը պիտի խզուի եւ անկարգութիւն պիտի տիրէ: Է. Քո տկարութիւնը եւ թերութիւնը յայտնի արիր եւ այն դատը, որի մասին ես քեզ ընկերական խրատ տուի որ քաղցրութեամբ վարես, գլուխ չի հանեցիր: Մարդկանց յիմարագոյնը նա է որ քնացած երկպառակութիւնը արթնացնում է եւ այն կարեւոր խնդիրը որ քաղցրութեամբ է կատարւում վէճով եւ կռիւով է վերջացնում:

Տէմնէ ասաց. Միթէ դու չե՞ս լսել որ ասել են. “Ինչ գործ որ խելքով չի կատարւում, պէտք է խենդութեամբ կատարել:„

Քէլիլէ ասաց. Դու այս գործումը խելքի առաջնորդութեամբը ի՞նչ կարեւոր միջոցներ՝ եւ իմաստուն կարգադրութեան օգնութեամբը ի՞նչ ծրագիր պատրաստեցիր, որ յառաջ չի գնաց եւ կարօտ եղար խիստ եւ վնասակար միջոցներ ձեռք առնելու: Միթէ չե՞ս իմանում, որ ճշմարիտ խորհուրդը եւ բարի կարգադրութիւնը ոյժն ու քաջութիւնը գերազանցում են: Այն գործերը որ կատարեալ խելացին խօսքով է կատարում, հարիւր քաջ բանակներ չեն կարող կատարել: Քո հպարտութիւնը եւ եսականութիւնը արդէն ինձ յայտնի էր: Ես իմանում էի թէ դու ի՛նչպէս խաբուել ես այս խաբեբայ աշխարհի բաներին, որ նման է ջրի վաղանցիկ ալիքներին. սակայն ես քեզ համբերում էի, ասելով, թերեւս դու ինքդ կ'զգաս, եսականութեան քունից կ'արթնանաս, ինքնահաւանութեան գինովութիւնից կ'սթափուես եւ քո յիմարութեան վերայ խորհելով կ'զգաստանաս. բայց դու ծայրահեղութեան գնացիր եւ մինչ մոլորութեան անապատում եւ գեհենական խորխորատում սատանդական թափառում ես: Ուրեմն հիմա ժամանակն է որ քեզ, քո վերջին աստիճան ագիտութեանը, խաւարարտութեանը, ծայրայեղութեանը, յանդգնութեանը եւ լրբութեանը մասին, փոքր ինչ տեղեկութիւն տամ: Քո անօթալի խօսքերից եւ զզուելի գործերից մի քանի բան, թէեւ բաղդատմամբ ծովից մի կաթիլ՝ եւ լեռնից մի հիւլէի չափ է, պիտի յիշեմ. որպէս զի իմանաս թէ ի՛նչեր ես արել եւ ի՛նչ անօրէնութիւններ ես գործել որ դու նրանց ո՛չ մի բան չես համարում, նրանք կան, բայց դու քո վերայ չես առնում:

Տէմնէ ասաց. Ո՛վ եղբայր, ես չեմ կարծում որ իմ կեանքի սկիզբից մինչեւ հիմա ինձանից մի անարժան խօսք եւ մի անվայել գործք յառաջ է եկել: Եթէ դու իմ վերայ մի յանցանք տեսել ես, խնդրում եմ որ յայտնես:

Քէլիլէ ասաց․ Դու շատ յանցանքներ ունիս, առաջինը սա է որ դու քեզ անմեղ ես համարում, երկրորդը նա է որ քո խօսքը յաղթահարող է։ Ասել են թէ․ Մի թագաւորի համար դրանից վտանգաւոր բան չի լինիր, որ նրա խորհրդականի խօսքը գործի վերայ յաղթահարող լինի։ Աշխարհի մարդիկ խօսքով եւ գործքով չորս դասակարգի են բաժանւում։ Ա․ Նրանք են, որ ասում են եւ չեն անում․ սա կեղծաւորների եւ նախանձոտների յատկութիւնն է։ Բ․ Նրանք են, որ չեն ասում եւ անում են․ սա ազնուաբարոյների եւ քաջերի բնաւորութիւնն է։ Գ․ Նրանք են, որ ասում են եւ անում են․ սա իրանց շահը որոնող մարդկանց սովորութիւնն է։ Դ․ Նրանք են, որ չեն ասում եւ չեն անում․ սա էլ ցածահոգիների եւ կարկամների վարքն է։ Դու այն դասակարգին ես վերաբերում որ ասում են եւ իրանց ասածը չեն կատարում։ Ես միշտ քո խօսքը քո գործից աւելի եմ գտել եւ հիմա առիւծը քո աւանդութեանը խաբուելով այս տեսակ վտանգաւոր ճգնաժամի է եկել։ Աստուած մի՛ արասցէ, եթէ նրան մի վնաս հասնի, այս երկիրը տակնուվերայ կը լինի, հպատակաց խռովութիւնը եւ խառնակութիւնը չափից կ'անցնի, բոլոր հոգիները եւ ինչքերը կորստեան եւ աւարի կը տարուին եւ այս բոլոր թշուառութեանց մեղքը քո վիզը կը լինի․ քանզի ո՛վ որ չար է խորհում կամ չար է գործում նա բարութեան երեսը ո՞ւր կը տեսնի, վնասի տունկը տնկողը օգտի պտուղը ո՞ւսկից կը քաղէ։

Տէմնէ ասաց․ Ես միշտ թագաւորին խրատատու խորհրդական եմ եղել եւ նրա մտքի պարտէզում բաց ի խրատի տունկից ուրիշ բան չեմ տնկել։

Քէլիլէ ասաց․ Այն տունկը, որի պտուղը այս տեսնուող գործն է, լաւ է որ արմատից խլուի եւ այն խրատը որի հետեւանքը այս տեսնուածն է, չ'ասուի եւ չի լսուի լաւ է։ Քո խօսքից ի՞նչպէս օգուտ յառաջ կը գայ, քանի որ գործքով զարդարուած չէ։ Առանց գործքի գիտութիւնը առանց մեղրի խորիսխի է նմանում, որ երբեք համ չ'ունի։ Առանց գործքի ասացուածքը, նման է անտերեւ եւ անպտուղ ծառին, որ բաց ի այրելուց ուրիշ բանի պէտք չի գար։ Գիտութիւնը, որ գործի նշանները չ'ունի, նման է մի դիակին, որ հոգի չ'ունի։ Գիտութիւնը ծառ է եւ գործքը նրա պտուղը, ծառը ինչպէս պտուղի համար է։ Ճիւղը, որ անպտուղ լինի, անհաճելի է եւ մինակ կրակին պէտք կը գայ։ Մեծերը իրանց ցուցակի թերթերումը շնորհքի գրիչով այսպէս են գրել թէ․ Վեց բանից օգուտ քաղել անկարելի է։ Ա․ Խօսքից, որ առանց գործքի է, Բ․ Ասացուածքից, որ արդար վաստակ չէ, Գ․ բարեկամից, որ փորձառու չէ, Դ․ Բարերարութիւնից, որ

անխորհրդարար է, Զ․ Կեանքից, որ վատառողջ է։ Թէպէտեւ թագաւորը անձամբ արդար եւ բարի էր բայց չարամիտ եւ յոռեսիրտ խորհրդականը հպատակներին նրա արդարութեան եւ բարութեան օգուտներից զրկեց եւ նրա երկիւղից ու ահից ճնշուածների տխրալի պատմութիւնը արքունական դահին չի հասաւ։ Ինչպէս մի անոյշ եւ յստակ ջրում կէտ ձկան պատկերը երեւնալիս՝ ո՛չ մի ծարաւ լողացողը, ինչքան էլ նրա ծարաւը սաստիկ լինի, ո՛չ կարող է ձեռք զարնել, ո՛չ էլ նրա եղերքը ոտք կոխել։ Ինչպէս որ մի բանաստեղծ ասել է․ “Հասել եմ ես, ծարաւից այրուած սրտով, մի յստակ աղբիւրին․ սակայն ի՞նչ օգուտ որ խմել չեմ կարողանում։„

Տէմնէ ասաց․ Այս գործումը բաց ի թագաւորի ծառայութեանը արժանանալուց մի ուրիշ նպատակ չունէի։

Քէլիլէ ասաց․ Ըստ բնականի ծառաները, գործունեայ պաշտօնեաները, աչքաբաց սպասաւորները թագաւորաց արքունի զարդերն են, բայց դու կամենում ես որ ուրիշները առիւծի ծառայութիւնից հեռանան եւ դու նորին վեհափառութեան վստահելին լինիս եւ նորին մեծութիւնը միայն քեզնից կախում ունենայ, այս բանը չափազանց տգիտութեան եւ անխելքութեան արդիւնքն է․ քանզի թագաւորները ո՛չ մի բանով եւ ո՛չ մի անձով չեն կապուիլ։ Թագաւորութեան աստիճանը գեղեցկութեան է նմանում․ ինչպէս որ մի հրապուրիչ գեղեցիկը ինչքան էլ շատ սիրահարներ ունենայ, նրա գեղեցկութեան հրապոյրը նորէն աւելի սիրահարներ է անում․ թագաւորն էլ ինչքան պաշտօնեաներ եւ սպասաւորներ ունենայ, դարձեալ նրա աչքը իրան պաշտօնեաների թիւը շատացնելու եւ իր փառքը ճոխացնելու վերայ է։ Այս փուճ փափաքը, որ դու ունիս, յայտնի ապացոյց է քո վերջին աստիճանի տգիտութեան։ Ինչպէս որ իմաստունները ասել են․ Յիմարութեան նշանները այս հինգ բաներն են։ Ա․ Իւր օգուտը ուրիշների վնասումը որոնել, Բ․ Առանց իւր անձը ճնշելու եւ Աստուածպաշտութեան հետեւելու հանդերձեալումը հանգստութիւն սպասել, Գ․ Դառն խօսքերով եւ դաժան բնաւորութեամբ կանանց հետ սիրոյ տենչութիւն անել, Դ․ Մարմնոյ հանգիստը որոնելով գիտութեան նուրբ բաները ուսումնասիրել, Ե․ Առանց հաւատարմութեան եւ իրաւապահութեան մարդկանցից բարեկամութիւն եւ օգնութիւն սպասել։ Ես քո վերայ շատ եմ խղճում եւ դրա համար այս խօսքերն ասում եմ, բայց արեգակի պէս պարզ է որ քո չարութեան խաւար գիշերը, իմ քարոզութեան ճրագովը պիտի չի լուսաւորուի, եւ նախանձի, ատելութեան եւ յիմարութեան մշուշը որ քո անձը պատել է, իմ յորդորանքի ճառագայթներովը պիտի չ'անհետանայ։ Իմ եւ քո

վիճակը նման է այն դէպքին որ մի թռչուն ուրիշ թռչուններին ասում էր․ Մի՛ չարչարուիր եւ քո խօսքը մի՛ կորանցներ մի խումբի համար որ լսելու մտադիր չեն, բայց նա ականջ չի դրաւ մինչեւ որ իւր պատիժը գտաւ։

Տէմինէ հարցրեց․ Ինչպէս է եղել այդ դէպքը։

Քէլիլէ ասաց․ Բերել են թէ․ ԿԱՊԻԿՆԵՐԻ մի ժողովուրդը մի սարի կողքումը բնակում՝ եւ այն տեղի պտուղներով եւ ընդեղէններով ապրում էին, յանկարծ եղեռնագործների սրտի նման սեւ՝ եւ դատարկապորտ մարդկանց ներսի նման մթին մի գիշերում սառնամանեաց բանակը նրանց վերայ յարձակեց։ Ցրտի սաստկութիւնից նրանց սրտումը արիւն էր կաթում, Համառտեղութեան առիւծը պաղատում էր մի մուշտակի համար որ իր անձը ցրտի դէմ պաշտպանէ, պարտեզի թռչունները իրանց ոտքերի վերայ ցրտից խորովում էին, ինչպէս խորովածը շամփուրի վերայ, խեղճ կապիկները ցրտի դէմ մի ապաստանարան որոնելով ամեն կողմ շրջում էին։ Այս միջոցում ճանապարհի մի կողմում մի կտոր եղէգ տեսան որ փայլում էր, կրակ կարծելով փայտեր հաւաքեցին, բերեցին եւ նրա բոլորտիքը շարելով սկսեցին փչել եւ նրանց դէմը մի թռչուն մի ծառի վերայից կանչում էր թէ․ Նա կրակ չէ․ սակայն նրանք ուշադրութիւն չէին դարձնում եւ իրանց անօգուտ աշխատանքից յետ չէին կենում։ Այս միջոցում մի ուրիշ թռչուն այնտեղ հասնելով, թռչունին ասաց․ Մի՛ չարչարուիր, նրանք քո խօսքով իրանց գործից ետ չի պիտի կենան, ի զուր քո անձը նեղում ես։ Ո՛վ որ գործի սկզբումը ձախորդութեան է հանդիպում, նրանից ձեռք քաշի՛ր․ քանզի նա քո խօսքով յաջողակ չէ լինում։ Այս տեսակները կրթելու եւ դաստիարակելու ջանացողը, նման է նրան, որ սուրը ապառաժի վերայ է փորձում եւ սպանիչ թոյնից սպեղանիի յատկութիւն է պահանջում։ Ո՛վ որ բնականից չար է նրանից բարութիւն չի յուսացուիր, ինչպէս որ ճիգ եւ ջանքով սեւ ագռաւից սպիտակ բաղէ չի լինում։ Թռչունը երբ տեսաւ որ նրանք իրան խօսքերը չեն լսում, նրանց վերայ գթալով ծառից վար իջաւ որ իւր յորդորը նրանց ականջին լաւ հասցնելով նրանց այդ պարապ աշխատութիւնից ազատէ։ Կապիկները թռչունի բոլորտիքը հաւաքուելով նրա գլուխը մարմնից փրցուցին։ Իմ եւ քո վիճակն էլ այնպէս է։ Ես իմ ժամանակը վատնում եւ զուր տեղ քեզ խօսք եմ ասում, որ քեզ օգուտ պիտի չ'անէ եւ ես էլ վնասից վախենում եմ։ Ինչպէս որ ասել են․ "Եթէ լսողը խրատը չէ ընդունում, Ի՛նչ պէտք է ի զուր տեղ քո փափուկ սիրտը բեռնաւորես։ Ասում ես թէ․ 'Յաջողութեան ձիու վերայ հեծիր որ նպատակին հասնես եւ նեղութիւնից ազատուես,' բայց նա չի լսում եւ

դնում է իւր ճանապարհը։ Թո՛ղ չարչարուի այդ յիմարը, որ ուզում է ոտքով քայլել։

Տէմինէ ասաց․ Ո՛վ եղբայր, մեծերը խելացիներին հաւատարմաբար եւ անխոնջ կերպով խրատել եւ յորդորել են առանց երեսպաշտութեան եւ աչառութեան, եւ դատողութեան տէր անձերը սովոր են միշտ խրատել եւ յորդորել, թէ՛ լսեն եւ թէ՛ չի լսեն։ Ինչպէս որ ասել են․ Քո խրատը ո՛չ ոքից մի՛ խնայեր, այլ ասա՛, թէեւ լսողը չ'ընդունի էլ։ Ամպը անձրեւի կաթիլները սարից չէ խնայում, թէեւ նրանք ապառաժի սրտում չեն հասնիր։

Քէլիլէ ասաց․ Ես խրատի դուռը քեզ դէմ չեմ փակում, սակայն վախենում եմ որ դու քո սկզբունքի հիմը նենգութեան եւ կեղծաւորութեան վերայ դրել, կամակորութիւնը եւ ինքնահաւանութիւնը քեզ բնութիւն ես արել․ ժամանակին պիտի զղջաս եւ զղջումը օգուտ պիտի չ'անէ, ինչքան էլ ափսոս քաշես եւ կուրծք ծեծես օգուտ պիտի չի բերէ։ Ինչ գործի հիմը որ նենգութեան եւ զրկողութեան վերայ դրուած է, նրա վախճանը զղջում եւ ափսոս կը լինի։ Ինչպէս որ այն ճարպիկ ընկերին պատահեցաւ եւ իւր նենգութիւնը որոգայթ լինելով իւր վիզը անցաւ, բայց պարզամիտ ընկերը ուղղութեան եւ միամտութեան շնորհիւ իւր նպատակին հասաւ։

Տէմինէ հարցրեց․ Ինչպէս է պատահել այդ դէպքը։

Քէլիլէ ասաց․ Բերել են թէ․ ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ կային, մէկը խելացի միւսը պարզամիտ։ Խելացին, որ իւր ճարպիկութեան եւ վարպետութեան չափազանցութիւնից վազուն ջրի վերայ հազար գոյներ էր նկարում, Սրամիտ էին ասում։ Պարզամիտին, որ իւր անխոհութեան եւ յիմարութեան չափազանցութիւնից օգտի եւ վնասի տարբերութիւնը չէր իմանում, Զուարթամիտ էին ասում։ Այս երկուսը մտադրեցին վաճառականութիւն անել եւ միատեղ ճանապարհորդելով շատ ասպարէզներ կտրեցին։ Պատահմամբ ճանապարհի վերայ մի պարկ լեցուն ոսկի գտան, սրա վերայ ուրախանալով կանգ առին։ Խելացին ասաց․ Եղբա՛յր, աշխարհքումը վաճառականութիւն չ'անողներ շատ են, այժմ մենք այս մի պարկ ոսկին բաւական սեպելով մեր տնակի անկիւնումը հանգստութեամբ ապրենք։ Ինչպէս որ ասել են․ Մինչեւ ե՞րբ շրջիս աշխարհքը ոսկիի համար։ Ինչքան որ ոսկին աւելանում է, այնքան էլ հոգսը շատանում։ Ուստի յետ դառնալով քաղաքի մօտը մի իջեւանում վար իջան։ Պարզամիտն ասաց․ Ե՛կ, այս ոսկին բաժանենք եւ մեզանից իւրաքանչիւրը իւր բաժնին տէրը լինելով իւր ուզածին պէս գործածէ եւ հոգսից ազատի։ Խելացի ընկերը պատասխանեց․ Հիմա բաժանելը լաւ չէ, այլ լաւը այն է որ մեր ծախսին պէտք եղածին չափ վեր առնենք իսկ մնացածը

մի ապահով տեղ պահ դնենք եւ երբեմն երբեմն մեզի ինչքան փող պէտք լինի, գնանք նրանից վեր առնենք, իսկ գլխաւոր գումարը թող նոյն կերպով պահուի. որպէս զի արկածից աւելի հեռի եւ ապահովութեան աւելի մօտ լինի։ Տգէտ ընկերը այս գիտութեան խաբուելով եւ այս չինծու կարգադրութիւնը սիրով ընդունելով, պէտք եղածին չափ փողից վեր առին, մնացածը միատեղ մի ծառի տակ թաղելով վերադարձան քաղաք, իրանց բնակարանները։ Հետեւեալ օրը, երբ գերասան երկնակամարը իւր խաբէութեան վարագոյրը բացեց, այն ընկերը, որ ինքնիրան ճարպիկ էր սեպում, եկաւ ծառի տակից ոսկիները հանեց, տարաւ։ Պարզամիտ ընկերը՝ այդ բանից անտեղեակ, իւր մօտը գտնուած փողը ծախսում էր։ Երբոր հատաւ, խելացի ընկերոջ մօտ գնալով ասաց. Պահուածից մի բան հանենք, քանզի ես շատ պէտք ունիմ։ Ճարպիկ ընկերը, ինքնիրան չի գիտնալու տալով, ասաց. Լաւ, գնանք։ Երկուսը միասին եկան ծառի տակը եւ ինչքան որ որոնեցին ոչինչ չի գտան։ Սրամիտը Ջուարթասրտի օձիքից բռնեց ասելով. Ոսկին դու ես տարել, ուրիշ ո՛չ ոք տեղեկութիւն չ՚ունէր։ Խեղճը ինչքան էլ երդում կերաւ եւ ինքնիրան չարչարեց օգուտ չեղաւ, վերջապէս նրանց գործը վէճից կռուի փոխուեցաւ եւ կռուից դատաւորութեան։ Ճարպիկ ընկերը այն պարզամիտին դատաւորին առաջը բերեց եւ նրա հետ դատ վարեց։ Երբոր խնդրի ամբողջ բովանդակութիւնը դատաւորին ականջին հասաւ, Ջուարթասիրտը ուրանալուց յետոյ, սրամիտ դատաւորը Սրամտից իւր դատին նպաստաւոր հաստատ ապացոյց պահանջեց։ Սրամիտը ասաց. Ո՛վ դատաւոր, Բարձրեալն Աստուած քեզ միշտ մնայուն պահէ եւ քո կեանքը դատաստանի աթոռի վերայ երկարակեցութեամբ պսակէ։ Ես բաց ի այն ծառից, որի տակումը ոսկին պահել էինք, ուրիշ վկայ չունիմ։ Յոյս ունիմ որ արդարն Աստուած իւր կատարեալ կարողութեամբ այն ծառը խօսել պիտի տայ, որպէս զի այս ապերախտ եւ անխիղճին դէմ, որ ոսկիները տարել եւ ինձ զրկել է, վկայէ։ Դատաւորը այս խօսքի վերայ զարմացաւ։ Շատ վէճերից եւ հակառակութիւններից յետոյ, որոշեցին որ հետեւեալ օրը դատաւորը ծառի տակը ներկայ գտնուելով ծառից վկայութիւն պահանջէ, եթէ նրա վկայութիւնը խնդիրը հաստատէ, ըստ այնմ վճիռ տայ։ Ճարպիկ ընկերը գնաց տուն, բոլոր եղելութիւնը հօրը պատմելով խնդիրը նրա առջեւ պարզեց եւ ասաց. Հայրի՛կ, ես քեզ վստահելով վըկայութիւնը ծառին եմ կապել եւ քեզ յուսալով այս խաբէութեան տունը դատարանում անկել եմ։ Ուրեմն խնդիրը քո գթութիւնից կախում ունի, եթէ համաձայնիս այս ոսկին կը շահենք եւ մեր կենաց մնացած օրերը խաղաղութեամբ եւ հանգստութեամբ

կ՚անցկացնենք։ Հայրը ասաց. Այս կարեւոր գործում ինձ ի՞նչ անել է պատկանում։ Որդին ասաց. Այն ծառի մէջը դատարկ է՝ այնպէս որ եթէ երկու մարդ այնտեղ պահուեն՝ պիտի չի տեսնուեն։ Պէտք է այս գիշեր գնաս այն ծառի մէջտեղում պահուես, որպէս զի էգուց երբոր դատաւորը գայ եւ վկայութիւն պահանջէ պէտք եղած վկայութիւնը տաս։ Հայրը ասաց. Որդի՛ս, խարդախ գործերից հրաժարի՛ր։ Եթէ մարդին խաբելու էլ լինես, Աստուծոյն չես կարող խաբել, Երկնաւոր դատաւորը քո գաղտնիքները իմանում է, Նա իւրաքանչիւր մազը եւ իւրաքանչիւր երակը ճանաչում է։ Գիտցիր թէ, դու արարածը խաբեցիր, Նրա առջեւը ի՞նչ կ՚անես, որ ամէն բաները մէկիկ մէկիկ գիտէ։ Ի՛նչքան խաբէութիւններ իրանց հնարիչին յետ են դարձել եւ խաբողը իւր արածի հատուցումը գտնելով խայտառակ է եղել։ Ես վախենում եմ որ քո խաբէութիւնը գորտի խաբէութեան նման լինի։ Որդին հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։ Հայրը ասաց. Բերել են թէ. ՄԻ ԳՈՐՏ մի օձի բնակութեան մօտ իւր տունը շինել էր եւ այն արիւնահեղ բռնաւորին մօտը բնակելով երբ ձագ էր հանում, օձը ձագերը ուտելով նրա սիրտը որդիական ցաւով այրում էր։ Այս գորտը մի խեցգետնի հետ բարեկամութիւն ունէր։ Մի օր նրան այցելելով ասաց. Ո՛վ հաւատարիմ ընկեր, ինձ մի լաւ խորհուրդ տո՛ւր, քանզի մի զօրեղ եւ բռնակալ թշնամի ունիմ. ո՛չ կարող եմ նրա մօտ բնակիլ եւ ո՛չ էլ այնտեղից մի ուրիշ տեղ գաղթել. քանզի այն տեղը՝ ուր որ իմ բնակարանը հաստատել եմ՝ շատ զուարճալի եւ առողջարար տեղ է, մի վարդանոց է, որի զմայլելի տեսքը դրախտի նման հոգին ուրախացնում՝ եւ նրա սիրտ զուարթացնող զեփիւռը գեղեցկուհիների օծուած վարսի նման անոյշ հոտ է բուրում, հազարաւոր վարդեր բացուած, մարգագետինը արթուն եւ ջրերը քնացած, իւրաքանչիւր մի վարդ մի սքանչելի գոյն զգեցած եւ ամէն մի վարդի հոտը մի փարասախ տեղ է հասնում, վարդի գիրքը հարիւր թերթ բացած, կակաչը իւր ափում գինւոյ բաժակը բռնած եւ հիւսիսային հողմը յամպար է ցանում։ Ո՛չ ոք այսպիսի մի բնակութիւնը կամաւ չի ձգում, ո՛չ էլ կարող է այսպիսի դրախտանման հայրենիքից իւր սիրտը կտրել։ Իմ տեղը մի մոգական վայր է, ո՛հ, ի՛նչ գեղեցիկ տեղ է. ո՛չ մի խելացի աշխարհքումը այսպիսի տեղը չէ ձըգում։ Խեցգետինը ասաց. Հոգ մի՛ անիր, զօրաւոր թշնամին նենգութեան խաբանով կապել՝ եւ ուժեղ հակառակորդը խաբէութեան որոգայթում գցել կարելի է, եթէ մէկը խորամանկութեան հատիկները ունենայ, կարող է շատ ճարպիկ թռչունները որսալ։ Գորտը ասաց. Դու այս խնդրի մասին նենգութեան գրքից ի՞նչ դասեր ես ուսումնասիրել եւ այս չարակամ

թշնամիի հոգսից ազատելու համար ի՞նչ բան գիտես: Խեցգետինը ասաց. Այս ինչ տեղ մի աքիս կայ, որ շատ դիւրագրգիռ եւ կռուարար է, մի քանի ձկներ բռնելով նրանց սպանի՛ր եւ աքիսի ծակի առջեւից մինչեւ օձի բոյնը, ճանապարհի վերայ շարի՛ր, որպէս զի աքիսը նրանցից մէկ մէկ ուտելով մինչեւ օձին ծակը հասնի եւ նրան էլ ուտելով քեզ նրա վնասից ազատէ: Գորտը այս հրահանգի համեմատ անելով օձին կորցրեց: Մի քանի օրից յետոյ աքիսը ձուկ որոնելու ելաւ, եւ իր սովորութեան պէս նոյն ճանապարհով գնաց, ուր տեղ որ ձկները դրել էր, երբոր ձուկ չի գտաւ, գորտին իր ձագերին հետ միասին կերաւ: Գորտի վերջին խօսքը այս եղաւ. "Դու էիր ինձ գայլի ճանկերից ազատողը, սակայն տեսնում եմ որ դու էլ գայլ ես եղել:„ Այս առակը դրա համար բերեցի որ գիտենաս թէ խարդախութեան վախճանը խայտառակութիւն՝ եւ նենգութեան հետեւանքը զղջում եւ կործանում է: Նենգութեան դաշտումը մի՛ քալեր, քանզի վերջապէս արկածի թակարդը կ՚ընկնիս: Որդին ասաց. Հա՛յր, քո խօսքը կարճ արա՛, երկար բարակ մտածելը դադրեցո՛ւր: Այս գործումը քիչ յոգնութիւն եւ շատ օգուտ կայ: Հարստութեան ագահութիւնը եւ զաւակի սէրը խեղճ ծերունիին ուղղութեան ճանապարհից շեղեցնելով մոլորութեան անապատը տարան: Նա մարդասիրական պարտականութիւնը զանց առնելով եւ ազնուաբարոյութեան գորգը տիղմի վերայ փռելով՝ այս տեսակ ապօրինաւոր, վտանգաւոր եւ ստորին գործը կատարել յանձն առաւ եւ այն գիշեր միզապատ խղճով եւ դողդոջուն սրտով ծառի մէջտեղում անցկացրեց: Առաւօտեան երբոր լուսամիտ դատաւոր արեւը երկնից դատարանի վերայ յայտնուեց եւ խաւար գիշերի ապերախտութիւնը իր երեսը աշխարհայիններից թաքցնելով պարզ ցերեկ եղաւ, դատաւորը մի խումբ բարեկամների հետ միասին ծառի տակը ներկայացաւ: Բազմութիւնը կարգ կարգ շարուելով կանգնեցան: Դատաւորը ծառին դառնալով դատախազին պահանջը եւ ամբաստանուածին ուրանալը պարզելով ծառից հարցում արաւ: Ծառից մի ձայն եկաւ թէ. Ոսկին Ջուարթամիրտը տարել՝ եւ իր ընկեր Սրամիտին զրկել է: Դատաւորը զարմացաւ, սակայն հասկացաւ որ ծառի մէջտեղը մէկը պահուած է բայց նրան յայտնի անելը առանց իմաստուն կարգադրութեան պիտի չի յաջողուի: Իւրաքանչիւր շունչի գաղտնիքը, որ աչքից պահուած է, բաց ի խորհուրդի հայելիից ուրիշ բանի վերայ յայտնի չէ լինում: Դատաւորը հրամայեց, մարդիկ շատ փայտ բերեցին եւ ծառի բոլորտիքը դիզելով կրակ տուեցին, մինչեւ որ այն հում եւ խակ գործի տիրոջ անիցը ծուխը վեր բարձրացաւ: Ագահ ծերուկը մի ժամ համբերեց, բայց երբ տեսաւ որ բանը

հոգւոյն եւ դանակը ոսկորին հասաւ, օգնութիւն խնդրեց: Դատաւորը նրան դուրս հանելով մխիթարեց եւ իրողութիւնը հարցրեց: Խանծուած ծերունին բոլոր ճշմարտութիւնը յայտնեց: Դատաւորը խնդիրը հասկանալով, Պարզամիտին հաւատարմութիւնը եւ անկարողութիւնը իսկ Սրամիտին ապերախտութիւնը եւ անիրաւութիւնը ժողովրդի առջեւը պատմեց: Այս միջոցում նենգաւոր ծերունին անցաւոր աշխարհից յաւիտենականութեան փոխադրուելով աշխարհի կրակի տաքութիւնով մէկտեղ հանդերձեալի հուրի բոցերին հետ միացաւ: Որդին էլ ծանր պատիժ կրելուց եւ սաստիկ յանդիմանութիւն ընդունելուց յետոյ, մեռեալ հօրը շալկելով քաղաքը բերեց, իսկ Ջուարթամիրտը իրան հաւատարմութեան, ուղղութեան եւ բարեպաշտութեան համար իւր ոսկին ձեռք բերելով իւր գործով զբաղեց: Այս առակի արդիւնքը սա է որ մարդիկ գիտենան թէ նենգութեան վախճանը անհաճելի՝ եւ զրկողութեան հետեւանքը զզուելի եւ սարսափելի է: Ո՛վ որ նենգութեան ճահիճում ոտք է կոխում, նա վերջապէս կործում է: Խաբէութիւնը մի օձ է որ երկու գլուխ ունի եւ ամեն մէկը մի տեսակ վտանգ ունի, եթէ մէկ գլուխը թշնամիին է վիրաւորում, միւս գլուխն էլ իւր տէրին է վնասում:

Տէմնէ ասաց. Դու խորհուրդը նենգութիւն ես անուանել եւ կարգադրութիւնը խաբէութիւն եւ զրկողութիւն ես կոչում: Ես այս խնդիրը ուղիղ խորհրդով արել՝ եւ առողջ դատողութիւնով կարգադրել եմ:

Քէլիլէ ասաց. Դու ախտացեալ խելքի եւ տկար կարգադրութեան կողմանից այնպէս ես որ ո՛չ մի լեզու չէ կարող նրան պատմել: Զարամտութիւնում, ագահութիւնում եւ փառասիրութիւնում այն աստիճանի ես հասել որ խօսքը նրան բացատրելում տկար է: Քո նենգութեան եւ խարդախութեան օգուտը քո տէրոջ եւ բարերարին այս է, որ տեսնում ես, թէ՛ այս ճգնաժամը եւ եղեռնագործութիւնը քեզ ի՛նչ արդիւնք պիտի բերէ եւ թէ՛ այս երկերեսութեան եւ երկլեզուութեան վախճանը քո վերայ ի՛նչ փորձանք պիտի հասցնէ:

Տէմնէ ասաց. Երկերեսութիւնից ի՞նչ վնաս կայ. քանզի գեղեցիկ վարդը երկերեսութիւնով պարտէզին զարդն է եւ երկլեզուութիւնից ի՞նչ երկիւղ. քանզի գպիրի գրիչը երկու լեզուով ստացուածքի եւ կալուածքի պահապանն է: Սուրը որ մէկ բերան ունի, նրա գործը արիւն խմել է. սանտրը, որ երկու բերան ունի, նրա տեղը գեղեցկուհիների գլխին վերայ է: Այս ժամանակում նա որ ճշմարտասիրութեան կողմանից մէկ բերան եւ մէկ լեզու ունի, սուրի նման արիւն է խմում. բայց ո՛վ որ սանտրի նման երկու բերան եւ երկու կողմ ունի, իշխանուհիները նրան իրանց գլխի վերայ են ընդունում:

Բէլիլէ ասաց․ Ո՛վ Տէմնէ, ճշմարտութիւնը թո՛ղ։ Դու այն երկերեսանի վարդը չես որ քո տեսքովը աչքերը զմայլեն, այլ դու սիրտ ծակող մի փուշ ես, որ քեզանից արտաքածներին բաց ի վնասից ուրիշ բան չէ հասնում։ Դու այն երկլեզուանի դրիչը չես որ հրեշտակաց եւ արքայութեան գաղտնիքն է իմացնում, այլ դու այն երկլեզուանի օձն ես, որ քո լեզուի խայթը բաց ի վնասի թոյնից ուրիշ բան չէ տալիս, թէպէտեւ օձը բաղդատամամբ քո վերայ առաւելութիւն ունի․ քանզի նրա մի լեզուից թոյն է յառաջ գալիս, իսկ միւսից սպեղանի, բայց քո երկու լեզուից էլ թոյն է կաթում եւ սպեղանիից ամենեւին նշոյլ չի կայ։ Մէկի լեզուից, որ բարեկամների համար միշտ սպեղանի է կաթում, եթէ թշնամիների համար մի թոյն էլ յառաջ գայ, ներելի է։ Ինչպէս որ մի մեծ անձնաւորութիւն ասել է․ Իմ լեզուի վերայ թէ՛ թոյն եւ թէ՛ սպեղանի ունիմ, մէկը բարեկամների համար է միւսը թշնամիների համար։

Տէմնէ ասաց․ Բաւական է ինձ յանդիմանում ես։ Թէպէտեւ առիւծի եւ Շինզիւպէի մէջ հաշտութիւն գոյանայ եւ կրկին սէր եւ միաբանութիւն հաստատուի։

Բէլիլէ ասաց․ Այս բանը անկարելի է երեւում։ Միթէ դու չե՞ս գիտում, որ երեք բանը հաստատ է, դեռ երեք բանը չի կատարուած, իսկ նրանից յետոյ բոլորովին անկարելի է լինում։ Ա․ Աղբիւրի ջուրը անոյշ է, քանի որ ծովին չէ հասել, բայց ծովի հետ միանալուց յետոյ նրանից անուշահամութիւն սպասել անկարելի է։ Բ․ Ազգականների կամ բարեկամների համերաշխութիւնը հաստատ է, քանի որ չարակամ ամբարիշտները նրանց մէջտեղ մտած չեն, բայց երբոր չարերը եւ անօրէնները միջամտում են, էլ ազգականներից եւ բարեկամներից համաձայնութիւն եւ միաբանութիւն ակնկալել կարելի չէ։ Գ․ Ընկերական եւ մարդասիրական զգացումները մաքուր են, քանի որ քսու եւ խառնակիչների խօսքին տեղի չէ տրվում, բայց երբոր երկերես եւ երկլեզուները բարեկամների եւ մտերիմների մէջ իրանց սուտերը ցանելու պատեհութիւն են գտնում, այլ եւս նրանց սիրոյ վերայ կարելի չէ վստահել։ Սրանից յետոյ եթէ եզը առիւծի ճանկից ազատուելու ալ լինի, հնար չէ որ այլեւս նա շնորհք եւ համակրութիւն գտնէ, կամ նրա հաշտութեան եւ հաւատարմութեան վերայ վստահի, եւ եթէ յարաբերութեան դուռը բաց մնալու էլ լինի, դարձեալ միմեանց վերայ պիտի կասկածին։ Երբոր թելը կտրի, կարելի է նրան կապել, սակայն հանգոյցը մնում է մէջտեղ։

Տէմնէ ասաց․ Եթէ ես առիւծի ծառայութիւնից հրաժարելով առանձնութեան անկիւնում նստիմ եւ քո խօսակցութիւնը ինձ առաջնորդ ընտրելով առանձնութեան դուռը ամենուն դէմ գոցեմ, ի՞նչպէս կը լինի։

Բէլիլէ ասաց․ Բա՛ւ լիցի, որ ես էլ քո հետ խօսակցութիւն ունենամ, կամ քեզ հետ ընկերանալու փափաքիմ։ Ես միշտ քո դրացութիւնից վախենում էի եւ չարունակ քեզ հետ ակամայ խօսակցութիւն էի անում։ Քանզի գիտունները ասել են․ Պէտք է ագէտների եւ ամբարիշտների խօսակցութիւնից զգուշանալ, եւ խելացիներին ու բարեպաշտներին ծառայել․ քանզի չարերի եւ ամբարտաւանների հետ լծակից լինելը՝ օձին կրթելու է նմանում, թովիչը ինչքան էլ չարչարւում է որ օձը իրան հպատակի, դարձեալ թոյնի մնացորդը նրա ատամների տակից իր հոտը տալիս է, իսկ խոհեմներին եւ արդարասէրներին ծառայելը նման է հոտաւէտ բանիր ծախողի խանութին, նրանից ուրիշին մի բան չի հասնի էլ, դարձեալ նրա համեմների անուշ հոտը հոտաւութիւնը զուարթացնում է։ Ինչպէս որ ասել են․ Իւղագործի նման եղի՛ր, որ նրա կողքում զգեստը համեմներից անուշ հոտ է առնում։ Մինչեւ ե՞րբ երկաթագործների հնոցին նմանիս եւ իւրաքանչիւր մարդին ծուխ եւ կայծ յարձակես։ Ո՛վ Տէմնէ, ի՞նչպէս կարելի է քեզանից հաւատարմութիւն եւ բարութիւն յուսալ։ Դու մի թագաւորի դէմ, որ քեզ յարգելի, պատուաւոր, բարեհաչակ եւ անուանի արաւ, այն ատեճան որ նրա շնորհաց ստուերի տակ իբրեւ արեգակ պարծենում ես եւ նրա երկնանման ապարանքի ծառայութիւնովը պարծանքի ոտքը բեւեռային աստղի վերայ ես կոխում, այսպէս ընթացք բռնելը արժան սեպեցիր եւ նրա բարիքների եւ շնորհքների երախտաճանաչութիւնը ոչինչ համարեցիր, ո՛չ Աստուծանից ամաչեցիր եւ ո՛չ էլ մարդկանցից։ Ես եթէ այսպիսի անձնաւորութիւնից հազար փարսախ հեռի լինելը ընտրեմ, առողջ դատողութիւնը ինձ հաւանութիւն կը տայ եւ եթէ այսպիսի տմարդիի հետ ընկերակցութիւն անելուց հրաժարիմ, առաջնորդ խելքը ինձ իրաւունք կը տայ։ Առ երեսս բարեկամ եղողների խօսակցութիւնից հեռանալն է լաւ։ Ո՛ր ընկերի խօսակցութիւնից որ քո սիրտը ուրախ չէ լինում, այնպիսի ընկերից հարիւր փարսախ հեռի լինելն է լաւ։ Ինչպէս որ բարիների եւ արդարների խօսակցութիւնը անչափ օգուտ ունի, նոյնպէս էլ կեղծաւորների եւ չարերի ընկերակցութիւնը անվերջ վնասներ ունի։ Չարերի խօսակցութիւնը աւելի շուտ է ազդում եւ նրա վնասը քիչ ժամանակում յայտնուում է։ Ուրեմն այն որ կատարեալ խելք ունի, պէտք է գիտուն, բարեկենցաղ, ճշմարտախօս հեզ եւ բարեպաշտ անձանց հետ բարեկամութիւն հաստատէ, եւ ստախօս, ապերախտ, կրքոտ եւ ամբարիշտ ընկերից զգուշանայ։ Ինչպէս որ ասել են․ «Ի՞նչպէս կարելի է դուռը ամենի դէմ գոցել եւ միայնակ ներքին սենեակումը նստել, այլ պէտք է բարի ընկեր ձեռք բերել, քանզի ամեն մի սիրտ

խօսակցութեան յարմար չէ լինում։ Մի խելացիից յիշում եմ այս խօսքը թէ. “Ո՛վ որ չարերի հետ ընկերանայ, նա նրանց միջոցով էլ կը կործանուի եւ ո՛վ որ վատ ընկեր ընտրէ, նա յիմարի օգնականութեան ապաւինած կը լինի եւ նրա վերայ կը գայ, ինչ որ այգեպանին վերայ եկաւ։

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը։

Քելիլէ ասաց. Բերել են թէ. Մի ԱՅԳԵՊԱՆ կար, որ երկար ժամանակ ծառեր եւ տունկեր, ընդեղէններ եւ բուսեղէններ մշակելով զբաղել էր։ Մի պարտէզ ունէր որ նրա դրախտանման մարգագետինը, դալար ծառերի վայելչութեամբ եդեմական պարտիզի աչքին կարօտութեան հողը ցանել՝ եւ ծաղիկների գալարութիւնով եւ առուակների վայելչութիւնով Խորնէկ այգին սիրտը ապշութեամբ տաղել էր, նրա գոյնզգոյն ծառաստանը սիրամարգի հրապոյրներ էր յայտնում, նրա ոսկենկար վարդերը թագաւորական փայլուն թագ էին ցուցնում, նրա գետինը արդար վկայի դէմքի նման ուշագրաւ եւ լուսաւոր, նրա օդը բուրագործի սենեակի նման անոյշ հոտերով լեցուն, նրա նորահաս ծառերը պտուղի շատութեան պատճառաւ ալեւորների նման կուզ եղած, նրա անուշահամ պտուղները՝ դրախտի հրուշակի նման առանց կրակի տաքութիւնը տեսնելու՝ հասունցած, նրա գարնանային եւ աշնանային տեսակ տեսակ պտուղները վերջին աստիճան թարմ եւ գէրգ, նրա անարատ խնձորը արծաթեայ գեղեցիկների կզակի նման սիրտ որսացող, վայելուչ գունով, հաճելի հոտով աշխարհք զմայլեցնող էին։ Ինչպէս որ ասել են. Խնձորին երբ գեղեցկուհիի կզակին նմանցրին, նա կարմրացաւ եւ իւր բոցավառ երեսը դէպ ի այգին դարձրեց։ Խնձորը ճրագի նման է, որ ծառից լոյս է տալիս, պայծառ ցերեկում ճիւղի վերայ ճրագ ո՞վ է տեսել։ Տանձը շաքարեայ խազմուղով լեցուն ձուաձեւ շիշերով իւրաքանչիւր ճիւղից կենաց ջրի սափորներ կախել եւ առանց հրոյ եփուած հրուշակի հրատարակութիւնով անդրամագլուխ եւ անգործ ծոյլերի ախորժակը գրգռում էր։ Տանձը ես ի՞նչպէս նկարագրեմ, որ նա քաղցրութեամբ եւ փափկութեամբ նման է զուտ շաքարով լի մի սափորի որ ճիւղի վերայից է կախուած։ Գիշերները ճգնութեամբ անցկացնող քուրձ հագած երկիւղածների նման բուրդ զգեցած սերկեւիլը իւր դեղնած դէմքը բնութեան ճգնատան պատուհանից դուրս ցցել եւ իւր փոշոտ երեսը սիրահարների սրտին, արեւի նման սիրելիից պատգամ էր հաղորդում։ Ինչպէս որ մուսան ասել է. “Դեղին սերկեւիլը արեգակից է դեղնել եւ ես սիրելիի սէրից, նրա դեղնութիւնը իւր լուսինից եւ արեւից է, իսկ իմ դեղնութիւնը իմ արեւից եւ իմ լուսինից։„ Նարինջի ոսկեայ գնդակը կանաչ տերեւների մէջտեղից արեգական

գունդի նման կապտականաչ հորիզոնից լոյս էր արձակում եւ ոսկեզօծ թուրինջը սրտագրաւ տեսքով եւ հոգեզուարթ հոտով պարտէզի երեսին լոյս էր սփռում, նուռերը սիրուհիի շրթունքների նման ծիծաղում եւ ճաշակի տէր եղողների ատամները ջրով էին ծածկում եւ Արարիչը առաւօտեան ոսկեգոյն երկնակամարը փորձելու համար նրա հատիկների վերայ յակինթի գոհար էր ձգել։ Երբ դեղձը նկարագրելու եմ սկսում, խօսքը աւելի անոյշ եւ նոր է լինում, շրթունքը նրա շրթունքին հասած չի հասած համակրութեան դէմքի ջուրը սկսում է նրանից կաթկթել։ Մի կողմանից աննման թուզը, որ Ամենակարող ձեռքը նրան՝ իբր թէ շաքարից եւ խաշխաշից բաղադրուած՝ մի ընտիր բաղադրութեան պէս պատրաստել էր եւ միւս կողմանից լուսաւոր խաղողը կանաչ տերեւի ափում հասուն պաղպաջի պէս փայլում էր։ Մարգագետնի միւս կողմումը ոսկենկար սեխի գունդը կանաչ գծերով եւ գեղեցիկ այտերով կապտագոյն հորիզոնից լրացած լուսնի պէս էր երեւում եւ կանաչ արտի վերայ իւր կանաչ գծերով, անմազ դէմքով եւ մշկեղէն հոտով՝ համարեա՛ թէ՝ դրախտի պտուղներից մրցանակը յափշտակել էր։ Այս ծերունի այգեպանը իւրաքանչիւր ծառի վերայ այնքան աշխատանքներ արել էր որ իւր հօր մահը եւ իւր զաւակների հոգսը մոռացել էր եւ իւր օրերը առանձին այս այգիում անց էր կացնում։ Վերջապէս առանձնութեան սոսկումից նեղը ընկաւ եւ միայնակեցութեան երկիւղից վերջին աստիճան տխրեցաւ։ Վարդ եւ մանուշակ, բոլորը կան, ընկեր չի կայ, ի՞նչ օգուտ։ Սա միայնակեցութիւնից վշտանալով դաշտը ելաւ եւ մի լեռան ստորոտում, որի տարածութիւնը յոյսի նման անվերջ էր, շրջում էր։ Յանկարծ մի չարաբարոյ, տգեղադէմ, զզուելի եւ չարարմատ արջ էլ առանձնութիւնից նեղուելով սարի վերայից վար էր իջել։ Երբ իրարի հանդիպեցան ազգայնութեան պատճառաւ երկու կողմանից սիրոյ յարաբերութիւն հաստատուեցաւ։ Վարպետի սիրտը արջի ընկերակցութեան եւ մտերմութեան յարեց։ Ինչպէս որ ասել են. “Երկնքում եւ երկրի վերայ ամեն մի հիւլէ իւր տեսակին է յարում, ինչպէս շիւղը սաթին, հրայինները հրայիններին են քաշում, լուսեղէնները լուսեղէններին են որոնում, մաքուրները մաքուրներին են սիրում, իսկ անմաքուրները ախտն են հրաւիրում, փուճերին փուճ բաներն են հրապուրում, խելացիները իմաստութիւնից են ախորժում, անցաւորները անցաւոր բաներին են յարում եւ միայունները միայուններով են ուրախանում։„ Գարշելի արջը վարպետի համակրութիւնը տեսնելով բոլորովին նրան յարեց եւ մի փոքր ակնարկութիւնով նրան հետեւելով այն դրախտանման այգին մտաւ։ Այն պատուական

եւ անոյշ պտուղների վայելմամբ բարեկամութիւնը նրանց մէջ հաստատուելով սիրոյ տունկը իւրաքանչիւրի սրտին այգւումը արմատ գցեց, բաւական ժամանակ այգու անկիւնումը միմեանց հետ ուրախ օրեր անցկացրին: Երբ այգեպանը յոգնածութիւնից մի ստուերում գլուխը բարձի վերայ դրած հանգստանում էր, արջը նրան համակրելով բարձի մօտ նստած նրա երեսի վերայից ճանճերն էր փախցնում: Ըստ առածին թէ. "Չեմ կամենում որ մի ճանճ նրա շրթունքի վերայ ստուեր ձգէ:" Մի օր դարձեալ այգեպանը իւր սովորութեան համեմատ պառկել եւ քնել էր, շատ ճանճեր նրա երեսի վերայ հաւաքուեցան եւ արջը ճանճերը հալածելու էր զբաղել: Ինչքան որ ճանճերը վռնդում էր, նրանք դարձեալ յետ էին գալիս, երբ այս կողմից արգելում էր, նրանք միւս կողմից էին յարձակւում: Արջը շուարելով հինգ լիտրի չափ ծանր մի քար վեր առաւ եւ ճանճը սպանելու համար վարպետի երեսին խփեց, այդ հարուածից ճանճերին ոչ մի վնաս չի հասաւ, բայց այգեպանի գլուխը հողին փակաւ: Այս պատճառաւ ծերերը ասել են թէ. "Ամեն պարագայում խելացի թշնամին յիմար բարեկամից լաւ է:" Այս առակը դրա համար բերեցի որ յայտնի լինի թէ, քեզ հետ բարեկամութիւն անելը նման է նրան որ իւր գլուխը վտանգի է ենթարկում եւ իւր կուրծքը արկածի նետերին նշաւակ է անում: Ինչպէս որ ասել են. Յիմարների բարեկամութիւնը դատարկ տիկի է նմանում, որի ներսը թափուր եւ դուրսը սեւ է:

Տէմնէ ասաց. Ես այնպէս յիմար չեմ որ իմ բարեկամիս օգուտը եւ վնասը չի ճանաչեմ, նրան բարին եւ չարը չ'որոշեմ:

Քէլիլէ ասաց. Գիտեմ որ դու այն աստիճան յիմար չես, բայց ատելութեան փոշին քո սիրտը ծածկել եւ մթացրել է: Հնար է որ մի թշնամութիւն էլ բարեկամին անես եւ հազար պատճառներով ջանաս քեզ արդարացնել: Ինչպէս որ առիւծի եւ Շիւնզիւպէի խնդրումը արիր եւ դարձեալ կամենում ես քո անձը անպարտ եւ մաքուր ցոյց տալ: Քո վարմունքը դէպ ի բարեկամները, նման է այն վաճառականի առակին որ ասել է թէ. "Եթէ մի քաղաքում, որ մուկը քսան լիտր երկաթն է ուտում, զարմանք չէ որ այն քաղաքում ուրուրն էլ տղաներին յափշտակէ:"

Տէմնէ հարցրեց. Ի՞նչպէս է այդ պատմութիւնը:

Քէլիլէ ասաց. Բերել են թէ. Մի ՎԱՃԱՌԱԿԱՆ փոքր դրամագլխով մտադիր էր մի ուրիշ երկիր գնալու: Սա հետատես լինելով քսան լիտր երկաթ մի բարեկամի տունը պահ թողուց, որպէս զի եթէ մի կարօտութեան պատահի նրանով դարձեալ ապրուստի միջոց ձեռք բերէ: Վաճառականը իւր ճանապարհորդութիւնը վերջացնելով յետ դարձաւ եւ պարագաները այնպէս

բերեցին որ սա այն երկաթին կարօտ եղաւ, բայց բարեպաշտ բարեկամը երկաթը ծախել եւ նրա արժէքը իրան ծախս էր արել: Վաճառականը մի օր երկաթը ուզելու համար նրա մօտ գնաց: Հաւատարիմ մարդը նրան ներս հրամցնելով ասաց. Պարո՛ն, ես այն երկաթը պահուելու համար անկիւնումն էի դրել եւ միամիտ էի, առանց գիտնալու որ այնտեղ մկան ծակ է եղել, մինչեւ իմ իմանալը մուկը պատեհութիւն գտնելով բոլոր երկաթը կերել է: Վաճառականը պատասխանեց. Ճշմարիտ ես ասում: Մուկը երկաթը շատ է սիրում, եւ նրա ատամները այդ իւղալի կակուղ պատառը շատ լաւ են կտրում: Ինչպէս որ ասել են. "Մուկը երկաթի կտորները կարկանդակի պէս շատ հեշտ է կուլ տալիս:" Ճշմարտախօս հաւատարիմ մարդը այս խօսքը լսելով ուրախացաւ եւ ինքնիրան ասում էր. Այս յիմար վաճառականը այս խօսքով խաբուեցաւ եւ երկաթից ձեռք քաշեց, Սրանից լաւը չի կայ որ նրան հիւրասիրեմ եւ պատուեմ, որպէս զի այս խնդիրը բոլորովին վերջանայ: Ուստի նրան ճաշի հրաւիրեց ասելով. Եթէ ճաշելու համար մեր տունը ոտք կոխես, շնորհք կ'անես եւ մեր աչքի վերայ տեղ կը բռնես: Վաճառականը ասաց. Այսօր մի կարեւոր գործ ունիմ, խոստանում եմ էգուց գալու: Վաճառականը դուրս ելնելիս նրա մի որդին հետը տանելով իւր տունը պահեց եւ երբոր հետեւեալ օրը հիւրընկալի դրան առջեւը ներկայացաւ, հիւրընկալը շուարած սկսեց ներողութիւն խնդրել, ասելով թէ. Ո՛վ յարգելի հիւր, երեկուանից մի որդիս կորել է: Երկու երեք անգամ քաղաքումը մունետիկ կանչել տուի, ո՛չ մի լուր չ'ելաւ: Վաճառականը ասաց. Ես երբոր երէկ քո տնից դուրս ելայ, ճիշդ այն դէմքով, որ դու պատմում ես, մի տղայ տեսայ որին ուրուրը բռնած տանում էր օդին մէջ: Հաւատարիմ մարդը սկսեց գոռալ թէ. Ո՛վ անխելք, ի՞նչու անկարելի խօսք ես ասում եւ այս աստիճան մեծ սուտ խօսելը քեզ արժան ես համարում: Ուրուրը, որի մարմինը մինչեւ անգամ կէս լիտր չէ կշռում, հինգ լիտր քաշող մի մանուկը ի՞նչպէս վերցնելով օդի մէջ կը թռչի: Վաճառականը ծիծաղեց եւ ասաց. Սրա վերայ մի՛ զարմանար, այն քաղաքում որ մի մուկը քսան լիտր երկաթը ուտում է, մի ուրուր էլ հինգ լիտր տղան օդին մէջ տանելու կարող է: Հաւատարիմ մարդը հասկացաւ խնդիրը, ասաց. Հոգ մի՛ անիր, մուկը երկաթը չէ կերել: Վաճառականը պատասխանեց. Դու էլ մի՛ նեղուիր, ուրուրը քո որդին չէ տարել: Իմ երկաթը տո՛ւր, քո որդին ա՛ռ: Այս առակը դրա համար բերեցի, որ գիտենաս թէ մի ուղղութիւնում որ բարերարին զրկանք անել կարելի է, յայտնի է որ ուրիշներին ի՛նչեր անել կարելի կը լինի: Դու որ

թագաւորի հետ այդպէս վարուեցար, այլեւս ուրիշների վստահութիւնը քո վերայ չի մնաց. եւ ինձ յայտնի եղել է որ քո չար ընթացքի խաւարից հրաժարիլ եւ քո խորամանկութեան եւ անիրաւութեան մշուշից զգուշանալ պէտք է։ Քեզ նմանից փախչիլը յաջողութիւն է եւ երջանկութեան աղբիւրը քեզ չի տեսնելն է։

Երբոր Քէլիլէի եւ Տէմնէի խօսակցութիւնը այստեղ հասաւ, առիւծը եզին գործը վերջացրել էր նրան հողի եւ արեան մէջ գցելով, բայց երբոր առիւծը իւր պատժողական ճանկերով Շէնզիպէի գործը չինելով անտառի տարածութիւնը նրա գոյութիւնից դատարկեց եւ իւր բարկութեան եւ ցասման կրակը հանգչեցաւ, խորհել սկսեց եւ ինքնիրան ասում էր. Ափսո՜ս, Շէնզիպէ այսքան խելքով եւ տաղանդով, կամքի տէր եւ գործունեայ մէկն էր։ Չեմ գիտեր այս գործում լաւ գործ արի թէ սխալ ընթացք բռնեցի եւ այս խնդրի մասին ինչ լուր որ ինձ հասցրին հաւատարմութիւնից էր թէ թշնամութիւնից։ Բայց ես իմ ձեռքով նրան մեռանեցի եւ իմ հաւատարիմ բարեկամի արիւնը իմ ձեռքովը ճաշակեցի։ Բարեկամը իւր բարեկամին այսպէ՞ս է անում։ Ո՛չ։ Անհաւատ լինիմ եթէ անհաւատն էլ այսպէս մի գործ անէ։ Առիւծը զղջման գլուխը վար կախելով անարգանքի բերանը իրան դէմ բացաւ, քունը եւ մրափումը կորցրեց, եւ Շէնզիպէի երեւակայութիւնը բնութիւնից անբաժան ձայնով առիւծի ականջին այս քառեակն էր ասում. "Ո՛վ բարեկամ, մէկը առանց պատճառի իւր ընկերը սպա՞ննում է, կամ ինձ նման հաւատարիմ բարեկամը սպա՞ննում է։ Դու բարեկամ մի՛ ասեր, թշնամի համարէ ինձ, ո՞վ իւր թշնամին այսպէս չարաչար սպաննում է։" Առիւծի մշտակայ ուրախութիւնը այս աղետալի դէպքից յետոյ լացի փոխուեցաւ եւ նրա երակի առօրական զարնուածքը այս դէպքի տուած սրտնեղութեան պատճառաւ բազմապատկուեցաւ։ Ասում էր. Քեզանից բաժանուիլը իմ սրտումը վիշտի հուրը գցեց։ Չեմ իմանում քո վշտի փուշերից ի՞նչ վարդ պիտի բացուի։

Տէմնէ հեռուից առիւծի դէմքի վերայ զղջման նշանները տեսաւ, Քէլիլէի խօսքը կտրելով յառաջ գնաց, ասաց. Ո՛վ թագաւոր, յաջողութեան գահը քո նստած տեղը լինի եւ երկինքի աթոռը քո յենարանը։ Քանի որ երկինքը թշնամիի գլուխը քո ոտքի տակը գցել եւ նրա կապոյտ կամարը քո վերայ ուրախութիւն է տարածել, էլ ի՞նչու համար ես տխրում, քո մտածողութեան պատճառը ի՞նչ է։ Սրանից ուրախալի ժամանակ եւ սրանից օրհնեալ օր ո՞ւր կայ, որում թագաւորը յաղթութեան ուրախութեամբ քայլում եւ թշնամին անարգանաց հողին վերայ արիւնաթաթախ տապալում է։ Տե՛ս, յուսոյ առաւօտը յաղթութեան սուրն է քաշել, թշնամւոյ օրը կորստեան երեկոյին է հասել։

Առիւծն ասաց. Երբ Շէնզիպէի համեստ ծառայութիւնը, վայելուչ խօսակցութիւնը, իմաստուն տեսութիւնները եւ ուրիշ կատարելութիւնները միտքս են գալիս, թուլութիւնը իմ վերայ յաղթում է եւ ապշութիւնն է տիրում իմ վերայ։ Ճշմարիտ է որ նա սեւ օրերի վահանն էր եւ իմ հպատակները նրա օգնականութեամբ ստէպ ժիրանում եւ քաջանում էին։ Ո՛հ, գնաց նա, նա որ երկրի եւ տէրութեան հսկողն էր։

Տէմնէ ասաց. Թագաւորը պէտք չէ որ այդ ուրացող, ապերախտ եւ խարդախի վերայ այսքան գթայ, այլ այս յաղթութեան վերայ, որ տեղի ունեցաւ, պէտք է Աստուծոյն շնորհակալութիւն մատուցանէ եւ այս յաջողութեան համար, որ յառաջ եկաւ, պէտք է ուրախութեան դռները բանայ եւ իւր սիրտը բերկրութեամբ լցնէ։ Ինչպէս որ ասել են. "Յաղթութեան առաւօտը յուսոյ արեւելքից ծագեցաւ եւ թշնամիներին մութ գիշերը կոխեց։" Այս յաջողութեան յաղթանակը որով բախտաւորութեան օրաթերթը զարդարվում եւ այս կայսերական հրատարակելի յաղթութիւնը որով երջանկութեան կանոնագիրքը կարգադրվում է, ժամանակի ճակատի վերայ պէտք է նշանակել իբր պարծանքի յառաջաբանութիւն եւ վեհափառութեան տիտղոս։ Այսօր բարի բախտը մեր պատգամաբերն է, յուսոյ վարագուրի տակ բախտաւորութիւնը ուրախութեամբ երգում եւ նուագում է. "Այս մի օր է, որում սիրտը իւր հազար խնդրուածքին պատասխան ընդունեց, մի ժամանակ է, որում հոգին իւր հազար փափաքին հասաւ։" Ո՛վ թագաւոր, ո՛վ տիեզերակալ, մի անձին ներել, որից անձը ապահով չէ կարող լինել, սխալ է։ Տէրութեան թշնամին գերեզմանի գնդանումը բանտարկել խելացիների գործ է։ Մատը որ ձեռքի զարդ եւ կապելու բանալու գործիք է։ Երբ օձը նրան խայթում է, մարմնոյ մնացեալ մասը պահպանելու համար նրան կտրում եւ այդ կսկիծը հանգստութիւն են համարում։ Նաեւ ասել են. Երբ թշնամին տկար մնայ եւ աղաչէ, աւելի լաւ է նրա մահուամբը քո սիրտը ուրախացնես քան թէ նրա աղաչանքը ընդունիս։

Առիւծը այս խօսքերով մի քիչ հանգստացաւ։ Սակայն ժամանակը եզին իրաւունքը պահանջեց եւ Տէմնէի գործի վախճանը անարգութիւն եւ խայտառակութիւն եղաւ եւ չարութեան տունկը որ նա տնկել՝ եւ սուտ խօսքերի սերմը որ նա ցանել էր, աճելով եզին հատուցումը նրանից առնուեցաւ։ Զրկողութեան եւ նենգութեան վախճանը միշտ զզուելի է եւ չարակամութեան եւ խարդախութեան հետեւանքը անարգելի եւ գարշելի։ Չարակամը կարիճի նման ահով եւ դողով չարութեան վերայ է քայլում։ Եթէ չարիք ես գործում, բարիքին մի՛ սպասիր,

մանանեխից խաղող չէ քաղվում։ Մի՛ կարծեր որ աշունը գարի ցանելով գարունը ցորեն կը տեսնես։ Այսպէս առածներից դաս ա՛ռ, մի՛ աներ չարութիւն որ ժամանակից չարութիւն չի տեսնես։ Նա, որ Աստուծոյ արարածներին բարիք է անում, բարիք կը տեսնէ երկու աշխարհքում։

ՉԱՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՊԱՏԻԺ ԳՏՆԵԼԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՀՌԵԼԻ ՎԱԽՃԱՆԸ

ՄԵԾԱՀՈԳԻ Տապիշլիմ Թագաւորը Պիտփայ իմաստունին ասաց. Լսեցի քու եւ խառնակիչի պատմութիւնը, որ կատարեալ խաբէութիւնով ճշմարտութեան դէմքը կասկածի գաղափարով քողարկեց եւ իւր բարերար տէրին մարդասիրութեան ուղիից մոլորեցնելով ապերախտութեան եւ ուխտազանցութեան անձնատուր արաւ։ Նրա խաբէական խօսքերը առիւծին այն ազդեցութիւնը արին որ նա տէրութեան կազմակերպութիւնը աւրելու եւ թագաւորութեան հիմը քանդելու գործակից եղաւ։ Այժմ եթէ բանիբուն իմաստունը յարմար է սեպում, թող պատմէ Տէմնէի գործի վախճանը։ Թէ առիւծը այդ դէպքից յետոյ, երբոր ինքնիրան գալով Տէմնէի մասին կասկածեց, նրա մասին ի՞նչ կարգադրութիւն արաւ, նրա չարութեան վերայ ի՞նչ կերպով տեղեկութիւն ստացաւ։ Տէմնէ ի՞նչպէս փաստաբանեց իւր անձը ազատելու համար, ո՞ր խաբէական միջոցները գործածեց եւ նրա խնդրի վախճանը ո՞րտեղ հասաւ։

Իմաստունը ասաց. Ո՛վ արքայ, տէրութիւնը եւ դատաստանը քո պաշտպանութեան տակը լինին, հանճարի ճրագը եւ լոյսը քո ճանապարհի լապտերը լինին։ Ճշմարիտ առաջդիմութիւնը եւ հեռատեսութիւնը պահանջում են որ թագաւորները լոկ խօսքը լսելով իրանց տեղից չի շարժեն եւ մինչեւ որ խնդրի մասին հաստատ փաստ եւ կատարեալ ապացոյց չի գտնեն, նրա վճիռը չի ստորագրեն։ Ինչպէս որ ասել են. Եթէ դաւաճանի խօսքով մի վճիռ տաս, յետոյ կը զղջաս։ Բայց եթէ դաւաճանի խօսքը ընդունելով մի անպատշած գործ կամ անվայել խօսք յառաջ գայ, նրա ճարը սա է որ այն քու դաւաճանին այնպէս մի պատիժ տրուի որ այլոց խրատ լինի եւ դրանից յետոյ պատժի երկիւղից ո՛չ ոք չի համարձակի այն տեսակ գործ անելու եւ ամենը զգուշանան այնպէս ընթացք բռնելուց։ Առած է. Դէն գցի՛ր այն արմատը որ փուշ է տալիս, խնամի՛ր այն ծառը, որ պտուղ է բերում։ Աշխարհաւերի ճրագը մարել պէտք է, լաւ է որ մին

կրակին մատնուի քան թէ բոլոր աշխարհ այրուի։ Այս խնդիրը հաստատում է առիւծի եւ Տէմնէի դէպքը։ Որ ժամանակ առիւծը նրա խարդախութիւնը եւ խաբէութիւնը հասկացաւ, նրան այնպէս մի կերպով պատժեց որ այլոց ուշադրութեան աչքը լուսաւորուեցաւ։ Սա այս կերպով եղաւ։ Երբոր առիւծը եզին բանը վերջացրեց, այդ գործում շտապելուն համար փաշման կրելով զղջման մատը խածնում՝ եւ հեծութեան գլուխը հիացման ծունկին վերայ էր դնում եւ տրտմութիւնից պաղ հառաչանքներ էր քաշում ասելով. Ո՛հ, աշխարհում ո՞վ է արել այս բանը որ ես արի։ Ի՞նչու այս գործումը շտապեցի։ Ի՞նչու համար այս կարեւոր խնդրումը լրջօրէն չի խորհեցի եւ չի մտածեցի։ Անձիս սանձը կիրքի ձեռք յանձնեցի, խելքին եւ հանճարին դէմ գործեցի, մեղանչեցի, այժմ գիտեմ իմ մեղքը բայց գիտնալուց ի՞նչ օգուտ։ Ի՞նչ օգուտ կրկին եւ կրկին ասելուց թէ. Ի՞նչու այս բանը արի։ Առիւծը երկար ժամանակ իւր օրերը այսպէս տխուր եւ տրտում անցկացրեց։ Նրա մտատանջութեան եւ խղճի խայթին պատճառաւ գազանները ուրախութիւնից հեռացան եւ հպատակները նեղը ընկան, բոլորի սիրտը կոտրվեց եւ ամենի միտքը ցրուեցաւ։ Շատ անգամ Շէնզէպէի անցեալ ծառայութիւնը եւ հաւատարմութիւնը յիշելով իւր տրտմութիւնը աւելանում եւ զղջման տագնապը իրան ճնշում էր։ Առիւծի մխիթարութիւնը սա էր որ նրա վերայով խօսի եւ նրա յիշատակութիւնը լսէ։ Իւրաքանչիւր գազանի հետ առանձին առանձին նստում եւ նրանցից պատմութիւններ պահանջում էր։ Մի գիշեր էլ վագրի հետ միեւնոյն կերպ խօսելով իւր սրտի կրակը եւ իւր ներքին տագնապը նկարագրում էր։ Վագրը ասաց. Ո՛վ թագաւոր, շատ հոգս անել մի գործում, որ նրան անհետացնելու պատեհութիւնը ձեռքից գնացել է, ցնորք է յառաջ բերում, եւ մի խնդրի ճարը որոնել, որ անկարելիութեան շրջանումը սահմանափակուած է, խելքի եւ հանճարի կեդրոնից հեռի է։ Սրա վերաբերեալ մեծերը ասել են. Նետուած նետը ձեռք բերել կարելի է, սակայն այդ բանը ձեռք բերել կարելի չէ։ Ո՛վ որ աշխատում է որոնել այն բանը, որին ձեռք բերելը անկարելի է, հաւանական է որ բացի նպատակին չի հասնելուց, իւր ձեռքում եղածն էլ կորցնէ։ Ինչպէս որ աղուէսը թռչուն գտնելու փափաքով իւր ձեռքում եղած կաշիի կտորը կորցրեց։

Առիւծը հարցրեց. Ինչպէս է այդ պատմութիւնը։

Վագրը ասաց. Բերել են թէ. Մի ՍՈՎԱԾ ԱՂՈՒԷՍ ուտելիք որոնելու համար իւր որջից դուրս եկած ամեն կողմ շրջում, եւ մի պատառի համար անապատի չուրջը ագահութեամբ եւ չարակամութեամբ ման էր գալիս, յանկարծ նրա հոգւոյն ոյժ տուող մի

հոտ նրա քթին հասաւ եւ նա հոտի հետքին հետեւելով տեսաւ մի կտոր թարմ կաշի, որ մի գազան նրա միսը կերել եւ մորթը դէն էր գցել, Աղուէսի աչքը այս մորթի կտորին ընկնելիս լուսաւորուելով, որչափ ոյժ տուող մտունդ որ նրանում բովանդակուած էր, կատարելապէս տեսաւ: Ասում էր. Մեռած էի, սիրտ կենդանացնող սիրելիի հոտը եկաւ ինձ, մարմնից գնացող հոգին կրկին եկաւ մարմնին: Աղուէսը այս մորթի կտորը իւր տիրապետութեան ճանկը բերելով իւր բնակարանը ուղղուեց, ասելով. "Քանի որ սիրելին ձեռք ընկաւ առանձին տեղն է ամենէն լաւը:" Ճանապարհը մի գիւղի մօտից էր անցնում, ուր տեղ տեսաւ որ մի քանի գէր թռչուններ դաշտի վերայ արածւում են, եւ Աչքարաց անունով մի տղայ նրանց վերայ հսկում է: Աղուէսին թռչնոյ մսի ախորժակը գրգռելով նրանց ըղեղի երեւակայութեան համը մորթի կտորը նրան մոռացրեց: Այս միջոցում մի ճագար այնտեղից անցնելով նրան ասաց. Եղբա՛յր, տեսնում եմ որ չարչարանքի ...

Ա՛յս միջոցում մի ճագար այնտեղից անցնելով նրան ասաց. Եղբա՛յր, տեսնում եմ որ չամատանջութեան մէջ ես: Արդեօք ի՞նչ է պատահել: Աղուէսը ասաց. Ո՛վ յարգելի, տեսնո՞ւմ ես այդ թռչունները որոնք գըլխից մինչեւ ոտք մարմնացեալ հոգի են, այսպէս մաքուր եւ անուշ հոգի ո՞վ է տեսել: Բաւական ժամանակից յետոյ որ սովածութեան արկածին հանդիպել եւ քաղցածութեան տանջանքին ենթարկուել էի, կերակուրի գանձապետը մի կտոր մորթը ինձ արժան սեպեց: Այժմ ախորժակի ձգտումը պահանջում է որ այս թռչուններից մին ձեռք գցելով փափաքի քիմքը նրա մսի համովը, որ կեանքի համ ունի, քաղցրացնեմ: Ճագարը ասաց. Ո՛հ, ի՞նչքան ժամանակ է, որ ես նրանցից մին որսալու համար դարանում նստել եմ, բայց այն Աչքարաց տղան որ նրանց պահապանն է, նրանց վերայ այնպէս է հսկում որ ո՛չ մի փորձառու որսորդ նրա պահպանութեան երկիւղից նրանց պատկերը երեւակայութեան որոգայթը գցել՝ եւ ո՛չ մի հանճարեղ նկարիչը նրա հսկողութեան վախից նրանց երեւոյթը երեւակայութեան տախտակի վերայ նկարել կարող չէ: Ու ես այս փափաքով կեանք անցկացնում եւ այս երեւակայութեամբ առաւօտը երեկոյին եւ երեկոյն էլ առաւօտեան եմ հասցնում: Դու որ մի կտոր թարմ մորթ գտել ես, նրանով գոհ եղի՛ր, եւ այս պարապ գաղափարից անցկա՛ց, քանի որ մի սրտի հատորը ունիս, քո սիրտը նրան կապի՛ր եւ քո աչքը բոլոր աշխարհքից գոցի՛ր: Աղուէսը ասաց. Ո՛վ եղբայր, քանի որ նպատակին հասնելու կարելիութիւնը կայ, ափսոս է դանդաղութեամբ եւ դժկամակութեամբ ետ կենալ, քանի որ հանգստութեան մարգագետնումը զուարճութեան վարդը քաղել կարելի է, թշուառութեան եւ նեղութեան փշատանում քալելը յայտնապէս մեղք է եւ քանի որ կարելի է պատուոյ

գագաթը ոտք կոխել, ի՞նչ պէտք է անարգանքի հողումը տեղ բռնել: Վեհանձնութիւնը ինձ թոյլ չէ տալիս որ այս անհամ մորթի կտորին գլուխ ծռեմ եւ իմ սիրտը թարմ եւ գէր մսի համից զրկեմ: Ճագարը ասաց. Ո՛վ անփորձ ագահ, դու աւելի կծծիութիւնը վեհանձնութիւն անուանելով եւ զզուելի ագահութեան մեծութեան տիտղոսը տալով անգէտ մնացել ես այն ճըշմարտութիւնից, որ մեծութիւնը աղքատութիւնում՝ եւ հանգըստութիւնը գոհունակութիւնում է: Վախենում եմ որ այս փուճ ցանկութեան միջոցով այդ մորթի կտորն էլ քո ձեռքից գնալով միանգամայն ոտքից ընկնիս: Քո բանը նմանում է այն իշու պատմութեան որ պոչ էր որոնում եւ ականջներն էլ վերայ տուեց: Աղուէսը հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը: Ճագարը ասաց.

Մի ԷՇ ԿԱՐ որ պոչ չ՛ունէր,
Գիշեր, ցերեկ անքուն էր.
Պոչ չէր խփում տրտում էր,
Ամեն կողմը շրջում էր:
Պոչ ասում էր, պոչ ուզում,
Պոչ էր տեսնում երազում.
Պոչ փնտռելով լալագին,
Հասաւ մի օր մի արտին:

Այս տեսնելով արտի տէր,
Վազեց եկաւ անհամբեր:
Դաշոյն քաշեց անդադէր,
Կտրեց էշին ականջներ:
Պոչ ուզելով խեղճ էշը,
Զրկուեցաւ ականջից:
Ո՛վ գոհ չէ իւր վիճակում,
Այս տեսակ է պատժուում:

Աղուէսը իւր ագահութեան սաստկութիւնից երեսը կախելով ասաց. Ես այդ սիրելիի տենչը կրում եմ, ո՛վ որ իւր մտքումը կարծէ թէ, ես նրա տենչը կը թողնեմ, պարապ է: Դու տե՛ս, ես ինչպէս խորամանկ հրապոյրներով մի անուշիկ թռչուն ձեռք կը գցեմ ասելով, մորթի կտորը թողեց եւ դէպ ի թռչունները գնաց. Ճագարը երբ տեսաւ որ իւր խրատը աղուէսի քարացած սրտին ազդեցութիւն չ՛արաւ, նրանից երես դարձնելով իւր որջը գնաց: Այս միջոցում մի ուրուր օդումը թռչում էր, աչքը մորթի կտորին ընկաւ եւ մի կենդանի կարծելով մեծ ախորժակով նրան վեր առաւ, թռաւ: Միւս կողմանից դեռ աղուէսը թռչունների մօտը չի հասած Աչքարաց պատանին դարանից դուրս ելլելով, իւր ձեռքի փայտը նրան նետեց: Այս հարուածից աղուէսի ձեռքը վիրաւորուելով խեղճը իւր կեանքի երկիւղից սիրտը թռչունների յարաբերութիւնից կտրեց եւ ընկնելով ելլելով շտապում էր որ այն մորթի կտորը առնելով իւր տեղը գնայ, բայց երբ այնտեղ հասաւ, նրանից մի նշան չի տեսաւ. աչքերը վեր վերցրեց որ իւր վիճակը մի աղօթքով Բարձրեալին յայտնէ, տեսաւ որ ուրուրը մորթի կտորը կտուցումը բռնած թռչում եւ ասում է. Աւելին խնդրելը քեզ տարաւ, դու ես այս խաղում տարուողը ուրիշը ի՞նչ անէ: Աղուէսը թռչուն չի բռնելու ցաւից եւ մորթը ձեռքից գնալու կսկիծից այնքան իւր գլուխը գետինը զարկաւ

որ իւր ըղձը խնդրեցաւ: Այս առակի միտքը սա է որ, թագաւորը տէրութեան կազմակերպութիւններից մէկը իւր ձեռքով աւրեց եւ մնացածները շինելու չէ զբաղում, եւ արքունական մեծերների հետ արած դաշնակցութիւնը խզում, կուսակալներին եւ զօրապետներին շնորհք չէ ցուցնում: Շինդիւպէ սպաննուեցաւ, սպաննուածը այլեւս ձեռք չի գար, բայց մնացած վաղեմի ծառաները ծառայութիւնից դուրս են մնում:

Առիւծը շատ խորհելուց յետոյ ասաց. Այս խօսքը լաւ միտք է յայտնում, բայց ես Շինդիւպէի դէմ մեղք գործեցի եւ իմ խռովիլը այս կորստեան համար է:

Վագրը ասաց. Նրա ճարը խռովելով ձեռք չի գալ, այլ պէտք է ուղիղ կարգադրութիւն անել: Լաւ կը լինի որ գազանաց թագաւորը սրտնեղութիւնը եւ շուարումը մէկդի անելով Շինդիւպէի խնդիրը քննութեան առնէ. եւ եթէ քննութիւնից ստուգապէս հաստատուի թէ ինչ որ թագաւորը Շինդիւպէի մասին լսել էր, ճշմարիտ է, այն ժամանակ նա իւր անիրաւութեան եւ ուրացութեան պատիժն է կրել, եւ եթէ նրա վերայով զրպարտութիւն են արել, այն ժամանակ պէտք է զրպարտիչներին հատուցման նետի նշաւակ անել:

Առիւծը ասաց. Տէրութեան նախարարը դու ես: Ես քո դիւանագիտութեան կատարելութեանը վերայ վստահութիւն ունիմ եւ քո հեռատեսութիւնը օգուտներին քաշելում եւ խարդախներին հեռացնելում առաջնորդ եմ արել, ինչ կերպով որ քո լուսաւոր խելքը եւ յստակ դատողութիւնը յարմար է սեպում, այնպէս այս գործին ձեռնարկի՛ր եւ ինձ քո կարգադրութեան միջոցաւ այս խռովութեան յորձանքից դուրս հանի՛ր:

Վագրը խոստացաւ թէ. Ես կարճ ժամանակում այս խնդրի ճշմարտութիւնը թագաւորի լուսաւոր տեսութեանը առջեւ կը ներկայացնեմ եւ այս քննութիւնումը չի ստուգուած եւ չի յայտնուած ո՛չ մի բան չեմ թողուր, բոլոր եղելութիւնները նուրբ քննութիւնով երեւան կը հանեմ, ինչպէս որ մազը խմորից:

Առիւծը այս խոստման վերայ մխիթարուեցաւ: Երբ ժամանակը եկաւ, վագրը հրաման խնդրելով գնաց իւր ճանապարհին: Դիպուածով Քէլիլէի եւ Տէմնէի բնակարանի մօտից անցաւ, տեսաւ որ նրանց մէջտեղը մեծ վէճ կայ եւ երկու կողմանից բարձր ձայնով խօսքեր են ասվում: Վագրը արդէն առաջուց Տէմնէի վերայ կասկած ունէր, այս միջոցումն էլ երբ այս վէճի ձայնը իւր ականջին հասաւ, կասկածը աւելանալով եկաւ նրանց բնակարանի պատի ետեւը պահուեցաւ որ նրանց խօսքերը լսէ: Քէլիլէ ասում էր. Ո՛վ Տէմնէ, մե՛ծ գործ արիր եւ ահագին խնդի՛ր կատարեցիր: Թագաւորի վերայ ուխտադանցութեան եւ

անիրաւութեան արատը բերեցիր, բանսարկութեան եւ խռովութեան կրակը գազանների եւ անասունների մէջ գցեցիր: Կասկած չ'ունիմ որ ժամից ժամ այդ չարիքի հատուցումը քեզ մօտենում է, եւ դու քո արածի արդիւնքը կը վայելես: Ո՛վ որ բռնութեան սուրն է քաշում, երկինքն էլ նրա վերայ արիւն է հեղում: Ես գիտեմ որ երբ անտառի բնակիչները քո արածի վերայ տեղեկանան, ո՛չ մէկը քո վերայ պիտի չի խղճայ եւ ո՛չ ոք քեզ ազատելու պիտի չ'աշխատի, այլ ամենը քո սպաննուելուն եւ պատժուելուն համար պիտի միաբանին: Արդ սրանից յետոյ քեզ հետ բնակելը ինձ լաւ չի լինիլ: Ինչպէս որ ասել են. «Չարերի հետ մի՛ նստիր, քանզի չար ընկերակցութիւնը մաքրութիւնը կ'եղծանէ, ինչպէս որ արեգակը այսքան մեծութիւնով մի փոքր ամպով ծածկուում է:» Գնա՛, մի ուրիշ ընկեր գտի՛ր, էլ սրանից յետոյ ինձ հետ յարաբերութիւն մի՛ աներ. քանզի այլեւս սրանից յետոյ ինձանից բարեկամութիւն եւ ընկերակցութիւն պիտի չի տեսնես: Տէմնէ ասաց. Ո՛վ պատուական ընկեր, եթէ քեզանից սիրտ կտրեմ եւ քո վերայից սէրը վերցնեմ, այն սէրը ո՞րի վերայ դնեմ եւ այն սիրտը ո՞ւր տանեմ: Բաժանման խնդիրը մի՛ առաջարկեր, ինձ քո ընկերակցութիւնից մի՛ զրկեր եւ ինձ Շինդիւպէի գործի համար էլ չափազանց մի՛ յանդիմաներ. քանզի ձեռքից գնացած գործը յիշել տխրութիւն է պատճառում եւ այն խնդրի կարգադրութիւնը որ կարելիութեան սահմանից դուրս է, նրա վերայ մտածել եւ խորհել ի զուր է: Մելամաղձոտ երեւակայութիւնը քո գլխից դուրս հանի՛ր, քո երեսը ուրախութեան եւ հանգստութեան դարձո՛ւր. քանզի թշնամին կորստեան աշխարհքը գնաց եւ բաղձանաց օդը կասկածանաց փոշից մաքրուեցաւ, նպատակի բաժակատուն հանգստութեան ըմպելին ուրախութեան բաժակումը լեցրեց, յուսոյ դռները բախտաւորութիան դէմ բացուեցան եւ բաղձանքի վարդը աւետեաց մարգագետնում բացուեցաւ: Ո՛վ մատռուակ, գինի տո՛ւր, թշնամիի եւ բարեկամի հոգսը մի՛ աներ, քանզի մեր ուզածը չ'եղաւ, այլ եղածը եղաւ: Քէլիլէ ասաց. Մարդասիրութեան ճանապարհից մոլորել եւ առաքինութեան սկզբունքը անհաւատարմութեան տապարով կտրել ես, դարձեալ հանգստութի՞ւն ես ակնկալում եւ խաղաղ ժամանակների՞ ես սպասում: Տէմնէ ասաց. Չէ թէ ես անհաւատարմութեան տգեղութիւնից եւ նենգութեան ու խարդախութեան հետեւանքից անտեղեակ էի, կամ բանսարկութեան վատութիւնը եւ քսութեան զզուանքը ինձանից ծածկուած էր, այլ պատուասիրութիւնը, ընչասիրութիւնը եւ նախանձի ճնշումը ինձ այս տեսակ եղեռնագործութեան մղեցին: Այժմ սրա տակից ելնելու մի ճար չեմ գտնում եւ նրանից ազատուելու համար մի

կարգադրութիւն անել չեմ կարողանում, այս գործի ճարը գըտնել անկարելի է, ի՞նչ անեմ։

Վագրը այս խօսքերը լսելով եղելութեան վերայ տեղեկութիւն ստացաւ, գնաց առիւծի մօր մօտը, ասաց. Մի գաղտնիք եմ բերել մէջ տեղ, այս պայմանաւ որ մայր թագուհին խոստանայ որ անկարեւոր տեղը նրան յայտնելը արժան չի համարէ։ Երդումից եւ խոստումից յետոյ, ինչ որ Քէլիլէի եւ Տէմնէի մէջ տեղը պատահել էր, մէկ մէկ պատմեց։ Քէլիլէի յանդիմանութիւնը եւ Տէմնէի խոստովանութիւնը եղածին պէս յայտնեց։

Մայրառիւծը այս բանի վերայ շատ զարմացաւ։ Միւս օր երբ իւր սովորութեան պէս առիւծը տեսնելու գնաց, նրան շատ տխուր եւ տրտում գտնելով հարցրեց. Ո՛րդի, այս մտածմունքի պատճառը ի՞նչ է, քո լրացած լուսինը ի՞նչու մահիկ է եղել, քո ման եկող նոճին ի՞նչու է նիհարացել, այսքան ահ եւ հառաչանք ի՞նչու համար է եւ այսչափ աղաղակ եւ հեծեծանք ո՞րի վախից է։

Առիւծը ասաց. Իմ տխրութեան պատճառը բաց ի Շինզիւպէին սպանելուց եւ նրա վարքն ու բարքը յիշելուց ուրիշ բան չէ։ Ինչքան էլ ջանք եմ անում, նրա յիշողութիւնը իմ մտքից չէ հեռանում։ Քո անձի վերայ երդում, որ ես նրան ո՛չ մի վայրկեան չեմ մոռանում։ Ինչպէս որ առաջ մոռանում էի, այժմ չեմ կարողանում։ Ի՞նչ անեմ։ Երբոր տէրութեան մէկ խնդիրը առաջ է գալիս, եւ նրա վերայ լուրջ կերպով խորհելու համար մի անկեղծ գութ ունեցողին, սիրով լեցուն խրատատուին, վստահելի բարեկամին եւ հաւատարիմ գործակատարին կարօտ եմ լինում, Շինզիւպէն իմ երեւակայութեան առաջը կանգնած ասում է. “Ծառայութիւնում օրինապահ եւ հաւատարմութիւնում կատարեալ ինձ նմանը շատ պիտի փնտռես աշխարհքում։„

Մայրառիւծը ասաց. Ո՛չ ոքի վկայութիւնը ճշմարտութեան լոյսը խաւարի եւ տարակուսանքի վերայ յաղթելու մասին մաքուր սրտի վկայութեան հաւասար չէ։ Թագաւորի խօսքից հասկացւում է որ նրա սիրտը Շինզիւպէի անմեղութեան համար վկայում է։ Անշուշտ, քանի որ նրա սպաննումը կատարուել է, ո՛չ թէ հաստատ ապացոյցի եւ ճշմարիտ փաստի վերայ հիմնուելով այլ դաւաճանը խրատի քողի տակ նրա վիճակը ճշմարտութեան հակառակ ներկայացնելով, ուստի իւրաքանչիւր ժամ մի նոր ափսոսանք եւ անվախճան զղջում յառաջ է գալիս։ Եթէ այն բանի վերայ, որ թագաւորին հասցրել են, լաւ խորհուէր եւ բարկութեան ամեհի երիվարը համբերութեան սանձով զսպուէր, այն ժամանակ կասկածի խաւարը լուսաւոր խելքի լուսովը փարատուելով թագաւորը այժմ զղջման որոգայթին չէր ընկնում, եւ ուրախութեան

ցուցակը չգոյութեան դարակը չէր գրվում։ Ասած է. “Հանդարտութեամբ կատարի՛ր աշխարհի գործը, տաքանալը ո՛չ մի գործին չէ գալիս, ճրագը եթէ տաքութեամբ չի վառէր, ո՛չ ինքնիրան եւ ո՛չ էլ թիթեռնիկը չէր այրում։ Համբերութիւնն է խնդիրներին լուծող, ո՛չ ոք չէ տեսել համբերողին զղջալը։

Առիւծը ասաց. Մայրի՛կ, ինչպէս որ ասացիր, այս գործում իմ կիրքը խելքիս յաղթելով բարկութեան հուրը հեզութեան շէնքը այրեց։ Այժմ քանի որ այդ գործի բարւոքիլը կարելիութեան սահմանից դուրս է, բաց ի անտարբեր գտնուելուց ուրիշ ճար չի կայ. սակայն վատագոյն բանը սա է որ հպատակները ինձ յանդիմանութեան նետին նշաւակ են արել եւ իմ անուանը վերայ ուխտադրուժութեան եւ բռնադատութեան արատ են դրել, եւ ինչքան հետազօտում եմ որ մի յայտնի մեղք եւ մի իրական յանցանք Շինզիւպէի վերայ գտնեմ, որպէս զի նրան սպաննելում այլոց աչքերը անպարտ համարուիմ եւ ծանօթների բամբասանքից եւ օտարների անարգանքից պրծնեմ, բայց ո՛չ մի կերպով չէ յաջողում։ Ինչքան էլ աւելի խորհում եմ, իմ կարծիքը նրա մասին միշտ լաւ է լինում, նրա կորստեան համար իմ զըղջութիւնը եւ անձկութիւնը շատանում է։ Խեղճ Շինզիւպէ էլ յատակ դատողութեան եւ բարի բնաւորութեան տէր էր. ուրեմն չի կարելի նախանձի զրպարտութիւնը նրա վերայ դնել։ Եւ այս տեսակ մի անձ չէ կարող վերաբերել այն դասակարգին որ գաղանների վերայ իշխելու փուճ եւ անկարելի գաղափարին իւր գլխումը տեղ տալով ինձ դիմադրելու համարձակելը մտքից անցրած լինի։ Միւս կողմանից էլ նրա մասին ամենայն շնորհաբաշխութիւն եւ բարերարութիւն գործադրուել էր, եթէ այդպէս չի լինէր, կարելի էր ենթադրել թէ այդ բանը թշնամութեան եւ զզուանքի պատճառ եղաւ։ Ես կամենում եմ որ այս քննութիւնում վերջին ծայրը հասնիմ, եւ այս խնդրի ամեն մասերը, առանց մի բան զանց առնելու, կատարելապէս քննեմ։ Թէեւ այս իղձը շատ օգտակար չի պիտի լինի եւ այն ախտը այս կարգադրութիւնով չի պիտի բուժուի, բայց գուցէ անձին մխիթարութիւն կը լինի եւ խառնակիչ քուն պատժուելով ես մարդկանց աչքերը մեղադրելի չեմ գըտնուիլ։ Եթէ դու այս բանի վերաբերեալ մի բան գիտես կամ մի լուր լսել ես, ինձ տեղեկութիւն տալով քո խրատին արժանացուր։

Մայրառիւծը ասաց. Խորհուրդի գոհարներով լեցուն սիրտ ունիմ, սակայն իմ լեզուն բեւեռներով գամուած է. մի խօսք լսել եմ, բայց նրան յայտնելը ներելի չէ. մի գաղտնիք իմացել եմ, սակայն նրան պատմելը ինձ թոյլ տրուած չէ։ Քո մտերիմներից ոմանք խնդրել են որ այս բանը գաղտնի մնայ եւ այս խնդրի չի յայտնուելուն համար չափից աւելի թախանձանօք

աղաչել են։ Թագաւորը իմանում է որ գաղտնիք դուրս տալը մեծ ամօթ՝ եւ խորհուրդը մարդկանց յայտնելը կատարեալ պակասութիւն է եւ գիտունները սրանից խիստ զգուշացրել են մարդը, եթէ ո՛չ բոլորը քեզ կ'ասէի եւ տխրութեան փուշերը իմ սրտահատոր զաւկի սրտի դաշտից կը հեռացնէի։

Առիւծը ասաց. Գիտնականների եւ իմաստունների խօսքերը շատ են։ Ոմանք մարդը գաղտնիքը յայտնելուց զգուշացրել են, տեսնելով որ նրա օգուտը եւ խաղաղութիւնը դրանումն է. ոմանք էլ դրանում ընդհանուրին օգուտը տեսնելով յայտնելու հրամայել են. եւ եթէ մէկը յանիրաւի տեղը մի անձին սպանել կամենայ եւ այս գաղտնիքը մի ուրիշը իմանայ, թէեւ այս գաղտնիքը դուրս չի տալու համար երդումով ուխտ արած էլ լինի, եթէ այդ անձի կեանքը պահպանելու համար այս գաղտնիքը յայտնելու լինի, օրէնքը նրան չէ պատժում եւ նա Աստուծոյ առջեւն էլ յանցաւոր չէ համարվում։ Այսպիսի պարագաներում գաղտնիք պահելը չարագործին գործակից լինել է։ Գուցէ այս լուրը քեզ հասցնողը կամեցել է որ այս գաղտնիքը քո միջոցով յայտնուի եւ ինքը գործին չի խառնուած համարուի կամ ինքը իմ առջեւը այդ գաղտնիքը յայտնելու չի համարձակելուն համար քեզ միջոց է արել։ Ուստի խնդրում եմ որ այս բանը յայտնես եւ ինձ քո խրատին եւ գթութեան արժանացնես։

Մայրառիւծը ասաց. Այս ակնարկութիւնը, որ արիր, շատ հաւանելի՝ եւ այս մեկնութիւնը շատ գովելի է, սակայն գաղտնիք յայտնելը երկու մեծ վնաս ունի։ Առաջինը, Գաղտնիք յայտնողը այն անձի ատելութիւնը կը շահի, որ նրան մտերիմ կարծելով իր գաղտնիքը յայտնեց։ Երկրորդը, Ուրիշների առջեւ իր համարումը կը կորցնէ. քանզի երբոր մի անձը իբրեւ խորհուրդ եւ գաղտնիք չի պահող հրատարակուի, այլեւս ո՛չ ոք նրա առջեւը մի խօսք չէ ասում եւ նրան մտերիմ սեպելով մի գաղտնիք չէ յայտնում, այսպիսին թէ՛ բարեկամների առջեւ խորշելի է լինում եւ թէ՛ թշնամիների անարգանքին է արժանանում։ Մի բանաստեղծ այսպէս է ասել. «Իմ սրտի գաղտնիքը պահելուց ինչքան էլ իմ լեարդը այրւում է, դարձեալ թշնամիների երկիւղից բերանիս վրայ կնիք դրած շրջում եմ։» Նաեւ իմաստունների գրուածքումը տեսել եմ թէ. «Ո՛վ որ իւր գաղտնիքի գոհարը չգոյութեան կաղամարումը չի պահէ, անտարակոյս այդ գաղտնիքը նրա գլուխը կտրելու համար սուր կը բարձրացնէ։ Եւ ասուած է թէ. Ո՛վ որ գաղտնիքը դուրս տայ գաղտնիքի հետ իւր գլուխն էլ կը գնայ։ Դարձեալ ասել են թէ. Կամենում ես որ գաղտնիքը գաղտնիք մնայ, ուրեմն գաղտնապահ եղի՛ր։ Միթէ դու չե՞ս լսել այն ռահվիրայի պատմութիւնը որ Թագաւորի

գաղտնիքը յայտնելու համարձակեց եւ վերջը իւր գլուխը գնաց։

Առիւծը ասաց. Ի՞նչպէս է այդ պատմութիւնը։

Մայրառիւծը ասաց. Անցեալ ժամանակներում Մի ԹԱԳԱՒՈՐ կար որի թագաւորութեան աթոռը արդարութեան պաճուճանքով զարդարուած փայլում էր եւ անխտիր շնորհաց ճառագայթները տէրութեան ամեն կողմը հասնում էին։ Սա մի օր որսի գնացել էր. եւ երբոր այն տեղը հասան, ուր որ բոլոր ծառաները եւ սպասաւորները զբաղել էին արքունի վրանը կանգնելու, Թագաւորը իւր ռահվիրային ասաց. Կամենում եմ քեզ հետ ձի քշել որ իմանամ թէ որն է լաւ, իմ հեծած սեւաթոյրը թէ քո հեծած ճարտուկը։ Ռահվիրան Թագաւորի հրամանին համեմատ ձին քշեց եւ Թագաւորը նրա ետեւից, մինչեւ որ որսի դաշտից հեռացան։ Թագաւորը ձին պահելով ասաց. Ո՛վ ռահվիրայ, այս ճանապարհը անելուց նպատակը սա էր որ այս ժամումը իմ միտքը մի բան եկաւ եւ մտածողութիւնը իմ վերայ կոխեց, ներկայ գտնուողներից ո՛չ մէկին այս խորհուրդը յայտնելու արժան չի սեպեցի եւ այս միջոցով քեզ հետ առանձնացայ որ ո՛չ ոք կարծիք չի տանի, հիմա քեզ պիտի ասեմ։ Ռահվիրան խոնարհութիւն անելով ասաց. Ո՛վ արքայ, երկնից արեգակը քո հպատակը լինի, քո բոլոր կեանքը ուրախութիւնով եւ ցնծութիւնով անցնի։ Թէեւ այս անարգ հիւլէն ինքնիրան այնքան չէ համարում, բայց քանի որ շնորհաց արեգակը կամենում է իմ վերայ երջանկութեան ստուերը գցել, յոյս կայ որ առաւօտեան զեփիւռը, որ գարնան ճշմարտութեան գաղտնիքը իմացող է, այս վարդանոցից ո՛չ մի հոտ պիտի չի զգայ, եւ սիրտը, որ այս գոհարների գանձարանը պիտի լինի, սրանից անտեղեակ պիտի մնայ։ Ինչպէս որ հոգին մարմնում գաղտնի պահուած է, այնպէս էլ քո գաղտնիքը հոգիումը գաղտնի պիտի պահեմ։ Թագաւորը սրան հաւանելով ասաց. Ես իմ եղբօրը մասին շատ մտատանջութեան մէջ եմ։ Այս օրերը յարձակման եւ վնասի նկարը նրա շարժումի եւ կանգնումի թերթերի վերայ նկատեցի եւ ինձ յայտնի եղաւ որ նա ինձ կորցնելու համար ոխակալութեան գօտին է կապել։ Ես էլ խորհել եմ որ նրանից ինձ մի վնաս չի հասած նրա գոյութեան քարը ճանապարհի վերայից վերցնեմ եւ տէրութեան մարգագետինը վնասակարութեան փուշերից մաքրեմ։ Շունը ո՞վ է կամ անկարող աղուէսը ի՞նչ է, որ զօրաւոր առիւծին վնաս հասցնէ։ Դու պէտք է միշտ նրա մասին տեղեկանաս եւ իմ պահպանութեանը եւ ապահովութեանը վերաբերեալ զգուշութեան միջոցները ի գործ դնես։ Ռահվիրան խոնարհութիւն մատուցանելով եւ այս խնդիրը գաղտնի պահելը իր վերայ առնելով ամեն տեսակ երդումով հաստատեց եւ դեռ իւր տեղը չի հասած ապերախտութեան գիծը իւր մտքի թերթի վերայ քաշեց,

հաւատարմութեան եւ մտերմութեան ճանապարհից շեղելով ա-նիրաւութեան եւ ապիրատութեան անապատը ընկաւ։ Ի՞նչ լաւ ասել են․ «Սիրտը մտերիմների սիրուն քիչ կապի՛ր․ քանզի այս ժամանակաշրջանի վարդանոցում հաւատարմութեան հոտը ունեցող մտերիմ քիչ է գտնւում։ Գաղտնիքը իմ սրտին ասացի եւ նա ինձ շատ արիւն խմացրեց։ Ո՛հ, թէ մտերիմ չի գտնուիլը առաջուց գիտենայի։» Ռահվիրան մի պատեհութիւն գտնելով ինք-նիրան Թագաւորի եղբօր մօտը հասցրեց եւ խնդիրը իւր լածին պէս նրան յայտնեց։ Թագաւորի եղբայրը անմիջապէս նրան մի գումար ընծայեց եւ ուրիշ շատ բաներ խոստացաւ։ Եւ ապա խելացի կար-գադրութիւններով իւր անձը իւր եղբօր վնասից ապահով պահեց։ Քիչ ժամանակից յետոյ, անհաստատ ժամանակաշրջանի սովո-րութեան համեմատ, Թագաւորի յաջողութեան գարունը ձախոր-դութեան աշնան փոխուելով երջանկութեան ծաղիկները կենդա-նութեան ծառից վար թափուեցան։ Ո՛հ, փոփոխակի ժամանակ։ Ո՞ր գարնանային զեփիւռը փչել է այս աշխարհքում որ նրան վեր-ջապէս աշնանային ցուրտ քամին չի յաջորդէ։ Դու մշտատեւ սնուցանողական խնամք մի՛ յուսար այս ժամանակաշրջանի մօ-րից․ քանզի նրանից սիրոյ հոտ չէ գալիս։ Երբոր արքունական աթոռը մեծ եղբօր փառքից դատարկացաւ, փոքր եղբայրը իւր ոտքը թագաւորական աթոռի ելարանը կոխեց եւ կայսերական թագը կամակատարութեան գլխի վերայ դրուեցաւ։ Դարձեալ տէրու-թեան երկրումը իշխանութեան վարդերը բացուեցան եւ կայսրու-թեան պարտէզի ծառերը վերստին ծլեցան։ Առաջին հրամանը որ Թագաւորը արաւ, ռահվիրայի սպանման վճիռն էր։ Խեղճը սկսեց աղաչել թէ․ Իմ մեղքը բաց ի քո կողմը պահելուց եւ քեզ հա-ւատարմութիւն ցոյց տալուց ուրիշ բան չէր, իմ արածին հա-տուցումը այս չէ։ Թագաւորը ասաց․ Մեղքերի վատագոյնը գաղտ-նիքը յայտնել է եւ քեզանից այդ մեղքը յառաջ եկաւ։ Իմ եղ-բայրը քեզ իւր բոլոր ծառաներից աւելի իրան մտերիմ սեպելով քեզ յայտնած խորհուրդը դու չի պահեցիր։ Ես քո վերայ ի՞նչ վստահութիւն պիտի ունենամ։ Անհաւատարիմ մտերիմից հեռա-նալ լաւ է։ Ինչքան էլ ռահվիրան թախանձեց, օգուտ չի բե-րեց, այլ արքունական պատժին ենթարկուելով իւր գլուխը գաղտնիք յայտնելում թողուեցաւ։ Ըստ ասածին թէ․ «Եթէ քո լեզուդ գաղտնապահ լինի, սուրը քո գլխի հետ ի՞նչ գործ ունի։» Այս առակից Թագաւորին սովրելու բանը սա է որ գաղտնիք յայտնելը լաւ հետեւանք չ'ունենում, եւ մարդկանց գաղտնիքը հրապարակելը բախտաւորութեան պտուղը չէ տալիս։

Առիւծը ասաց․ Ո՛վ սիրելի մայր, նա որ իւր գաղտնիքը յայտնում է, արդէն նրա նպատակը դրա յայտնուիլն է․ եթէ ո՛չ

նա իւր գաղտնիքը պիտի պահէր, բայց երբոր նա իւր սրտումը պահուածը մի ուրիշին յայտնում է նրանից յետոյ նա էլ մի ու-րիշին ասէ, վնաս չիկայ․ քանզի երբոր մէկը չի կարողանում իւր բեռը կրել եթէ մի ուրիշն էլ չի կարողանայ նոյն բեռը կրել, մեղադրելի չէ։ Սրա համար ասել են․ Երբոր դու քո գաղտ-նիքը չես պահում, ուրիշը նրան ի՞նչպէս պիտի պահէ։ Դարձեալ գաղտնիքը յայտնելում ինչ որ իրաւունք է, պէտք է այն ա-նել։ Թէեւ գաղտնիք յայտնելը ամօթ է, սակայն իրաւունքի յայտնուիլը այդ ամօթը կը ծածկէ։ Ուստի խնդրում եմ ինչ որ իրաւունք է նրան յայտնելու շնորհք անելով տրտմութիւնը իմ սրտից վերցնես, եթէ պարզ ասել չի կարողանաս, այլաբանօրէն ասի՛ր, եւ եթէ բառերով էլ չ'իմացնես, ակնարկութեամբ կամ մի նշանով հասկացնելը չի խնայես։

Մայրառիւծը ասաց․ Այն պայմանով որ այն չարագործ յան-ցաւորը, որ այս չարութիւնը յարոյց ըստ արժանւոյն պատժես եւ ներողութեան երեսը նրա լիրբ աչքից, որ հաւատարմութեան եւ ուղղութեան ճանապարհը տեսնելու համար կուրացել էր, ծած-կես։ Թէեւ կրօնքի ուսուցիչները եւ ճշմարտութեան գիտութի-նը ճանաչողները ներողութեան առաւելութիւնները եւ շնորհքի յատկութիւնները շատ գովելով նրան սկզբունք անելու եւ նրան հետեւելու համար քարոզել եւ յորդորել են, բայց դարձեալ այն յանցանքները, որոնց հետեւանքը բոլոր աշխարհում եւ համայն մարդկութիւնում տարածուել է, պատժելը ներելուց լաւ է։ Նամանաւանդ այս յանցանքը որի վնասը Թագաւորին անձին հաս-նելով նրա մաքրութեան եւ հաւատարմութեան զգեստը բռնու-թեան եւ անիրաւութեան տիղմով ցեխոտել է, եթէ չի պատ-ժուի, ուրիշ չարագործների համարձակութեան պատճառ լինելով չար անիրաւները ուժեղ փաստ կ'ունենան եւ ամեն մէկը չարա-գործութիւն եւ անիրաւութիւն անելում, սրան իբր կրթնելու օրէնք եւ երեւելի օրինակ պիտի ճանաչէ։ Ուրեմն այստեղ նե-րողութեան եւ աչք գոցելու տեղի պէտք չէ տալ, այլ վճռողա-կանապէս նրան պատժելը պէտք է պարտականութիւն ճանաչել։ Ո՛վ որ ժողովուրդը վնասել է հրամայում, նա երկրի թշնամին է, նրա սպանման հրաման տո՛ւր։ Այս առաջաբանութեան եզրա-կացութիւնը սա է․ Անիրաւ Տէմնէն՝ որ Թագաւորը այս գործին թելադրեց՝ քու, չար եւ բոլորովին խառնակիչ է։

Առիւծը ասաց․ Հասկացայ։ Այժմ պէտք է գնալ որ ես խոր-հիմ եւ նրան պատժելու պատրաստութիւնը տեսնեմ։

Առիւծի մայրը իւր բնակարանը դարձաւ։ Առիւծը շատ մտա-ծելուց յետոյ զօրքը պատրաստելու հրաման արեց եւ իշխանները, տէրութեան նախարարները, գործակատարները, խորհրդականները

եւ ազնուականները իւր առջեւը կանչեց եւ իւր մօր ներկայ գտնուիլը խնդրեց։ Բոլոր մեծաւորները եւ հպատակները հաւաքուելուց յետոյ, բարձր հրաման ելաւ, Տէմինէին բերեցին եւ նստեցրին բարձրագոյն դասակարգումը։ Առիւծը նրանից երես դարձնելով երկար բարակ մտածմունքով զբաղեց։

Տէմինէ տեսաւ որ փորձանքի դուռը բացուել եւ ազատութեան ճանապարհը կապուել է։ Թագաւորի մօտաւորներից մէկին դառնալով կամաց հարցրեց թէ· Այս ժողովքը ի՞նչու համար է կազմուել եւ ի՞նչ է պատահել որ Թագաւորը այսպէս խորասուզուել է։

Այս բանը մայրառիւծը լսելով կանչեց թէ· Քո կեանքի խնդիրը Թագաւորին խորհրդածութեան մէջ է գցել։ Եւ որովհետեւ քո անհաւատարմութիւնը յայտնուել, քո խառնակչութեան ապականութիւնը երեւան ելել, այն սուտը՝ որ սիրելի բարեկամի վերայ ասել ես՝ իմացուել եւ քո խարեբայութիւնների եւ խարդախութիւնների քողը բացուել է, այլեւս կարելի չէ որ քեզ մի ակնթարթափի չափ կենդանի թողնեն կամ մարմնացեալ չարը գոյութեան սահմանումը պահեն։

Տէմինէ ասաց· Հին ժամանակի ծերերը ո՛չ մի իմաստալից խօսքը չ'ասած չեն թողել եւ գալու սերունդին հանգստութեանը համար ուղիղ ճանապարհներ չինել են։ Նրանց իմաստալից խօսքերից մին սա է թէ· Ո՛վ որ Թագաւորի ծառայութիւնում անկեղծ լինելով բարձր պաշտօնի հասնի եւ Թագաւորին մտերիմը դառնայ, այն ժամանակ բոլոր Թագաւորի բարեկամները եւ երկրի թշնամիները նրան թշնամի կը լինեն։ Բարեկամները նրա դիրքին եւ աստիճանին նախանձելուց իսկ թշնամիները երկրի եւ ազգի լաւութեան համար նրա տուած խրատների պատճառաւ։ Ո՛վ որ Թագաւորի ծառայութիւնում մօտագոյն է, նրա վտանգը մեծագոյն է, սրա համար է որ ճշմարտութեան հետեւողները ապահովութեան եւ հանգստութեան պատին կռնակ տալով այս ունայն, անիրաւ եւ անարժէք աշխարհքից երես դարձրել, եւ աւելի ընտրել են Աստուածպաշտութիւնը քան թէ մարդկանց ծառայելը։ Քանզի այն Ամենափառաւորեալի առջեւը սխալանք եւ անհոգութիւն չէ լինում, բռնութիւն եւ անիրաւութիւն չէ պատահում։ Բարիքը չարիքով հատուցանել եւ հնազանդութիւնը պատժով վարձատրել կարելի չէ։ Եւ այն Թագաւորաց Թագաւորի դատաստանները երբեք արդարութիւնից չեն շեղւում, այնտեղ Աստուծոյ արդարութիւնն է, որ միշտ մի օրինակ է, ուրիշ ամեն տեղեր երբեմն հաճութիւն է երբեմն խստութիւն։ Այնտեղ սխալել չի կայ, թէեւ այստեղ սխալականութիւն է։ Մարդկանց գործերի չափերը Արարչի սորոգելիքներին հակառակ տեսակ

տեսակ անհամաձայնութիւններով եւ հակառակութիւններով խառնուել են եւ նրանք համաձայնութիւնից եւ իրաւացիութիւնից հեռի ընկած, երբեմն պատժի արժանի մեղաւորները հաւատարիմ գործակատարների վարձատրութեան են արժանացնում եւ երբեմն բարի խրատատուները ապերախտների անարգ պատժին են ենթարկում· քանզի կիրքը յաղթում է նրանց վերայ։ Նրանց գործերումը սխալմունք է տիրում, խօսքերումը վրէժխնդրութիւն եւ իրանց բարեգործութիւններում կեղծաւորութիւն։ Բարին եւ չարը նրանց առջեւ մէկ է, օգուտը եւ վնասը մէկ են նկատում։ Պատահում է որ մէկը երկրի բոլոր գանձերը Թագաւորի գանձարանին է յանձնում, բայց մի գարիի չափ շնորհակալութիւն չէ տեսնում, իսկ մի ուրիշը նրա վեհափառութեան է հայհոյում, բայց պատուոյ աստիճանի է հասնում։ Պէտք էր որ ես սկիզբից Թագաւորին ծառայութիւնը չ'ընտրէի, առանձնութեան ճգնատունից իմ ոտքը դուրս չի դնէի եւ Թագաւորի ծառայութիւնը, որ կրակի պէս այրող է, չ'ընդունէի· քանզի ո՛վ որ առանձնութեան արժէքը չէ ճանաչում եւ մարդկանց ծառայելը Աստուածպաշտութիւնից վեր է դասում, նրան պատահում է ինչ որ այն մենակեաց կրօնաւորին պատահեց։

Մայրառիւծը հարցրեց· ի՞նչ է պատահել նրան։

Տէմինէ ասաց· Բերել են թէ· ՄԻ ԿՐՕՆԱՒՈՐ աշխարհային յարաբերութիւններից հրաժարած առանձնութեան անկիւնը ընտրել՝ եւ ուտելու եւ հագնելու համար գարեհացը եւ քուրձը իրան բաւական էր համարել։ Բայց երբոր տրտմութիւնը նրա օձիքից բռնեց, նա էլ մի լեռան ստորոտը քաշուեց, մարմինը բարիքներից զրկելով չարչարանքի յանձնեց եւ իւր սիրտը խոտեղէններով գոհացնում էր։ Ծերունի կրօնաւորին բարեպաշտութեան հռչակը կարճ ժամանակում այդ գաւառների բոլորտիքը տարածուեցաւ։ Մարդիկ մօտից եւ հեռուից նրան այցելելու եւ նրանից օրհնութիւն առնելու համար գալ գնալ սկսեցին, եւ նրա փայլուն ճակատի վերայ Աստուածպաշտութեան լոյսի հետքերը յայտնապէս տեսնելով, իրանց համարումը նրա վերայ աւելանում էր։ Այն երկրումը արդար եւ սրտով աշխարհատեաց մի Թագաւոր կար, որ Աստուծոյ հաճութիւնը ձեռք բերելը Թագաւորական փառքից բարձր համարելով բաց ի մարգարէների եւ սուրբերի բարքից ուրիշ բանի չէր հետեւում։ Մէկը ասել է· “Բարի բնաւորութիւնը, սուրբ վարմունքը եւ բարեգործութիւնը չքաւորութեան հետ մէկտեղ լաւ է, բայց Թագաւորութեան հետ մէկտեղ աւելի լաւ է։„ Այս մենակեացի լուրը Թագաւորին հասնելիս, նա իւր տեղից ելլելով գնաց ծերունիի մօտը, որ նրա օրհնեալ շունչից օգնութիւն գտնէ եւ խնդրեց որ ի՛նչ խրատ որ մի Թագաւորի համար օգտակար է,

իրան տայ։ Ծերունի կրօնաւորը ասաց․ Ո՛վ Թագաւոր, Աստ֊ուած երկու գաղտնիք ունի․ մէկը անցաւոր է, որին աշխարհք են ասում եւ միւսը մնայուն, որին հանդերձեալ են կոչում։ Վսեմ բնաւորութիւնը դա է պահանջում, որ ունայն բնակարա֊նին գլուխ չի ծռես, այլ քո աչքը մնայուն աշխարհքի Թագաւո֊րութեանը տնկես։ Ինչպէս որ ասել եմ․ Հանդերձեալի Թա֊գաւորութիւնը որոնի՛ր որ նա է ուրախութիւնը։ Նրա մի հիւլէն այսպէս հարիւր աշխարհք է արժում, ջանք արա՛ որ այս աշ֊խարհումը այն աշխարհքից մէկ հիւլէ ձեռք բերես։ Թագա֊ւորը ասաց․ Ի՞նչ կերպով այդ աշխարհքը ունենալ կը յաջողուի։ Կրօնաւորը ասաց․ Ճնշուածների ձեռքից բռնելով եւ զրկեալնե֊րի օգնութեան հասնելով։ Ո՛ր Թագաւորը որ հանդերձեալի հան֊գստութիւնը ուզում է, նա հպատակաց հանգստութեան համար աշխատելու է։ Նա է քնանում հանգիստ վարդի տակում, որ նրանից մարդիկ հանգիստ սրտով են քնանում։ Նրանք են երի֊տասարդութիւնից եւ բախտից օգտուողները, որոնք իրանց ձեռ֊քի տակ գտնուողներին խստութիւն չեն անում։ Այն Թագաւոր֊ները որ բարեպաշտութեան են հետեւում, նրանք արդարութեամբ երջանկութեան մրցանակն են տանում։ Երբոր կրօնաւորը իւր խրատը վերջացրեց եւ Թագաւորի սրտի գանձը քարոզութեան գոհարներով լցրեց, նա էլ սրբակրօն ծերունիի յորդորանքը ըմբռնելով նրան յարեցաւ եւ չարունակ նրա խօսակցութիւնից օրհնութիւն ստանում՝ եւ նրա ջերմեռանդ խօսքերի բարի ազ֊դեցութեամբը իւր չար կրքերին հետեւելուց զգուշանում էր։ Ուստի կրօնաւորի մօտը մնալով ամեն բանի վերայ նրա հետ խօ֊սակցութիւն էր անում։ Ցանկարծ մի բազմութիւն գանգատի ա֊ղաղակները մինչեւ եթերը հասցրին։ Կրօնաւորը նրանց կանչեց, առանձին առանձին հարցաքննելով իւրաքանչիւր խնդրի վերաբե֊րեալ կարեւոր վճիռը Թագաւորին իմացրեց։ Թագաւորը սրա հա֊մար շատ շնորհակալ լինելով, խնդրեց որ երբեմն երբեմն նա իւր օրհնեալ նայուածքը զրկեալների դատին ուղղէ։ Կրօնաւորը տեսնելով որ եթէ խեղճերի խնդիրը շուտով եւ արդարութեամբ լուծուի, իրան մեծ վարձք պիտի լինի Աստուծոյ առջեւը, ուստի յանձնառու եղաւ։ Եւ ամեն մի կարեւոր խնդիրը ըստ ժամանակի պահանջին կրօնաւորի բերանով էր յայտնուում եւ Թագաւորը հա֊ճութեամբ մտիկ էր տալիս, մինչեւ գործը այնտեղ հասաւ որ այդ երկրի խնդիրները մեծաւ մասամբ այդ գերամեծար ծերու֊նիի օգնութեամբ էին լուծւում։ Նրա ազդեցութիւնը թէ՛ Թա֊գաւորական եւ թէ՛ գանձային գործերումը աւելանալով կամաց կամաց փառասիրութիւնը նրա սրտումը տեղ բռնելով նրա Աստ֊ուածպաշտութեան շէնքը քայքայեց եւ աստիճան ու պատիւ

ձեռք բերելու փափաքը մենակեացի գլուխը հանգստութեան բար֊ձից վեր գցելով հպարտութեան Թագին դարձրեց։ Ո՞վ է նա, որ նրան այս դիւթիչ կախարդը իւր ճանապարհից չի մոլորեցրեց։ Ո՞վ է նա, որ նրա խաբուսիկ բաժակից անզգաստութեան գի֊նին չի խմեց։ Աշխարհը մի խաբեբայ կին է, նա շատ դիւցազ֊ները իւր հրապոյրներով որսացել է։ Նա մի չար պառաւ է որ շատ անմեղները փորձութեան հորը գցել է։ Երբոր կրօնաւորը ճգնութեան աղէջուրի տեղ մարմնոյ հանգստութեան խմիչքը եւ ցանկութեան հաճոյքի օշարակը խմեց, Աստուածպաշտութեան համը նրա սրտումը մոռացուեցաւ։ Ուրիշ խօսքով․ Ո՛ր ժամ որ մենակեացի ականջը հանգստութեան խօսքը լսեց, այլեւս առանձ֊նութեան անկիւնումը հաճոյք չի զգաց։ Թագաւորն էլ երբոր կրօ֊նաւորի ազդեցութիւնը եւ նրա կարգադրութիւնները օգտակար տեսաւ, ամենը բոլորովին նրա ձեռքը յանձնեց։ Ճգնաւորը ա֊ռաջ միայն հացի հոգս էր քաշում, այժմ մի աշխարհի հոգսը իւր առջեւը եկաւ եւ մի կարպետ ունենալու գաղափարը մի երկիր ունենալու գաղափարին փոխուեցաւ։ Նրա հոգին վարդանոցում ոչ մի վարդ ճիւղի վերայ չի մնաց, աչնանային քամին փչեց եւ ո՛չ մի գարնանային կանաչ չի մնաց։ Մի օր մի ուրիշ կրօնաւոր, որ շատ անգամ սրա մօտը եկել եւ գիշերները սրա հետ լացով եւ աղօթքով լուսացրել էր, սրան այցելելու եկաւ։ Այն վիճակը եւ դրութիւնը տեսնելով զարմացման հուրը իւր սրտի տարածութեան վերայ բոցավառ եղաւ։ Երբ գիշերը եկաւ եւ մարդկանց ձայները դադրեցան, կրօնաւորին ասաց․ Ո՛վ ծերունի, այս ի՞նչ վիճակ է, որ ես տեսնում եմ եւ այս ի՞նչ տեսարան է, որ նկատւում է։ Բոլոր քո կեանքը յուսոյ ցերեկ էր, այժմ այն անուշ ցերեկը եւ այն կեանքը ո՞ւր է։ Կրօնաւորը ինչքան էլ պատճառաբանութիւններ արաւ, բայց մի խօսք որ կատարեալ գիտութեան փորձաքարին վերայ զուտ երեւնար, չի կարողացաւ ասել։ Հիւրը ասաց․ այս խօսքերը անձնասիրութիւնից յառաջ եկած պատճառներ են։ Այս նախադասութիւնների հետեւութիւնը եւ այս պատճառաբանու֊թեան արդիւնքը սա է որ ձեր օրհնեալ միտքը աշխարհային հա֊րստութիւնից յափշտակուել եւ ձեր պատուական սիրտը փառա֊սիրութեան կոչունքներով կապուել է։ Քո վեհանձն հոգին ո՛ւր, ոսկորներին ցանկանալը ո՛ւր․ ափսո՛ս, այն վսեմութեան ստուե֊րին որ զարշահոտ դիակի վերայ ես գցել։ Ե՛կ, միայնակեցու֊թեան քղանցքից այլոց փոշիները թափ տո՛ւր եւ անգթութեան գլուխը Աստուծոյ ապաւինութեան օձիքին մէջը քաշի՛ր եւ աշ֊խարհքի Թունախառն ուտեստը ցանկութեան ախորժակին մի՛ յանձնիր։ Կրօնաւորը ասաց․ Ո՛վ շնորհալի ընկեր, մարդ֊կանց խօսակցութիւնից եւ երթեւեկութիւնից իմ վերայ այնքան

տարբերութիւն չէ եղել, ես սրտով նոյն ուղղութեան վերայ եմ, որ դու գիտես: Հիւրը ասաց. Այժմ դու տեղեկութիւն չ՚ունիս, որովհետեւ ցանկութեան գիտաւորութիւնը հոգւոյն աչքը գոցել է եւ որ ժամանակ որ հասկանաս զղջումը օգուտ պիտի չ՚անէ: Քո վիճակը նմանում է այն կոյրի վիճակին, որ մտրակը օձից չի զանազանեց եւ այդ պատճառաւ կորստեան յորձանքում ընկաւ: Կրօնաւորը հարցրեց. Ի՞նչպէս է եղել այդ դէպքը: Հիւրը ասաց. Ժամանակին ՄԻ ԿՈՅՐ ԵՒ ՄԻ ՍՐԱՏԵՍ միասին ճանապարհորդութիւն անելով մի անապատում իջեւան առին: Երբոր առաւօտ եղաւ, կամեցան որ իրանց ճանապարհը գնան: Կոյրը իւր մտրակը որոնեց, պատահմամբ մի օձ ցրտից սառած այն տեղ ընկած էր, կոյրը նրան մտրակ կարծելով վեր առաւ, եւ երբոր իւր ձեռքը նրա վերայ քսեց, իւր խարազանից աւելի սահուն եւ լաւ գտաւ, նրա վերայ ուրախանալով ձիու վերայ հեծաւ եւ իւր կորած մտրակը մոռացաւ: Բայց երբոր օրը լուսացաւ, սրատեսը նայելով կոյրի ձեռքում մի օձ տեսաւ, կանչեց. Ո՛վ ընկեր, այն որ մտրակ կարծել ես, մի թունաւոր օձ է, դեռ քո ձեռքը չի խայթած նրան վար նետի՛ր: Կոյրը խորհեց թէ իւր ընկերը ցանկանում է այդ մտրակը ունենալ, ասաց. Պարո՛ն, ես ի՞նչ անեմ, գործը բարեբախտութեան գործն է, ես իմ մտրակը կորցրի, Աբարիչը նրանից լաւագոյն մի մտրակ ինձ պարգեւեց: Եթէ քո բախտն էլ բերէ, դու էլ մի լաւ մտրակ կը գտնես: Այժմ ես այն տեսակներից չեմ որ սուտ խօսքերով խաբելով մտրակը ձեռքից դուրս հանեմ: Սրատեսը ծիծաղեց եւ ասաց. Ո՛վ եղբայր, ընկերութեան պարտականութիւնը պահանջում է որ քեզ այդ վտանգից զգուշացնեմ: Խօսք լսի՛ր, այդ օձը քո ձեռքից վար գցի՛ր: Կոյրը երեսը կախելով ասաց. Ո՛վ հակառակորդ, ի՞նչու համար քո չափից անցնում ես: Խնդիրը յայտնի է որ կամենում ես իմ մտրակը ունենալ եւ այդ պատճառաւ ինձ ստիպում ես նրան վար նետելու, որպէս զի երբոր ես դէն գցեմ, դու վերցնես: Հում գաղափար մի եփի՛ր, եւ պարապ խորհուրդից անցկա՛ց: Քանզի այս մի մտրակ է որ անտեսանելի աշխարհքից է ինձ եկել: Ինչքան էլ սրատեսը նրան ստիպեց եւ իւր խօսքերը երդումով հաստատեց, օգուտ չի բերեց: Կոյրը նրա խօսքին մտիկ չ՚արաւ: Երբ օդը տաքացաւ եւ սառնութիւնը օձի վերայից գնաց, օձը ոլորուեցաւ եւ շարժման միջոցում կոյրի ձեռքը խայթելով նրան կորցրեց: Այս առակը դրա համար բերեցի, որ դու էլ աշխարհքի վերայ քո յոյսը չի դնես, նրա օձի պէս նախշուն կերպարանքից չի խաբուես եւ նրա փափկութիւնը եւ թարմութիւնը չի սիրես. քանզի նրա խայթը սպանիչ եւ թոյնը կորուսիչ է: Ինչպէս որ ասել են. Մեղրի օշարակ մի՛ սպասեր ժամանակաշրջանից. քանզի

նրա մեղրին թոյն է խառնուած: Դու կարծում ես թէ նա մեղր է, բայց ո՛չ, նա մեղր չէ այլ մահուան օշարակն է: Կրօնաւորը այս խօսքը լսելով իւր միայնակեցութեան ժամանակի վերայ խորհեց եւ տեսաւ որ այս յարաբերութիւնները նրա առաջուան սրտի մաքրութիւնը պղտորել են եւ գիտցաւ որ այդ բարեկամի խօսքերը զուտ սէրից եւ գթութիւնից յառաջ են եկել, սկսեց իւր աչքերից զղջման արտասուքը թափել: Իւր անձկութեան կրակով այրուած սրտից տաք հառաչանքներ քաշեց ասելով. Ցաւով մաշուած հոգի ունիմ, ի՞նչպէս չի հառաչեմ, ո՛հ, ո՛հ: Մեռեալ կեանք ունիմ, ի՞նչպէս չի լամ, ո՛հ, ո՛հ: Գիշերը ամբողջ վառած ճրագի պէս վառուող սրտով արտասուք թափեց եւ թիթեռնիկի նման Աստուծոյ ներկայութեան ճառագայթների փափաքովը ինքնիրան չարչարեց, մինչեւ որ սպիտակ հագուած կրօնաւոր արդար առաւօտը արեգական օթոցին երկնատաճարի խորանը փռեց եւ սեւ հագուած գիշեր ճգնաւորը իւր ներքին սենեակը մտաւ: Երբոր առաւօտը երկնակամարի վերայ լուսեղէն պատմուճանը քաշեց եւ աշխարհքը մութ գիշերուայ քողը իւր երեսից վերցրեց, նորէն մարդիկ հաւաքուեցան ճգնատան դռան առջեւը եւ հպարտութեան պարծանքի քամին փչելով գիշերային զղջման գալը մեծարանքի հովին տուաւ: Ըստ բանաստեղծին թէ. Ամեն գիշեր ասում եմ, վաղը այս տենչանքը կը ձգեմ, բայց իղձը նորոգվում է դարձեալ երբոր առաւօտ է լինում: Կարճ ասած, կրօնաւորը տէրութեան խնդիրները ձեռք առնելով իշխաններ եւ խորհրդականներ պաշտօնանկ արաւ եւ դատաստանումն էլ արդարութեան ճանապարհից չեղել սկսեց: Մի օր մի անձի սպանման վճիռ տուաւ, որին սպաննուիլը ըստ օրէնի արգիլուած էր: Վճիռը կատարուելուց յետոյ զղջալով այդ խնդիրը թաքցնելու միջոցներին դիմեց: Սպաննուածի ժառանգները թագաւորի առջեւը գալով իրաւունք պահանջեցին եւ եղելութիւնը յայտնուեցաւ: Խնդիրը ատեանը ձգուեցաւ եւ օրինաւոր դատաւորի վճիռը սա եղաւ որ կրօնաւորին այդ սպաննութեան փոխարէն սպաննեն: Կրօնաւորը ինչքան էլ միջնորդներ մէջտեղ գցեց եւ գումարներ խոստացաւ, օգուտ չ՚արաւ: Աստուածպաշտութիւնը արարածոց խօսակցութեան հետ փոխելուն հետեւանքը սա եղաւ որ նա իւր անձը կորստեան ենթարկեց, երկրաւոր բարիքներից զըրկուեցաւ եւ հանդերձեալի երանութեան չի հասաւ: Այս առակը դրա համար բերեցի որ իմացուի թէ, որովհետեւ ես էլ Աստուածպաշտութեան խորանից երես դարձնելով արքայական պալատին եմ դիմել եւ Ամենախնամի հրամանը կատարելուց իմ պարանոցը յետ քաշելով թագաւորական ծառայութեան վիզ եմ ծռել, ինչ փորձանք էլ երեւակայես, ես նրան արժանի եմ:

Երբոր Տէմինէ այս առնաբանութիւնը վերջացրեց, Թագաւորութեան գահին ծառայողները նրա պերճախօսութեանը վերայ զարմացան։ Առեւծն էլ մտածողութեան գլուխը այնպէս վար կախեց որ չէր իմանում թէ ի՛նչ կերպով այս խնդրից դուրս ելլէ եւ Տէմինէին ինչպէս պատասխանէ։ Սիահկուշ (աղուէսի նման մի կենդանի) որ խորհրդականաց դասակարգում Թագաւորին մօտաւորն էր, առեանում նստողների զարմանքը տեսնելով Տէմինէին դարձաւ եւ ասաց. Թագաւորաց ծառայողների վերայ այս բոլոր անարգական խօսքերը, որ ասացիր, քո գլխից վեր էր. քանզի նրանց գլուխը Թագաւորի շնորհքով պսակուել է եւ Թագաւորը Աստուծոյ ստուերն է։ Միթէ չե՞ս իմանում որ Թագաւորի կեանքից մէկ ժամը որ արդարութեամբ եւ հպատակախնամութեամբ անցնում է, վաթսուն տարուան Աստուածպաշտութեան չափ արժէք ունի Աստուծոյ առջեւը։ Քանի՜ քանի՜ անձնաւորութիւններ որոնք Աստուածպաշտութեան խորանում ծնրադրում եւ հրաշագործութեան Թագը կրում էին, Թագաւորաց ծառայութիւնը ընտրեցին զրկեալների օգնութեանը հասնելու եւ բռնադատեալների դատը պաշտպանելու համար, եւ նրանցից մէկը, լուսամիտ ծերունիի պատմութիւնն է որ այս խրողութիւնը կը հաստատէ։

Տէմինէ հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Սիահկուշը ասաց. Բերել են թէ. Պարսկաստանի մի քաղաքում ՄԻ ԾԵՐՈՒՆԻ ԿՐՕՆԱՒՈՐ *կար, որ բարեպաշտութեան հրապարակում վաղողներից մրցանակը առած եւ անձնուրացութեան Թագին ծայրը մթնոլորտի վերայ էր հասցրած։ Նա եղել էր բարեպաշտութեան երկրին Թագաւորը, նրա Թագը շինուել էր աշխարհատեցութիւնից, իւր ձին յաւիտենականութեան հրապարակը քշել եւ մշտնջենական մրցանակը ստացել էր։ Նրան լուսամիտ ծերունի էին ասում։ Նրա հրաշագործութեան համբաւը արեւելեան եւ արեւմտեան երկիրները տարածուած, նրա խօսքերը Եգիպտոսի, Դամասկոսի, եւ Արաբիոյ բնակիչներին յայտնուած, Միջագետքի սուրբերը Պարսկաստանի նրբազննիչների նման նրա սիրոյ առջեւը խոնարհած եւ Թուրքաստանի հաւատարիմները Հնդկաստանի աստուածասէրների նման նրան յարած եւ նրա առաջնորդութեանը ապաւինած էին։ Մի օր մի կրօնաւոր Եգիպտոսի կողմից այս սուրբ ծերունիի այցելութեանը գնալու մտադիր լինելով շատ նեղութիւններով Սամարղանդի գաւառներից անցնելով Պարսից մայրաքաղաքը հասաւ։ Անտարակոյս մինչեւ որ փնտռողի ոտքերը ճանապարհորդութեան փուշերից չի ճեղքուեն, նրա ձեռքը նպատակի վարդին չի հասնիլ։ Ճանապարհորդ կրօնաւորը երկար տարածութիւնները կտրելուց յետոյ իւր փափաքած*

տեղը հասաւ եւ ակնածութեամբ խոնարհելով սուրբ ծերունիին գաւիթի հողը համբուրելով տան զանգակը շարժեց։ Սպասաւորը սրան ներս ընդունելով սրա վիճակին եւ ճանապարհորդութիւնումը քաշած նեղութիւնների մասին հարցուփորձ անելուց յետոյ ասաց. Ո՛վ կրօնաւոր, մի քիչ սպասի՛ր, քանզի վեհափառ ծերունին Թագաւորին ծառայութեանն է գնացել, քիչ յետոյ կու գայ։ Կրօնաւորը երբոր Թագաւորի ծառայութեան բառը լսեց, ինքնիրան ասաց. Ափսո՛ս, այս ճանապարհորդութեան նեղութիւնները եւ ժամանակի կորուստը։ Մի ծերունի կրօնաւոր, որ Թագաւորի ծառայութեան է գնում եւ նրա հետ խօսակցութիւն անելու ախորժում, նրանից ինձ ի՞նչ հոգեւոր օգուտ պիտի հասնի։ Ես փափաքում էի իբրեւ շուն նրա ոտքերին քսուիլ, բայց ափսո՛ս, որ իմ այս բոլոր յոյսը միանգամայն հող դարձաւ։ Ուստի դուրս եկաւ գնաց շուկայի կողմը, իւր սրտի կզկզանքից խաբուած, որ ճգնութեան քուրայում չէր մաքրուել, իւր խարդախ դրամը սուրբ ծերունիի ժամանակի փորձաքարին էր զարնում եւ նրա վիճակից անտեղեակ գայթակղեցաւ։ Յանկարծ քաղաքի ոստիկանի աչքը նրա վերայ ընկաւ։ Պատահմամբ նրա կերպարանքով մի գող բանտից փախել էր։ Թագաւորը բանտապահների եւ ոստիկանների վերայ շատ զայրացել եւ ասել էր. Անպատճառ պէտք է գողը գտնել եւ նրա երկու ձեռքը կտրել։ Ոստիկանը կրօնաւորին տեսնելիս նրան փախած գողը կարծելով անմիջապէս չարչարանօք տարաւ։ Ինչքան էլ կրօնաւորը իւր անպարտութիւնը ցուցնել ջանաց, օգուտ չի բերեց, բաց ի ձեռքերը կտրուելուց ուրիշ բան ձեռք չ՚եկաւ։ Երբոր անգութ դահիճը իւր ջրուած սուրը կրօնաւորի ձեռքին վերայ դրաւ որ կտրէ, սուրբ ծերունիի, ա՛յ, կա՛ց, մի՛ աներ, աղաղակը լսուեցաւ։ Ինքն էլ ետեւից հասնելով խնդիրը հարցաքննեց։ Երբոր կրօնաւորի վիճակը իմացաւ, ոստիկանին ասաց. Սա մեր կրօնաւորներից մին է, այս բանը նրա վերայ զրպարտութիւն է, նրանից ձեռք քաշեցէ՛ք։ Ոստիկանը սուրբ ծերունիի իշու ոտքը համբուրելով, մեղայ ասաց եւ կրօնաւորից էլ ներողութիւն խնդրելով իւր գործին գնաց։ Խեղճ կրօնաւորը սպանման տեղից եւ անգութ դահճի ձեռքից ազատուելով սուրբ ծերունիի ետեւից գնաց։ Գնալիս սուրբ ծերունին ճանապարհումը պատեհութիւն գտնելով նրան դարձաւ եւ կամացուկ ասաց. Ո՛վ եղբայր, կրօնաւորներին մեղադրել չէ վայլում. քանզի եթէ Թագաւորի ծառայութիւնը չ՚անեմ, քեզ նման խեղճերը բռնաւորների ձեռքից չեն ազատուիլ։ Կրօնաւորը իմացաւ որ իւր չար կարծիքը իւր տգիտութիւնից է յառաջ եկել եւ ինչ որ կատարեալները անում են պակասութիւնից հեռի է. քանզի կատարեալ կրօնաւորը Աստուծոյ կամքումը իւր կամքը

չքացրել է․ ուստի ոչ մի բան չ՚անում որ Աստուծոյ կամքովը չի լինի եւ ոչ մի գործ, թէեւ խելքի եւ բնութեան հակառակ էլ երեւնայ, առանց խորհրդի չէ կատարում։ Այս առակը բերելուց նպատակը սա է որ կրօնքի մեծերը Թագաւորաց ծառայելը ընտրել են եւ իշխանների պալատը երթալ ամօթ չեն համարել։ Դու ո՞վ ես որ հաշուի գաս։

Տէմինէ ասաց․ Ինչ որ հրամայեցիր, թէ մեծերը Թագաւորաց ծառայութեանը մօտեցել են, այո՛։ Բայց նրանք ընդհանուրի օգտի համար առանց Աստուածային յայտնութեան այդ բանը չեն արել։ Անտարակոյս այդ բանումը ո՛ եւ է աշխարհային անձնական շարժառիթ չեն ունեցել, եւ ո՛վ որ այդպէս է, ինչ որ անէ եւ ասէ, ոչ ոք չէ համարձակում նրա վերայ դիտողութիւն անել․ սակայն մեզի պէսները ո՞վ են, որ այդ աստիճանին հասնին։ Նաեւ ինչ որ ասացիր թէ․ Թագաւորը Աստուծոյ ստուերն է, այն էլ ընդունում եմ։ Բայց սա այն Թագաւորի յատկութիւնն է որ նրա գործերը Աստուծոյ ճանապարհին մօտ եւ ունայն ճանապարհից հեռի են լինում։ Նա մէկին ատելութեամբ ոչ խրատում է եւ ոչ էլ պատժում։ Թագաւորաց ամենագովելի բնաւորութիւնը նա է որ նա բարի յատկութիւն ունեցող ծառաները յարգում եւ ապերախտ ու անիրաւները անարգելի է անում։ Բարի անձանց վարդենին իւր շնորհաց ջրով թարմ է պահում, բայց նա, որ փուշի նման մարդկանց խոցոտում է նրան, իւր պատկառանքով արմատից խլում է։

Մայրառիւծը ասաց․ Այդ խօսքը որ դու ասում ես, ճշմարիտ է․ սակայն եղելութիւնը դրա հակառակ է երեւում։ Ներկայ ատեանում գտնուողները համաձայն են սրան թէ․ Շիւնզիւպէ Թագաւորի համար բարի յատկութիւն ունեցող մի ծառայ էր։ Եւ հիմա բերաններում ընկել է թէ քո խառնակչութեան հրով նրա յոյսի կալը այրուել եւ քո խարդախութեան ներգործութիւնովը Թագաւորի հաւատարմութեան հիմը քանդուել է։

Տէմինէ ասաց․ Թագաւորի լուսաւոր մտքից ծածկուած չէ եւ բոլոր ներկայ գտնուողներն էլ գիտեն թէ՝ իմ եւ եզնի մէջտեղը վէճի եւ հակառակութեան պատճառ եղող ոչ մի բան չի կար եւ մի վաղեմի թշնամութիւն էլ կարելի չէ երեւակայել։ Նա ունէր զօրութիւն եւ պատեհութիւն ինձ բոլորովին հեռացնելու, եթէ ուզէր․ սակայն նա իմ վերայ միշտ գութ ունէր եւ ինձ հետ քաղցրութեամբ էր վարւում։ Ես էլ Թագաւորի առջեւը անարգուած կամ անպաշտօն չէի որ նախանձից շարժուած նրան հեռացնելու ջանայի, բայց ես Թագաւորին խրատ տուի, եւ այն խօսքը որ լսել էի եւ նրա հետեւանքները որ տեսել էի առանց կողմնապահութիւն անելու Թագաւորին ականջին հասցրի։ Իմ

վերայ պարտականութիւն էր Թագաւորի բարիքների արժէքը ճանաչել եւ եզին անիրաւութիւն եւ թշնամութիւն անելու մտադիր լինելը ուղղութեամբ իմացնել։ Ինչ որ ես ասացի Թագաւորն էլ անձամբ ստուգելով իմ խօսքերի ճշմարիտ լինելը աչքով տեսաւ եւ իւր դատողութեան որոշումովը այն խնդիրը ստորագրեց։ Շատերը որ Շիւնզիւպէի հետ միաբան՝ եւ այս ապերախտութիւնում եւ թշնամութիւնում ընկեր էին, այժմ որ ես ճշմարտութիւնը խօսել եմ, վախեցել են։ Այո՛, ճշմարտութիւնը դառն է։ Ինչպէս որ մի իմաստուն ասել է․ Որին որ ճշմարտութիւնը ասացի, նա անմիջապէս ինձ թշնամի եղաւ։ Ամենից լաւը լռութիւն է, քանի որ ճշմարտութիւնը ասել կարելի չէ։ Անշուշտ խառնակիչները պիտի ջանան իմ արիւնը թափել տալու։ Ես չէի կարծում որ իմ գոյութիւնը Թագաւորին մտերմութեան մէջ ձգէ եւ իմ խրատների հատուցումը եւ իմ ծառայութեան վարձատրութիւնը այս պիտի լինի։

Երբ Տէմինէ խօսքը այստեղ հասցրեց, ժամանակը անցած լինելով առիւծը հրամայեց որ նրան դատաւորներին յանձնեն, որպէս զի նրա գործը քննեն․ քանզի պատժելում ըստ խղճի օրինաց եւ արդարութեան, առանց հաստատ վկայութեան եւ փաստի, կարելի չէր վճիռը ստորագրել։

Տէմինէ ասաց․ Ո՞ր դատաւորը աւելի արդարադատ է քան Թագաւորը եւ ո՞ր քննիչը աւելի խղճով է քան թէ ինքնակալ Թագաւորի արդար տեսութիւնը։ Փառք Աստուծոյ որ Թագաւորի լուսաւոր միտքը հայելիի նման յստակ է, որի վերայ իւրաքանչիւր ծառայի վիճակը յայտնի է։ Ես հաստատ գիտեմ որ տարակոյսի, կասկածի եւ կարծիքի քողը բանալում ոչ մի բան Թագաւորի հանճարին եւ տեսութեանը հաւասար չէ։ Անշուշտ, քանի որ դատողութեան հայելին արատների եւ շարժառիթների ժանգից մաքուր է, վստահ եմ որ երբոր քննութիւնը կատարուի, ամենայն կերպով իմ անպարտութիւնը կը յայտնուի եւ իմ հաւատարիմ շունչը արդար առաւօտեան լոյսի գեղեցկութեան նման աշխարհայիններին կը պարզուի։ Քո հանճարի լոյսին առջեւը ոչ ոքի գաղտնիքը ծածուկ չի մնալ, ո՛վ արքայ։

Առիւծը ասաց․ Ո՛վ Տէմինէ, այս խնդրի քննութիւնումը շատ նրբազննութիւններ պիտի լինեն եւ այս գործի հետազօտութիւնը այնքան աւելի պիտի լինի քան թէ կարծում է։ Պիտի ջանամ այս գործի քննութիւնումը գաղտնիքը դուրս հանել, ինչպէս մազը խմորից։ Դու իմանում ես որ ես երկնքի բոլոր գաղտնիքները նրա լոյսի ճառագայթների միջոցով հասկանում եմ։

Տէմինէ ասաց․ Ես իմ անպարտութեան պատճառով խօսքի մէջ չափազանցութիւն եմ անում։ Քանզի գիտեմ թէ այս քննութեան

միջոցով իմ հաւատարմութիւնը յայտնի կը լինի։ Եթէ ես այս գործումը յանցաւոր լինէի Թագաւորի պալատումը սպասաւորութեան տեղ չէի բռնել եւ ոտքս կապելով պատիժի չէի սպասել, այլ հիմա փնացել էի մի ուրիշ երկիր․ քանզի աշխարհի հրապարակը շատ ընդարձակ է։

Մայրառիւծը ասաց․ Ո՛վ Տէմինէ, քննութիւնում քո չափազանցութիւնը խղճահարութիւնից զերծ չէ երեւում։ Դու կամենում ես ճարպիկութեամբ անմեղ հանել քո անձը։ Դեռ խնդրի մասին քեզ մի բան չի հարցրած այս պատիժից փախուստ որոնել փուճ խորհուրդ է։

Տէմինէ ասաց։ Իմ թշնամիները շատ են եւ ինձ ատողները անհամար։ Աչք տնկել եմ սրան, որ իմ գործը մի այնպիսի վստահելի անձին յանձնեն, որ աչառութիւն անող եւ կասկածոտ չի լինի եւ ինչ որ լսէ, եղելութիւնը ճշմարտութեամբ նորին վեհափառութեան ականջին հասցնէ, որպէս զի ես լոկ կասկածի համար չի սպաննուիմ եւ Թագաւորը դատաստանի օրը անմեղ արեան համար չի տանջուի։ Ես սպաննուելուց չեմ վախենում բայց վախենում եմ որ իմ արիւնը նրա քղանցքը արատաւորէ։

Առիւծը ասաց․ Ես ոչ մի դատաստանում արդարութեան ճանապարհից չեմ շեղել։ Անհնար է որ բաց ի արդարութեան ուղիից ուրիշ տեղ ոտք դնեմ։ Եթէ այս անիրաւութիւնը քեզանից է յառաջ եկել, արժանի եղած պատժին պէտի ենթարկուես եւ ինչ որ ժամանակաշրջանի ագարակում ցանել ես, այն կը հնձես։

Տէմինէ ասաց․ Ես ի՞նչ պատճառաւ այս անիրաւութիւնը խորհած լինեմ կամ ի՞նչու համար այս մեծ ագահութիւնները եւ բարձր պաշտօնի հասնելու գաղափարը իմ մտքիցը անցրած լինեմ։ Ես Թագաւորի արդարութիւնը գիտեմ եւ նրա գորովալից սիրտը ճանաչում եմ։ Անշուշտ, նա ինձ համայն աշխարհքին հասնող արդարութիւնից պէտի չի զրկէ եւ իմ յոյսի տարածութիւնը մէջտեղից պէտի չի կտրէ։ Աստուած նրան արդարութեան համար է ստեղծել, արդար Թագաւորից զրկանք յառաջ չի գալ։

Ներկայ գտնուողներից մէկը ասաց․ Ինչ որ Տէմինէ ասում է, սրտանց Թագաւորը մեծարել չէ․ այլ կամենում է այս խօսքերով պատիժը իրանից հեռացնել։

Տէմինէ պատասխանեց․ Ո՞վ է իմ վերայ ինձանից աւելի գթացող եւ իմ ազատութիւնը ինձանից աւելի սիրող։ Ո՛վ որ նեղ պարագայումը թուլանայ եւ իւր գլուխը պահելու չի ջանայ, այլեւս նրանից ի՞նչ կ՚սպասուի։ Եթէ ես իմ գործը չեմ կարողանում կատարել, ուրիշի գործը ի՞նչպէս կը կատարեմ։ Քո խօսքը ապացոյց է քո պակասամտութեան, անհասկացողութեան, տխմարութեան եւ տգիտութեան։ Մի՛ կարծեր որ այս բանը

թագաւորից ծածուկ կը մնայ, այլ արքայական միտքը բաւականչափ խորհելուց յետոյ քո անպիտան խօսքը խրատից պէտի որոշէ։ Նրա լուսաւոր խելքը մի կեանքի գործերը մի գիշերում կարգադրում եւ մեծ բանակները մէկ խորհուրդով յաղթում է։ Նրա հեռատես եւ աշխարհակալ միտքը մի վայրկեանում այնպէս գործեր կարող է կատարել որ մի ամբողջ կեանքում չեն կատարուիլ։

Սիահկուշը ասաց․ Քո անցեալ խարդախութիւնների եւ անիրաւութիւնների վերայ այնքան չեմ զարմանում, ինչքան որ հիմա քո լեզուանութեանը, ճառախօսութեանը, այլաբանութեանը եւ առակախօսութեանը վերայ։

Տէմինէ ասաց․ Այո՛, ճառախօսութեան տեղն է եթէ ընդունելութիւն գտնէ․ առակախօսութեան ժամանակն է եթէ լսող ականջներին հասնի։

Մայրառիւծը ասաց․ Ո՛վ անիրաւ, դեռ յո՞յս ունիս խաբեբայութիւնով եւ խարդախութիւնով ազատուելու։

Տէմինէ ասաց․ Եթէ մէկը լաւութիւնը գէշութեան հետ՝ եւ բարին չարին հետ փոխելու լինի, ես գոնեայ ծառայութեան պարտականութիւնը կատարել եւ իբրեւ խրատատու իմ ուխտի վերայ հաստատ կեցած կը լինեմ։ Թագաւորը լաւ է իմանում որ ոչ մի անիրաւ նրա առջեւ խօսք ասելու չէ համարձակում։ Եթէ ինձ պատժի արժանի սեպէ, նրա վնասն էլ իրան կը դառնայ, եթէ իմ գործումը շտապէ եւ լուրջ խորհրդածութեան օգուտներից օրհնութիւն չի վայելէ, երկրորդ անգամ խելքը գլխին կը գայ, եւ յետոյ կը զղջայ։ Ինչպէս որ ասել են․ Ո՛վ որ գործերումը շտապէ նա իւր խելքի տունը կը քանդէ։ Նա որ շտապով գործում եւ համբերութեան օրհնութիւնից զրկուում է, նրան հասնում է ինչ որ այն կնոջ հասաւ, որ իւր գործումը շտապեց, բարեկամը եւ տղան չի զանազանեց։

Առիւծը Տէմինէի խօսքին ուշադրութիւն էր դարձնում։ Երբ այս բանը լսեց, հարցրեց․ Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Տէմինէ ասաց․ Բերել են թէ․ ՔԷՇՄԻՐԻ ՔԱՂԱՔՈՒՄԸ մի հարուստ վաճառական կար որ շատ ծառաներ եւ սպասաւորներ ունէր, նաեւ լուսնեակի դէմքով եւ մշկեղէն վարսով մի կին ունէր որ ոչ երկնակամարի աչքը այս տեսակ արեգակ տեսել, ոչ էլ ժամանակաշրջանի ձեռքում այսպիսի մի գեղեցիկ ընկել էր։ Նրա երեսը միութեան ցերեկի նման լուսաւոր, իսկ նրա բացակայութիւնը բաժանման գիշերի պէս մթին եւ անվերջ էր։ Այս վաճառականը մի նկարիչ դրացի ունէր, որ իւր արհեստումը հռչակ ստացել էր, իւր ժամանակակիցները նրա ընտիր նկարչութեան զմայլելով ապշել էին, նրա կենդանի նկարները Չինաց նկարիչները զարմանքում էին թողել եւ նրա բնական յարմարագոյն

նկարչութիւնը բոլոր նկարիչները ապշութեան անապատում մոլորեցրել էր։ Իւր արագաշարժ ձեռքի վարպետութիւնովը երբեւ հով ջրի երեսին նկարներ էր քաշում եւ գեղեցիկների դէմքի եւ վարսի նման հրապուրիչ պատկերներ էր հանում օրուայ տախտակի վերայ։ Ո՛ր տախտակի վերայ որ նա մի պատկեր գծագրած լինէր, նրան նայելիս խելքը երբեւ պատկեր իւր տեղը չորացած մնում էր։ Վերջապէս նրա եւ վաճառականի կնոջ մէջտեղ սիրահարութիւն ընկաւ։ Նկարիչը այդ գեղեցիկ նկարի վերայ անվայել սէր կապելով տենչանքի իշխանը նրա սրտի վերայ, որ իմացականութեան մայրաքաղաքն է, տիրելով իղձի զօրաբանակը մարմնոյ աշխարհքի եօթը մասերի վերայ աւարի ուղարկեց։ Երբոր տենչանքի իշխանը սրտի, հաւատքի եւ բարոյականութեան թագաւորութիւնը կործանեց, նրա աչքը կրօնաւորների սրտի նման արթուն եւ անքուն մնաց եւ սկսեցին նրա զարթուն աչքերը Ապրիլ ամսոյ ամպերի նման արտասուք տեղալ։ Վաճառականի կինն էլ երիտասարդը տեսնելով սիրտը ձեռքից փախցրել եւ համբերութեան ցուցակը մոռացման դարակն էր դրել եւ բանաստեղծի հետ այս խօսքն էր ասում. Սիրտը գնաց եւ հիմա կուրծքը հոգիից էլ դատարկուել է։ Ո՛վ համբերութիւն դէն գնա՛, այս տեղ քո տեղը չէ։ Տենչանքի ձգտումները երկու կողմից գործելով առանց միջնորդի միմեանց հետ տեսնուեցան եւ երթեւեկութեան ճանապարհը երկուսի մէջտեղումը օտարների փուշից մաքրուեցաւ։ Մի օր կինը նրան ասաց. Երբոր դու մեր անկիւնը քո դէմքովը զարդարելու եւ լուսաւորելու համար գալու լինես, խնդրում եմ որ մի ձայն տաս կամ մի քար գցես, որ ես քո գալը իմանամ։ Մի յարմար միջոց մտածի՛ր, որ իմ եւ քո մէջտեղը նշանի համար լինի։ Նկարիչը ասաց. Երկու գոյնով մի հովանոց կը շինեմ։ Նրա սպիտակը աստղի անդրադարձութեան նման, որ ջրի մէջ փայլում է, եւ նրա սեւը Եթովպացիի մազի պէս, որ Թուրքերի երեսի վերայ շողում է։ Դու երբոր այն նշանը տեսնես շուտով դուրս վազի՛ր։ Նրանք այս կարգադրութեան վերայ խօսելիս, նկարչի աշակերտներից մի տղայ պատի ետեւը կանգնած լսում էր։ Մի քանի օրից յետոյ հովանոցը լրացաւ եւ երթեւեկութեան խոստումը հաւատարմաբար կատարուեցաւ։ Մի օր նկարիչը մի կարեւոր գործի գնալով ուշացել էր։ Աշակերտ տղան հովանոցը, երբ թէ նրա վերայի գոյները պիտի որոշէր, նկարչի աղջկից առնելով իւր վերայ բացած այդ կնոջ տունը եկաւ։ Անհամբեր կինը, որ իւր ծայրայեղ տոփանքից տխրուած նկարչին էր սպասում, օտարը բարեկամից, անծանօթը ծանօթից չի զանազանեց եւ իւր անձը զուարճութեան յանձնելով ցանկութեան պահանջը կատարուեցաւ։ Տղան այդ դիմակով իւր փափաքին հասնելուց յետոյ

հովանին իւր տեղը յանձնեց։ Պատահմամբ նոյն միջոցին նկարիչը եկաւ եւ տեսութեան փափաքից համբերութիւնը կորած վեր առաւ հովանին եւ գնաց վաճառականին տունը։ Կինը նրան դիմաւորելով եւ շատ շողոքորդութեամբ ներս ընդունելով ասաց. Ո՛վ սիրելի, բայց՞ է, որ նոյն ժամուն դարձեալ յետ եկար։ Երիտասարդը իմացաւ թէ խնդիրը ի՛նչ է, իսկոյն իւր գալուն մի պատճառ բերելով ետ դարձաւ իւր տունը։ Խնդիրը ստուգելուց յետոյ աղան եւ աղջիկը սաստիկ պատժեց եւ հովանոցը այրելով սիրականի խօսակցութիւնից հրաժարեց։ Եթէ այս կինը այդ գործում չի շտապէր, աղայի յարաբերութիւնով չէր աղտոտւում եւ իւր սիրած անձի տեսութիւնից չէր զրկուում։ Երբոր մէկը շտապման տունկը տնկէ, անպատճառ նա թշուառութեան պտուղը կը քաղէ։ Այս առակը դրա համար բերեցի որ թագաւորը իմանայ թէ իմ գործումը շտապել պէտք չէ։ Ճշմարիտը այն է որ ես այս խօսքը պատժի վախից եւ թագաւորի երկիւղից չեմ ասում. քանզի մահը, որ մի անհաճելի քուն եւ անքունների հանգստութիւնն է, անշուշտ պիտի լինի եւ շատ զօրաւորները նրա ձեռքից անճար մնալով գիտցել են որ ունայնութեան շրջանակից ոչ ոք կարող չէ դուրս ելլել։ Ո՛վ որ գոյութեան աշխարհքում ոտք կոխել է, անշուշտ նա մահուան բաժակը պիտի խմէ եւ ապականութեան զգեստը պիտի հագնի։ Երկինքը ո՞րին նստեցրեց խաղաղութեան արեւումը որ վերջապէս նրա տեւողութիւնը իւր արշալոյսին պէս կարճատեւ չ՚արաւ։ Դերձակ ժամանակը ո՞րին մի շապիկ կարեց որ վերջապէս նրան չի պատառեց։ Եթէ ես հազար հոգի ունենայի եւ գիտենայի թէ նրանց վերջացնելը թագաւորին օգտակար է, բոլորն էլ մի ժամու մէջ կը զոհէի եւ սրան երկու աշխարհի երանութիւնը կը համարէի։ Բայց թագաւորի պարտականութիւնն է որ այս գործի հետեւանքը նըկատէ. քանզի թագաւորին առանց սուրի չէ կարելի պահպանել եւ կարեւոր ծառաները փուճ գաղափարով պէտք չէ կորցնել։ Կարեւոր գործերը կատարող մի ծառայ ամեն ժամանակ չէ կարելի գտնել եւ մի հլու սպասաւոր, որ վստահելի եւ կրթութեան ընդունակ լինի, կարելի չէ ձեռք բերել։ Տարիներ պէտք է մինչեւ որ մի բնական քարը արեւի միջոցով Պէտէխշանի գոհարը դառնայ կամ Արաբիոյ յակինթը։

Մայրառիւծը երբ տեսաւ որ Տէմնէի խօսքերը ախորժանօք լսւում է, հոգսի մէջ մտաւ թէ մի՛ գուցէ, առիւծը այս ոսկեխառն խարդախ դրամներին, ճշմարտանմման կեղծիքներին եւ սրտագրաւ սուտերին հաւատայ եւ նրա եռանդուն խօսքերը եւ անուշ լեզուն առիւծին արգիլէ այս խնդիրը քննելուց։ Ուստի առիւծին դառնալով ասաց. Քո լռութիւնը նրան է նմանում թէ, Տէմնէ

ճշմարիտ է եւ միւսները սուտ են։ Ես չէի իմանում որ դու այսչափ տաղանդ, հանճար, խելք եւ սրամտութիւն ունենալուց յետոյ ճշմարիտ խօսքերից չ'ազդուիս եւ ցնորքներին եւ լիրբ խօսքերին խաբուելով քո դիրքը փոխես։ Սոխակի երգեցողութիւնը քեզ ո՞ր տեղից հաճոյք կը պատճառէ, քանի որ քո ականջը եւ ուշը բարբանջուտ թռչուններին ես տալիս։ Եւ զայրացած իր տեղից ելաւ գնաց տուն։

Առիւծը հրամայեց որ Տէմնէին կապելով բանտումը պահեն մինչեւ որ դատաւորները նրա գործը քննելով ինչ որ ճշմարիտ է յայտնեն։

Ժողովքը ցրուեցաւ եւ մայրառիւծը առանձին եկաւ առիւծի մօտ ասաց. Որդեա՛կ իմ, ես միշտ Տէմնէի զարմանալի լինելը լսել էի։ Այժմ ինձ բոլորովին պարզուեցաւ թէ նա ժամանակի ճառուկը եւ աշխարհքի հազուագիւտն է եղել։ Արդ այսքան եռանդով ի՞նչպէս կարելի է սուտերը ասել, գեղեցիկ պատճառները եւ անուշիկ բառերը ի՞նչպէս կարելի է կազմել։ Այս նուրբ հետեւութիւնները որ նա հանում է, եթէ թագաւորը նրան միջոց տայ, մի խօսքով նա ինքնիրան այս վտանգից դուրս պիտի հանէ։ Բայց նրա սպաննուելը թէ՛ թագաւորի համար եւ թէ՛ զինուորականների համար մեծ հանգստութիւն կը պատճառէ։ Լաւագոյնը այն է որ ինչքան որ կարելի է շուտով սիրտը նրա գործից հանգստացնես եւ նրան խօսելու եւ պատասխանելու միջոց չի տաս։ Թէեւ շտապումը լաւ չէ բայց ոչ բարի գործումը։

Առիւծը ասաց. Թագաւորաց մօտաւորների գործը նախանձ եւ վէճ է, պալատում ծառայողների զբաղումը չարամտութիւն եւ խաբէութիւն է, գիշեր ցերեկ միմեանց եռեւից ընկած իրարի յանցանքը եւ ձիրքը քննում են։ Ո՛վ որ աւելի ձիրք ունի, նրան աւելի են հալածում եւ տաղանդաւորներին նախանձողները եւ չարակամները աւելի են լինում եւ ձիրք չ'ունեցողին ամենեւին չեն նախանձում։ Տէմնէ շատ ձիրքերով զարդարուած է եւ իմ մօտը կատարեալ ընդունելութիւն ունի։ Շատ կարելի է որ նախանձողները միաբանել են նրան մի յանցանքով մէջտեղից վերցնելու։

Մայրառիւծը ասաց. Այս աստիճանի նախանձը, որ մէկին կորստեան ենթարկէ, ի՞նչպէս կարելի է լինել։

Առիւծը ասաց. Նախանձը մի կրակ է, որ երբոր բռնկում է, չորը եւ թացը այրում է, եւ նախանձի չափազանցութիւնը սա է պահանջում որ մարդը մինչեւ անգամ իրան բարիք լինելն էլ չէ կարող տեսնել։ Ինչպէս որ այն երեք նախանձոտների պատմութիւնից յայտնուում է։

Մայրառիւծը հարցրեց. Ի՞նչպէս է այդ պատմութիւնը։

Առիւծը ասաց. Բերել են թէ. ԵՐԵՔ ՀՈԳԻ միացած ճանապարհորդութիւն էին անում։ Նա որ ամենից մեծն էր միւս երկուսին հարցրեց թէ. Դուք ի՞նչու համար ձեր քաղաքից եւ բնակարանից դուրս էք ելել եւ ի՞նչ պատճառաւ դրացիների հետ հանդիստ ապրելը թողել՝ եւ ճանապարհորդութեան նեղութիւնները ընտրելով պանդխտութեան էք եկել։ Նրանցից մին ասաց. Որովհետեւ իմ եղած տեղը այնպիսի պատկերներ էին լինում որ ես չէի կարող տեսնել, նախանձը ինձ յաղթում էր, եւ չարունակ նախանձի կրակում այրուում էի, մտածեցի որ մի քանի օր հայրենիքը թողնեմ. թերեւս չի տեսնուելու բաները չի տեսնուեն։ Միւս ընկերը ասաց. Ես էլ նոյն ցաւից հայրենիքը թողնելը ընտրեցի։ Մեծ ընկերը ասաց. Դուք երկուքդ էլ իմ ցաւակիցներն էք. ես էլ նոյն հոգսից ստիպուած դուրս եմ ելել։ Ճշմարիտ եմ ասում որ չեմ կարող տեսնել որ ուրիշները ունեն եւ ես նայեմ։ Արդ յայտնի եղաւ որ երեքն էլ նախանձոտ էին, եւ քանի որ իրանց բնաւորութիւնները մի տեսակ էին միմեանց լաւ յարմարելով գնում էին։ Մի օր գնալիս երեքը միասին ճանապարհի մէջտեղը մի տոպրակ ոսկի ընկած գտան, ասացին. Եկէ՛ք, այս ոսկիները բաժանենք եւ այս տեղից մեր հայրենիքը դառնալով մի քանի օրեր հանգստութեամբ անցկացնենք։ Իւրաքանչիւրի ճակատի վերայ նախանձի քրտինքը եկաւ եւ ոչ մէկը չի կամեցաւ որ նրանից ուրիշին մի օգուտ հասնի։ Շուարած մնացին։ Ոչ կարողանում էին ոսկին ճանապարհի մէջտեղումը թողնելով անցնել գնալ, ոչ էլ կարողանում էին իրանց մէջ բաժանել։ Մէկ օր եւ մէկ գիշեր անապատի մէջտեղումը սոված եւ ծարաւ մնացին, քունից եւ հանգիստից անցնելով իրարու հետ վիճեցին, սակայն խնդիրը չի լուծուեցաւ։ Ինչպէս որ ասել են. Աշխարհքի գործը որ վախճան չ'ունի, նման է մի ծովի որ սահման չ'ունի։ Ցածահոգիները ինկան նրանում՝ այնպէս ցաւի մէջ որ դարման չ'ունի։ Հետեւեալ օրը առաւօտեան այն երկրի թագաւորը որսի էր գնացել, մի խումբ պաշտօնեաներով այն տեղ հասնելով այդ երեք հոգիները դաշտի մէջ նստած տեսաւ։ Երբոր խնդիրը հարցաքննեց, եղելութիւնը ճիշդ եղածին պէս պատմեցին թէ. Մենք երեքս նախանձի յատկութիւններով զարդարուել ենք, եւ այս պատճառաւ հայրենիքից եւ բնակարանից հեռացած թափառում ենք։ Հիմա էլ այստեղ այս բանը յառաջ գալով խռովութեան մէջ ենք ընկել։ Մի դատաւոր որոնում էինք, որ այս ոսկին բաժանելու խնդրումը մեզ օգնէ։ Փառք Աստուծոյ որ մեր ուզածը յաջողուեցաւ։ Թագաւորը հրամայեց թէ. Ձեզանից իւրաքանչիւրը թող իւր նախանձի յատկութիւնը պատմէ. որպէս զի տեսնեմ թէ ձեզանից իւրաքանչիւրը ի՞նչ աստիճան իրաւունք ունի եւ նրա համեմատ

ոսկրները ձեզի բաժանեմ։ Մէկն ասաց. Իմ նախանձը այն աստիճանի է որ երբեք չեմ ուզեր մէկին բարիք ընել եւ ողորմել, որպէս զի նա չ՚ուրախանայ։ Միւսը ասաց. Դու լաւ մարդ ես եղել եւ նախանձից բաժին չ՚ունիս։ Իմ նախանձը այնչափ է որ չեմ կարող տեսնել թէ մէկը մի ուրիշին բարիք անէ եւ իւր առատաձեռնութեամբ ուրիշը ուրախացնէ։ Երրորդը ասաց. Դուք երկուքդ էլ այս բանից բաժին չէք ունեցել եւ ձեր խօսքը նշանակութիւն չ՚ունի։ Ես այնպէս եմ որ երբեք չեմ ուզեր որ մի ուրիշը ինձ ողորմի կամ բարիք անէ. որպէս զի մէկից միւսին բան չի հասնի, էլ մէկից մի ուրիշին լաւութիւն հասնելը ո՞ւր կը մնայ։ Թագաւորը զարմանքի մատը մատծման ատամների մէջտեղ առնելով ապշեցաւ, ասաց. Ձեր խօսքին նայելով այս ոսկին ձեզ պիտի չի հասնի եւ ձեզանից իւրաքանչիւրը իւր մեղքի պատիժը կրելու է։ Նա որ չէ կամենում ուրիշին բարիք անել, պէտք է վարձատրութիւնից զրկուած մնայ եւ թէ՛ այս աշխարհքում եւ թէ՛ հանդերձեալ աշխարհքում վնաս կրէ։ Նա որ չի կարող տանել որ ուրիշը ուրիշին բարիք անէ, պէտք է նրան գոյութեան կապանքից լուծել, որ այս նեղութեան ճնշումը նրա հոգիի վերայից վերցուի։ Միւսը որ իւր վերայ նախանձում է եւ իրան բարիք լինելը չէ կամենում, արժան է որ նա երկար ժամանակ տանջանաց եւ խոշտանգանաց ճանկերին յանձնուելով բազմատեսակ պատիժներով չարչարուի. որպէս զի մինչեւ նրա հոգին մահուան որոգայթում ընկնելը չարչարանաց կերակուրը ճաշակէ։ Ուստի հրամայեց որ այդ առաջին մարդին գլուխը ոտքը բոպկացնեն եւ նրա բոլոր ունեցածը առնելով առանց պաշարի եւ մերկ այն դաշտումը բաց թողեն։ Եւ ասաց. Այն որ ուրիշին բարիք չէ կամենում, պէտք չէ նրան բարիք կամենալ. ո՛ր ծառը որ պտուղ չ՚ունի նրա արմատին կացին պէտք է։ Երկրորդ նախանձոտի համար հրամայեց որ անգթաբար սրով նրա գլուխը մարմինից բաժանեն. որպէս զի նա նախանձի նեղութիւնից ազատի։ Երրորդ նախանձոտին էլ կպրաձիւթ քսելով արեւի առջեւը բաց թողեցին. որպէս զի երկար ժամանակ չարչարուելով կորսուի։ Նախանձի յատկութիւնը այդ երեք հոգիները այս պատիժին հասցրեց եւ կատարեալները ասել են. Այն ցաւը որ դարման չ՚ընդունիր նախանձն է։ Դեւի եւ չար գազանի բնաւորութիւնը նախանձն է։ Ասում են թէ. նախանձոտը մարդկանց թշնամին է. բայց եթէ լաւ նայես նա իրան թշնամին է։ Ոչ մի ցաւ նախանձից մեծագոյն չէ. որովհետեւ նախանձոտը միշտ ուրիշների ուրախութիւնից տրտմում՝ եւ այլոց հանգստութիւնից նեղվում է եւ միշտ այս հոգսումը հոգեւարքի ցաւ է քաշում թէ ուրիշը ի՞նչու համար գոյութիւն ունի։ Այս առակը նրա համար

է որ յայտնի լինի թէ նախանձը մինչեւ անգամ այստեղ է հասնում որ մէկը իրան բարիք լինելն էլ չէ կամենում. սրանից հասկացվում է թէ ուրիշի բարիք լինելու մասին ի՛նչ աստիճանի է։ Կարծում եմ որ Տէմնէի խնդիրը նախանձոտներ մէջտեղ են բերել։

Մայրառիւծը ասաց. Ես այս պալատականներից նախանձի նշոյլը չեմ նկատել եւ ոչ մէկի վերայ այս յատկութիւնը չեմ տեսել։ Հաւանական է որ նրա սպանման մասին բոլորի համաձայն լինելը թագաւորին խրատի համար է, եթէ ոչ նրան հեռացնելը այս նախապատրաստութիւններին կարօտ չէր։

Առիւծն ասաց. Այս բանի մէջ կասկած ունիմ եւ այս տարակոյսը փարատելու համար Տէմնէի գործումը չի պիտի շտապեմ, որպէս զի ուրիշների օգտին համար իմ վնասը կամեցած չի լինիմ եւ արարածները հաճեցնելու համար Արարչի տհաճութեան չ՚արժանանամ։ Նրա խնդրի մէջ մինչեւ որ բոլոր քննութիւնը ի գործ չի դրուի, նրան սպաննելու հրաման տալը ինձ պիտի չի ներեմ. քանզի Շիւնզիւպէի գործումը շտապեցի եւ այսքան զղջում կրեցի։ Ուրեմն լաւը այն է որ միայն կարծիքով տաղանդի տէր մի անձը չի կորցնեմ եւ մինչեւ որ ստուգութեան դէմքը տարակուսանքի վարագուրի տակից երես չի ցուցնէ, ոչ մէկ վճիռ չ՚ատորագրեմ։ Ես այս խօսքի տպաւորութիւնը, որ մի բարի բնաւորութեան եւ հանճարի տէր անձը աւել է, մտքիցս պիտի չի ջնջեմ։ Երբոր քո աչքը մէկի մեղքին վերայ ընկնի, պատժելու մասին երկար մտածի՛ր։ Քանզի հեշտ է Պէտէխշանի գոհարը կոտրել, բայց կոտրածը շինել հեշտ չէ։ Ո՛վ որ բարկանալով շուտով իւր ձեռքը սուրին է տանում, ափսոսանքի ձեռքի ետեւն է խածնում։

Առիւծի եւ մայրառիւծի խօսակցութիւնը վերջացաւ եւ իւրաքանչիւրը գնաց իւր հանգստարանը։ Բայց որովհետեւ Տէմնէին բանտում տարել եւ իւր ոտքերին եւ վզին ծանր շղթաներ զարկել էին, Քէլիլէ լսելով իւր եղբայրական գութը շարժեցաւ եւ որոշեց որ բանտումը նրան այցելէ, ուստի անմիջապէս եկաւ։ Երբոր բանտը մտաւ, աչքը իսկոյն Տէմնէի վերայ ինկաւ եւ սկսեց իւր աչքերի ամպից արտասուքի անձրեւներ տեղալ, ասաց. Ո՛վ եղբայր, ես ի՞նչպէս կարող եմ քեզ այս պատժի եւ նեղութեան մէջ տեսնել, սրանից յետոյ ես կեանքից ի՞նչ համ պիտի առնեմ, ո՛վ իմ հոգւոյս հատորը, առանց քեզի ի՞նչպէս պիտի ապրիմ, եւ երբ դու իմ մօտը չի գտնուիս ես ուրախութիւնը ի՞նչպէս պիտի վայելեմ։

Տէմնէ էլ լացի բռնուելով ասաց. Ո՛վ սիրելի բարեկամ, քո հեռաւորութիւնը իմ լեարդը այրել եւ իմ սիրտը խոցոտել է։ Այս բանտի պատիժը, բոլոր նեղութիւնները եւ ծանր շղթաները ինձ

այնչափ չեն ազդում, ինչքան որ քեզանից մի վայրկեան հեռի լինելը եւ բաժանման կրակով այրուելը։

Քէլիլէ ասաց. Ո՛վ Տէմինէ, քանի որ խնդիրը այս աստիճանի է հասել, եթէ այս խօսքում քեզ խստութիւն անեմ, պէտք չէ որ նեղանաս։ Ես առաջուց այս բոլոր վիճակը տեսնելով քեզ անխոնջ խրատում էի, բայց դու ուշադրութիւն չի դարձնելով քո տկար կամքի եւ անպատշաճ կարգադրութեան արդիւնքը ընդունեցիր։ Իմ ասածը կատարուեցաւ։ Ես ասել էի. Ո՛վ իմ սիրտ, այնտեղ մի՛ գնար, կը բռնուիս. բայց վերջապէս գնացիր եւ իմ ասածը քո առաջն եկաւ։ Եւ եթէ խնդրի սկզբումը քեզ յորդորելում պակասութիւն արած լինէի եւ թախանձանօք քեզ խրատած չի լինէի, այսօր քո հետ այս անխելքութեան մասնակից եղած կը լինէի եւ այս տեսակ խօսքեր խօսելու կարող չէի լինում։ Ո՛վ տգէտ, ես քեզ չէի ասում որ գիտունների ակնարկութիւնը այս խօսքում, թէ քուն իւր մահից առաջ է մեռնում, չէ նշանակում միայն այս կեանքից զրկուիլ եւ նրա վայելքները կորցնել, այլ սրանից այնպէս ցաւ է յառաջ գալիս որ կեանքը անտանելի է լինում եւ մարդը ամեն վայրկեան մահուան է փափաքում, ինչպէս որ քեզ պատահել է։ Ճշմարի՛տ, մահը այս կեանքից լաւ է։ Քո սիրտը այնպիսի հոգսով փշրվում է որ նրա չգոյութիւնը գոյութիւնից հազար անգամ լաւ է։

Տէմինէ ասաց. Ո՛վ եղբայր, ինչ որ իրաւացի էր դու միշտ ասում՝ եւ յորդորելու մասին քո պարտականութիւնը կատարում էիր, բայց չար ցանկութիւնը, արծաթասիրութիւնը եւ փառասիրութիւնը իմ կամքը տկարացրին եւ քո խրատները իմ սրտումը անարժէք արին։ Թէպէտեւ գիտէի թէ այս գործի վնասը անվերջ եւ վտանգը անսահման է, բայց դարձեալ բոլոր ջանքով շարունակեցի, ինչպէս որ մի բան ուտելու համար իւր ախորժակից յաղթուած հիւանդը այդ բանի վնասակար լինելը ճանաչելով հանդերձ նրան ուտում է։ Այսպիսի մէկը, որ իւր կիրքին հետեւելուց չէ կարող հրաժարել, նրան ինչ փորձանք եւ վնաս էլ գայ, պէտք է քաշէ եւ եթէ զանգատ էլ անելու լինի, իրանից պէտք է անէ։ Ես օտարներից չեմ տրտնջում, քանզի իմ սրտին ինչ ցաւ որ հասել է, ինձանից է հասել։

Քէլիլէ ասաց. Խելացի մարդը նա է որ իւրաքանչիւր գործի սկզբումը նրա վախճանին նայէ եւ ծառը տնկելուց առաջ նրա պտուղի վերայ խորհի որ վերջը իւր արածի վերայ չի զղջայ եւ իւր ասածի վերայ չի շուարի. քանզի այդ զղջումը եւ շուարումը բացի թշնամիների ուրախութիւնից եւ բարեկամների յանդիմանութիւնից ուրիշ օգուտ չէ տալիս։ Զղջումից ի՞նչ օգուտ, քանի որ դու առաջուց յանցանք ես գործում։

Տէմինէ ասաց. Եղբա՛յր, առանց թշնամիի լինելը ցած եւ տկար մարդկանց յատկութիւնն է, ապահով նստելը եւ ուրախութեամբ ապրելը տխմարների եւ յիմարների վիճակն է։ Ո՛վ որ վեհանձնութիւն ունի նա դժուար ցաւերից եւ խոշոր վտանգներից չէ ազատվում։

Քէլիլէ ասաց. Ունայն հպարտութիւնը եւ անցաւոր փառքը այս բոլոր ցաւերին եւ նեղութիւններին չեն արժում։ Ինչպէս որ ասել են. Հպարտութեան պարտիզումը ուրախութեան պտուղը մի՛ որոնիր. քանզի այս ժամանակաշրջանի պարտիզումը այս տեսակ պտուղ քիչ է լինում։ Պէտք էր որ ուշադրութեան ճառագայթները այս աշխարհքի ստացուածքին եւ բարիքին վերայ չի ձգէիր որ ցաւերի եւ նեղութիւնների հորը չ'ընկնէիր, եւ նախանձի եւ չարակամութեան տունկը չի տնկէիր որ այսօր փորձանքի եւ թշուառութեան պտուղը չի քաղէիր։

Տէմինէ ասաց. Գիտեմ որ այս փորձանքի սերմը ես եմ ցանել, եւ մարդը ինչ որ ցանում է, նա անշուշտ նոյն բանն է քաղում, գարիից գարի, ցորենից ցորեն։ Ես թունաւոր խոտ եմ ցանել ի հարկէ վարդաշաքարի չեմ սպասում։ Այժմ որ գործը ձեռքից գնացել եւ ձեռքը գործից մնացել է, ո՛չ կարգադրութեան մատի ծայրը նախատեսնմանութեան հանգոյցն է արձակում եւ ո՛չ էլ խորհրդածութեան հայելիումը ելքի երեսն է երեւում։ Ես իմ յանցանքը իմանում եւ իմ մեղքը տեսնում եմ, գիտեմ որ հարըստութեան եզակի գոհարը նեղութեան խորխորատի վտանգին չէ արժում, ըստ ասածին. Ծովի վտանգը օգուտի հոտով առաջ հեշտ էր երեւում, բայց չէի գիտում թէ այդ յորձանքը հարիւր գոհարներին չէ արժում։

Քէլիլէ ասաց. Այժմ քո ազատութեան կարգադրութիւնը ի՞նչպէս ես արել եւ քո անձը փրկելու համար ի՞նչ միջոց ես խորհել։

Տէմինէ ասաց. Այնպէս է երեւում որ կենաց նաւը այս կորստական յորձանքումը պիտի ընկղմի եւ գոյութեան արեգակը մահուան եւ չքացման արեւամուտին մայր պիտի մտնէ։ Բայց ես ոչ մի կերպով անփոյթ եւ թոյլ պիտի չի գտնուիմ, ինչքան խորամանկութիւն եւ խաբէութիւն գործածել կարելի է իմ ազատութեանը մասին պիտի չի խնայեմ։ Միայն թէ իմ ցաւը այն պատճառաւ է շատացել որ մի՛ գուցէ, դու ինձ դէմ ամբաստանող լինիս եւ այն ընկերութեան համար, որ մեր երկուսի մէջտեղ հաստատուել է, վտանգի խորխորատը ընկնես։ Եւ եթէ, Աստուած մի՛ արասցէ, քեզ կանչեն, որ իմ մասին ինչ որ իմանում ես ասես, այն ժամանակ իմ ցաւը կը բազմապատկուի։ Առաջինը, Քո անձի նեղութեանը համար եւ ամօթը ինձ պիտի պատէ որ դու ինձ համար նեղութեան մէջ կ'ընկնիս։ Երկրորդը այն

է որ այլեւս ինձ ազատութեան յոյս չի մնալ․ քանզի քո խօսքի ճշմարտութիւնը բոլորին յայտնի է եւ քո վկայութեան ճշմարտութեան վերայ կասկածելը անկարելի է, քանի որ դու քո գործը ուղղութեան եւ ճշմարտութեան վերայ ես հաստատել։ Այս ենթադրութեամբ իմ եւ քո տեսութիւնը հանդերձեալին կը մնայ, բաց ի դատաստանի օրից այլեւս ոչ մի տեղ չենք տեսնուել։

Քէլիլէ ասաց․ Քո ասածը լսեցի։ Դու իմանում ես որ ես պատժի չեմ կարող համբերել, տանջանք եւ չարչարանք չեմ կարող կրել, ինչ որ գիտեմ չեմ կարող թաքցնել եւ ուրիշին հաճոյանալու համար սուտ եւ չեղած բանը չեմ կարող ասել։ Եղելութիւնը ինձանից հարցնելուց առաջ լաւ կը լինի որ դու քո մեղքը խոստովանիս եւ ինչ որ արել ես, մէկիկ մէկիկ պատմես եւ քո անձը հանդերձեալ աշխարհքի պատժից ապաշխարութեամբ եւ աղօթքով ազատես․ քանզի դու պարզապէս իմանում ես թէ այս խնդրումը վերջապէս պիտի դատապարտուիս, գոնեայ այս աշխարհքի պատիժին եւ չարչարանքին վերայ հանդերձեալի պատիժն էլ չի դիզուի։ Եթէ այս անցաւոր աշխարհքումը չարչարանաց նեղութիւնն էլ կրես, գոնեայ յաւիտենականութիւնումը պատժի չես ենթարկուիլ։

Տէմնէ ասաց․ Այս բանումը քիչ մը մտածելու եմ եւ ինչ որ որոշեմ քեզ կը յայտնեմ։

Քէլիլէ տխուր սրտում յետ դարձաւ։ Իւր սիրտը տեսակ տեսակ վիշտերից եւ հոգսերից ճնշուած իւր կոնակը խոր տխրութեան խշտեակի վերայ դնելով ամբողջ գիշերը գալարվում էր։ Երբ առաւօտ եղաւ իւր շունչը սպառեցաւ եւ այսքան կարօտութիւններով ի հող գնաց։ Բայց այն ժամանակ, որ Տէմնէի եւ Քէլիլէի մէջտեղ այս խօսակցութիւնը անցնում էր, մի գող եւս այն բանտումը բանտարկուած լինելով նրանց մօտը քնել էր, նրանց խօսակցութեան ձայնից արթնանալով նրանց բոլոր հարցուպատասխանները լսեց եւ իւր մտքումը պահեց ասելով գուցէ ժամանակին պէտք կը գայ։

Հետեւեալ օրը երբոր արեգակը ոսկեճանկ առիւծի պէս երկինքի կապուտակ անտառումը քալել սկսեց, սեւ երես Տէմնէ էլ չարչարանաց բանտի անկիւնումը մութ եւ սոսկալի գիշերը անցկացրել էր։ Եւ երբոր ցերեկուայ արդարութիւնից աշխարհքը լուսաւորուելով խաւարի գիշերը անհետացաւ, դարձեալ դատաստանի ատեանը կազմուեցաւ։ Մայրառիւծը Տէմնէի խօսքը բանալով ասաց․ Բռնաւորները կենդանի թողնել պարկեշտներին սպաննելու հաւասար է եւ չարակամներին բարիք անելը բարիներին չարիք անելու հաւասար։ Ո՛վ որ զօրութիւն ունենալով ամբարիշտը կենդանի թողնէ եւ բռնաւորին օգնութիւն անէ,

նրանց եղեռնագործութեան եւ բռնադատութեան մասնակից կը լինի եւ կը կտրէ այն պատուէրը, որ ասում է․ Զարութիւն մի՛ աներ եւ չարերին ընկեր մի՛ լիներ եւ մէկի չարութեան վերայ մի՛ ուրախանար։

Առիւծը դատաւորներին ստիպեց որ Տէմնէի գործումը չտապեն եւ չուտով ստուգեն եղելութեան որպիսութիւնը։ Ուստի դատաւորները, ազնուականները, գիտունները եւ մեծաւորները մի որոշ եւ առանձին տեղ ժողովք կազմեցին եւ դատաւորի փոխանորդը ժողովքին դառնալով ասաց․ Թագաւորը Տէմնէի խնդիրը ամենայն զգուշութեամբ քննելու եւ առանց որ եւ իցէ մի կէտ զանց առնելով բոլոր եղելութիւնը յայտնելու մասին բարձրագոյն հրաման է տուել ասելով թէ․ "Այնպէս պէտք է քննուի խնդիրը, որ նրա երեսի վերայ կասկածանքի փոշիից ոչ մի արատ չի գտնուի։ Այն վճիռը, որ նրա մասին պիտի տրուի, պէտք չէ որ արդարութեան պահանջից հեռի լինի, ոչ էլ խղճի եւ օրէնքի ճանապարհից շեղի։„ Ուրեմն ձեզանից իւրաքանչիւրը ինչ որ իմանում է պէտք է ասէ։ Այս դատաստանում երեք ընդհանրական օգուտ կայ։ Ա. Արդարութիւնը պաշտպանել եւ ճշմարտութիւնը բարձրացնել, որ ըստ օրէնի ամենաարժէքաւոր՝ եւ ըստ մարդասիրութեան եւ ողորմածութեան ամենայարգելի բանն է։ Բ. Բռնաբարութեան չէնքը փլցնել, անիրաւութեան հիմունքը կործանել եւ անօրէնները պատժել, որ Արարչի կամքին համաձայն եւ ընդհանուր արարածոց բնութեան յարմար է։ Գ. Ազատուիլ ամբարիշտ նենգաւորներից եւ ապահով լինել բռնաւորներից եւ չարերից, որ մի կատարեալ օգուտ՝ եւ ընդհանուրին պատկանող մի հանգիստ է։ Երբ խօսքը վերջացրեց բոլոր ներկաները լռեցին եւ ո՛չ մի կողմից պատասխան չի տրուեցաւ․ քանզի նրանք Տէմնէի խնդրի մասին ստոյգ մի բան չէին գիտում եւ չէին կամենում լոկ կարծիքով մի բան ասել, որպէս զի իրանց խօսքովը մի վճիռ տրուած չի լինի եւ ճշմարտութեամբ չ'ասուած մի խօսքով մի արիւն չի թափուի։

Տէմնէ այս տեսնելով, թէեւ իւր սիրտը Եգեմական պարտէզի նման գարնանային զեփիւռով վերակենդանացաւ եւ զուարթացաւ, բայց իրան տրտում եւ տխուր ձեւացնելով ասաց․ Ո՛վ կրօնի եւ ազգի մեծերը եւ ո՛վ թագաւորի եւ տէրութեան խորհրդականները, եթէ ես մեղաւոր լինէի, ձեր լռութեան վերայ պիտի ուրախանայի բայց ես անպարտ եմ։ Ո՛վ որ մեղաւոր չէ, ոչ մէկից կախում չ'ունի, եւ եթէ նա իւր գիտութեան չափովը իւր խնդրի մասին աշխատէ, ներելի է։ Ես ձեզ երդւում եմ տալիս որ ո՛վ որ իմ խնդրի մասին մի բան գիտէ, թող ճշմարտութեամբ ասէ եւ միւս կողմանից թող արդարութիւնը աչքի առաջ ունենայ․

քանզի իւրաքանչիւր խօսքին հաւատում կը հետեւի եւ նրա խօսքը որ մի ճշմարտութիւնը յայտնելում կամ մի անձը կորցնելում վճիռի տեղ է անցնում, պէտք է նա ոչ թէ կասկածով եւ կամ կարծիքով այլ ճշմարտութեամբ եւ ստուգութեամբ վկայութիւն տայ: Ո՛վ որ կասկածով եւ կարծիքով ինձ մահուան դատապարտութեան ենթարկէ, նրան կը հասնի ինչ որ այն տգէտ եւ անփորձ բժշկին հասաւ:

Դատաւորները հարցրին. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը:

Տէմինէ ասաց. Բերել են թէ. ՄԻ ՄԱՐԴ, որ ոչ գիտութեան գումարը ունէր եւ ո՛չ էլ փորձառութեան արդիւնքը, բժշկութիւն էր անում: Սա բժշկութեան վերայ տեղեկութիւն չ'ունենալուց ի զատ, դեղերը ճանաչելում այնքան տգէտ էր որ հնդկական ընգոյզը օշինդրից չէր կարող որոշել եւ հիւանդութիւնները ճանաչելում այն աստիճան անգէտ էր որ աչացաւութիւնը ատնացաւութիւնից չէր կարող զանազանել: Դեղերի զօրութիւնը եւ բնութիւնը ճանաչելում եւ բաղադրելում անտեղեակ, դեղագիրներ գրելում եւ հիւանդին ուտելիքը եւ խմելիքը կարգադրելում բոլորովին տգէտ էր: Նրա կարգադրած գէշ դեղի երեսը տեսնողը այլեւս կեանքի երեսը չէր տեսնում եւ այն քաղաքումը, ուր այս անձը տգիտութեան խանութը բացած եւ մարդասպանութեան ազդարարութիւնը հրատարակած էր, մի ուրիշ գիտուն բժիշկ էր գտնուում, որ իւր յաջողակ դեղերով եւ իմաստուն հիւանդապահութեամբ հռչակ ստացել էր: Եթէ նա կամենար մի քանի վայրկեանումը համաճարակ ժանտախտը մթնոլորտի սահմաններից կը հեռացնէր, եւ եթէ իւր ոտքը պարտէզումը կոխէր, ուռենին տնկի դողից կ'ազատուէր: Ինչպէս որ բնաւոր ժամանակաշրջանի սովորութիւնն է որ տաղանդաւորները նրա վշտի սեղանից բաց ի նեղութեան կերակուրից ուրիշ բան չեն վայելում, բայց անշնորհքները նրա օգտաշատ սեղանից պատիւ եւ յարգանք են գտնում, այս իւր դարուն բարձրագոյն եւ հազուագիւտ գիտնականը եղող բժշկին գործը յետ գնաց: Նրա տեսանելեաց աստղերի լոյսը տկարութեան խաւարման ենթարկուելով նրա տիեզերատես աչքի լոյսը, որ գիտունների աչքը նրանով լուսաւորվում եւ տեսանողների աչքի համար նրա դէմքի տեսութիւնը այգիների եւ պարտէզների տեսութիւնից աւելի գերազանց էր, պակասել սկսեց, մինչեւ որ նրա աչքերումը լոյսի նշոյլը այլեւս չի մնաց: Ողճալին իւր տնակի անկիւնումը նստեց մնաց եւ այն մեծ խաբեբայ տգէտը հասարակութիւնը խաբելով աւելի յառաջ գնալ սկսեց: Ըստ ասածին թէ. Յաւերժահարսը իւր երեսը թաքցրած իսկ դեւը քողի տակից նազանք էր ցոյց տալիս եւ խելքը այրուում էր զարմանքից թէ այս ի՞նչ տեսարան

է: Կարճ միջոցում այդ տգէտի բժշկականութիւնը այդ երկրումը հաստատուեցաւ եւ նրա դեղերի հռչակը սուտ լուրերի միջոցով բերնից բերան ընկաւ: Այն քաղաքի թագաւորը մի աղջիկ ունէր, որ գեղեցկութեան հորիզոնից նրա երեսի նման ոչ մի արեգակ չէր ծագել եւ անուշ հոտեր բուրող զեփիւռը նրա չքնական մըշկալից վարսի նման պորտ չէր բացել: Լուսնադէմ, մշկահոտ, սրտագրաւ, հոգեզուարճ եւ հրապուրիչ էր նա: Թագաւորը սրան իւր եղբօրորդւոյն հետ ամուսնացրել եւ հարսանիքը արքայավայել փառաւորութեամբ կատարել էր, արեգակը լուսինին հիւրաւիրել, Արուսեակը Լուսնթագի հետ պսակել էր: Այս երկու բախտաւոր աստղերի մօտաւորութիւնից եզակի մարգարիտը արգանդի սատապը ընկնելով դիպուածով ծննդաբերութեան ժամանակը մի արտաքոյ կարգի ցաւ յառաջ եկաւ եւ թագաւորի աղջիկը սաստիկ նեղուեցաւ: Գիտուն բժիշկին կանչելով ցաւը նրան յայտնեցին, նա էլ եղածը հասկանալով հիւանդութիւնը որոշեց եւ ասաց. Այս հիւանդութեան դարմանը միհրան կոչուած դեղով կը յաջողուի: Նրանից մէկ դանկ առնելով ծեծելու է եւ նրան մաղելուց եւ եփելուց յետոյ մի քիչ անարատ մուշկի եւ կինամոմոնի հետ խառնելով սպիտակ շաքարով քաղցրացնելու եւ հիւանդին տալու է, անմիջապէս ցաւը կ'անցնի: Ասացին. Ո՛վ բժիշկ, այդ դեղը ո՞ւր կայ եւ ո՞ր տեղ է գտնուում: Պատասխանեց թէ. Ես արքայական դեղարանումը մի քիչ տեսել էի մի արծաթեայ կաղամարի մէջ դրուած եւ մի զոյտ ոսկեղէն կըղպանք նրա վերայ կախուած էր: Այժմ իմ աչքերի տկարութեան պատճառաւ նրան չեմ կարող գտնել: Այս միջոցումը ինքնակոչ բժիշկը հասաւ, ասաց. Այն դեղը ճանաչելը իմ գործն է եւ այս բաղադրութիւնը շինելը ես լաւ գիտեմ: Թագաւորը նրան առաջ կանչելով հրամայեց որ դեղարանը գնայ եւ այն կարեւոր դեղը դուրս հանէ, որ բժշկի հրամայած դեղը շինէ: Տգէտ բժիշկը դեղարանը մտնելով բժշկի հրամայած կաղամարը որոնում էր, բայց նոյն տեսակ կաղամարներ շատ կային: Որոշ դեղը չի կարողացաւ գտնել եւ առանց քննելու այն կաղամարներից մին բերեց, սակայն դա միհրան կոչուած դեղը չէր այլ սպանիչ թոյն էր, որ թագաւորի խորհրդով այն տեղ կնքած պահել էին: Սա կաղամարի բերանը բանալով այն թոյնը միւս դեղերու հետ խառնեց եւ օշարակ շինելով թագաւորի աղջկան տուաւ եւ նրա օշարակը ճաշակելը եւ անուշ հոգին աւանդելը մէկ եղաւ: Թագաւորը այս բանը տեսնելով իւր աղջկան բաժանման կրակից ցը հառաչանքի կայծերը մինչեւ երկինքը հասցրեց եւ հրամայեց որ այդ օշարակի մնացորդը տգէտ բժիշկին տան, երբոր նրան խմցրին նա էլ տեղն ի տեղը սատկեց եւ այդ անվայել գործի

հատուցումը իրան հասաւ։ Ի՞նչ ճշմարիտ խօսք է այս թէ. Ո՛վ որ վատ արաւ, ուրիշին չ'արաւ այլ իրան արաւ։ Այս առակը դրա համար բերեցի որ գիտենան թէ, ո՛վ որ անգիտակցաբար մի գործ անէ, նրա վախճանը գէշ կը լինի եւ ո՛ր գործը որ կասկածով եւ կարծիքով կատարուի, ընդհանուր վտանգներ կ'արտադրէ։

Ներկայ գտնուողներից մին ասաց. Ո՛վ Տէմինէ, քո սրտի կեղտոտութիւնը բոլոր ազնուականներին յայտնի եւ քո ներսի անմաքրութիւնը հասարակութեան մէջ ծանօթ է եւ քո դիւրամտութիւնն էլ քո կերպարանքից, կազմուածքից եւ դէմքից երեւում է։

Դատաւորը հարցրեց թէ. Այս խօսքը ո՞րտեղից ես ասում։ Դրա ճշմարտութեան մասին ինչ ապացոյց որ ունիս պէտք է յայտնես։

Պատասխանեց թէ. Խորիմաստ գիտունները բերել են թէ. Ամեն մի բաց յօնք ունեցողին, որ աջ աչքը ձախ աչքից փոքր է, ճակատի դողը նրա վերայ իշխում է եւ նրա քիթը դէպ ի ձախ կողմը ծռում եւ նայուածքը միշտ դէպ ի գետին է ընկնում, այսպիսի մի անձ ամբարշտութեան, չարութեան, նենգութեան եւ բռնադատութեան շտեմարանը կը լինի եւ այս նշանները Տէմինէի վերայ յայտնի երեւում են։

Տէմինէ ասաց. Արարչագործութեան մէջ սխալել չի կայ։ Աստուծոյ բոլոր գործերը սխալմունքից եւ թերութիւնից զերծ են։ Սխալականութիւնը եւ թերութիւնը քո եւ իմ գործն է, բայց Տիեզերաստեղծը չէ սխալում։ Այս նշանները, որ յիշեցիր, եթէ ապացոյց լինէին ճշմարտութեան եւ նրանցով ճշմարիտը ստուտից, սխալմունքը ուղղութիւնից եւ իրաւունքը անիրաւութիւնից որոշել կարելի լինէր, ուրեմն աշխարհայինները փաստերից եւ երգումներից ազատած եւ դատաւորները քննութիւնը եւ դատաստանը դադարեցրած կը լինէին։ Բաց ի սրանից՝ ոչ մէկին իւր բարիքի փոխարէն գովել պիտի չարժէր եւ ոչ մէկ չարագործին իւր չարութեան համար անարգել պիտի չի վայլէր. քանզի ոչ մի արարածը այս նշաններին, որ իւր ստեղծման ժամանակ իւր հետ ստեղծուել է, կարող չէ իրանից հեռացնել։ Ուրեմն այն դատողութիւնը, որ դու հրամայում ես, բարի գործերի վարձատրութիւնը եւ չար գործերի հատուցումը արդարութեան օրէնքի գրքերը ջնջում է։ Եւ եթէ ես, Տէրը մի՛ արասցէ, այս գործը արած լինիմ, ուրեմն այդ նշանների միջոցով է եղել, որ դու յիշեցիր եւ քանի որ նրանց հեռացնելը անկարելի է, ուստի էլ չէ վայլում որ նրանց համար պատժուիմ։ Պէտք է այն ժամանակ ասեմ այն խօսքը, որ ասել են. Մի՛ անարգեր իմ այս մարգագետնի վերայ ինքնաբոյս լինելը. քանզի ինչպէս որ Արարիչը ինձ ստեղծում

է, ես էլ այնպէս եմ բուսնում։ Ուրեմն քո խօսքին նայելով ես պատժոյ կապանքներից արձակուեցայ եւ դու էլ քո կեղծ եւ տգէտ փաստի վերայ յայտնուեցար։ Եւ մի յիմար բանով, անհիմն ցոյցով, անվայել ջատագովութեամբ եւ անախորժելի խօսքով իմաստունների ժողովքին տհաճելի ընդմիջում արիր։ Ըստ բանաստեղծին թէ. Մեծագոյն խելքը քո ասած խօսքը ձեւեց եւ գիտցաւ թէ քո տգիտութիւնը մինչեւ ո՞ւր է հասնում։

Երբոր Տէմինէ այս կերպով պատասխան տուաւ, բոլոր ներկայ գտնուողները լռութեան կնիքը խօսքի տոմարին վերայ դրին։ Եւ դեռ ոչ մէկը հակաճառութեան չ'սկսած, դատաւորի հրամանով Տէմինէին բանտը տարին եւ եղելութիւնը առիւծի առջեւը պատմեցին։ Բայց երբոր Տէմինէ բանտը մտաւ, բանտումը Քէլիլէի բարեկամներից մին, որին Րուզպէհ (բարի ցերեկ) էին անուանում, նրա մօտիցը անցաւ։ Տէմինէ նրան կանչելով ասաց. Երեկուանից ի վեր Քէլիլէից լուր չ'ունիմ եւ այս պարագաներում յոյս ունէի որ նա ինձ կ'այցելէ. քանզի բարեկամը նա է որ նեղութեան օրումը բարեկամի ձեռքից բռնէ։ Դու նրանից ի՞նչ լուր ունիս, արդեօք ի՞նչ պատճառաւ նա չ'եկաւ։

Երբ Րուզպէհ Քէլիլէի անունը լսեց մի տաք հառաչանք քաշելով եւ իւր աչքերի ամպերիցը արիւնոտ արտասուաց կաթիլներ տեղալով ասաց. Սիրտը ձեռքից գնաց, բարեկամը ի՞նչով որոնեմ. լեզուն պապանձեցաւ, իմ վիճակը ի՞նչպէս յայտնեմ։

Տէմինէ Րուզպէհի յուզմունքից ուշաթափ լինելով ասաց. Շուտով եղելութիւնը ինձ յայտնի՛ր։

Րուզպէհը ասաց. Ո՛վ Տէմինէ, ի՞նչ ասեմ, մեր հոգիները այրուեցան։ Մտերիմի բաժանմունքիցը մեր սրտերը վիրաւորուեցան եւ սպեղանի չ'ունինք։ Ո՛վ Տէմինէ, այն պատուական բարեկամը այս ունայն բնակարանից մնայուն աշխարհը գաղթեց եւ բաժանման տաղը մտերիմների եւ բարեկամների սրտերին վերայ դրաւ։ Ո՛վ մտերիմներ, ո՛հ, առանց մտերիմի մնացինք, բաժանման հոգսի ձեռքումը բռնուած մնացինք։

Տէմինէ Քէլիլէի մահուան լուրը լսելիս ուշաթափ եղաւ եւ երկար ժամանակից յետոյ ուշի գալով հառաչեց եւ իւր աչքերից արցունք թափելով ասաց. Եղո՛ւկ, ուրախութեան վարդենիի արմատը կտրուեցաւ։ Վա՛յ, ուրախութեան պտղալի ճիւղը չի մնաց։ Ո՛վ սիրտ, հառաչէ՛, հոգւոյն հանգիստը գնաց։ Ո՛վ աչքեր արիւն արտասուեցէ՛ք, աչքի լոյսը չի մնաց։ Տէմինէ լացը չափից անցկացրեց եւ յոյսի զգեստը յուսահատութեան ձեռքով պատառեց։ Ամեն վայրկեան իւր երեսը հողի վերայ քսում՝ եւ այնպէս հեծում էր որ լեռը կարող չէր դիմանալ։

Րուզպէհը նրան մխիթարեց ասելով. Ո՛վ Տէմինէ, դու գիտես

որ յաւիտենականութիւնը ոչ մի արարածի կենդանութեան ցուցակի վերայ մշտակեցութեան վերնագիրը չէ գրել, եւ գոյութեանց կերպարանքները նկարողը հնարաւոր իրերի սորոգելիքների վերայ կենաց նկարը չէ նկարել։ Յաւիտենականութեան գործարանի գերձակը ոչ մի արարածի պատմուճանը այնպէս չէ կարել որ նա չի հնանայ եւ զօրութեան սպասաւորը ոչ մի խօսակցութեան ճրագը այնպէս չէ վառել որ արկածի քամիովը չի մարի։ Երկինքը այս չէնքի չինողը լինելուց ի վեր ոչ ոք կենդանութեան պարտիզումը առանց տխրութեան փուշին մի ուրախութեան վարդը չէ գտել եւ այս ժամանակաշրջանի դաշտավայրումը կենաց վարդանոցի համար առանց աշնանային տերեւաթափ հողմի մի գարուն չէ տեսել։ Մահը մի օշարակ է որ ամենը ճաշակելու են եւ մի նեղութեան բեռ է որ ամենը կրելու են։ Այս վէրքի սպեղանին բաց ի համբերութիւնից ուրիշ բան չէ եւ այս ախտի դարմանը միայն յուսալ է։

Տէմինէ այս խօսքերով մի քիչ հանգստութիւն գտաւ եւ ասաց․ Ո՛վ Բուզպէհ, ես յուսահատելու իրաւունք ունիմ․ քանզի Գէլիւէ իմ գթացող եւ խրատող բարեկամն էր։ Նեղութիւններումը նրան էի դիմում եւ կարեւոր խնդիրներումը նրա դատողութեան, տեսութեան, գթութեան եւ յորդորանքին կարօտ էի։ Նրա սիրտը մի գանձ էր որ ի՛նչ խորհուրդ որ այն տեղ աւանդ դրուէր, աշխարհքը նրա վերայ տեղեկութիւն չէր կարող ունենալ եւ լրտես ժամանակը նրան հասկանալուց անյոյս էր մնում։ Ափսո՜ս, որ այդ սիրելի բարեկամը իւր երանելի ստուերը իմ գլխի վերայից վերցրեց եւ ինձ այս աշխարհքի տնակի անկիւնումը անընկեր, անբարեկամ, անմտերիմ, անխորհրդատու եւ անցաւակից թողուց։ Իմ խորհուրդը ո՞րին յայտնեմ, խորհրդակից չի մնաց․ ես ի՞նչպէս ինձ ճար գտնեմ, ճար գտնող գնաց․ սրանից յետոյ կենդանութիւնից ինձ ի՞նչ արդիւնք կը հասնի։ Եւ եթէ այս պարագայումը մտքերին տեսակ տեսակ խորհուրդներ չի գալու լինէր, ես իմ անձը չարաչար կ՚սպանէի եւ առանձնութեան ցաւից եւ անօգնականութեան վշտից կ՚ազատէի․ քանզի այս խորխորատում, որ ես ընկել եմ, առանց բարեկամի օգնականութեան եւ առանց ցաւակիցի ձեռնտուութեան փրկութիւն չի կայ։ Այս վայրկեանում պէտք է յոյսից յոյս կտրել եւ քանի որ ճարը ձեռքից գնացել է անճար պէտք է մնալ։

Բուզպէհը ասաց․ Թէեւ Գէլիւէ կենաց վարդանոցից մահուան եւ չքացման փշանոցը ընկաւ, բայց ուրիշ բարեկամների սիրոյ տունկը անկեղծութեան ջրով սնուցանելու եւ ծաղկեցնելու է։ Հոգ մի՛ աներ, թէեւ վարդանոցումը վարդի ծիւղը թառամեցաւ բայց ռահանը եւ նարգոսը թարմ են։

Տէմինէ ասաց․ Ճշմարիտ ես ասում, քո միտքը ամեն մի վնասի առջեւը առնելու պատրաստութիւն՝ եւ քո կեանքը ամեն մի անարգանքը ջնջելու միջոց է։ Այսօր ինձ համար այնպէս մի եղբայր եւ բարեկամ ես, ինչպէս որ Գէլիւէ էր։ Ձեռքդ տո՛ւր եւ ինձ եղբայրութեան ընդունի՛ր։

Բուզպէհը ամենայն ուրախութեամբ յառաջ եկաւ եւ ասաց․ Ինձ այս շնորհքը ցոյց տալով երախտապարտ արիր եւ իմ պատուոյ դրօշակը ամենաբարձր տեղերը բարձրացրիր։ Իմ երախտապարտ սիրտը այս շնորհքի տակից ի՞նչպէս պիտի ելլէ եւ իմ գովաբանութեան լեզուն այս բարիքի շնորհակալութիւնը ի՞նչպէս պիտի հատուցանէ։ Ուստի իրարու ձեռքը բռնելով եղբայրութեան կապը կապեցին եւ ինչպէս որ դաշնադրութեան ուխտը եւ պայմանը պահանջում էր, այնպէս հաստատեցին։

Տէմինէ ասաց․ Այս ինչ տեղ ինձանից եւ Գէլիւէից պահուած մի գանձ կայ, եթէ նեղութիւն քաշես նրան հանես բերես, քո աշխատութիւնը առանց վարձքի պիտի չի լինի։

Բուզպէհը գանձը հանեց բերեց։ Տէմինէ ինչ որ իւր բաժինն էր առաւ եւ Գէլիւէի բաժինը Բուզպէհին տուաւ եւ խնդրեց որ միշտ թագաւորին պալատը գնալի եւ այն տեղ ինչ որ պատահի իրան իմացնէ։ Բուզպէհը այս գործը կատարեց մինչեւ Տէմինէի մահը։

Միւս օրը առաւօտուն, մայր առիւծը ներկայանալով անցեալ ժողովքին մասին հարցրեց։ Առիւծը եղելութիւնը ինչպէս որ դատաւորները իրան հասցրել էին պատմեց։ Մայրառիւծը նրա նշանակութիւնը հասկանալով վշտացաւ եւ ասաց․ Եթէ խիստ խօսք ասեմ, թագաւորի կամքին համեմատ չի լինիլ․ եթէ աչք գոցեմ, էլ խրատի եւ ցաւակցութեան տեղի չի մնալ։

Առիւծը ասաց․ Խրատի դռները գոցելը ուղիղ չէ, քո խօսքը անկասկածելի եւ մաքուր է եւ չուտով կ՚ընդունուի։ Բե՛ր, ինչ որ ունիս։

Մայրառիւծը ասաց․ Թագաւորը ճշմարիտը եւ սուտը չէ զանազանում եւ իւր օգուտը եւ վնասը չէ ճանաչում։ Տէմինէ պատահութիւն գտնելով մէջտեղ այնպիսի խառնակութիւն պիտի գցէ որ լուսաւոր խելքերը նրան առաջն առնելում տկար պիտի մնան եւ սուր սուրերը նրան կտրել պիտի չի կարողանան։

Առիւծը ասաց․ Դու այսօր մի՛ անյայտանար, թերեւս Տէմինէի խնդիրը կը վճռուի։ Արդ բարձրագոյն հրաման ելաւ որ դարձեալ դատաւորները ժողովք կազմեն եւ ընդհանրային դատարանումը Տէմինէի հարցաքննութիւնը նորոգեն։ Մեծեր եւ փոքրներ ըստ հրամանին հաւաքուեցան։ Դատաւորի փոխանորդը անցեալ անգամին ասածները կրկնելով ներկայ գտնուողներից Տէմինէի

խնդրի մասին վկայութիւն պահանջեց։ Ոչ ոք նրա մասին մի խօսք չ'ասաց, ոչ բարի եւ ոչ չար մի խօսք յառաջ չ'եկաւ։ Բարձրագոյն դատաւորը Տէմինէին դառնալով ասաց. Թէեւ ներկայ գտնուողները իրանց լռութիւնով քեզ օգնում են, բայց նրանց սրտումը այս համոզումը հաստատուել է թէ, դու անիրաւութիւն ես արել, եւ քո դատապարտուելու մասին միաբան են։ Ուրեմն այս վիճակով սրանց մէջ ապրելուց քեզ ի՞նչ օգուտ կը լինի։ Այժմ լաւը այն է որ քո անձը արդարացնելու ջանալը մէկդի անելով քո մեղքը խոստովանիս եւ ապաշխարելով հանդերձեալի պատժից ազատուիս եւ մի մահուան միջոցով քեզ համար երկու հանգիստ շահիս։ Մէկը այն է որ կ'ազատուիս, միւսը այն է որ փրկութիւն կը գտնես։ Սրամիտները ասում են թէ. Մահը մի տեսակ հանգստութիւն է։ Ո՛վ որ մեռնի նրա վիճակը երկու բանից դուրս չէ, կամ նա չար է, որ քիչ մարդիկ նրա բռնութիւնից զերծ են մնում կամ բարի է որ աշխարհայինները նրան սիրում եւ իրանց սրտումը ընդունում են։ Եթէ նա բարեգործ է, այս նեղութեան բանտից կ'ազատի եւ եթէ նա չարագործ է արարածները նրա նեղութիւնից կ'ազատին։ Ո՛վ Տէմինէ, եթէ քո մեղքը խոստովանիս, երկու օրհնութիւն կը լինի եւ նրա յիշատակութիւնը աշխարհումը կը մնայ։ Մէկը հանդերձեալ փրկութեան համար քո անիրաւութիւնը խոստովանել եւ հանդերձեալ մնայուն աշխարհքը ընտրելն է քան թէ ներկայ ունայն աշխարհքը. իսկ միւսը սա է որ այն ճարտարախօսութեան հռչակը եւ պերճ եւ իմաստալից ճառաբանութեան համբաւը, որ դու այս քո տուած սրտագրաւ պատասխաններով եւ տրամաբանուած փաստերով ցոյց տուիր, ընդհանուրի բերանը կ'ընկնի. ուստի քանի որ քո տաղանդը եւ քաջութիւնը ժամանակի որդոց յայտնի է եւ ամենը քո վերայով վկայում են թէ մեծ առաւելութիւններ եւ ձիրքեր ունիս, դու էլ քո խելքին գալով այս իրողութիւնը իմացի՛ր թէ, բարի անունով մեռնիլը չար անունով ապրելուց լաւ է։

Տէմինէ ասաց. Դատաւորը պէտք չէ որ իւր կասկածով եւ ուրիշների կարծիքներով առանց պարզ փաստի եւ յայտնի ապացոյցի վճիռ տայ։ Եթէ քո մէջն էլ այս կասկածը ընկել եւ ինձ մեղաւոր համել որոշել ես, ի՞նչ կը լինի։ Չէ՞ որ ես իմ գործը աւելի լաւ եմ իմանում։ Իմ ստոյգ գիտցածը ուրիշների կասկածի համար թաքցնելը ո՛չ քաղաքական օրէնքով ուղիղ է, ո՛չ էլ բարոյական օրէնքին համաձայն։ Մինչդեռ դուք լոկ մի կարծիքով, իբր թէ Շիւնզիւպէի արիւնը թափուելում ես մաս եմ ունեցել, այս բոլոր խօսքերը խօսում՝ եւ իմ մասին փուճ գաղափարներ կազմում էք։ Եթէ ես առանց պատճառի իմ արիւնը թափուելուն

ջանամ եւ առանց մի առիթի իմ սպաննուելուն հաւանութիւն տամ, ի՞նչ կերպով կարող պիտի լինիմ Աստուծոյ առջեւը իմ անձը արդարացնելու։ Ես հաստատ գիտեմ որ ոչ ոք իմ վերայ այն իրաւունքը չ'ունի, որ ես ունիմ։ Ուրեմն ինչ բան, որ ուրիշին չեմ կամենում, այդ բանը իմ անձին ի՞նչպէս արժանի համարեմ։ Եթէ ես իմ գործին պէտք չի գամ, ուրիշի գործին ի՞նչպէս պէտք կը գամ։ Ո՛վ դատաւոր, այս խօսքից անցկա՛ց։ Եթէ քո ասածը խրատ է, պէտք է դրանից լաւ լինի. իսկ եթէ անպիտան խօսքեր են լաւագոյնը այն է որ դատաւորի բերանից դուրս չի գայ. քանզի դատաւորների խօսքը վճիռ է եւ պէտք է նրանք սխալմունքից, խեղկատակութիւնից, քմահաճոյքից եւ դատարկաբանութիւնից զգուշանան։ Անսպասելի բանը այս էր որ դու միշտ ճշմարտախօս եւ ուղղադատ էիր, իմ բախտի ակարութիւնից եւ իմ վիճակի ձախորդութիւնից այս խնդրումը զգուշութիւնը մի կողմ թողեցիր, քո կարծիքով եւ հակառակորդների կասկածով ճշմարտութեան աչքը գոցեցիր։ Ամենի սրտին ուրախութեան սեղանը քեզնից չինուած է, ինչո՞ւ համար իմ յուսալից սրտին ուրախութիւնը չես լինում։ Այս աշխարհքի գարունը քեզ նման մի վարդ չէ բացել, արժա՞ն է որ ինձ համար մինակ փուշ լինես։ Գիտութեան դատարանի դատաւորները, որ ձիրքը յառաջացնելու օրէնքը նրանց վճիռներով հաստատուել է, այնպէս դատողութիւն արել են թէ իւրաքանչիւր վկայութիւնը որ ստուգութեան դրոշմով պատրաստուած չէ, ընդունելութեան լումայանոցում ընդունելի չէ։ Ո՛վ որ մի խնդրի մասին վկայութիւն է տալիս, որ նրա մասին տեղեկութիւն չ'ունի, նրան կը հանի ինչ որ այն բաղէակալին պատահեցաւ։

Դատաւորը հարցրեց. Ի՞նչպէս է պատահել այդ դէպքը։

Տէմինէ ասաց. Բերել են թէ. Մի ՄԱՐԶՊԱՆ կար, որի մեծութեան հռչակը, ազնուաբարոյութիւնը, քաղցրութիւնը եւ պարկեշտութիւնը ամեն կողմ տարածուել էր։ Նա վարքով բարեպաշտ, խօսքով հաճելի, խելքով ընդարձակ եւ ձիրքով աննման էր։ Այս մարզպանը մի կին ունէր, որ գեղեցկութեամբ հոգեգրաւ, վայելչութեամբ խելք յափշտակող, դէմքով եւ տեսքով աւելի փայլուն էր քան թէ լուսին եւ արեգակ։ Սա իւր գեղեցկութեանը եւ վայելչութեանը կատարելութեան հետ համեստութիւնը եւ առաքինութիւնը միացրել, իւր հրապուրիչ դէմքը Աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ զարդարել, իւր աչքը աշխարհքի գործերից գոցել եւ սրբութեան վարագուրի ետեւը քաշուել պահուել էր, այնպէս որ հայելին անգամ հեռուանց նրա երեսը չէր տեսել։ Նա մինչեւ անգամ իւր ստուերից զգուշանում էր։ Այս մարզպանը Պէլոցի մի ծառայ ունէր, որ չափազանց անժուժկալ

եւ լերբ էր, ո՛չ իւր աչքը չար նայուածքներից արգելում էր, ո՛չ էլ իւր սիրտը պիղծ եւ չար խորհուրդներից մաքրում էր։ Սա իւր ծառայութիւնումը բաղէակալութեան պաշտօնը ունէր եւ իւր գործը թռչուն որսալ էր։ Մի օր նրա աչքը այն համեստա-փայլ կնոջ վերայ ընկնելով նրա սրտի թռչունը տենչանքի որո-գայթում բռնուեցաւ։ Ծառան սիրտը ձեռքից փախցնելով ինչ-քան որ իւր ուզածին հասնելու զանգակը քաշեց, ընդունելու-թեան դուռը չի բացուեցաւ եւ ինչքան էլ գիւթութիւն, հմայու-թիւն եւ խաբէութիւն ի գործ դրաւ օգուտ չի բերեցին։ Բաղէա-կալը այդ չնաշխարհիկ սիրամարգը որսալու համար յուսոյ գոտին կապելով ինչքան էլ խորհրդի բաղէները ցանկութեան օդումը բաց թողեց, նպատակի բոյնը չի հասան։ Յուսահատուելուց յետոյ, ինչպէս որ չարերի բնաւորութիւնն է, կամեցաւ որ այդ պարկեշտ կնոջ մասին մի չարիք մտածէ եւ չարակամութեամբ մի նենգութիւն գործադրէ. ուստի մի որսորդից երկու թութակ գնելով Պէլխի լեզուով նրանց մէկին սովրեցրեց այս խօսքը. "Ես դռնապանը տիկնոջ հետ տնումը քնացած տեսայ," իսկ միւսին, "Ես գոնեա չեմ ասում։" Մի շաբաթում թութակները այս երկու խօսքը սո-վորեցան։ Մի օր մարզպանը խնճոյք էր արել եւ ուրախութեան բազմոցի վերայ հանգիստ նստել էր։ Բաղէակալը ներս մտաւ ըն-ծայ մատուցանելու եւ սովորութեան համեմատ թռչունները յա-ռաջ բերեց։ Անուշախօս թութակները նոյն երկու խօսքերը, ինչ-պէս որ սովորել էին, սկսեցին կրկնել։ Մարզպանը Պէլխի լե-զուն չէր իմանում, բայց նրանց անոյշ ձայնը եւ յարմար խօս-քերը նրան հաճելի եկան։ Թռչունները իւր կնոջ յանձնեց որ նրանց խնամք տանի եւ պահէ։ Խեղճ կինն էլ նրանց լեզուն չէր հասկանում եւ նրանց խնամում էր իբրեւ բարեկամներ առանց գիտնալու որ նրանք թշնամի էին։ Ինչպէս որ մի անձ ասել է. Ճանկութիւնը խնամեցի եւ վերջապէս նրա միջոցով խայտառակ եղայ, բայց չէի իմանում որ իմ թշնամին էի խնամում։ Մարզ-պանը թութակներին այնպէս յարել էր որ առանց նրանց անու-շիկ երգեցողութեանը ոչ մի խնճոյք չէր անում։ Մի օր մի քանի Պէլխցի հիւրեր եկան։ Մարզպանը այն կոչունքում, որ հիւրերի համար պատրաստել էր, թութակները ներկայացրեց։ Նրանք ի-րանց սովորութեանը համեմատ այդ երկու խօսքը երգել սկսե-ցին։ Հիւրերը այս բանը լսելուց յետոյ իրարու նայեցան եւ ա-մաչելով իրանց գլուխը վար կախեցին եւ զարմացած մնացին։ Մարզպանը տեսաւ որ իւր բարեկամների ուրախութեան կրակը մարեց եւ նրանց սրտի հրճուանքը խորասուզման եւ ապշանքի փոխուեցաւ։ Նրանցից պատճառը հարցրեց, բայց նրանք ինչքան էլ պատճառներ բերեին, որ չ'ասեն, ընդունելի չ'եղան։ Նրանցից

մին, որ աւելի համարձակութիւն ունէր, ասաց. Ո՛վ մարզ-պան, միթէ° դու այս թռչունների ասածին վերայ տեղեկութիւն չ'ունիս։ Ասաց. Ես նրանց խօսքերի նշանակութիւնը չեմ հաս-կանում, բայց նրանց սրտագրաւ ձայնը ինձ հաճելի է գալիս։ Դուք նրանց խօսքի նշանակութիւնը ինձ հասկացրէ՛ք։ Նրանք էլ թութակների ասածը մարզպանին բացատրեցին։ Սա երբոր այդ խօսքերը լսեց եւ անոնց նշանակութիւնը հասկացաւ, գի-նիից ձեռք քաշելով ասաց. Ո՛վ յարգելի հիւրեր, ներեցէ՛ք. ես այս բանը չէի իմանում, այժմ որ խնդիրին վերահասու եղել եմ, էլ խնդրին պատճառ բերելու տեղի չի մնաց։ Մեր քաղաքումը սովորութիւն չէ մի տնումը հաց ուտել, ուր անհաւատարիմ եւ անպարկեշտ կին է գտնուում։ Այս խօսակցութեան միջոցումը բաղէակալ ծառան գոչեց. Ես այդ բանը քանի անգամներ տեսել եմ եւ վկայութիւն եմ տալիս։ Մարզպանը ոտք ելլելով հրամա-յեց որ իւր կինը սպաննեն։ Կինը նրա մօտ մի լուր ղրկելով ա-սաց. Ո՛վ կամակատար իշխան, թէ՛ սպաննես եւ թէ՛ կեանք բաշխես, ինչ որ հրամայես, քո կամքը կը կատարուի. սակայն այս գործումը մի քիչ խորհի՛ր եւ մի՛ շտապիր. քանզի ես քո ձեռքումն եմ։ Իմաստունները իրանց գործերում, մանաւանդ արեան թափելում, լուրջ խորհելը պարտականութիւն են համա-րում. քանզի եթէ սպաննել պէտք լինի, նորէն պատեհութիւն կայ։ Եթէ շտապելով մի անպարտը մահուան հասցնեն եւ յետոյ գիտցուի թէ նա սպաննուելու արժանի չէր, նրա ճարը գտնել այլեւս անկարելի է եւ նրա մեղքը մինչեւ յաւիտեան սպան-նողի վիզը կը մնայ։ Մարզպանը հրամայելով կինը այն ժողովքը բերին եւ վարագուրի ետեւը կայնեցրին եւ եղելութիւնը կնոջը պատմեց ասելով. Թութակները մարդ չեն որ նրանց խօսքը թըշ-նամութիւնից լինի։ Նրանք ինչ որ տեսել են, այն են ասում եւ բաղէակալն էլ նրանց ասածին համեմատ վկայութիւն է տալիս։ Այս այնպէս մի խնդիր չէ որ յանդիմանելով վերջանայ։ Այս մի այնպէս մեղք չէ որ ապաշխարելով նրանից ազատուիս։ Կինը պատասխանեց թէ. Պարտականութիւն է իմ խնդիրը քննել եւ երբոր ստոյգ գիտցուի, եթէ սպաննուելու արժանի լինիմ, ոչ մի վայրկեան պէտք չէ յետաձգել։ Մարզպանը ասաց. Այս խըն-դիրը ի՞նչպէս կարելի է ստուգել։ Կինը ասաց. Այն Պէլխցինե-րից հասկացիր թէ այս թռչունները բաց ի այս երկու խօսքից Պէլխի լեզուով ուրիշ բառ էլ գիտեն թէ ոչ։ Եթէ չեն գիտում, այն ժամանակ յայտնի է որ այս անզգամ եւ լիրբ ծառան, որի առաջարկութիւնը իմ կողմանից չ'ընդունուեցաւ եւ իւր չար ցանկութիւնը չի կատարուեցաւ, այս խօսքը նրանց սովորեցրել է։ Եւ եթէ նրանք այդ լեզուով ուրիշ բան էլ ասել կարող են,

այն ժամանակ իմ արիւնը քեզ արժանի է եւ իմ կեանքը ինձ արժանի չէ։ Մարզպանը զգուշութիւն անելով հիւրերը մի քանի օր պահեց եւ նրանք ուշադրութիւն արին բայց թութակների բերանից այս երկու խօսքից ի զատ ուրիշ խօսք չ'ելաւ։ Երբոր հաստատուեցաւ որ կինը անմեղ է, նրան սպաննելուց անցնելով հրամայեց որ բաղէակալը բերեն։ Բաղէակալը մի բաղէ ձեռքումը բռնած ուրախութեամբ եկաւ կարծելով թէ պարգեւ պիտի ընդունի։ Կինը հարցրեց․ Ո՛վ անիրաւ, դու տեսե՞լ ես որ ես Աստուծոյ պատուիրանքին հակառակ մի բան արի։ Պատասխանեց․ Այո՛, ես տեսայ։ Հէնց որ այս խօսքը ասաց, այն բաղէն որ իւր ձեռքի վերայ էր, իւր երեսին յարձակեց եւ իւր կտուցովը նրա աչքը փորեց հանեց։ Կինը ասաց․ Այն աչքի պատիժը, որ իւր չի տեսածը իբրեւ տեսած է վկայում, այս է։ Այս առակը դրա համար բերեցի, որ գիտենաք թէ զրպարտութիւն անելու համարձակիլը եւ չի տեսնուած բանի համար վկայելը աշխարհքումը ամօթահար լինելու եւ հանդերձեալումը խայտառակուելու պատճառ է լինում։

Երբոր Տէմինէի խօսքը լրացաւ, բոլոր քննութիւնը գրելով առիւծին ուղարկեցին։ Նա էլ եղելութիւնը իւր մօր յայտնեց։

Մայրառիւծը այս բանը իմանալով ասաց․ Ո՛վ թագաւոր, իմ հոգսը այս գործում բաց ի սրանից աւելի օգուտ չ'ունեցաւ թէ այս անիծեալը թշնամի եղաւ։ Այսօրուանից յետոյ իւր խորամանկութիւնը, նենգութիւնը եւ խաբէութիւնը պիտի գործածէ թագաւորը կորցնելու եւ թագաւորութեան գործը եւ հպատակները իրար խառնելու։ Նա որ Շիւնզիւպէի մասին, որ հաւատարիմ, գթացող եւ բարեսիրտ մի խորհրդական էր, այս բանը արժանի սեպեց, ապա տէրութեան ուրիշ խորհրդականների մասին ի՞նչ պիտի անէ․ քանզի չար անձից բաց ի չարութիւնից ուրիշ բան յառաջ չի գալ եւ անմաքուրից բաց ի ապականութիւնից եւ անզգամութիւնից ուրիշ բան չի ծնիլ։ Ինչպէս որ ասել են․ Զարագուշակ բուից բարեգուշակ դաստագլի յատկութիւնը չէ սպասվում եւ ճնճղուկի միջոցով բազէի գործ չէ կատարվում։ Երբոր ամբարիշտին աստիճանը բարձրանայ, զարմանք չէ եթէ նա ամեն կողմ խառնակչութեան ձեռքը երկնցնէ։

Այս խօսքը առիւծին սրտումը մեծ ազդեցութիւն արաւ եւ նա սրա վերայ երկար բարակ խորհելով ասաց․ Մայրի՛կ, ինձ պատմէ թէ Տէմինէի խնդիրը ո՞ւսկից ես լսել․ որպէս զի Տէմինէին սպաննելու մասին մի պատճառ ունենամ։

Մայրառիւծը պատասխանեց․ Ո՛վ թագաւոր, յայտնել մի անձի խորհուրդը, որ ինձ վստահելով ասել է, մարդասիրական օրէնքով արգիլուած է եւ մի խորհուրդը, որ իբր աւանդ պահ

դրուած է նրան պահպանելը մեծահոգիների պարտականութիւնն է։ Ես միայն այսքան կարող եմ անել որ այն անձից արտօնութիւն խնդրեմ, եթէ հրաման տայ, այն ժամանակ մանրամասնաբար կը պատմեմ։

Առիւծը սրան հաճութիւն տուաւ։ Մայրառիւծը նրա մօտից ելնելով իւր պալատը եկաւ եւ իւր գահի վերայ նստելով վագրը կանչեց եւ նրան մեծ յարգանք եւ պատիւ տալով ասաց․ Ո՛վ ժամանակի նման մարդ փորձող բացակայութիւն ունեցող եւ աշխարհք լուսաւորող արեգակի նման լուսաւոր վարք ունեցող, այն բազմատեսակ կրթութիւնը եւ աստիճանը, որ գազանաց թագաւորը քեզ տուել է, յայտնի է եւ քո մասին ի գործ դրուած արքայական օժանդակութեան, քաջալերութեան եւ քեզ յանձնուած գործակատարութեան արդիւնքները ոչ ոքից թաքցուած չէ․ ուստի նրա բարիքների համար շնորհակալութիւն յայտնելը քո պարտականութիւնն է, քանզի սրանով քո վերայ օր ըստ օրէ թագաւորի շնորհքը կ'աւելանայ։

Վագրը ասաց․ Ո՛վ թագուհի, արքայական խնամքը եւ կայսերական շնորհքը, որ դարի թագաւորը այս հողի հաւասար ծառայի մասին արել եւ անում է, նրա շնորհակալութեան տակից ի՞նչ ոճի օգնականութեամբ կարող եմ դուրս գալ եւ հազարից մէկի՛ն՝ չատից քիչին մի շնորհակալութիւն ի՞նչ ուժով կարող եմ մատուցանել։ Դու սեպէ թէ ես կենդանի պէս գլխովին այրուել եմ, ո՞ր տեղից ես դրա շնորհակալութեան տակից դուրս կը գամ։ Ես մինչեւ վերջը հաւատարմութեան հրապարակի տարածութիւնումը շնորհակալութեան քայլեր եմ առել, այժմ էլ ինչ որ դարի թագուհին ինձ բարձրագոյն մի ակնարկութիւն անելու արժան սեպէ, բաց ի հպատակութիւնից եւ հնազանդութիւնից ուրիշ բան պիտի չի տեսնէ։

Մայրառիւծը ասաց․ Դու քաջի նման մի հիմ ես դրել, նրան շնորհքով լրացո՛ւր։ Առիւծը նախ եւ առաջ իւր սիրտը քեզ բացաւ։ Դու էլ յանձնառու եղար Շիւնզիւպէի վրէժը բռնաւոր հակառակորդից լուծելու մասին ինչ որ հնար է ի գործ դնել։ Այսօր պէտք է այդ խոստումը կատարես։ Լաւը այն է որ թագաւորի առջեւը գաս, քո տեսածը եւ լսածը ճշմարտութեամբ պատմես, եթէ ոչ Տէմինէի խաբէութիւնը այն աստիճանի է հասել որ առիւծը նրան սպաննելուց անցնում է եւ այդ պարագայումը առիւծի պալատումը ոչ ոք նրա չարութիւնից չէ կարող ապահով լինել։ Նա քիչ ժամանակում օձային եւ նենգաւոր դիւթութիւններով իշխանների եւ ազատականների մէջը խռովութիւն կը ձգէ եւ նրանց սպաննելու եւ կորցնելու կը ջանայ։ Վագրը ասաց․ Այս գործը կատարելը իմ պարտականութիւնն էր, բայց մինչեւ հիմա իմ

լսելը եւ վկայութիւն չի տալը դրա համար էր որ թագաւորը փոքր ինչ Տէմինէի վիճակի վերայ ճշմարիտ տեղեկութիւն ստանայ եւ նրա նուրբ եւ խոր խաբէութիւնները իմանայ։ Եթէ սրանից առաջ խնդրի մէջը մտնէի եւ գործը կատարելու սկսէի, քանի որ թագաւորը Տէմինէի խաբեբայութիւնից, չարութիւնից եւ նրա անձի խորամանկութիւնից տեղեակ չէր, կարելի էր որ իբր թշնամութիւն համարէր։ Այժմ որ գործը այս աստիճանի հասել է, թագաւորութեան նպաստաւոր գործը զանց չեմ առնել, եւ եթէ ես հազար հոգի ունենամ թագաւորի մտքի հանգստութեան համար մի ժամումը զոհելու էլ լինիմ, դարձեալ նրա բարիքների տակիցը ելած չեմ լինել, ոչ էլ իմ ծառայական պարտականութիւնը բոլորովին կատարած կը լինիմ։ Եթէ երկու աշխարհքը հանդէպ նրա բարիքներին մի մազի չափ գնահատեմ դարձեալ երկու աշխարհքումը ամօթալի կը լինիմ։

Արդ վագրը մայրառիւծի հետ գնաց առիւծի մօտ եւ Քէլիլէի ու Տէմինէի խօսակցութիւնը, ինչպէս որ լսել էր, պատմելով բոլոր կենդանեաց ժողովքումը վկայութիւն տուաւ։ Այս խօսքը բերնից բերան ընկնելով այն գողը, որ բանտումը նրանց խօսակցութիւնը իմացել էր, լսեց եւ մարդ ուղարկելով իմացրեց թէ ես էլ վկայութիւն ունիմ։ Առիւծը արտօնութիւն տալով նա եկաւ, եւ ինչ խօսակցութիւն որ բանտումը նրանց մէջ տեղի ունեցել էր, պատմեց։ Նրանից հարցրին թէ. Ինչո՞ւ համար այն օրը չ՚իմացրիր։ Պատասխանեց թէ. Քանի որ մի վկայով վճիռ չէ արվում, ես անօգուտ տեղը մի կենդանիի չարչարուիլը արժան չի համարեցի։ Առիւծը նրա խօսքին հաւանեց եւ այս երկու վկայութիւնով Տէմինէի համար պատժի վճիռը տրուեցաւ, դատաւորները ստորագրեցին եւ բոլոր կենդանիները եղի փոխարէն նրա սպաննուելու մասին համաձայնեցան։ Ամեն մի անխելքը, որ չարութեան սերմն է ցանում, հունձքի ժամանակը պատիժ է քաղում։ Առիւծը հրամայեց Տէմինէին կապեցին, զգուշութեամբ պահեցին, կերակուրը նրանից արգիլեցին եւ շատ խստութեամբ եւ յանդիմանութեամբ նրան չարչարեցին մինչեւ որ քաղցածութիւնից եւ ծարաւից կշտացաւ եւ իւր նենգութեան եւ անիրաւութեան արդիւնքը իրան հասնելով բանտի դժոխքից դժոխքի բանտը փոխադրուեց. որպէս զի յայտնի լինի թէ նենգաւորների վախճանը այս՝ եւ անիրաւների վերջը այսպէս կը լինի։ Ո՛վ որ արարածների ճանապարհին վերայ որոգայթ է լարում, վերջապէս ինքն էլ ընկնում է որոգայթում։ Բարի ծառը բարի պտուղ է տալիս, փուշ ցանողը վարդ չի քաղում։ Արդ քանի որ յայտնեցաւ օգուտի եւ վնասի հատուցումը, ԲԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱ՛ որ բարութիւնն է լաւագոյնը։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ԱՅՍ ԳՐՔԻ ՄԷՋ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ՆԻՒԹԵՐԻ ԵՒ ԱՌԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	ԵՐԵՍ
Հիւմայունֆալի որսորդութեան ելլելը եւ արարչագործութեան վերայ խորհրդածութիւն	1
Մեղուների գործունէութիւնը եւ մի բաղդատութիւն նրանց եւ մարդկանց մէջ տեղ	3
Հիւմայունֆալի եւ Խէճէսթէռայի խօսակցութիւնը մենակեցութեան եւ ընկերական կեանքի վերայով	4
	5
Արդար դատաւորի յատկութիւնները	7
Տապիշլիմ թագաւորի երազը եւ գանձ գտնելը	8
Յուշէնկ թագաւորի Տաւնեւշորս Աւանդները	11
Արքայ Տապիշլիմի Սարանտափ լեռը գնալու մտադրութիւնը	11
Երկու աղաւնիների առակը ճանապարհորդութեան վտանգաւորութեան վերայ	11
Բազէի եւ անգղի առակը ճանապարհորդութեան օգտակարութեան վերայ	16
Պառաւ կնոջ եւ կատուի առակը ագահութեան վերայով	17
Սրամերկ քաջի առակը յառաջդիմութեան վերայով	19
Տապիշլիմի խօսքերը հպատակախնամութեան վերայով	21
Վագրի առակը ջանասիրութեան եւ գործունէութեան բարի արդիւնքին վերայով	22
Նախանձոտութեան վնասակարութիւնը թագաւորական գործերի մէջ	26
Վաճառականի իւր որդիներին տուած խրատները դրամ վաստըկելու վերայով	27
Երկու արքայազունների առակը Աստուծոյ ապաւինելու եւ գործը ձգելու վերայով	28
Կրօնաւոր մուրացկանի առակը գործելու վերայով	31
Հայրական խրատներ ստացուածքը գործածելու մասին	22
Ագահ մկան առակը չափլաւութեան եւ անհոգութեան վերայով	32
Հայրական խրատ չափլաւութեան եւ կծծիութեան վերայ	33
Շիւնզիւպէի տկարանալը եւ անապատում մնալը	34
Առիւծի երկիւղը Շիւնզիւպէի ձայնից	35
Քէլիլէի եւ Տէմինէի խօսակցութեան սկիզբը արքայական գործերին ձեռնարկելու վերայով	35
Կապիկի առակը մարդ իւր չի գիտցած գործից զգուշանալու վերայով	35
Թագաւորաց ծառայելու օգուտները	36
Ողջախոհի եւ Բաջաւիրտի առակը աղէութեան օգտակարութեան վերայով	37

ԵՐԵՍ

Գործունէութեան և ձիրքի գերազանցութիւնը 39
Թագաւորին ծառայել ուզողների հինգ պարտականութիւնները 40
Թագաւորի ծառայութիւնում գտնուողների ունենալիք հինգ յատկութիւնները 41
Տէմնէի Առիւծի առջև ներկայանալը 42
Տէմնէի խրատը խելք և ձիրք ունեցողներին առանց ազգի խտրութեան դաստիարակելու վերայով 43
Աղուէսի և թմբուկի առակը, ամեն մեծ ձայնին ուշադրութիւն չի դարձնելու վերայով 44
Թագաւորը իւր խորհուրդը տասը դասակարգի մարդկանց չի յայտնելու վերայով 45
Շինդիբէի ուժին վերայ առիւծի և Տէմնէի հարցուպատասխանը 46
Շինդիբէին ամենաբարձր պատիւ տալով Տէմնէի նախանձիլը և Քէլիլէի մօտ գանգատուելու գնալը 47
Կրօնաւորի առակը հատուցման վերայով 48
Տէմնէի վրէժ լուծելու մտադրութիւնը 51
Երկու ճնճղուկների առակը թշնամիից վրէժ լուծելու վերայով 52
Բռնաւոր թագաւորի առակը չարիք անողը չարիք գտնելու վերայով 54
Ագռաւի առակը թշնամին խորամանկութեամբ կորցնելու վերայով 55
Ձկնահան արագիլի առակը խորամանկութիւն անողը խորամանկութեան թակարդը ընկնելու վերայով 56
Գայլի և նապաստակի առակը խելացիների դէմ խորամանկութիւն չ՚անցնելու վերայով 58
Նապաստակի և առիւծի առակը խորամանկութեամբ հպարտ թշնամին կորցնելու վերայով 60
Տէմնէի կրկին առիւծին ներկայանալը և Շինդիբէի դէմ նրա սրտումը ատելութեան սերմ ցանելը 62
Երեք ձկանց առակը զգաստութեան վերայով 64
Կրիայի և կարիճի առակը ի բնէ չարը իւր բնութեան պահանջը կատարելու վերայով 67
Տէմնէի նենգութիւնը առիւծին ազդելու վերայով 69
Տէմնէի գնալը Շինդիբէի մօտ և նրա սրտումը առիւծի դէմ կասկած յարուցանելը 72
Առանց վեց բանի վեց բան չի լինելուն վերայով 72
Բադի առակը անտեղի փորձառութեան վերայով 74
Բազէի և ընտանի հաւի առակը 76
Նախատահմանութիւնից փախուստ չի լինելու վերայով 77

ԵՐԵՍ

Պարտիզպանի և սոխակի առակը ճակատագրից փախուստ չի լինելու վերայով 78
Որսորդի և աղուէսի առակը աւելին խնդրելը վնասակար լինելու վերայով 80
Արջնագռաւի, գայլի և ճագարի առակը խորամանկութեամբ իրանց նպատակը յառաջ տանելու վերայով 81
Դեյդուլի առակը միաբանութեան ուժի վերայով 85
Բադերի և կրիայի առակը խրատը չի կատարողին վնաս կրելուն վերայով 86
Տէմնէն գնում է Քէլիլէի մօտ 89
Առիւծի և Շինդիբէի պատերազմը 90
Քէլիլէն Տէմնէին յանդիմանում է 90
Նենգութեան եօթը վնասները 90
Դարձեալ Քէլիլէն յանդիմանում է Տէմնէին 91
Աշխարհքի մարդկանց չորս դասակարգի բաժնուիլը 92
Վեց բանից օգուտ քաղելը անկարելի է 92
Ցիմարութեան հինգ նշանները 93
Կապիկների առակը յամառին խրատը չ՚ազդելուն վերայով 94
Սրամիտի և Զուարթասիրտի առակը խորամանկութիւնը վտանգաւոր իսկ ուղղամտութիւնը ապահով լինելու վերայով 95
Գորտի և աքիսի առակը խորամանկութեան վնասակարութեան վերայով 97
Երկերեսութեան վերայով 99
Երեք բանը երեք բանից կախում ունի 100
Զարից հեռանալու և բարիին յարելու վերայով 101
Այգեպանի և արջի առակը յիմար բարեկամը խելացի թշնամիից աւելի վնասակար լինելու վերայով 102
Վաճառականի և երկաթի առակը, սրա վերայ, որ փոքր չարութիւն անողից մեծ չարութիւն էլ սպասվում է 104
Շինդիբէի սպանուիլը և առիւծի զղջալը 106
Տէմնէն առիւծին խրախոյս է տալիս Շինդիբէի մահուան համար 107
Տապիշլիմի հարցուպատասխանը իմաստունի հետ չարերի անելի վախճանին վերայով 108
Առիւծի անմխիթար մնալը Շինդիբէի մահուան համար և վագրի մխիթարութիւն տալը 109
Աղուէսի և թռչունների առակը աւելին խնդրելով իւր ձեռքում եղածն էլ կորցնելու վերայով 109
Պոչ որոնող իշու առակը իւր վիճակից գոհ լինելու վերայով 111
Վագրի լսելը Տէմնէի և Քէլիլէի խօսակցութիւնը 112
Տէմնէի և Քէլիլէի խօսակցութիւնը 113

ԵՐԵՍ

Մայրառիւծը Տէմնէի չարութեան վերահասու լինելով առիւծին մօտ է գնում 114
Առիւծը Շիւնզիւպէին սպաննելուն համար իւր զղջալը եւ խռովիլը իւր մօրն է յայտնում 115
Գաղտնապահութեան վերայով մայրառիւծի եւ առիւծի վիճաբանութիւնը 116
Թագաւորի եւ ռահվիրայի առակը գաղտնիք յայտնելու վնասակարութեան վերայով 117
Առիւծը ընդհանրական ժողովք է կազմում Տէմնէի խնդիրը քննելու համար 119
Տէմնէի ատեան բերուիլը եւ փաստաբանութիւնը 120
Կրօնաւորի առակը Աստուածպաշտութիւնը փառասիրութեան փոխելու վնասակարութեան վերայով 121
Կոյրի եւ Սրատեսի առակը աշխարհքի խաբեբայութեան վերայով 124
Սիահկուշը Տէմնէին կը յանդիմանէ ատեանումը 126
Ծերունի կրօնաւորի առակը զրկեալներին պաշտպանելը Աստուածպաշտութեան հաւասար Աստուծոյ առջեւ արժէք ունենալու վերայով 126
Դարձեալ Տէմնէի փաստաբանութիւնը 128
Տէմնէին քննուիլը ատեանում 130
Վաճառականի կնոջ եւ նկարչի առակը չտապման վնասակարութեան վերայով 131
Մայրառիւծը առիւծին յանդիմանում է որ նա կեղծը ճշմարիտից չէ որոշում 133
Առիւծի եւ մայրառիւծի խորհրդածութիւնը Տէմնէի խնդրին մասին 134
Երեք նախանձոտների առակը 135
Քէլիլէն բանտումը Տէմնէին այցելում է 137
Քէլիլէի յանդիմանութիւնը եւ Տէմնէի պատասխանելը 138
Քէլիլէն Տէմնէին իւր մեղքը խոստովանելու եւ ապաշխարելու է հրաւիրում 140
Քէլիլէի վախճանիլը 140
Կրկին ատեան բացուիլը եւ մայրառիւծի առաջարկութիւնը Տէմնէին դատապարտելու համար 140
Դատաւորները Տէմնէի խնդիրը քննում են եւ Տէմնէն փաստաբանում է 141
Տգէտ բժիշկի առակը 142
Դիմագիծից մարդու բնաւորութիւնը որոշել 144
Արարչագործութեան մէջ սխալմունք չի լինելը 144

ԵՐԵՍ

Քէլիլէի մահուան լուրը Ռուզպէհի միջոցով Տէմնէին հասնում է 145
Ռուզպէհը Տէմնէին մխիթարում է եւ Տէմնէի ողբը Քէլիլէի մահուան համար 146
Ռուզպէհի եւ Տէմնէի դաշնակցութիւնը 147
Առիւծի եւ մայրառիւծի խօսակցութիւնը Տէմնէի դատապարտման մասին 147
Տէմնէի բարձրագոյն ատեան ներկայացուիլը 148
Մարզպանի կնոջ եւ բազէակալի առակը զրպարտութեան վերայով 149
Մայրառիւծի եւ առիւծի խօսակցութիւնը Տէմնէի դատապարտման վերայով 152
Մայր առիւծի եւ վագրի խօսակցութիւնը 153
Տէմնէի դատապարտուիլը եւ վերջ 154

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ—Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՌԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		Երե.
Ա.	Երկու աղաւնոյ առակը	11
Բ.	Բաղէի եւ անգղի առակը	16
Գ.	Պառաւի եւ նիհար կատուի առակը	17
Դ.	Սրամերկ քաջի առակը	19
Ե.	Վագրի կորիւնի եւ առիւծի առակը	22
Զ.	Վաճառականի առակը	27
Է.	Երկու արքայազունների առակը	28
Ը.	Կրօնաւոր մուրացկանի առակը	31
Թ.	Ագահ մկան առակը	32
Ժ.	Կապիկի առակը	35
ԺԱ.	Ողջախոհի եւ Քաջասիրտի առակը	37
ԺԲ.	Հիւսնի առակը	40
ԺԳ.	Աղուէսի եւ թմբուկի առակը	44
ԺԴ.	Կրօնաւորի առակը	48
ԺԵ.	Ճնճղուկների առակը	52
ԺԶ.	Իրաւադատ թագաւորի առակը	54
ԺԷ.	Ագռաւի եւ օձի առակը	55
ԺԸ.	Ձկնահան արագիլի առակը	56
ԺԹ.	Սոված գայլի առակը	58
Ի.	Նապաստակի եւ առիւծի առակը	60
ԻԱ.	Երեք ձկների առակը	64
ԻԲ.	Կրիայի եւ կարիճի առակը	67
ԻԳ.	Բադի առակը	74
ԻԴ.	Բաղէի եւ ընտանի հաւի առակը	76
ԻԵ.	Պարտիզպանի եւ սոխակի առակը	78
ԻԶ.	Որսորդի առակը	80
ԻԷ.	Արջնադաւի, գայլի եւ ճագարի առակը	81
ԻԸ.	Դէյգուլի եւ ծովապետի առակը	85
ԻԹ.	Բադերի եւ կրիայի առակը	86
Լ.	Կապիկների եւ թռչունի առակը	94
ԼԱ.	Սրամիտի եւ Զուարթամիտի առակը	95
	Գորտի եւ աքիսի առակը	97
ԼԲ.	Այգեպանի եւ արջի առկը	102
ԼԳ.	Վաճառականի եւ երկաթի առակը	104
ԼԴ.	Սոված աղուէսի առակը	109
ԼԵ.	Պոչ որոնող իշու առակը	111
ԼԶ.	Ռահվիրայի առակը	117
ԼԷ.	Ճգնող կրօնաւորի առկը	121
ԼԸ.	Կոյրի եւ Սրատեսի առակը	124
ԼԹ.	Ծերունի կրօնաւորի առակը	126
Խ.	Վաճառականի կնոջ եւ նկարչի առակը	131
ԽԱ.	Երեք նախանձոտների առակը	135
ԽԲ.	Բժիշկի առակը	142
ԽԳ.	Բաղէակալի եւ մարզպանի կնոջ առակը	149

Գինը 3 ֆրանգ

1-2

ՀՀ Ազգային գրադարան
NL0303927

891.44
7-65